

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**ՀԱՂՈՐԴՈՒՄ**  
**2013թ.**  
**ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ**  
**ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ**  
**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՎԵԼՎԱԾ՝**  
**ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐՈՒՅԹՆԵՐԻ**  
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ**  
**ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐՈՎ**  
**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**  
**2013թ. ԸՆԴՈՒՆԱԾ**  
**ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



Գունվար - 2014թ., ք. Երևան

ՀՏԳ- 34.25 (479.25)

ԳՄԳ- 67.99 (2Հ) 01

Հ-189

Հաստատվել է Հայաստանի Հանրապետության  
սահմանադրական դատարանի 23 հունվարի 2014թ. ՍԳԱՌ-2  
աշխատակարգային որոշմամբ

Հ -189

«Հաղորդում ՀՀ ՍԳ- 2013թ. ընդունած որոշումների  
կատարման վիճակի վերաբերյալ»  
Եր.: «ՀՀ ՍԳ- աշխատակազմ», 2014, 316 էջ:

ԳՄԳ- 6799 (2Հ) 01

ISBN 978.99930.66-48-4

© «ՀՀ ՍԳ- աշխատակազմ», 2014

**ՀԱՍՏԱՏՎԵԼ Է  
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ  
23 ՀՈՒՆՎԱՐԻ 2014թ. ՍԳԱՌ - 2  
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՄԲ**

**ԳԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ**

2013 թվականին ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրվել է սահմանադրաիրավական խնդիր բովանդակող 301 դիմում, ինչպես նաև ներկայացվել են 1963 էլեկտրոնային ու 1103 խորհրդատվություն հայցող դիմում եւ տարբեր հարցերի առնչվող 187 նամակ:

Սահմանադրաիրավական խնդիր բովանդակող դիմումների փաստացի պատկերն այսպիսին է.

1. ՀՀ Նախագահ – 41 դիմում,
2. ՀՀ Ազգային ժողով – 0 դիմում,
3. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդ – 1 դիմում,
4. ՀՀ կառավարություն – 0 դիմում,
5. տեղական ինքնակառավարման մարմիններ – 0 դիմում,
6. ֆիզիկական անձինք – 223 դիմում,
7. իրավաբանական անձինք – 21 դիմում,
8. դատարաններ – 6 դիմում,
9. ՀՀ գլխավոր դատախազ – 0 դիմում,
10. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան – 6 դիմում,
11. Հանրապետության Նախագահի թեկնածուներ – 2 դիմում,
12. կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ) եւ պատգամավորության թեկնածուներ – 0 դիմում:

Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց թվով 244 դիմումներից 181-ը չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 եւ 28-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 18, 32, 33 եւ 34-րդ հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին եւ աշխատակազմի կողմից վերադարձվել են դիմողներին:

Գատական կազմերի կողմից քննության է առնվել 66 անհատական դիմում: Գրանցից քննության է ընդունվել 14-ը, մերժվել է՝ 50-ը, 2-ը տեղափոխվել է սահմանադրական դատարանի լիազումար նիստ:

Սահմանադրական դատարանի լիազումար նիստերում քննարկվել է 2 անհատական դիմումի քննության ընդունման հարց, որի արդյունքում դրանք ընդունվել են քննության:

2013 թվականին ՀՀ սահմանադրական դատարանը կայացրել է 70 որոշում, որից 21-ը՝ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերով քննության արդյունքում, 47-ը՝ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հարցերով քննության արդյունքում եւ 2-ը՝ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով նախատեսված հարցերով քննության արդյունքում:

2013 թվականին ՀՀ սահմանադրական դատարանը քննության է առել 16 իրավական ակտերի՝ 15 օրենքների (որոնցից 9-ը օրենսգիրք) եւ ՀՀ կառավարության 1 որոշման (ամբողջությամբ) սահմանադրականության հարցեր:

ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերով քննության է առել վիճարկվող 1 ակտի՝ ամբողջությամբ եւ վիճարկվող ակտերի 40 դրույթների (ներառյալ՝ կոնկրետ գործերով վեճի առարկա դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված 5 դրույթները) սահմանադրականության հարցեր, որոնց արդյունքում՝

- վիճարկվող ակտերի 13 դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող (ՄԳՌ-1074, 1076, 1081, 1092, 1106, 1130, 1134).
- վիճարկվող 1 ակտ՝ ամբողջությամբ եւ վիճարկվող ակտերի 9 դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական կոնկրետ բովանդակությամբ (ՄԳՌ-1073, 1075, 1082, 1099, 1102, 1114, 1115, 1120).
- վիճարկվող ակտերի 9 դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր (ՄԳՌ-1081, 1082, 1119, 1121, 1127).
- վիճարկվող ակտերի 18 դրույթների մասով կայացրել է գործի վարույթը կարճելու որոշումներ (ՄԳՌ-1065, 1092, 1105, 1124, 1127, 1134).
- 2 որոշումներով (ՄԳՌ-1115, 1120) որոշել է, որ կոնկրետ գործով վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով սահմանված կարգով ենթակա է վերանայման.
- 2 որոշումներով (ՄԳՌ-1121, 1127) սահմանել է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված 2 իրավանորմերի ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ:

**ԱՌԱՆՉԻՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՅ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

**ՀՀ Նախագահի դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները  
և դրանց կատարումը**

2013 թվականին ՀՀ Նախագահի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված բոլոր դիմումները վերաբերել են բացառապես միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը: 2013թ. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության են առնվել 47 միջազգային պայմանագրեր (որից 6-ը՝ 2012թ. ներկայացված դիմումների հիման վրա), այդ թվում՝ 16 բազմակողմ (4 համընդգրկուն և 12 տարածաշրջանային) և 31 երկկողմ (16-ը՝ օտարերկրյա պետությունների և 15-ը՝ միջազգային կազմակերպությունների հետ): Քննության առարկա դարձած պայմանագրերից 33-ը միջպետական են, 14-ը՝ միջկառավարական:

ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության առնված 47 պայմանագրերից 29-ն արդեն վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից, թվով 18 պայմանագիր դեռևս չի ներկայացվել ՀՀ Ազգային ժողով՝ ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետին համապատասխան կամ դրանց վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովը, Սահմանադրության 62-րդ հոդվածի առաջին մասի համաձայն, դեռևս որոշում չի կայացրել:

Անդրադառնալով 2013թ. ընթացքում քննության առնված ՀՀ միջազգային պայմանագրերի առնչությամբ իրավակիրառական պրակտիկային՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ քննության ներկայացված մի շարք միջազգային պայմանագրերի հայերեն պաշտոնական տեքստերն ունեցել են բնագրերից էական բովանդակային շեղումներ: Նախորդ տարիների օրինակով սահմանադրական դատարանի պահանջով այդ թերացումները շտկվել են: Առանձին դեպքերում ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ միջազգային պայմանագրերի իրավակիրառական պրակտիկայի բնականոն ապահովման նպատակով իր որոշումներում (մասնավորապես՝ ՄԳ-Ո-1101 որոշում) նույնիսկ արձանագրել է, որ համապատասխան միջազգային պայմանագրերի հայերեն պաշտոնական տեքստերում առկա անճշտություններն իրավական առումով անըմբռնելի և խնդրահարույց են, ենթակա են ճշգրտման և հստակեցման՝ ստանձնվող պարտավորությունների լիարժեք իրականացումն ապահովելու և իրավակիրառական պրակտիկայում խնդիրները բացառելու համար: Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ նման դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է առավել հստակեցնել ՀՀ կողմից կնքված համաձայնագրերի (հատկապես՝ դրանց հայերեն տեքստերի) դրույթների բովանդակությունը՝ երաշխավորելով դրանց իրավական որոշակիությունը և բացառելով հակասահմանադրական իրավիճակների առաջացումը:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման տեսանկյունից ուշադրության է արժանի նաեւ ֆինանսավարկային պայմանագրերով ֆինանսավորվող ծրագրերի մանրամասնվածության հիմնավորվածության պատշաճ մակարդակի ապահովման հիմնախնդիրը: Անցած տարիների ընթացքում քննության առնված ֆինանսավարկային պայմանագրերում եւ դրանց հավելվածներում ներկայացված ֆինանսավորման ծրագրերի նկարագրությունը վկայում է, որ անհրաժեշտ չափով հստակեցված չեն տրամադրվող վարկային միջոցներով ֆինանսավորվող կոնկրետ ծախսերի ուղղությունները: Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ նախորդ տարիների հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի հստակության, այդ միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին (ՄԳՌ-1080, ՄԳՌ-1098, ՄԳՌ-1101, ՄԳՌ-1125, ՄԳՌ-1126), նշելով, որ նման համաձայնագրերով նախատեսված ծրագրերի ընդհանուր բնույթը պահանջում է համաձայնագրերի կատարման նկատմամբ հստակ մշտադիտարկում, որը հիմք կհանդիսանա խուսափելու վարկային նախորդ համաձայնագրերի իրագործման պրակտիկայում տեղ գտած թերություններից եւ բացթողումներից, վարկային սուղ միջոցների անարդյունավետ օգտագործումից ու փոշիացումից, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթների հնարավոր խախտումներից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր ֆինանսական համաձայնագրի հիմքում պետք է դրված լինի ՀՀ կառավարության կողմից հաստատված հստակ ծրագիր՝ ներառելով այդ ծրագրի համար վարկային միջոցների ներգրավման համակողմանի հիմնավորումներ:

Սահմանադրական դատարանն առանձնակի ուշադրություն է հրավիրում նաեւ այն հարցի վրա, որ ֆինանսավարկային համաձայնագրերով իրականացվող ծրագրերը հասարակության համար պետք է լինեն առավել հրապարակային ու թափանցիկ, այդ թվում ապահովելով մատչելի տեղեկատվություն իրականացվող ծրագրերի վերաբերյալ (ՄԳՌ-1080):

Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԳՌ-1083 որոշման մեջ արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Միաժամանակ, նկատի ունենալով, որ տարբեր ոլորտներում իրականացվող ծրագրերում գնալով գերակշիռ մաս են կազմում վարկային կամ դրամաշնորհային միջոցները, ինչպես նաեւ հաշվի առնելով, որ համաձայն ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածի՝ ՀՀ Ազգային ժողովն է իրականացնում օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացվող փոխառությունների ու վարկերի օգտագործման նկատմամբ վերահսկողությունը, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է.

ա/ բնակչության լայն զանգվածներին առնչվող յուրաքանչյուր վարկային ծրագիր համացանցի միջոցով մատչելի դարձնել հանրությանը՝ դրանց իրականացման նկատմամբ ապահովելով նաեւ հանրային վերահսկողություն,

բ/ վավերացման փուլում նախապես քննության առնել տվյալ ոլորտում արդեն իսկ իրականացված ու իրականացվող ծրագրերի արդյունավետությունն ու փոխառված միջոցների նպատակային օգտագործման վիճակը»:

## **ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները եւ դրանց կատարումը**

2013 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները դիմել են սահմանադրական դատարան 17.12.2013 թվականին: Սահմանադրական դատարանը գործն ընդունել է քննության եւ դատաքննությունը նշանակել՝ 28.03.2014թ.:

2012 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների կողմից սահմանադրական դատարան ներկայացված 2 դիմումներից մեկով 05.05.2012 թվականին կայացվել է ՄԳ-Ռ-1027 որոշումը, ինչի մասին նշվել է Սահմանադրական դատարանի 2012թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման մեջ: Ինչ վերաբերում է մյուս դիմումին, ապա դրա վերաբերյալ որոշում է կայացվել 2013թ. ապրիլի 16-ին: Այսպես. «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով սահմանադրական դատարանն իր 16.04.2013թ. ՄԳ-Ռ-1081 որոշմամբ որոշել է.

«1. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Սույն գործով վեճի առարկա դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերի դրույթները, այն մասով, որով առկա ընթացակարգերը պատգամավորի «լիազորությունների դադարում» սահմանադրական ինստիտուտը գործնականում փոխակերպում են ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ նրա «լիազորությունների դադարեցման» ինստիտուտի, ճանաչել ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարելուվում է նրանով, որ իրավակիրառական պրակտիկայում ձեւավորվել է մի իրավիճակ, որի պայմաններում հաճախ պատգամավորական փոքրամասնության կողմից Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ նախաձեռնելուց հետո պատգամավորական մեծամասնության բացակայության հետեւանքով քվորում չի ապահովվում, ինչը, սահմանադրական դատարան դիմած պատգամավորների կարծիքով, խոչընդոտում է պատգամավորական փոքրամասնության՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի իրացումը, քանի որ այն պայմանավորվում է Ազգային ժողովի մեծամասնության կամքի կամ ցանկության այս կամ այն դրսեւորմամբ: Այդ կա-

պակցությամբ, նկատի ունենալով քվորումի ինստիտուտի կարելությունն ու անհրաժեշտությունը եւ ընդգծելով, որ քվորումի ապահովման համար անհրաժեշտ՝ պատգամավորների սահմանված թվից պակաս որեւէ այլ թվի պարագայում «ըստ ՀՀ Սահմանադրության, Ազգային ժողովը՝ որպէս օրենսդիր իշխանություն իրականացնող մարմին, հանդես գալու իրավագործություն չի կարող ունենալ»՝ ՀՀ սահմանադրական դատարանը տվյալ որոշմամբ գտավ, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Միեւնույն ժամանակ, մատնանշելով պատգամավորների՝ Ազգային ժողովի նիստերին մասնակցելու **պարտականությունը եւ միայն օրենքով սահմանված կոնկրետ հիմքերի առկայության դեպքում** Ազգային ժողովի նիստերից պատգամավորի բացակայությունը հարգելի համարելու իրավական հնարավորությունը, վերջին դեպքում իրավակիրառական պրակտիկայում պատգամավորի լիազորությունների «դադարում» եւ պատգամավորի լիազորությունների «դադարեցում» եզրույթների շփոթը, տվյալ գործով կայացված որոշման 6-րդ կետում սահմանադրական դատարանն ընդգծել է պատգամավորական փոքրամասնության իրավունքների պաշտպանության խնդրի փոխադարձ կապը «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերի դրույթների հետ եւ 7-րդ կետում արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումները. «... Ներկայացված համատեքստում ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածում ամրագրված «**դադարում**» **եզրույթը** սահմանադրաիրավական այն բնույթն ունի, որ հետեւանքն առաջանում է իրավունքի ուժով /*ex jure*/, **երբ առկա է փաստը**: Մասնավորապէս, Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը կամ Ազգային ժողովի արձակումն իրավունքի ուժով հանգեցնում է պատգամավորի լիազորությունների դադարման: Որեւէ որոշմամբ կամ նույնիսկ օրենքով սահմանադրական տվյալ նորմի գործողությունն արգելափակել հնարավոր չէ, քանի որ դա անմիջականորեն կհակասի Սահմանադրության 6-րդ հոդվածի /1-ին եւ 2-րդ մասեր/ պահանջներին:

Սահմանադրության 67-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից բխում է, որ նման մոտեցումը հավասարապէս վերաբերում է նաեւ մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայությանը եւ չի նախատեսվում լիազորությունների **դադարեցման** կոնկրետ իրավասություն:

Սահմանադրական տարբեր հոդվածների համադրված վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ստեղծված իրավիճակի հաղթահարման համար հիմք պետք է ընդունել սահմանադրական իրավունքի երկու հիմնարար սկզբունք:

**Առաջին**՝ Սահմանադրությունն ինքնաբավ է եւ տեքստային առերեսույթ անհամապատասխանությունները կարող են հաղթահարվել Սահմանադրության արժեքաբանության ու հիմնարար սկզբունքների վրա հենվելով: Տվյալ պարագայում էական է այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի **անմիջական գործողության ապահովումը**, դրա համար անհրաժեշտ իրավական



նախադրյալների ստեղծումը երկրում ժողովրդաիշխանության ամրապնդման, ներկայացուցչական ժողովրդավարության արդյունավետ իրացման, օրենսդիր իշխանության գործունակության ապահովման կարեւորագույն երաշխիքներից մեկն է:

**Երկրորդ՝** իրավունքի ընթացակարգային նորմը չի կարող նյութական նորմի ամբողջական ու լիարժեք իրացման խոչընդոտ հանդիսանալ: Այս առումով ՀՀ Ազգային ժողովը Սահմանադրության 67-րդ հոդվածի պահանջների իրացման շրջանակներում վեճի առարկա դրույթի մասով կարող է միայն **«ի գիտություն ընդունել»** իրավական փաստի ու դրանից բխող հետեւանքի առկայությունը, իրավասություն չունենալով քվեարկությամբ կասեցնել սահմանադրական նորմի գործողությունը եւ **«դադարում» եզրույթը գործնականում փոխակերպել «դադարեցում» եզրույթով**, երբ վերջինս ենթադրում է հստակ ու համարժեք լիազորության առկայություն: Դրա մասին է վկայում նաեւ ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածում, 55-րդ հոդվածի 10-րդ կետի 2-րդ պարբերության մեջ ու 83-րդ հոդվածի 3-րդ կետում **«դադարում»** եւ **«դադարեցում»** եզրույթների սահմանադրաիրավական բովանդակության համադրված վերլուծությունը: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածը սահմանում է, որ **«Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ»:** Իսկ Սահմանադրությունը մեկ հերթական մատաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայության պարագայում ՀՀ Ազգային ժողովին պատգամավորի լիազորությունների **դադարեցման** իրավասությամբ չի օժտել, այն էլ՝ որոշման միջոցով:

Հետեւությունն այն է, որ **«Ազգային ժողովի կանոնակարգ»** ՀՀ օրենքի, մասնավորապէս, 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերի դրույթները, Ազգային ժողովի պատգամավորի բացակայության քննարկման եւ **քվեարկությամբ** այն հարգելի կամ անհարգելի համարելու վերաբերյալ որոշում կայացնելու մասով, փոխում են սահմանադրական նորմի իրավական բովանդակությունը, **իրավունքի ուժով լիազորությունների դադարումը փոխակերպում են դրանց դադարեցման գործընթացի:** Եթե դադարման ինստիտուտի պարագայում երաշխավորվում են նաեւ խորհրդարանական փոքրամաս-նության իրավունքները, ապա դադարեցումը պայմանավորվում է խորհրդարանական մեծամասնության կամաարտահայտմամբ եւ ընդհուպ կորցնում է իր կանխարգելիչ նշանակությունը: ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի պահանջներից ելնելով **«Ազգային ժողովի կանոնակարգ»** ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերը պետք է իրավակարգավորման այնպիսի հնարավորություն նախատեսեն, որի պայմաններում **օրենքով նախատեսված իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ընդունելով ի գիտություն** կազմվի արձանագրություն պատգամավորի **լիազորությունները իրավունքի ուժով /ex jure/ դադարելու** վերաբերյալ ...»:

Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով վերը նշված իրավական դիրքորոշումները, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել նաեւ **«Ազգային ժողովի կանոնակարգ»** ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համարժեք փոփոխությունները:

Այն փաստը, որ սահմանադրական դատարանի նման որոշման առկայության պարագայում շարունակական բնույթ են կրում ՀՀ Ազգային ժողովի թե՛ մեծամասնության եւ թե՛ փոքրամասնության կողմից խորհրդարանի նիստերն անօրինական ձեռով բոյկոտելը, ինչպես նաեւ առանձին պատգամավորների բացակայությունները, ինչը գործնականում իրավական հետեւանք չի առաջացնում, վկայում է ոչ միայն այն մասին, որ Ազգային ժողովը գործնականում չի կատարում ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը, այլեւ բնութագրում է մեր երկրում պառլամենտարիզմի ու քաղաքական մշակույթի իրական մակարդակը:

### **Անհատական (ֆիզիկական եւ իրավաբանական անձանց) դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումներն ու դրանց կատարումը**

Սահմանադրական դատարանում մուտքագրված անհատական դիմումների մոտ 74.5 տոկոսը սահմանադրական դատարանի կողմից չի ընդունվել, քանի որ դրանք չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 եւ 28-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 32 եւ 33-րդ հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին, ճանաչվել են որպես ակնհայտ անհիմն կամ վիճարկվող նորմը դատարանի կողմից դիմողի նկատմամբ չի կիրառվել: Հիմնականում անհատական դիմումները վերաբերում են օրենքների կիրառմանն առնչվող հարցերին կամ ընդհանուր իրավասության ու մասնագիտացված դատարանների իրավագործությանը վերաբերող այլ հարցերի:

Սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունված 5 գործերով որոշումները կայացվելու են 2014թ. հունվարապրիլ ամիսներին:

2013 թվականի ընթացքում քննության առնված տասնյոթ անհատական դիմումներից /դրանք ներառում են նաեւ 6 անհատական դիմումները, որոնք սահմանադրական դատարանում մուտքագրվել են 2012 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, սակայն դրանց հիման վրա գործերը քննության են առնվել 2013 թվականին 2-ը, որոնցով օրենքների վիճարկվող դրույթները **ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր**, վերաբերում են հետեւյալին.

1. «Քաղաքացի Արթուր Խաչատրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 05.11.2013թ. ՄԳՌ-1121 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, այնքանով, որքանով բարոյական վնասը չի դիտում որպես վնասի տարատեսակ եւ չի ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն՝ արգելա-

փակելով անձի՝ դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, միաժամանակ խոչընդոտելով Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարմանը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 16-րդ հոդվածի 4-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող եւ անվավեր:

2. Հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կհանգեցնի այնպիսի հետեւանքների, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ պահանջվում է բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտի համակարգված օրենսդրական կանոնակարգում, որը, մասնավորապես, կներառի «բարոյական վնաս» հասկացության, այդ ինստիտուտի կիրառման շրջանակների եւ հիմքերի, բարոյական վնասը հաշվելու հստակ կարգի եւ այլ հարցերի վերաբերյալ դրույթներ, ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2014թ. հոկտեմբերի 1-ը»:

Խնդիրը կարեւորվում է նրանով, որ փոխհատուցման ենթակա վնասների տեսակներին վերաբերող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածում առկա օրենսդրական բացի պատճառով առայսօր Հայաստանի Հանրապետությունում բարոյական վնասը չի փոխհատուցվում, չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված են բարոյական վնասի նյութական փոխհատուցման բազմաթիվ դեպքեր: Այսինքն, նշված ինստիտուտն ամբողջական կանոնակարգման ենթարկված չէ, ինչը թույլ չի տալիս օրենսդրական ներդաշնակություն ապահովել բարոյական վնասի նյութական փոխհատուցման դեպքերի, հիմքերի եւ կարգի կանոնակարգման հարցում, ինչը, իր հերթին, խոչընդոտում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների եւ ազատությունների արդյունավետ պաշտպանությանը:

Խնդիրը դիտարկելով ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում եւ վկայակոչելով, մասնավորապես, Խաչատրյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի Հանրապետության (գանգատ թիվ 23978/06, 27.11.2012թ.) եւ Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության (գանգատ թիվ 22999/06, 12.06.2012թ.) գործերով կայացված վճիռները, որոնցով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ներպետական օրենսդրության վկայակոչմամբ բարոյական վնասի նյութական փոխհատուցում չտրամադրելը ճանաչել է որպես Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի խախտում,

տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ օրենսդրությամբ բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտի թերի կանոնակարգումը համահունչ չէ նաեւ ՀՀ կողմից ստանձնված միջազգային պարտավորություններին:

Միաժամանակ, ելնելով մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության եւ դրանցով պայմանավորված՝ բարոյական վնասի ինստիտուտին առնչվող կանոնակարգումների լիարժեքությունն ապահովելու անհրաժեշտությունից, նույն որոշմամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել, որ ՀՀ Ազգային ժողովն օրենսդրորեն հստակ ամրագրի բարոյական վնասի նյութական փոխհատուցման ընդհանուր չափանիշներն ու կարգը, որպեսզի երաշխավորվի համապատասխան դեպքերում եւ կարգով անձին պատճառված բարոյական վնասի ողջամիտ եւ արդարացի փոխհատուցումը, ապահովվի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մարդու իրավունքների եւ ազատությունների արդյունավետ իրականացումը եւ չխոչընդոտվի Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

Նույն որոշմամբ սահմանադրական դատարանն ընդունել է ի գիտություն, որ վերը նշվածը հաշվի առնելով՝ ՀՀ արդարադատության մախարարության կողմից նախապատրաստվում է ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու եւ, մասնավորապես, Հայաստանի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերոնշյալ վճիռների կատարումը երաշխավորելու համար: Այդ նախաձեռնությունը քննության է առնվել Վեներտիկի հանձնաժողովի 2013թ. դեկտեմբերի 6-ի լիազումար նիստում, հիմնականում արժանացել է հավանության, եւ առանձին դիտողություններով, որոնք առավելապես համընկնում են նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հետ, առաջարկվել է կյանքի կոչել:

2. «Քաղաքացի Էդուարդ Խաչիկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 10.12.2013թ. ՍԳ-Ռ-1127 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ «ստանալը հավաստող փաստաթղթեր»՝ ներկայացնելու պահանջի մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր:

2. «Քաղաքացի Էդուարդ Խաչիկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի մասով կարճել:

3. Հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կհանգեցնի այնպիսի հետեւանքների, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ անհրաժեշտ է հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին եւ գործին մասնակցող այլ անձանց՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված **պատշաճ կարգով ուղարկելու** պահանջի եւ գործի քննության ամբողջ ընթացքում կողմերի համար հավասար հնարավորություններ ապահովելու իրավական համարժեք երաշխիքների հստակ եւ համակարգված օրենսդրական կանոնակարգում, ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2014 թվականի հուլիսի 1-ը»:

Խնդիրը կարեւորվում է նրանով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով «ստանալը հավաստող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջ սահմանելն ավելորդ ծանրաբեռնում է հայցվորների դատավարական պարտականությունների շրջանակը, քանի որ հայցվորներից, ըստ էության, պահանջվում է ապացույց առ այն, որ, մասնավորապես, փոստային կապի ազգային օպերատորը պատշաճ կատարել է օրենքով իր վրա դրված պարտականությունը, ինչը որեւէ իրավաչափ նպատակ չի հետապնդում, եւ արդյունքում՝ դժվար հասանելի է դարձնում դատարանի մատչելիության իրավունքը, ստեղծում է անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանադրական իրավունքի լիարժեք իրացման վտանգ: Մասնավորապես, համաձայն տվյալ գործով սահմանադրական դատարանի կողմից ուսումնասիրված իրավակիրառական պրակտիկայի՝ ՀՀ վարչական դատարանի կողմից 2012 թվականից մինչեւ 2013 թվականի նոյեմբեր ամիսը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը հայցվորների կողմից սահմանված կարգով չպահպանելու հիմքով հայցադիմումները վերադարձնելու 208 դեպքից միայն 103 դեպքում է այն կրկին ներկայացվել վարչական դատարան, որոնցից 94-ն ընդունվել է վարույթ, 9-ի ընդունումը մերժվել է: Այսինքն, կեսից ավելի՝ 105-ի դեպքում վիճարկվող դրույթի հիմքով անձինք չեն կարողացել իրացնել դատական պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանադրական իրենց իրավունքը:

Տվյալ գործով կայացված որոշմամբ սահմանադրական դատարանը նաեւ անհրաժեշտ է համարել, որպեսզի օրենսդիր մարմինը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասում կատարի անհրաժեշտ լրացումներ: Խնդիրը կայանում է նրանում, որ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ վարչական դատարանը վերադարձնում է հայցադիմումները՝ հայցվորներին

ուղղորդելով հայցադիմումին կցել պատասխանողի կողմից հայցադիմումը եւ կից փաստաթղթերն ստանալը հավաստող ապացույց՝ այն դեպքում, երբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նման հիմքով հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ առկա չէ որեւէ նորմ: **Այսինքն, իրավակիրառական պրակտիկայում փորձ է արվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում առկա՝ վերը նշված բացը լրացնել առանց որեւէ իրավական հիմքի:** Մասնավորապես, օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասում, որպես հայցադիմումը վերադարձնելու հիմք, ամրագրված է օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված՝ հայցադիմումին առաջադրվող պահանջները չպահպանելը, իսկ օրենսգրքի 73-րդ հոդվածի առումով ամրագրված է միայն հիշյալ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պահանջը չպահպանելը:

Վերը նշվածի կապակցությամբ տվյալ գործով կայացված որոշման 6-րդ կետում վերահաստատելով 2010 թվականի նոյեմբերի 30-ի ՄԳՈ-927 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ օրենսգրքի 73-րդ հոդվածի պահանջները չպահպանելու իրավական հետեւանքը վարչական դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելն է, սահմանադրական դատարանը գտել է, որ. «հետագա իրավական կանոնակարգումների շրջանակներում հիշյալ դիրքորոշումն անհրաժեշտ է ամրագրել օրենսգրքում, մասնավորապես՝ հայցադիմումը վերադարձնելու իրավական հիմք նախատեսելով օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պարտադիր կատարման ենթակա պահանջները չպահպանելու բոլոր դեպքերը: Հիշյալ կանոնակարգման անհրաժեշտությունը բխում է նաեւ իրավական որոշակիության եւ իրավական կանխատեսելիության սկզբունքների պահանջներից, նպատակաուղղված է սահմանելու դատարանի լիազորությունների կոնկրետ շրջանակը»:

ՀՀ Ազգային ժողովը, սահմանադրական դատարանի 10.12.2013 թվականի ՄԳՈ-1127 որոշման ընդունումից հետո, տվյալ օրենքում փոփոխություն կատարելու հարցին դեռեւս չի անդրադարձել:

Մի շարք անհատական դիմումների հիման վրա քննված գործերով սահմանադրական դատարանն օրենքների վիճարկվող նորմերը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ տվյալ որոշմամբ արձանագրելով իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը, կամ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ արտահայտելով համապատասխան դիրքորոշումներ:

Սահմանադրական դատարանը կարելու է համարում, որ պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմիններն անհրաժեշտ ուշադրություն դարձնեն նաեւ այդ հանգամանքին: **Առավել եւս, որ իր 25.02.2011թ. ՄԳՈ-943 որոշման 11-րդ կետում սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օբյեկտիվ իրավունքի պաշտպանության տեսանկյունից որեւէ իրավանորմ չի կարող մեկնաբանվել ու կիրառվել՝ շրջանցելով սահմա-**

**նադրական դատարանի իրավական դիրքորոշումները:** Գատարանը նշված որոշումների պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում նաեւ արտահայտել է որոշակի իրավական դիրքորոշումներ եւ միայն դրանց շրջանակներում է իրավական ակտի վիճարկվող նորմը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Սահմանադրական դատարանը կարելու է համարում, որ պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց գործունեության մեջ ելնեն իրավանորմների այնպիսի ընկալումից, ինչպիսին ներկայացված է սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներում:

Մասնավորապես.

**ա/ «Հ.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ի եւ քաղաքացի Կարապետ Թառլոյանի դիմումի հիման վրա՝ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 22.01.2013թ. ՍԳՈ-1065 որոշմամբ որոշել է գործի վարույթը կարճել:**

Տվյալ գործով կայացված որոշման 7-րդ կետում դիմումի եւ գործում առկա նյութերի ուսումնասիրության հիման վրա արձանագրելով, որ պարզեցված հարկով հարկվելու նպատակով դիմող ընկերությունը **կամավոր է** մտել իրավահարաբերությունների մեջ, եւ որ դրա հետեւանքները նշված ընկերության համար եղել են **կանխատեսելի**, ինչը հիմք է հանդիսանում պնդելու, որ **տվյալ դեպքում բացակայում է սահմանադրաիրավական վեճը**. կանխատեսելով հայտարարագիր ներկայացնելու հետեւանքները եւ իր կամքի ազատ արտահայտմամբ նման հայտարարագիր ներկայացնելով հանդերձ՝ դիմող ընկերությունն օրենքի պահանջները հաշվի չառնելով մտել է այլ իրավահարաբերությունների դաշտ եւ փորձ է անում ակնհայտ անհիմն սահմանադրաիրավական վեճ ներկայացնելով՝ վիճարկել ավելի քան չորս տարի առաջ ուժը կորցրած օրենքի դրույթը: Սահմանադրական դատարանը գտել է, որ **«կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում սահմանադրաիրավական վեճի բացակայությամբ սահմանադրական դատարան դիմելն անհիմն է դարձնում նման դիմումը, որը ենթակա է մերժման»**.

**բ/ «Թրանսփարենսի ինֆերմեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի եւ քաղաքացի Ռաշիդ Մելիքսեթյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 05.02.2013թ. ՍԳՈ-1074 որոշմամբ որոշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:**

Տվյալ գործով կայացված որոշման 6-րդ կետում, անդրադառնալով Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «ողջամիտ ժամկետ» եզրույթի մեկնաբանությանը, սահմանադրական դատարանը գտել է, որ «Սահմանադր-

րության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «ողջամիտ ժամկետ» եզրույթը չի բացառում տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանքների հնարավոր առկայությունը եւ դրանով պայմանավորված՝ նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը: Դա միաժամանակ ենթադրում է դատարանի կողմից գործի քննությունն անհարկի, կամայականորեն ձգձգելը բացառելու պատվիրան»:

Նույն որոշման 10-րդ կետում, դիմողների կողմից բարձրացված հիմնահարցը դիտարկելով իրավակիրառական պրակտիկայի համատեքստում, սահմանադրական դատարանը հարկ է համարել ընդգծել, որ «ինքնին գործի քննությունը վերսկսելու ինստիտուտի նպատակը թեև իրավաչափ է, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն **կիրառելի է բացառապես միայն այն դեպքերում**, երբ առկա են գործով ապացույցները լրացուցիչ հետազոտելու կամ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու՝ իրապես օբյեկտիվ հիմքեր եւ պատճառներ: Հակառակ պարագայում, ինչպես վկայում են դիմողները, դատարանների կողմից դիտարկվող ինստիտուտի անհարկի եւ չհիմնավորված (առանց պատշաճորեն պատճառաբանելու) կիրառումը գործնականում կարող է հանգեցնել գործի դատական քննության ողջամիտ ժամկետների չարդարացված եւ անթույլատրելի խախտումների եւ, վերջին հաշվով, արդարադատության բուն նպատակների խաթարմանը»:

Նույն կետում, վկայակոչելով գործի նյութերը, սահմանադրական դատարանն արդարացված չի համարել բոլոր այն դեպքերը, երբ 5-7 անգամ դատարանն անցկացնում է նախնական դատական նիստեր եւ ապա դատաքննության արդյունքում կրկին որոշում է կայացնում վերսկսել (ընդ որում՝ ոչ մեկ անգամ) գործի դատաքննությունը, եւ արձանագրել է, որ նշված հանգամանքը վկայում է արդարադատության որակի ու դատական վերահսկողական համակարգերի հնարավոր բացերի մասին: Նման պրակտիկայի առկայությունը պայմանավորված է ոչ թե վեճի առարկա ինստիտուտի առկայությամբ, այլ վերջինիս ոչ համարժեք կիրառման, դատաքննության ոչ պատշաճ իրականացման հանգամանքներով, ինչը բողոքարկման ինստիտուտի շրջանակներում պետք է անհրաժեշտ վերաբերմունքի արժանանա՝ նման դատական ակտերի գնահատման ու նախադեպային պրակտիկայի ձեւավորման իրավասությամբ օժտված դատական ատյանների կողմից:

Միաժամանակ սահմանադրական դատարանը գտել է, որ խնդրո առարկա ինստիտուտի ձեւական կիրառումը դատարանների գերժանրաբեռնվածության կամ այլ պատճառաբանությամբ, որոնք որեւէ անմիջական առնչություն չունեն օրենսգրքի 113-րդ հոդվածում ամրագրված հիմքերի հետ, սահմանադրաիրավական առումով իրավաչափ չէ:

Դատական պրակտիկան տվյալ հարցով պարտավոր է առաջնորդվել սահմանադրական դատարանի նշված իրավական դիրքորոշումներով:



գ/ «Ծիծեռնակ-8» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 07.05.2013թ. ՍԳ-Ո-1092 որոշմամբ գործի վարույթը մասամբ կարճել է, իսկ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի մասով որոշել է, որ վերջինս համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Տվյալ գործով կայացված որոշման 1-ին կետում, անդրադառնալով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածների՝ դիմողի նկատմամբ կիրառված լինելու հանգամանքին, եւ արձանագրելով, որ դրանք հանդիսանում են ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1321-Ն որոշման իրավական հիմքերը, շեշտելով, որ ՀՀ կառավարության նշված որոշումը հղում է կատարում «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածներին՝ սահմանադրական դատարանը գտել է, որ **«դատարանների կողմից որեւէ իրավական ակտի կիրառումը դեռեւս չի նշանակում տվյալ իրավական ակտում նշված եւ այդ իրավական ակտի ընդունման համար իրավաբանական հիմք հանդիսացող այլ իրավական ակտերի համապատասխան դրույթների կիրառում»**:

դ/ «Քաղաքացիներ Աշոտ Մանուկյանի եւ Արամ Բարեղամյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 31.05.2013թ. ՍԳ-Ո-1099 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասը՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի մասով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, հաշվի առնելով, որ վերանայման վարույթի արդյունքում ընդունված նոր դատական ակտի եզրափակիչ մասի չփոփոխվելու հանգամանքը ծանրակշիռ փաստարկներով հիմնավորելու պարտադիր նորմատիվ պահանջը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք»:

Տվյալ գործով կայացված որոշման 6-րդ կետում, ելնելով մարդկանց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության առումով քննության առարկա իրավակարգավորումների բացառիկ կարեւորությունից, ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Ազգային ժողովի եւ ՀՀ վճռաբեկ դատարանի ուշադրությունը հրավիրելով սահմանադրական դատարանի՝ 15.07.2011թ. ՍԳ-Ո-984 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների վրա, կրկին արձանագրել է հետեւյալը. «նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան,

որ այդ ինստիտուտի միջոցով **ապահովվում է խախտված սահմանադրական եւ/կամ կոնվենցիոն իրավունքների վերականգնումը**: Վերջինս, իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, պահանջում է խախտման արդյունքում տուժողի համար առաջացած բացասական հետեւանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս **վերականգնել մինչեւ իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum)**: Այն դեպքում, երբ անձի սահմանադրական եւ/կամ կոնվենցիոն իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչեւ իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է տվյալ անձի համար այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում: Այսինքն, խնդրո առարկա դեպքում, խախտված իրավունքի վերականգնումը **հնարավոր է ապահովել համապատասխան դատական ակտի իրավական ուժը կորցնելու պարագայում**: Հետեւաբար, նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթը՝ որպես անձի խախտված սահմանադրական եւ/կամ կոնվենցիոն իրավունքի վերականգնման միջոց, առաջին հերթին պետք է հանգեցնի իրավունքը խախտած դատական ակտի վերացմանը /բեկանմանը/, եւ սա օրենսդրորեն հստակ ամրագրման անհրաժեշտություն ունի»:

Նույն կետում սահմանադրական դատարանը նաեւ գտել է, որ «նոր հանգամանքի հիմքով «դատական ակտի վերանայում» եզրույթն իր բովանդակությամբ համարժեք է «գործի նորոգում», «գործի վարույթի վերաբացում» եզրույթների բովանդակությանը, **եւ դատական ակտի վերանայման հասկացության նշված ընկալումն էլ պետք է կանխորոշի վերանայման վարույթի բովանդակությունը, դրա խնդիրները եւ դրա շրջանակներում լուծման ենթակա հարցերը**: Ըստ այդմ, դատական ակտի վերանայման վարույթի, նույնն է, թե գործի նորոգման վարույթի շրջանակներում պետք է ձեռնարկվեն արդարադատական այնպիսի միջոցառումներ, որոնք կապահովեն գործի վերաքննություն, նոր քննություն, ինչը հնարավոր է միայն հակասահմանադրական նորմ կիրառած՝ օրինական ուժի մեջ մտած **դատական ակտերի բեկանման պայմաններում**: Վերանայման ինստիտուտը կարող է ծառայել իր նպատակին միայն այն դեպքում, երբ ապահովվի տվյալ գործի նոր քննություն՝ կիրառված նորմի հակասահմանադրականության եւ կոնվենցիոն իրավունքի խախտման փաստի առկայության պայմաններում՝ **հաշվի առնելով նաեւ սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նոր հանգամանք հանդիսացող դատական ակտում արտահայտված իրավական դիրքորոշումները**:

Նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է ipso facto հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի եւ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը»:

Միաժամանակ, արձանագրելով, որ հիմնախնդիրը միայն վերը նշվածով անհրաժեշտ լուծում չի ստանում, սահմանադրական դատարանը գտել է, որ

նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթը կարող է ապահովել այդ վարույթի սահմանադրաիրավական նպատակի ու խնդիրների իրացումն այն դեպքում, երբ վերանայման վարույթը կանոնակարգող օրենսդրությունը եւ իրավակիրառական պրակտիկան ձեւավորվեն հետեւյալ իրավական մոտեցումներին համապատասխան.

ա/ վերանայման բողոքում նոր հանգամանքի շարադրանքի եւ բողոքին կից՝ նոր հանգամանքը հաստատող ապացույցի առկայությունը, ի լրումն բողոքին ներկայացվող մյուս վավերապայմանների առկայությանը, բավարար հիմք պետք է դիտվի վերանայման վարույթ հարուցելու համար,

բ/ վերանայման պահանջը կարող է մերժվել, եթե միայն հարուցված վերանայման վարույթի շրջանակներում բողոքի քննության արդյունքներով պարզվում է, որ բողոքում մատնանշված հանգամանքը տվյալ դատական ակտը վերանայելու համար հիմք չէ, այսինքն՝ այդ հանգամանքը տվյալ դեպքում նոր հանգամանք չի հանդիսանում,

գ/ եթե վերանայման վարույթի շրջանակներում հաստատվում է նոր հանգամանքի առկայության փաստը, ապա վերանայման վարույթի արդյունքում պետք է ուժը կորցրած ճանաչվեն հակասահմանադրական նորմ կիրառած կամ կոնվենցիոն իրավունքի խախտմամբ ընդունված դատական ակտերը,

դ/ վերոհիշյալ դատական ակտերի՝ ուժը կորցնելու պայմաններում կազմակերպվող՝ գործի կամ բողոքի նոր քննությունը պետք է հաշվի առնի նոր հանգամանք հանդիսացող դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Անդրադառնալով իրավակիրառական պրակտիկայում «նորմի կիրառում» եզրույթին տրվող մեկնաբանությանը եւ արձանագրելով, որ հաճախ օրենքների տարբեր հոդվածների թվարկումը բովանդակային անհրաժեշտ հիմնավորում չունի, այդ նորմերի իրավական բովանդակության եւ եզրահանգման միջեւ տրամաբանական ու օրգանական կապը թույլ է, սահմանադրական դատարանը գտել է, որ **այն դեպքում, երբ դատարանները կխուսափեն օրենքի նորմերի պարզապես ձեւական թվարկումից եւ օրենքի նորմի կիրառումն իրական բովանդակություն կունենա, անխուսափելի կլինի գործն ամբողջությամբ վերանայելու արդյունքում նաեւ եզրափակիչ մասի բովանդակային վերանայումը:**

ՀՀ Ազգային ժողովը, սահմանադրական դատարանի 31.05.2013 թվականի ՍԳ-Ո-1099 որոշման ընդունումից հետո, տվյալ օրենքում փոփոխություն կատարելու հարցին դեռեւս չի անդրադարձել.

**ե/ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 18.09.2013թ. ՍԳ-Ո-1114 որոշմամբ որոշել է.**

«1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասը՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի մասով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այն սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի.

**ա/ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է ipso facto (փաստի ուժով) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի եւ/կամ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը՝ բացառելով դրա օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը,**

բ/ վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոփոխելու հնարավորությունը վերաբերում է միայն դատական ակտը բեկանելուց հետո գործի նոր քննության արդյունքում կայացվող նոր դատական ակտին: **Իսկ վերջինիս եզրափակիչ մասի չփոփոխվելու հանգամանքը ծանրակշիռ փաստարկներով հիմնավորելու պարտադիր նորմատիվ պահանջը** հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք»:

Խնդիրը կարելի է նրանով, որ ձեւավորված է ոչ միայն նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի՝ Սահմանադրության գերակայության երաշխավորման առումով խնդրահարույց եւ իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքին ոչ համարժեք հակասական իրավակիրառական պրակտիկա, որի պայմաններում չեն ապահովվում մարդկանց սահմանադրական իրավունքները, այլև նոր հանգամանքների իրավական ինստիտուտի կիրառման դատական պրակտիկան մեծ թվով գործերի առնչությամբ ներդաշնակ չէ մարդկանց իրավունքների ապահովման ու պաշտպանության սահմանադրական պահանջներին: Շատ դեպքերում նոր հանգամանքների հիմքով գործի նորոգումը մերժվում է այդ ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությամբ ոչ համարժեք փաստարկներով:

Այդ կապակցությամբ տվյալ գործով կայացված որոշման պատճառաբանական մասում սահմանադրական դատարանը բացահայտել է վերը նշված մեծ դատական պրակտիկայի ձեւավորման պատճառները եւ արտահայտել համապատասխան մարմիններին վերաբերող եւ նրանց համար կողմնորոշիչ նշանակություն ունեցող մի շարք դիրքորոշումներ: Մասնավորապես.

- փաստարկը «ծանրակշիռ» կարող է լինել, եթե այն ելակետային ու վճռորոշ նշանակություն ունի համարժեք եզրահանգման համար: Դատական պրակտիկայի համար նորմատիվ պարզաբանման կարիք ունի «ծանրակշիռ փաստարկ» հասկացությունը: Եթե դատական պրակտիկան համարժեք մոտեցում չի ցուցաբերել այս եզրույթի իրավական բովանդակության առնչությամբ, ապա օրենսդիր մարմինը նույնպես պետք է համապատասխան հետեւություն անի եւ օրենսդրորեն առավել հստակեցնի «ծանրակշիռ փաստարկ» հասկացության իրավական բովանդակությունը, քանի որ վերջինս տվյալ իրավահարաբերություննե-

- րում վճռորոշ նշանակություն է ձեռք բերում անձանց իրավունքների պաշտպանության եւ դրանց անմիջական գործողության սահմանադրական պահանջի իրականացման հարցում (**որոշման 6-րդ եւ 11-րդ կետեր**: Խոսքը վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «ծանրակշիռ փաստարկներ» եզրույթին),
- տվյալ համատեքստում խոսքը վերաբերում է միայն վերանայված դատական ակտին, ինչին անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում դատական պրակտիկայում (**որոշման 7-րդ կետ**: Խոսքը վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը» բառակապակցությանը),
  - կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության ինստիտուտը համակարգային առումով փոխկապակցված է նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման ինստիտուտի հետ, որոնց էությունը կայանում է նրանում, որ սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հիման վրա կոնկրետ դատական ակտի վերանայման արդյունքում համապատասխան հիմքերի առկայության պարագայում տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի գործով կայացվում է նոր դատական ակտ, որը տարբերվում է տվյալ գործով նախկինում՝ մինչեւ սահմանադրական դատարանի որոշումը կայացված դատական ակտից (**որոշման 7-րդ կետ**),
  - հարկ է տարբերակել «նոր հանգամանքների հիմքով վերանայման վարույթի հարուցում» եւ «նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայում» եզրույթները (**որոշման 7-րդ կետ**),
  - նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը տեղի է ունենում նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման բողոքի ընդունելիության հարցը լուծելիս, որի ընթացքում, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33, 204.36 եւ 204.37-րդ հոդվածները, չի կարող գնահատվել դիմողին առնչվող գործով կիրառված հակասահմանադրական նորմի ազդեցությունը դատարանի եզրահանգման վրա: Տվյալ դեպքում սահմանադրական դատարանի՝ ՄԳ-Ո-984 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների ուժով, եթե առկա չեն բողոքը վերադարձնելու հիմքեր, ապա դատական ակտը վերանայող դատարանը պարտավոր է ոչ միայն հարուցել վերանայման վարույթ, այլեւ դրա արդյունքում բեկանել վերանայվող դատական ակտը, այլապես դատական ակտի հիմքում կշարունակվի մնալ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված կամ սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված իրավական նորմը (**որոշման 7-րդ կետ**),

- նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայումը վերանայվող դատական ակտի բեկանումից հետո տեղի ունեցող ընթացակարգ է, որի ընթացքում միայն կարող է գնահատվել նոր հանգամանքի ազդեցությունը գործի ելքի վրա, ինչով էլ պայմանավորված է վերանայվող դատական ակտի եզրափակիչ մասը փոփոխելու կամ չփոփոխելու անհրաժեշտությունը (**որոշման 7-րդ կետ**),
- իրավական երկու ինստիտուտների /սահմանադրական դատարանի որոշման հետադարձության եւ անհատական զանգառի միջոցով սահմանադրական իրավունքների պաշտպանության/ իրավական էության ոչ ճիշտ մեկնաբանման արդյունքում սահմանափակվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12 եւ 13-րդ մասերով նախատեսված իրավասությունների իրավունքները դատական կարգով պաշտպանելու հնարավորությունը (**որոշման 8-րդ կետ**: Խոսքը վերաբերում է նրան, որ ՍԳՈ-690 որոշման առկայության պարագայում ՀՀ վճռաբեկ դատարանը նոր հանգամանքների հիմքով որոշման վերանայման վարույթի հարուցումը մերժել է՝ գտնելով, որ սահմանադրական դատարանն իր որոշումը չի տարածել «...այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա»),
- նոր հանգամանքի առկայությունը տվյալ անձի դիմումի հիման վրա կամ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 13-րդ մասով նախատեսված սուբյեկտների առնչությամբ, սահմանադրական դատարանի որոշման փաստն է, որով նրանց նկատմամբ կիրառված նորմը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող կամ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, ինչը, սահմանադրական դատարանի կարծիքով, չի համապատասխանում տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը: Եթե սահմանադրական դատարանը գործն արդեն իսկ ընդունել է քննության եւ համանման որոշում է կայացրել, ապա այդ որոշումը վճռաբեկ դատարանի պալատն իրավասու չէ կասկածի տակ դնել եւ տարաբնույթ մոտեցումներով խուսափել դրա կատարումից (**որոշման 8-րդ կետ**: Խոսքը վերաբերում է նրան, որ ՀՀ դատական պրակտիկայում վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատը հաճախ վերադարձնում է բողոքը՝ պարզապես արձանագրելով, որ «... վճռաբեկ բողոքում չի հիմնավորվել նոր հանգամանքների առկայությունը»),
- առանձին դեպքերում ձեւական մոտեցումը հանգեցնում է նրան, որ դատական ակտում մեխանիկորեն վերարտադրվում է դիմողի կողմից թույլ տրված սխալը կամ վրիպակը (**որոշման 8-րդ կետ**: Խոսքը վերաբերում է նրան, որ, օրինակ, 2012թ. հունվարի 11-ի ԵՄԴ/0644/02/10 քաղաքացիական գործի շրջանակներում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում է ՀՀ սահմանադրական դատարանի 15.11.2011թ. ՍԳՈ-897 որոշման հիման վրա նոր հանգամանքների հիմքով նախկին որոշումը վերանայելու հիմքերի բացակայության մասին եւ

- բողոքի քննության ընդունումը մերժվում է այն պատճառաբանությամբ, որ «... բողոք բերած անձինք վճռաբեկ բողոքում չեն հիմնավորել նոր հանգամանքի առկայությունը»: Այնինչ սահմանադրական դատարանի հիշյալ համարով որոշումն ընդունվել է 2010թ. հունիսի 22-ին եւ վերաբերում է միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների սահմանադրականությանը),
- դատական պրակտիկայում անհրաժեշտ տարբերակում պետք է դրվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 եւ 204.33-րդ հոդվածներով նախատեսված իրավապայմանների միջեւ (**որոշման 9-րդ կետ**: Խոսքը վերաբերում է նրան, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածը նոր երեսան եկած հանգամանքների դեպքում դատական ակտի վերանայման հիմքերի մեջ պարտադիր իրավապայման է դիտարկում նաեւ այն, որ բողոք ներկայացրած անձը պարտավոր է ապացուցել, որ «...այդ հանգամանքները հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, եւ այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն»): 204.33-րդ հոդվածը, սակայն, նոր հանգամանքի առկայության հիմնավորման որեւէ իրավապայման չի առաջադրում, բացի ՀՀ սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան ակտերի առկայությունից: Դա անհրաժեշտ ու բավարար պայման է գործի նորոգման համար: Այլ հարց է, որ նորոգումից հետո ըստ էության նորոգված գործի քննության շրջանակներում իրավասու դատարանը պետք է որոշի, թե որքանով է Սահմանադրությանը հակասող նորմի կիրառումն ազդել քննության առարկա գործի ելքի վրա եւ ինչպես պետք է վերականգնվեն անձի հնարավոր խախտված իրավունքները: Դրա փոխարեն պարզապես արգելափակվում է անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքը),
  - «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածում «գտնում են» արտահայտությունը պետք է ընկալել որպես հայեցողական դիրքորոշում, հիմնավոր կասկածով պայմանավորված՝ դատավորի իրավական վերլուծության արդյունք: Այնինչ «զննատուր» ենթադրում է համապատասխան դատավարական ընթացակարգ ու դրա իրականացման համարժեք լիազորություն (**որոշման 9-րդ կետ**: Խոսքը վերաբերում է նրան, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատը թիվ ՎԳ/1314/05/10 վարչական գործով 25.12.2012թ. որոշման մեջ գտել է, որ «... վեճը լուծող դատարանները (ընդհանուր իրավասության եւ/կամ մասնագիտացված) որոշակի հանգամանքների ի հայտ գալու ուժով լիազորված են կասեցնելու գործի վարույթը: Նման հանգամանքներից է կիրառման ենթակա օրենքի կամ այլ իրավական ակտի՝ դատարանի կարծիքով ՀՀ Սահմանադրությանը հա-

կասելը»։ Այս իրավաչափ դատողությանը հաջորդում է այն հետետությունը, համաձայն որի՝ «Կոնկրետ դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հանգամանքը ենթակա է գնահատման դատարանի (գործը քննող դատավոր կամ դատավորների կազմ) կողմից»),

- օրենսդրությամբ առավել հստակ պետք է սահմանազատվեն վճռաբեկ դատարանի կողմից գործը քննության ընդունելու եւ գործով ըստ էության որոշում կայացնելու դատավարական ընթացակարգերն ու ընդունվող որոշումներին ներկայացվող պահանջները (**որոշման 10-րդ կետ**։ Խոսքը վերաբերում է նրան, որ գործի քննության ընդունման փուլում վճռաբեկ դատարանը հաճախ իրականացնում է գործն ըստ էության լուծելու գործառույթ),
- անհրաժեշտ հստակեցման կարիք ունի «վերջնական դատական ակտ» հասկացությունը։ Այն հաճախ շփոթում են վերադաս դատարանի կողմից կայացված ակտի հետ։ Եթե քաղաքացին դիմել է վճռաբեկ դատարան եւ վերջինս մերժել է նրա դիմումը քննության ընդունել, դա չի նշանակում, որ այդ որոշումն է վերջնական դատական ակտ։ Գատական պրակտիկայում առկա շփոթը հաղթահարելու համար համանման ակտերին ներկայացվող պահանջներն առավել հստակ պետք է շարադրվեն օրենսդրության մեջ՝ լիովին համապատասխանեցնելով իրավական որոշակիության սկզբունքին (**որոշման 10-րդ կետ**։ Խոսքը վերաբերում է նրան, որ «վերջնական դատական ակտ» հասկացության ոչ իրավաչափ մեկնաբանության հանդիպում ենք ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատի առանձին որոշումներում),
- իրավունքի գերակայության երաշխավորման, իրավական պետության սահմանադրական սկզբունքին հավատարիմ լինելու եւ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներն անշեղ կատարելու համար առանցքային նշանակություն ունի ՀՀ դատական պրակտիկայում իրավունքի գերակայության սկզբունքի հետետողական իրացմամբ թելադրված՝ իրավամտաձողության լուրջ բարեփոխումը եւ ՄԳՈ-1114 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արձանագրած իրավիճակի հաղթահարումը (**որոշման 11-րդ կետ**։ Խոսքը վերաբերում է նրան, որ ձեռնվորված իրավակիրառական պրակտիկան հիմնականում շրջանցում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը)։ Սահմանադրական դատարանը սույն հիմնախնդրի շրջանակներում ուսումնասիրել է վերջին հինգ տարիների դատական պրակտիկան ու հատկապես ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական ու վարչական գործերով պալատի ավելի քան հարյուր հիսուն դատական ակտեր։ Վիճակն ավելի քան մտահոգիչ է եւ վերաճել է ընդհուպ իրավական անվտանգության հիմնախնդրի։ Նոր հանգամանքների արդարադատական ինստիտուտը մեր երկրում գրեթե իմաստագրկվել է։ Վճռաբեկ դատարանի համապատասխան պալատի գլխավոր խնդիրն է դարձել ցանկացած, այդ թվում՝ ոչ իրավաչափ,



պատճառաբանություններով մերժել մարդու՝ դատարանի մատչելիության եւ արդար դատավարության սահմանադրական իրավունքների արդյունավետ իրացումը:

ՀՀ Ազգային ժողովի իրավասության սահմաններում է ՀՀ սահմանադրական դատարանի 18.09.2013 թվականի ՍԳ-Ո-1114 որոշման հիման վրա օրենսդրական զարգացումների համարժեք քայլեր ձեռնարկելը.

զ/ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան», «Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ», «ՎՏԲ-Հայաստան Բանկ» եւ «Արցախբանկ» ՓԲԸ-ների դիմումի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.06.2013թ. ՍԳ-Ո-1102 որոշմամբ որոշել է.

«1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները»:

Խնդիրը կարեւորվում է նրանով, որ օրենքի կարգավորման մակարդակում բավարար չափով դեռեւս առկա չեն իրավախախտմամբ անձին պատճառված նյութական վնասի հատուցման արդյունավետ ընթացակարգեր: Այդ կապակցությամբ տվյալ գործով կայացված որոշման պատճառաբանական մասում սահմանադրական դատարանն արտահայտել է համապատասխան մարմինների վերաբերող եւ նրանց համար կողմնորոշիչ նշանակություն ունեցող մի շարք դիրքորոշումներ: Մասնավորապես.

- ՀՀ դատախազության կողմից՝ իր իրավասության շրջանակներում տուժողների խախտված իրավունքների վերականգնումն երաշխավորելու առումով պետք է հաշվի առնվեն սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԳ-Ո-983 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումները (**որոշման 6-րդ կետ**),
- ՀՀ Ազգային ժողովի խնդիրն ու սահմանադրական պարտականությունն է՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի պահանջներից, հաղթահարել իրավակարգավորման բացը, սահմանել հստակ դրույթներ քննության առարկա հիմնախնդրի շրջանակներում սպահովելու անձանց խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունը (**որոշման 6-րդ կետ**),
- խնդրի օրենսդրական կարգավորման մակարդակում պետք է հաշվի առնվեն նաեւ միջազգային պրակտիկայում հաստատագրված վերոհիշյալ հայեցակարգային մոտեցումները՝ որպես ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի դրույթներից անմիջականորեն բխող պահանջներ (**որոշման 9-րդ կետ**),
- պետք է երաշխավորվի ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության անունից 14.06.2012թ. ընդունված որոշման կա-

տարումը՝ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հոկտեմբերի 12-ի դատավճիռը քաղաքացիական հայցի մասով բեկանելու եւ իրեղեն ապացույց ճանաչված 25.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ գումարը եւ 4.040.000 ՀՀ դրամ գումարը համամասնորեն տուժողներին բաշխելու վերաբերյալ (**որոշման 9-րդ կետ**),

- դիմողների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության տեսանկյունից, թերեւս, գործուն պետք է լինի նաեւ ՀՀ դատախազության դերակատարությունը, քանի որ վերջինիս կողմից ներկայացված կատարողական թերթի հիման վրա են դատարանի կողմից դիմողներին հատկացված փոխհատուցման միջոցները նախապես փոխանցվել ՀՀ պետական բյուջե (**որոշման 9-րդ կետ**):

ՀՀ Ազգային ժողովը, սահմանադրական դատարանի 28.06.2013 թվականի ՍԳՈ-1102 որոշման ընդունումից հետո, տվյալ օրենքում փոփոխություն կատարելու հարցին դեռեւս չի անդրադարձել:

Է/ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 24.09.2013թ. ՍԳՈ-1115 որոշմամբ որոշել է.

«1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սահմանադրական դատարանի կողմից դրա սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման հիման վրա ներկայացված հետեւյալ մեկնաբանությամբ. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «քաղաքացի-պահանջատիրոջ» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանել եւ կիրառել ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը համահունչ՝ հաշվի առնելով, որ այն վերաբերում է նաեւ իրավաբանական անձանց, քանի որ այն իր էությունը կիրառելի է վերջիններիս նկատմամբ:

2. Դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման»:

Խնդիրը կարելովում է նրանով, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «քաղաքացի-պահանջատիրոջ» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում մեկնաբանվել եւ կիրառվել է որպես իրավաբանական անձ հանդիսացող պահանջատիրոջը չվերաբերող եզրույթ, ինչի արդյունքում իրավաբանական անձ հանդիսացող պահանջատերը զրկվում է հարգելի ճանաչված պատճառներով կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու հնարավորությունից: Բացի դրանից, կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետի պատճառները հարգելի

ճանաչելը եւ բաց թողնված ժամկետը վերականգնելն օրենսդրորեն թողնված է դատարանի հայեցողությանը:

Տվյալ գործով կայացված որոշման 5-րդ կետում սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարբ եւ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «իր գործի հրապարակային քննության»՝ որպէս դատավարական գործընթացի փուլ: Նույն կետում վերը նշված իրավական դիրքորոշման հիման վրա, հիմք ընդունելով նաեւ ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածը, դատարանը գտել է, որ դատական ակտերի հարկադիր կատարման շրջանակներում պահանջատիրոջը վերապահված իրավունքներն իրենց էությանը կիրառելի են նաեւ իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության, համայնքի, օտարերկրյա պետության նկատմամբ:

Արձանագրելով, որ վիճարկվող հոդվածով օրենսդիրը դատարաններին օժտել է հայեցողական լիազորությամբ՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետների բացթողումը հարգելի ճանաչելուց բացի, վերականգնել կամ չվերականգնել ժամկետների բացթողումը, եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավունքի լիարժեք իրացումը կախվածության մեջ է դրվում դատական հայեցողությունից՝ ներկայացված պատճառները հարգելի ճանաչելու հանգամանքից զատ նաեւ բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծման առումով, սահմանադրական դատարանը տվյալ գործով կայացված որոշման 6-րդ կետում գտել է, որ նշված դատական հայեցողությունը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ խաթարվի այլոց իրավունքների եւ ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը կամ անհարկի սահմանափակվի դրանց իրացումը:

Միաժամանակ, տվյալ գործով կայացված որոշման 6-րդ կետում սահմանադրական դատարանն ընդունել է ի գիտություն, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ 2013թ. հուլիսի 3-ին շրջանառության մեջ է դրվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով առաջարկվել է օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ. «**Պահանջատիրոջ** կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում **դատարանը վերականգնում է այն**»:

ՀՀ Ազգային ժողովը, սահմանադրական դատարանի 24.09.2013 թվականի ՍԳՈ-1115 որոշման ընդունումից հետո, տվյալ օրենքում փոփոխություն կատարելու հարցին դեռեւս չի անդրադարձել.

ը/ «Զաղաքացի Թամարա Սարգսյանի դիմումի հիման վրա՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը

համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 11.10.2013թ. ՄԳՈ-1120 որոշմամբ որոշել է.

«1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ **գույքի նկատմամբ գրանցված իրավունքների եւ սահմանափակումների մասին տեղեկացված լինելու կանխավարկածը չի ներառում գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար իրավական հիմք հանդիսացած եւ երրորդ անձի իրավունքներին անմիջականորեն առնչվող դատական ակտերի գոյության մասին տեղեկացված լինելու կանխավարկածը եւ չի հանդիսանում գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար իրավական հիմք հանդիսացած դատական ակտի բողոքարկման համար դատավարական օրենսգրքերով սահմանված ժամկետների հաշվարկման հիմք:**

2. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները սույն գործով դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված, մասնավորապես՝ որոշման եզրափակիչ մասի առաջին կետում բերված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող այլ մեկնաբանությամբ:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով»:

Խնդիրը կարելի է նրանով, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների եւ սահմանափակումների մասին տեղեկացված լինելու կանխավարկածն իրավակիրառական պրակտիկայում ընկալվել է որպես գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար իրավական հիմք հանդիսացած եւ երրորդ անձի իրավունքներին անմիջականորեն առնչվող դատական ակտերի գոյության մասին տեղեկացված լինելու կանխավարկած եւ, հետեւաբար՝ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար իրավական հիմք հանդիսացած դատական ակտի բողոքարկման համար դատավարական օրենսգրքերով սահմանված ժամկետների հաշվարկման հիմք, ինչի արդյունքում դատավարությանը մասնակից չդարձված անձը գրկվում էր դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից՝ բողոքարկման համար սահմանված դատավարական ժամկետները բաց թողնելու պատճառաբանությամբ:

Տվյալ գործով կայացված որոշման 7-րդ կետում սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենքի վիճարկվող դրույթներին տրված մեկնաբանությունը, այն է՝ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վերաբերյալ իրազեկվածության կանխավարկածից դրա հիմքում ընկած դատական ակտի

գոյության մասին իրազեկվածության կանխավարկած բխեցնելը ոչ միայն չի արտացոլում օրենսդրի կամքը, այլև չի բխում դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումների սահմանադրաիրավական տրամաբանությունից՝ խաթարելով անձի՝ դատական պաշտպանության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքները:

Այս մոտեցումը պետք է դրվի արդարադատական պրակտիկայի հիմքում:

### **ՀՀ դատարանների դիմումների հիման վրա ընդունված ՍԳ որոշումները եւ դրանց կատարումը**

ՀՀ դատարանների կողմից ներկայացված հինգ դիմումների հիման վրա գործերն ընդունվել են քննության, դրանցից երեքը միավորվել են եւ կայացվել է որոշում, իսկ մյուս երկու դիմումների հիման վրա գործերով որոշումները կայացվելու են 2014թ. փետրվար-մարտ ամիսներին:

«Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի, Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի եւ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 19.11.2013թ. ՍԳՈ-1124 որոշմամբ գործի վարույթը կարճել է այն հիմքով, որ դիմումներում առաջադրված հարցի վերաբերյալ առկա են սահմանադրական դատարանի որոշումներ եւ հստակ արտահայտված իրավական դիրքորոշումներ, ինչպես նաեւ որոշակի են տվյալ հարցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները, որոնք սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Խոսքը վերաբերում է նրան, որ դիմումներում վիճարկվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ «կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը» բառակապակցությունը համահունչ է Հայաստանի Հանրապետության կողմից 2004թ. դեկտեմբերի 8-ին վավերացված՝ 1999թ. նոյեմբերի 4-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիայի, 2005թ. դեկտեմբերի 8-ին վավերացված՝ 2003թ. մայիսի 15-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի, 2006թ. հոկտեմբերի 23-ին վավերացված՝ 2003թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում ընդունված՝ Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին, որոնք մինչեւ դրանց վավերացումը դարձել են սահմանադրական դատարանի քննության առարկա եւ դրանց վերաբերյալ առկա են սահմանադրական դատարանի համապատասխանաբար ՍԳՈ-530 /09.11.2004թ./, ՍԳՈ-483 /30.03.2004թ./ եւ ՍԳՈ-641 /30.06.2006թ./ որոշումները:

## **Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները եւ դրանց կատարումը**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը սահմանադրական դատարան համեմատաբար ակտիվ դիմող սուբյեկտներից է եւ բարձրացնում է քաղաքացիների իրավունքներին վերաբերող ու հանրային հնչեղություն ունեցող կարեւոր հիմնախնդիրներ: 2013 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ինը դիմումներից /դրանք ներառում են նաեւ 3 դիմումները, որոնք սահմանադրական դատարան մուտքագրվել են 2012 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, սակայն դրանց հիման վրա գործերը քննության են առնվել 2013 թվականին/ 2-ը, որոնցով օրենքների վիճարկվող դրույթները **ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր**, վերաբերում են հետեւյալին.

1. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 08.10.2013թ. ՄԳՌ-1119 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը դրանում ամրագրված՝ **«քրեական հետապնդման մարմնի թույլություն»** եւ **«եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը»** ձեւակերպումների մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթին եւ 43-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարեւորվում է նրանով, որ օրենսգրքի վիճարկվող նորմը պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունը պայմանավորել է քրեական հետապնդման մարմնի թույլությամբ, իսկ իր պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունը պայմանավորել է կասկածյալի կամ մեղադրյալի պահանջով, կամ պաշտպանի՝ գործողությունն սկսելիս արված միջնորդությամբ: Այս վերջին դեպքում անորոշ է մնում քննչական կամ այլ դատավարական գործողությունն սկսելու պահը, ինչը կարող է պաշտպանի եւ քրեական հետապնդման մարմնի միջեւ տարածայնությունների տեղիք տալ՝ բացասաբար անդրադառնալով պաշտպանյալի՝ պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության եւ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների իրացման վրա:

Խնդիրը դիտարկելով պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ իրավաբանական օգնություն ստանա-

լու իրավունքների, ինչպես նաև իրավունքների եւ ազատությունների սահմանափակումների թույլատրելիությունն ու հիմքերն ամրագրող՝ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում, տվյալ գործով կայացված որոշման 5-րդ կետում սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքը ենթադրում է իրավաբանական օգնության լիարժեքություն, ինչը պայմանավորված է պաշտպանի կողմից իրավաբանական օգնություն տրամադրելու պարտականության իրականացման արդյունավետությամբ՝ հաշվի առնելով տվյալ իրավունքի՝ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմքերով սահմանափակման հնարավորությունը:

Վերը նշվածի կապակցությամբ նույն կետում սահմանադրական դատարանն ուղղորդել է օրենսդիր եւ իրավակիրառ մարմիններին իրենց գործառնություններն իրացնելիս ընդունել, որ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքին համապատասխանում է պետության պարտականությունը՝ թե՛ օրենսդրական մակարդակում, թե՛ իրավակիրառ պրակտիկայում երաշխավորել պաշտպանի կողմից իրավաբանական օգնություն տրամադրելու պարտականության արդյունավետ իրականացումը, իսկ որեւէ խոչընդոտ առաջանալու դեպքում քայլեր ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ:

Միաժամանակ, նույն կետում տվյալ գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը գտել է, որ պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության եւ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների իրացմանն օրենսդրորեն կարող են առաջադրվել որոշակի պահանջներ կամ նշված իրավունքների իրացման կարգերը կարող են պարունակել որոշակի ձեւական պայմաններ, որոնք, սակայն, չպետք է լինեն այն ծավալով, որ անարդյունավետ դարձնեն այդ իրավունքների իրացումը, խեղաթյուրեն դրանց էությունը կամ վերածվեն իրավունքի այնպիսի սահմանափակման, որը չի հետապնդում որեւէ իրավաչափ նպատակ:

Տվյալ գործով կայացված որոշման 6-րդ կետում սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունել ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի լրամշակված տարբերակը (փաստաթղթային կոդ՝ Կ-084-14.09.2012, 10.06.2013-ՊԻ-010/0) եւ ուշագրավ է համարել նշված նախագծի՝ «Պաշտպանի իրավունքները եւ պարտականությունները» վերտառությամբ 49-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված իրավակարգավորումը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչեւ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումը դատական պրակտիկայի համար կողմնորոշիչ նշանակություն պետք է ունենան սույն հիմնախնդրի վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

2. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի եւ 54-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաս-

տանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 23.04.2013թ. ՄԳ-Ո-1082 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասն այնքանով, որքանով տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում համարժեքորեն չի երաշխավորում երկու հարյուր յոթանասուն ժամից պակաս տեւողությամբ հանրային աշխատանքների կիրառման իրավական հնարավորություն այն անձանց նկատմամբ, որոնք չունեն տուգանքը վճարելու հնարավորություն՝ արգելափակելով նրանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը, ինչպես նաեւ տարբերակված մոտեցում չի դրսևորում տուգանքը վճարելու անհնարինության եւ դրանից խուսափելու հանգամանքների միջեւ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները»:

Տվյալ գործով կայացված որոշման 5-րդ կետում սահմանադրական դատարանն արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք, միաժամանակ, բացահայտում են իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող՝ օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը: Դրանք են.

- չնայած օրենսդիրը չի հստակեցրել «անհնարինության» դրսևորումները (այն հստակ չէ նաեւ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասում), այնուհանդերձ, դրա ներքո կարող են դասվել փաստական այնպիսի հանգամանքներ, որպիսիք նախանշված չեն օրենսգրքի քննարկվող հոդվածի 3-րդ մասում,
- ակնհայտ է, որ «անհնարինություն» եզրույթը չի կարող ներառել «դիտավորություն» կամ «չարամիտ խուսափում» եզրույթները,
- օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի վերոհիշյալ իրավակարգավորման շրջանակներում տուգանքը վճարելու «անհնարինության» իրավական բովանդակության բացակայությունն իրավակիրառական պրակտիկայում կարող է հանգեցնել տարակերպ մեկնաբանման,
- տարբերակված չեն տուգանք վճարելու անհնարինության եւ տուգանքը չվճարելու (վճարումից խուսափելու) հնարավոր հանգամանքները,
- պատժատեսակի փոխարինման (տուգանքը՝ հանրային աշխատանքներով) ինստիտուտի կիրառումն ինքնին հետապնդում է իրավաչափ նպատակ, սակայն այն պահանջում է նաեւ տարբերակված մոտեցում՝ ելնելով փոխարինման դրդապատճառներից: Հետեւաբար, օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորման շրջանակներում տու-



գանքի վճարումից խուսափելու հնարավոր հանգամանքները չնախատեսելը կարող է գործնականում սահմանադրականության խնդիր առաջացնել,

- օրենսդիրն սկզբունքորեն ընդհանրապես չի անդրադարձել տուգանք վճարելուց չարամտորեն (կամ դիտավորության այլ դրսեւորումներով) խուսափելու պայմաններում այն առավել խիստ պատժով փոխարինելու ինստիտուտի կիրառման անհրաժեշտության խնդրին, ինչն առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող մասում,
- ինչպես հանրային աշխատանքներից, այնպես էլ տուգանքից, որպես ազատագրկման հետ չկապված պատժատեսակից, խուսափելը հասարակական վտանգավորության միեւնոյն աստիճանի տեսանկյունից օրենսդիր մարմնից պահանջում է իրավական համարժեք գնահատական, հետեւաբար՝ նաեւ համապատասխան իրավակարգավորում այն սկզբունքով, որպեսզի հաշվի առնվեն դատապարտյալի կողմից ոչ միայն տուգանք վճարելու պարտականության չկատարման (անհնարինության), այլեւ դրանից խուսափելու հանցավոր դրսեւորումները,
- երբ առկա չէ դատապարտյալի կողմից պատիժը կրելուց խուսափելու օրենքով նախատեսված կարգով փաստված անվիճելի հանգամանք, ապա իրավաչափ չէ նշանակված պատժի փոխարինմամբ դրա առավել խստացումը, ինչին գործնականում կարող է հանգեցնել վերոհիշյալ իրավակարգավորումը,
- ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի նորմերը բովանդակում են իրավակարգավորիչ անհամաչափ միջոցներ՝ պատժի խստացում (դատապարտյալ անձի վիճակի անհիմն վատթարացում) այն դեպքում, երբ առկա չէ դրա կիրառման իրավաչափ հիմքը, եւ այդպիսի խստացման բացակայություն՝ իրավական համապատասխան հիմքերի (դիտավորության) հնարավոր առկայության դեպքերում:

Սահմանադրական դատարանի որոշման կատարումն ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովում մշակվել եւ շրջանառության մեջ է դրվել Պ-314-15.08.2013-ՊԲ-010/0 օրենսդրական նախաձեռնությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի հիշյալ հոդվածներում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հինգ դիմումների հիման վրա գործերով որոշումները կայացվելու են 2014 թվականի հունվար-ապրիլ ամիսներին:

Մարդու իրավունքների պաշտպանի մյուս երկու դիմումների հիման վրա քննված գործերով սահմանադրական դատարանն օրենքների վիճարկվող նորմերը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում կամ տվյալ որոշմամբ արձանագրել է նաեւ իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող

օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը:

Մասնավորապես.

**ա/** «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 30.01.2013թ. ՍԳ-Ո-1073 որոշման 6-րդ կետում, անդրադառնալով հարկատուի գույքն արգելադրելու վերաբերյալ հարկային մարմնի լիազորություններին եւ նկատի ունենալով նաեւ նման լիազորությունների կիրառման հետ կապված ու դիմողի կողմից մատնանշվող իրական ռիսկը, գտել է, որ գույքի նկատմամբ արգելանքի կիրառումը պետք է իրացնել միայն հարկային պարտավորությունների կատարումն ապահովող՝ օրենքով նախատեսված այլ հնարավորությունների սպառման պարագայում, եւ խիստ վերահսկելի ձեւով:

Խնդիրը կարելի է նրանով, որ հարկատուի գույքն արգելադրելու կապակցությամբ հարկային մարմնի լիազորությունն առնչվում է հարկատուի՝ իր սեփականությունը, ներառյալ՝ իրեն պատկանող օբյեկտն իր հայեցողությամբ տիրապետելու, ըստ նշանակության օգտագործելու եւ այն տնօրինելու հնարավորության հետ, որպիսի պայմաններում չեն բացառվում վարչական մարմնի կողմից հնարավոր չարաշահումների եւ խտրական վերաբերմունքի դրսևորման դեպքերը: Այդ իրողությունը հաշվի առնելով է, որ սահմանադրական դատարանն արտահայտել է վերը նշված իրավական դիրքորոշումը,

**բ/** «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 22.02.2013թ. ՍԳ-Ո-1075 որոշման 8-րդ կետում, անդրադառնալով ուսանողական նպաստի միջոցով ուսման վարձի մասնակի փոխհատուցման վերաբերյալ սահմանված իրավակարգավորումներին, հարկ է համարել ՀՀ կառավարության ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշումը չի ապահովում «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված՝ բուհերի հայեցողական լիազորության վերաբերյալ դրույթի համարժեք իրացումը:

ՀՀ կառավարությունը, սահմանադրական դատարանի 22.02.2013 թվականի ՍԳ-Ո-1075 որոշման ընդունումից հետո, ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու հարցին դեռեւս չի անդրադարձել, ինչը սահմանադրական դատարանի կողմից գնահատվում է անընդունելի եւ իրավական պետության սահմանադրաիրավական պահանջներին ոչ հարիր:

## **Հանրապետության Նախագահի թեկնածուների դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները եւ դրանց կատարումը**

Հանրապետության Նախագահի թեկնածուների կողմից ներկայացված երկու դիմումներով էլ գործերն ընդունվել են քննության եւ միավորվել:

«ՀՀ Նախագահի թեկնածուներ Բա.Ֆ.Ֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի եւ Անդրիաս Դուկասյանի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» թիվ 62-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 14.03.2013թ. ՍԳՈ-1077 որոշմամբ որոշել է.

«1. «Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 25-ի թիվ 62-Ա որոշումը թողնել ուժի մեջ»:

Հաշվի առնելով ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության ցածր մակարդակը, ընտրական ու քաղաքական մշակույթի առկա որակները, ՀՀ սահմանադրական դատարանն իր իրավասության շրջանակներում բացառիկ ուշադրությամբ քննության առարկա դարձրեց ընտրական գործընթացին առնչվող ապացուցողական նշանակության յուրաքանչյուր փաստ ու հանգամանք: Բացահայտվեցին ընտրական գործընթացում ներգրավված իրավասությունների իրավաչափ գործողության սահմանները, ընտրական իրավունքների պաշտպանության հարցում նրանց արածն ու անելիքները, առկա ընտրախախտումների բնույթը, պատճառներն ու համակարգային բարեփոխումների հիմնախնդիրները:

Տվյալ գործով կայացված որոշմամբ սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումներով նաեւ առաջ քաշեց ընտրական համակարգի հնարավոր անկատարությունները վերացնելու եւ երկրի քաղաքական համակարգի ու իշխանության նկատմամբ անվստահության մթնոլորտը հաղթահարելու համարժեք մոտեցումներ: Որոշման 10-րդ կետում, մասնավորապես, ամրագրեց, որ սահմանադրաիրավական տեսանկյունից երկրում ստեղծված նախընտրական ու հետընտրական իրավիճակը չի կարող քննության առարկա լինել միայն ապացուցողական նշանակություն ունեցող իրավական փաստերի անմիջական համադրման շրջանակներում: Կան նաեւ իրողություններ, որոնք, առնչվելով սահմանադրական հիմնարար սկզբունքներին, Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության երաշխավորմանը, համարժեք իրավական դիրքորոշումների անհրաժեշտություն ունեն:

Նույն որոշման 12-րդ կետում սահմանադրական դատարանն արձանագրել է հետեւյալը. «... ընտրական համակարգի հնարավոր անկատարությունների առնչությամբ կողմերի նկատառումները դուրս են սույն գործի քննության առարկայի շրջանակներից, եւ դրանք օրենսդրական բարեփոխումների խնդիր կարող են հանդիսանալ՝ հաշվի առնելով նաեւ այդ հարցերում ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: Բացի դրանից, ինչպես

նշվեց սույն որոշման տասներորդ կետում, հետընտրական առկա իրավիճակի պայմաններում երկրի բնականոն զարգացումը երաշխավորելու և սահմանադրականության ամրապնդման իրավաչափ ու արդյունավետ միջոց կարող է դառնալ ժողովրդավարական հիմնարար սկզբունքներից ելնելով քաղաքական լայն համաձայնության, հանդուրժողականության, քաղաքակիրթ երկխոսության արդյունքում անհրաժեշտ սահմանադրաիրավական բնույթի բարեփոխումների իրականացումը, ինչի անհրաժեշտությունը նույնպես կարելի էր պահանջարկներից ընթացքում»:

Վերջին հիմնախնդիրը դարձել է ՀՀ Նախագահի կողմից նախաձեռնված սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի մշակման առանցքային հարցերից մեկը, և մասնագիտական հանձնաժողովն արդեն իսկ ձեռնամուխ է եղել դրա վերաբերյալ առաջարկությունների փաթեթի մշակմանը:

**Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների)  
և պատգամավորության թեկնածուների դիմումների հիման վրա ընդունված  
ՍԳ որոշումները և դրանց կատարումը**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 1 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Ս. Սաֆարյանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 12-ին սահմանադրական դատարան ներկայացված դիմումի հիման վրա գործը քննության է առնվել 25.01.2013 թվականին և կայացվել ՍԳ-Ռ-1072 որոշումը, որով սահմանադրական դատարանը որոշել է.

«1. 2012 թվականի դեկտեմբերի 2-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրության արդյունքներով թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ «Թիվ 1 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» 2012 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 12-Ա որոշումը թողնել ուժի մեջ»: Վեճն իր բնույթով սահմանադրաիրավական որեւէ ծանրակշիռ ու ապացուցողական նշանակությամբ փաստարկներով հիմնավորված խնդիր չի բովանդակել:

**ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՆԱԽՈՐԳ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆԱԾ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՃԱԿԸ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ**

2013 թվականին սահմանադրական դատարանի տվյալ և նախորդ տարիներին ընդունած որոշումների կատարումը՝ իրավական դիրքորոշումների իրացման տեսանկյունից, շարունակում է մտահոգիչ մնալ: Նախորդ տարիներին ընդունած որոշումներից առանձնանում է «Քաղաքացի Նելլի Սկրտչյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հան-

րապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2012թ. ՍԳՈ-1037 որոշումը: Այս որոշման առնչությամբ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրված Պ-234-03.04.2013-ՊԻ-010/0 որոշման նախագիծը, որը 2013 թվականի մայիսի 20-ին ընդգրկվել է քառօրյա նիստերի օրակարգ:

Շարունակում է մտահոգիչ մնալ նաեւ այն հանգամանքը, որ ՀՀ իրավական բարեփոխումներն ընթանում են սահմանադրական դատարանի որոշումների ընդունմանը ոչ համընթաց, ինչի արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ օրենսդրական բարեփոխումների ընթացքում սահմանադրական դատարանի որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումներին անդրադարձ է կատարվում տարիներ անց, ինչը բացասաբար է ազդում երկրում առկա սահմանադրական օրինականության մակարդակի վրա: Ընդ որում, նշված իրավիճակը շեշտադրվել է նաեւ սահմանադրական դատարանի 2011 եւ 2012թթ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդումների մեջ:

Արմատապես վերանայման եւ օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն ունի դատական պրակտիկայում սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացման խնդիրը: Սահմանադրական դատարանը բազմիցս է անդրադարձել այս հարցին եւ ավելորդ է համարում դարձյալ կոնկրետ օրինակների շարադրումը: Դրանք ծավալուն ձեւով տեղ են գտել նաեւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում: Խնդիրը պայմանավորված չէ միայն համարժեք իրավական մշակույթով ու իրավագիտակցությամբ, ակնհայտ է նաեւ օրենսդրական կանոնակարգման անկատարությունը: ՀՀ սահմանադրական դատարանը նախորդ տարվա տարեկան հաղորդման մեջ մանրամասն այս հարցին նույնպես անդրադարձ կատարել է՝ վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ ՀՀ սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի նկատմամբ ՀՀ օրենսդրության մեջ անհամարժեք մոտեցման դրսեւորումները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավիճակում հիմնախնդիրը կարող է լուծելի լինել, եթե ՀՀ Սահմանադրության մակարդակով երաշխավորվի սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարումը՝ ամրագրելով համարժեք սահմանադրաիրավական նախադրյալներ: Առանց դրա՝ Սահմանադրության գերակայության երաշխավորումը կշարունակի մնալ որպես բարի ցանկություն:

Սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ դատարանի տարեկան հաղորդումների քննարկումը եւ դրանում բարձրացված հարցերի վերաբերյալ պետական իշխանության մարմինների կողմից պարտադիր արձագանքը պետք է օրենքով հստակեցված նորմատիվ պահանջ դառնա: Սահմանադրաիրավական ներկա մտայնության պայմաններում սահմանադրական դատարանի տարեկան հաղորդումների վերաբերյալ իշխանության մարմինների վերաբերմունքը չի կարող բացառապես հայեցողական բնույթ կրել, որի արդյունքում իշխանության հանրային վարքագծի սահմանադրականացման ներուժն արդյունավետ չի օգտագործվում:

## ԸՆԳՀԱՆՈՒՐ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատական սահմանադրական վերահսկողության բնագավառում տարվա արդյունքների ամփոփումից հետևում է.

1. Սահմանադրական դատարանի որոշումների կատարման տեսանկյունից խնդրահարույց է շարունակում մնալ նոր հանգամանքների դատավարական ինստիտուտի անկատարությունը եւ դատական պրակտիկայի կողմից դրա լրջագույն թերացումներով կիրառումը: Նկատի ունենալով, որ երկու անգամ այդ ինստիտուտի իրավակարգավորումները սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել են հակասահմանադրական եւ օրենսդրորեն այդպես էլ չեն գտնվել առավել արդյունավետ լուծումներ, ՀՀ սահմանադրական դատարանը՝ միջազգային փորձի ընդհանրացման հիման վրա, արձանագրում է, որ առավել արդյունավետ ինստիտուտ, քան լիարժեք սահմանադրական գանգատի ինստիտուտի ներդրումն է, միջազգային պրակտիկայում չի գտնվել:

2. Սահմանադրական արդարադատության արմատավորումը երկրում ինքնանպատակ չէ, դրա գերագույն խնդիրը Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովումն է: Վերջինս ենթադրում է, որ սահմանադրական դատարանի լիազորությունները պետք է ներդաշնակ լինեն գործառույթին, իսկ դատավարական ընթացակարգերը դատական սահմանադրական վերահսկողության գործառույթների լիարժեք ու ամբողջական իրականացման նախադրյալներ պետք է ապահովեն: Այս հարցում ներդաշնակություն կարող է երաշխավորվել միայն սահմանադրական մակարդակում: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ առաջիկա սահմանադրական բարեփոխումների առանցքային հարցերից մեկը պետք է դառնա Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատության համակարգային ամբողջականության երաշխավորումը:

3. Հայաստանում շարունակում է տիրապետող մնալ այն պրակտիկան, երբ սահմանադրական վերահսկողության հարցում արդյունավետ չէ պետական իշխանության այլ ինստիտուտների գործառնական դերը: Ամբողջ անցած տարվա ընթացքում նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան որեւէ դիմում չեն ներկայացրել ՀՀ կառավարությունը, ՀՀ գլխավոր դատախազը, տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ ՀՀ Նախագահը դիմել է միայն միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության հարցով: Դա ամենեւին չի վկայում, որ գործող իրավական ակտերը սահմանադրականության տեսանկյունից կատարյալ են: Պրակտիկան հակառակն է վկայում: Միայն վերջին հինգ տարիների ընթացքում քաղաքացիների դիմումների հիման վրա սահմանադրական դատարանը ՀՀ օրենքների շուրջ 140 դրույթ է ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող ու անվավեր: Սա նաեւ սահմանադրականության ցածր մակարդակի վկայություն է: Իրավիճակի շտկման համար առաջին հերթին պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման բոլոր ինստիտուտները պետք է արդյունավետ իրացնեն սահմանադրական հսկողության

ու վերահսկողության իրենց առաքելությունը՝ այն չշփոթելով դատական սահմանադրական վերահսկողության գործառնական դերի հետ: Միաժամանակ վաղուց հասունացել է երկրում սահմանադրականության մշտադիտարկման գործուն համակարգի արմատավորման անհրաժեշտությունը, որում պետական իշխանության ինստիտուտների ակտիվ դերակատարության հետ մեկտեղ էական կլինի նաեւ քաղաքացիական հասարակության մասնակցությունը:

4. Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրության գերակայության եւ անմիջական գործողության երաշխավորման համար բացառիկ կարելություն է ձեռք բերել անհատի սոցիալական վարքագծի եւ պետական իշխանության մարմինների հանրային վարքագծի սահմանադրականացումը՝ երկու դեպքում էլ արժեքաճանաչական հիմք ունենալով իրավունքի գերակայության սկզբունքը: Սա ենթադրում է նաեւ սահմանադրական ու իրավական մշակույթի համարժեք մակարդակ: Սահմանադրական արդարադատության համար անհրաժեշտ է սահմանադրական ժողովրդավարության որոշակի միջավայր: Վերջինս կարող է ձեւավորվել միայն հասարակական հարաբերությունների աստիճանական սահմանադրականացման ճանապարհով: Այս հարցում պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման յուրաքանչյուր մարմին ակտիվ դեր ու դերակատարություն ունի: Իսկ այդ ներուժը դեռեւս բավարար չափով չի գործադրվում:

5. Սահմանադրական դատարանի որոշումների կատարման պրակտիկան վկայում է, որ այս հարցում շարունակում է անկատար մնալ առկա իրավակարգավորումը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ թե՛ օբյեկտիվ եւ թե՛ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության առումով, ինչպես նաեւ որպես իրավունքի աղբյուր սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացման հարցում հստակ իրավակարգավորում առկա չէ, ամեն ինչ թողնվել է կառավարության եւ առանձին պատգամավորների հայեցողական մոտեցման արդյունքում հնարավոր օրենսդրական նախաձեռնության դրսեւորման հույսին: Հիմնահարցին պետական մոտեցման տեսանկյունից նման վիճակը չի կարող ընդունելի համարվել, ուստի պահանջվում են լուրջ համակարգված լուծումներ, ինչի մասին ՀՀ սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է նաեւ նախորդ տարվա տարեկան հաղորդման շրջանակներում: Մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովի եւ ՀՀ կառավարության համար պարտադիր իրավական պահանջ պետք է լինեն սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա համարժեք իրավաստեղծ գործունեության իրականացումը եւ ՀՀ Սահմանադրության ու գործող օրենսդրության միջեւ անհամապատասխանությունների հաղթահարումը:

**ՀԱՎԵԼՎԱԾ՝  
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ  
ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐՈՎ  
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
2013 թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«Հ.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-Ի ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԱՊԵՏ ԹԱՌԼՈՅԱՆԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԱՐՁԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ  
16-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ «Ա» ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Քաղ. Երևան**

**22 հունվարի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողներ՝ «Հ.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ի ներկայացուցիչ, «Հ.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Թառլոյանի եւ քաղաքացի Կ. Թառլոյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, մույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսյանի,



համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հ.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ի եւ քաղաքացի Կարապետ Թառլոյանի դիմումի հիման վրա՝ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Հ.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ի եւ քաղաքացի Կ. Թառլոյանի՝ 03.09.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

1. «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2000 թվականի հունիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2000 թվականի հունիսի 19-ին, ուժի մեջ է մտել 2000 թվականի հուլիսի 1-ից եւ **ուժը կորցրած ճանաչվել 2009թ. հունվարի 1-ից**՝ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2008 թվականի օգոստոսի 21-ի ՀՀ օրենքով:

Օրենքի՝ «Սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը» վերտառությամբ 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետը սահմանել է. «Պարզեցված հարկ վճարողները սույն օրենքի 5 հոդվածի 1-ին կետով նախատեսվող հայտարարագրի մեջ սույն օրենքի 4 հոդվածի՝

ա) 2-րդ կետով նախատեսվող սահմանաչափի վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ ներառելու դեպքում վճարում են տուգանք՝ սահմանաչափը գերազանցող մասի 20 տոկոսի չափով»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. «Հ.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ն հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից տարբերվող այլ գործունեության, այն է՝ խանութի միջոցով ավտոպահեստամասերի վաճառքի գործունեության համար 10.01.2007թ. հարկային տեսչություն է ներկայացրել հայտարարագիր՝ պարզեցված հարկ վճարող համարվելու համար: Սակայն նշյալ հայտարարագրի ներկայացումից հետո փաստացի չի օգտվել ներկայացված հայտարարագրի ներկայացման արդյունքում օրենքով սահմանված պարզեցված հարկով աշխատելու իրավունքից եւ 01.01.2007-22.03.2007թթ. ժամանակահատվածում փաստացի աշխատել է հարկման ընդհանուր կարգով, հարկերը հաշվարկել եւ վճարել է ոչ թե պարզեցված, այլ հարկման ընդհանուր ռեժիմով, որը եւ պետք է արվեր հայտարարագրի չներկայացման դեպքում: 22.03.2007թ. ընկերությունը հարկային տեսչություն է ներ-

կայացրել ավտոպահեստամասերի խանութի միջոցով կազմակերպվող գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի՝ 28.06.2010թ. թիվ 1001171 հանձնարարագրի համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ աշխատակիցների կողմից 19.07.2010թ. մինչև 04.10.2010թ. «Հ. Ա. Թ. Ա. Կ.» ՍՊԸ-ում կատարվել է «բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության եւ հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում», որի արդյունքում 04.10.2010 թվականին կազմվել է N1001171 ակտը, որով ընկերությանն առաջադրվել է տուգանքի ձեռով լրացուցիչ հարկային պարտավորություն՝ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը խախտելու հիմքով: Ընդ որում, հիմք է ընդունվել այն փաստը, որ ընկերության 2006թ. համախառն եկամուտը կազմել է 107375.6 հազար դրամ, մինչդեռ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով պարզեցված հարկ վճարող համարվելու համար հարկ է, որպեսզի տվյալ սուբյեկտի կողմից նախորդ տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների եւ մատուցված ծառայությունների իրացման շրջանառությունը չզերազանցի 50 մլն ՀՀ դրամը:

Ընկերությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի տարածքային հարկային տեսչության՝ 04.10.2012թ. թիվ 1001171 ստուգման ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջով: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Աշտարակի տարածքային հարկային տեսչությունը ներկայացրել է հակընդդեմ հայց՝ ընկերությունից հօգուտ պետական բյուջեի 12.045.100 դրամ բռնագանձելու պահանջով:

ՀՀ վարչական դատարանն իր՝ 01.04.2011թ. ՎԳ/3823/05/10 վճռով բավարարել է ընկերության հայցը, իսկ հակընդդեմ հայցը բավարարել է մասնակի: Նշված վճռում, հիմք ընդունելով այն փաստերը, որ 01.01.2009 թվականից «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրել է, եւ որ ընկերությունը մինչև 22.03.2007թ. ներկայացրած հայտարարությունը (ավտոպահեստամասերի խանութի միջոցով կազմակերպվող գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու մասին) փաստացի աշխատել է հարկման ընդհանուր կարգով, դատարանը նշել է. «Նման պայմաններում վերը նշված փաստական հանգամանքների եւ իրավական հիմքերի հիման վրա դատարանը եզրակացնում է, որ 2007թ. դրությամբ գործող «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի ա) կետի եւ 3.1-րդ մասի դրույթները նույնպես կիրառելի չեն եղել Ընկերության նկատմամբ»: Բացի դրանից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 04.10.2010թ. ակտը ներկայացվել է խախտման փաստից երեք տարին լրանալուց հետո, դատարանը եզրակացրել է, որ. «Նույնիսկ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի գործողության դեպքում ակտում նշված հայցվորի կողմից վիճարկվող խախտման եւ դրա՝ հարկային մարմնի կողմից հայտնա-

բերման միջև ընկած ժամանակահատվածը կազմում է երեք տարուց ավելի ժամանակահատված»:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Աշտարակի տարածքային հարկային տեսչությունը ՀՀ վարչական դատարանի՝ 01.04.2011թ. ՎԴ/3823/05/10 վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանն իր՝ 10.01.2012թ. որոշմամբ բավարարել է վերաքննիչ բողոքը՝ բեկանելով ՀՀ վարչական դատարանի 01.04.2011թ. վճիռը, եւ այն փոփոխել՝ մերժելով ընկերության հայցը, բավարարելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Աշտարակի տարածքային հարկային տեսչության հակընդդեմ հայցը: Ի հիմնավորումն նշված որոշման՝ դատարանը գտել է, որ իրացման շրջանառության ընդհանուր գումարի վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկությունների նշումով հայտարարագիր ներկայացնելն արդեն իսկ բավարար է արարքը «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված իրավախախտման որակման եւ տուգանք նշանակելու համար, եւ որ փաստացի ընդհանուր հարկման ռեժիմով աշխատելը չի ազատում «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված տուգանքից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, իր՝ 07.03.2012թ. որոշմամբ վերադարձրել է ընկերության վճռաբեկ բողոքը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին չհամապատասխանելու հիմքով, ըստ էության վերահաստատելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.01.2012թ. որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

**3. Վիճարկելով «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի սահմանադրականությունը՝ դիմողները գտնում են, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 83.5-րդ, 8-րդ, 14.1-րդ, 31-րդ, 33.1-րդ եւ 43-րդ հոդվածների պահանջներին:**

Դիմողների պնդմամբ՝ վիճարկվող դրույթով նախատեսված պատասխանատվության չափը որոշող պայմանները՝ ձեւակերպված «սահմանաչափը գերազանցող մասի» բառերով, խախտում են սահմանադրորեն ճանաչվող եւ պաշտպանվող սեփականության, ձեռնարկատիրական գործունեության իրավունքները, տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական գործունեությունը, հետեւաբար եւ՝ հանդիսանում են հակասահմանադրական: Դիմողները բերում են հետեւյալ հիմնավորումները.

- վիճարկվող դրույթով նախատեսված պատասխանատվության միջոցի կիրառման արդյունքում տնտեսվարող սուբյեկտը զրկվել է նաեւ իր այն սեփականությունից՝ կապված իր իրավաչափ եւ օրինական այլ ձեռնարկատիրական գործունեության /հաստատագրված վճարով հարկվող գործունեության/ հետ: Երբ տնտեսվարող սուբյեկտն զբաղվում է մի

քանի տեսակի ձեռնարկատիրական գործունեությամբ, եւ նա գրկվում է ընդհանուր սեփականությունից, ապա վտանգվում է իր ամբողջ /բոլոր տեսակի/ ձեռնարկատիրական գործունեությունը,

- ակնհայտ է առաջադրված տուգանքի անհամաչափությունը համապատասխան իրավախախտման բնույթին ու հանրային վտանգավորության աստիճանին, եւ ակնհայտ է այդ տուգանքի ավելի շատ վնասակարությունը թե՛ անձի սեփականության եւ թե՛ ծավալած ձեռնարկատիրական գործունեության համար, առավել քան իրավախախտման վնասակարությունն է «հարկային իրավակարգի» համար,
- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գլխավոր նպատակը եւ պարտադիր հատկանիշը շահույթ ստանալն է եւ ստացված շահույթն իր մասնակիցների միջեւ բաշխելը, այնինչ ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով տուգանքի կիրառման կառուցակարգն ընկերությանը գրկել է շահույթ ստանալու եւ ստացված շահույթն իր հիմնադիրների /մասնակիցների/ միջեւ բաշխելու հնարավորությունից /տեսական ժամանակով/, հետեւաբար՝ գրկել է ընկերության հիմնադրին իր սեփականությունից եւ շահույթ ստանալու հնարավորությունից,
- իրավախախտման իրավաբանական կազմի օբյեկտիվ կողմի բաղադրիչներից մեկն արարքի հանրային վտանգավորությունն է: Տվյալ դեպքում արարքի առաջացրած փաստացի վնասակար հետեւանքը պետք է լինի հայտարարագրի ներկայացմամբ թույլատրելի իրավունքի իրացումը, այսինքն՝ պարզեցված հարկով աշխատելը, որն էլ հենց հանդիսանում է վիճարկվող դրույթով սահմանված պատասխանատվության կիրառման համար նախատեսված իրավախախտման պարտադիր պայման: Այնինչ վիճարկվող դրույթը պատասխանատվություն է նախատեսում նաեւ արարքի համապատասխան փաստացի վնասակար հետեւանքի բացակայության դեպքում: Փաստորեն, վիճարկվող դրույթով նախատեսված նորմը կարող է հանգեցնել, իսկ քննարկվող գործով հանգեցրել է անձին անհիմն, առանց իրավախախտման փաստի առկայության պատասխանատվության ենթարկելուն,
- դիմողների հիմնական փաստարկն այն է, որ տուգանքի չափի հաշվարկի հիմքում ակնհայտ ոչ իրավաչափ կերպով դրված է ոչ թե բացառապես պարզեցված հարկի գծով իրականացված գործունեության, այլ ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների՝ ներառյալ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը, իրացման շրջանառության ընդհանուր գումարը, մինչդեռ, ըստ դիմողների, վիճարկվող դրույթով նախատեսված տուգանքը չպետք է առնչվեր, մասնավորապես, հաստատագրված վճարով հարկվող գործունեության իրացման շրջանառությանը:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողների փաստարկների դեմ, գտնում է, որ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Ի հիմնավորումն իր դիրքորոշման՝ պատասխանողը նշում է, որ հարկային պարտավորությունները ներառում են ինչպես հարկերի, այնպես էլ հարկային օրենսդրությամբ եւ ՀՀ հարկային իրավահարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի եւ տուգանքների գումարների վճարումը:

Ըստ պատասխանողի՝ օրենքով նախատեսված տուգանքները, այդ թվում՝ նաեւ վիճարկվող նորմով նախատեսվածը, երաշխիք են ապօրինի ձեռնարկատիրական գործունեությունը կանխելու, տնտեսվարող սուբյեկտների կողմից հարկային պարտավորությունների բարեխիղճ կատարումն ապահովելու համար: Ու թեեւ վիճարկվող նորմով նախատեսված տուգանքի չափը կարող է հաճախ զգալի լինել, քանի որ որպես սահմանաչափ հիմք է ընդունվում ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների եւ մատուցված ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարը, սակայն այս հանգամանքը պայմանավորված է իրավախախտման բնույթով եւ վտանգավորության աստիճանով: Բացի դրանից, վիճարկվող դրույթն առաջին հերթին ունի կանխարգելիչ բնույթ եւ ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտի համար կանխատեսելի է դարձնում ապօրինի գործունեության հետեւանքները:

Պատասխանողի կարծիքով՝ վիճարկվող դրույթով նախատեսված տուգանքի չափը նպատակ ունի նվազագույնի հասցնել պարզեցված հարկ վճարող համարվելու համար սահմանված պայմանների խախտման դեպքերը: Պարզեցված հարկ վճարող համարվելու համար օրենքով նախատեսված հիմքերի բացակայության պայմաններում անձն օգտվում է օրենքով նախատեսված արտոնությունից եւ էական վնաս պատճառում պետությանը:

Փաստելով, որ հայտարարագիր ներկայացնելուց հետո դիմող ընկերությունը չի օգտվել պարզեցված հարկի ռեժիմից, այլ շարունակել է գործել հարկման ընդհանուր ռեժիմով, այդուհանդերձ, պատասխանողի կարծիքով, տվյալ դեպքում խնդիրը պայմանավորված չէ օրենքի նորմի սահմանադրականությամբ:

5. Հաշվի առնելով դիմողների փաստարկները՝ սույն գործի քննության շրջանակներում, սահմանադրական դատարանը կարելու է հետեւյալ հանգամանքերը պարզելու անհրաժեշտությունը.

- արդյո՞ք 2000թ. հունիսի 5-ին «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի ընդունումը, դրա նորմերի կիրառումը Սահմանադրության տեսանկյունից եղել է իրավաչափ,
- արդյո՞ք պարզեցված հարկով հարկվելու նպատակով դիմող ընկերությունը ազատ կամաարտահայտմամբ է մտել իրավահարաբերությունների մեջ,
- արդյո՞ք պարզեցված հարկով հարկվելու նպատակով իրավահարաբե-

րությունների մեջ մտնելու հետևանքները դիմող ընկերության համար եղել են կանխատեսելի:

6. Սահմանադրական դատարանը, ելնելով պետության եւ հասարակության զարգացման համար հարկային քաղաքականության իրականացման բացառիկ կարեւորությունից, արձանագրում է, որ այնպես, ինչպես ցանկացած հարկատեսակի մասին օրենքի ինքնին ընդունումը, այնպես էլ 2000թ. հունիսի 5-ին «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի ընդունումը Սահմանադրության տեսանկյունից եղել է իրավաչափ: Ավելին, Սահմանադրության 45-րդ հոդվածի, 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի, 89-րդ հոդվածի 4-րդ կետի, 106-րդ հոդվածի 5-րդ մասի, 107-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներից բխում է, որ հենց Սահմանադրությամբ է նախատեսված հանրապետական եւ տեղական մակարդակով հարկային քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը:

Վիճարկվող օրենսդրական դրույթը սահմանում է վարչական տուգանք եւ իր դիսպոզիտիվ հատկանիշներով, ըստ դիմողի, հակասում է Սահմանադրության մի շարք հոդվածների: Դիմողի հիմնական փաստարկն այն է, որ տուգանքի չափի հաշվարկի հիմքում ակնհայտ ոչ իրավաչափ կերպով դրված է ոչ թե բացառապես պարզեցված հարկի գծով իրականացված գործունեության, այլ ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների իրացման շրջանառության ընդհանուր գումարը: Ըստ դիմողի՝ օրենսդիրը, շրջանցելով Սահմանադրության հիմնադրույթները՝ «պարզեցված հարկի իրավահարաբերություններից բխող ոչ իրավաչափ գործողության (իրավախախտման) համար պատասխանատվությունն ընդգրկել է տնտեսավարող սուբյեկտի ամբողջ (բոլոր տեսակի) ձեռնարկատիրական գործունեության շրջանակը»: Ըստ այդմ էլ դիմողը եզրակացնում է, որ «Պարզեցված հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տուգանքի չափը համարժեք չէ զանցանքի վտանգավորության աստիճանին:

Դիմողի փաստարկներն առանձնանում են օրենսդրական նորմերի յուրովի, ընդ որում՝ ոչ համարժեք մեկնաբանությամբ, ինչն էլ «հնարավորություն է տվել» հանգելու ցանկալի եզրակացությունների: Այսպես, դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմով նախատեսված զանցանքի ընդհանուր օբյեկտը «հարկային հարաբերությունները կարգավորող իրավակարգն է»: Մինչդեռ իրավակարգն ինքնին զանցանքի օբյեկտ հանդիսանալ չի կարող, քանի որ օբյեկտը հենց իրավական ակտերով ամրագրված հարաբերություններն են: Տվյալ դեպքում ընդհանուր օբյեկտը ոչ այնքան կառավարման համակարգն է, որքան տնտեսական գործունեությունը, եւ իրավական կարգավորումներն էլ պետք է միտված լինեն մրցակցային, ազատ տնտեսական գործունեության երաշխավորվածությանը: Ուստի, երբ դիմողը խոսում է պատճառված վնասի մասին, ապա ակամա (քանի որ ինքն օբյեկտ է ճանաչել սոսկ պետության հարկային քաղաքականությունը եւ այն կարգավորող իրավակարգը) բավարարվում է պետական բյուջեին պատճառված վնասի ստույգ հաշվարկով, մինչդեռ քննարկման առարկա զանցանքն էապես խախտում է այլ ձեռնարկատերերի օրի-

նական շահերն ու խոչընդոտում ազատ մրցակցության լիարժեք երաշխավորվածությամբ:

Ընդ որում, ինչպես արդեն նշվեց, դիմողը փորձել է իր եզրահանգումներին հավաստիություն հաղորդելու նկատառումով, յուրովի մեկնաբանել դրանց առնչվող օրենսդրական նորմերը: Այսպես, դիմողը, առանց որեւէ կոնկրետ հղումների, ելակետ է ընդունում այն, թե իբր միեւնոյն ձեռնարկատիրոջ ընդհանուր գործունեության դասակարգման հիմքում դրված է հարկման տեսակը, ըստ այդմ էլ, իբր գոյություն ունեն պարզեցված հարկով գանձվող գործունեության տեսակ, հաստատագրված հարկով գանձվող գործունեության տեսակ եւ այլն: Այնուհետեւ, այն թյուր եզրակացությունն է առաջադրվում, թե իբր տուգանքի հաշվարկման հիմքում դրվում է ոչ միայն ոչ իրավաչափ, այլեւ ոչ իրավաչափ գործունեությամբ ստացված իրացման շրջանառությունը: Արդյունքում ստացվում է, որ ձեռնարկատիրական գործունեության մի մասը կարող է ոչ իրավաչափ համարվել ոչ թե օրենքով սահմանված հիմքերով (օրինակ՝ գնվել եւ իրացվել է շրջանառությունից հանված ապրանք, ծառայությունների կամ աշխատանքների մի մասը չի հաշվառվել եւ այլն), այլ մտացածին այն հիմքով, որ իբր այդ հատվածով խախտվել է հարկման տեսակը:

Ինչ վերաբերում է գործունեության բոլոր տեսակները վարչարարություն իրականացնող սուբյեկտի կողմից հաշվի առնելու վերաբերյալ օրենսդրական նորմի իրավաչափությանը, ապա հարկ է նկատել, որ ակնհայտ ոչ ճիշտ տվյալներ մտցնելը հավասարապես վերաբերում է տվյալ հարկատուի ողջ գործունեությանը, եւ պատճառված վնասն էլ հենց համարժեքորեն բնութագրվում է շրջանառության ծավալով, այսինքն՝ որքան մեծ է ընդհանուր շրջանառությունը, այնքան մեծ է ոչ ճիշտ տվյալներ ներկայացնելու վտանգը:

Ըստ դիմողի՝ հարկման հիմքով գործունեության բոլոր տեսակների վրա տուգանք տարածելն անհավասար վիճակի մեջ է դնում այն կազմակերպություններին, որոնք միայն շատ փոքր չափով են պարզեցված հարկով գանձվող գործունեության տեսակ իրականացնում: Տվյալ դեպքում անտեսվում է այն, որ տնտեսվարող սուբյեկտն ինքը պետք է գնահատի իր ռիսկերը եւ, ըստ արդյունքների, կարող էր կամ ձեռնպահ մնալ նոր ընկերություն հիմնադրելուց, ինչը հնարավորություն կտար միայն պարզեցված հարկով աշխատել, կամ շարունակել գործել ընդհանուր հիմունքներով:

Իրավաչափ չէ նաեւ դիմողի այն փաստարկը, թե իբր օրենսդրությամբ անհիմն կերպով ավելի նվազ տուգանք է սահմանված այն դեպքերի համար, երբ հարկատուն ոչ թե ոչ ճիշտ տեղեկատվություն է ներկայացնում, այլ ընդհանրապես որեւէ տեղեկատվություն չի ներկայացնում: Բոլոր դեպքերում, սահմանված ժամկետում հաշվետվություն չներկայացնելը եւ հարկերը չվճարելը չի կարող ինքնըստինքյան ավելի վտանգավոր իրավախախտում համարվել, քան ոչ ճիշտ տվյալներով տեղեկատվություն ներկայացնելը, քանի որ առաջին դեպքում ակնհայտ է դառնում պարտավորությունների չկատարումը, ինչը հնարավորություն է տալիս կիրառել համարժեք վարչարարություն, մինչդեռ երկրորդ դեպքում հարկային մարմինը կարող է բավարարվել կեղծ հայտա-

րարագրով եւ չձեռնարկել վարչարարությանը բնորոշ ներգործության միջոցներ:

Ինչ վերաբերում է դատական ակտերի առնչությամբ դիմողի փաստարկներին, ապա հարկ է նկատել, որ վարչական դատարանը, բավարարելով որպէս հայցվոր հանդես եկած դիմողի հայցը, պարզապէս հաստատված է համարել, որ հայցվորի նկատմամբ կիրառվել է արդեն ուժը կորցրած օրենսդրական ակտ: Մյուս դատական ատյաններն էլ գտել են, որ հարկային մարմինների կողմից կոնկրետ արձանագրված իրավախախտման առնչությամբ վիճարկվող նորմը պետք է կիրառվեր, քանզի տվյալ դեպքում տեղի չի ունեցել արդեն ուժը կորցրած իրավական ակտի կիրառման դեպք:

7. Վերը նշված՝ պարզման ենթակա երկրորդ եւ երրորդ հարցադրումների առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը դիմումի եւ գործում եղած նյութերի ուսումնասիրության հիման վրա արձանագրում է, որ պարզեցված հարկով հարկվելու նպատակով դիմող ընկերությունը **կամավոր է** մտել իրավահարաբերությունների մեջ, եւ որ դրա հետեւանքները նշված ընկերության համար եղել են **կանխատեսելի**, ինչը հիմք է հանդիսանում պնդելու, որ **տվյալ դեպքում բացակայում է սահմանադրաիրավական վեճը**. կանխատեսելով հայտարարագիր ներկայացնելու հետեւանքները եւ իր կամքի ազատ արտահայտմամբ նման հայտարարագիր ներկայացնելով հանդերձ՝ դիմող ընկերությունն օրենքի պահանջները հաշվի չառնելով մտել է այլ իրավահարաբերությունների դաշտ եւ ներկա պարագայում փորձ է անում ակնհայտ անհիմն սահմանադրաիրավական վեճ ներկայացնելով՝ վիճարկել ավելի քան չորս տարի առաջ ուժը կորցրած օրենքի դրույթը:

**Սահմանադրական դատարանը գտնում է, որ կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում սահմանադրաիրավական վեճի բացակայությամբ սահմանադրական դատարան դիմելն անհիմն է դարձնում նման դիմումը, որը ենթակա է մերժման, իսկ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ վեճի առարկա նորմի սահմանադրականության խնդրով:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հ.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ի եւ քաղաքացի Կարապետ Թառլոյանի դիմումի հիման վրա՝ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:



2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**22 հունվարի 2013 թվականի  
ՍԳՈ-1065**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**2012 ԹՎԱԿԱՆԻ ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ՀՀ ԱՁԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ՄԵԾԱՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԼՐԱՑՈՒՅԻՉ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ  
ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 1 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 12-Ա  
ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**25 հունվարի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 1 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Ս. Սաֆարյանի, նրա ներկայացուցիչ Ս. Սաֆարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներ՝ թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Գ. Հայրապետյանի եւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ն. Հովհաննիսյանի,

գործով որպես հարակից պատասխանող ներգրավված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներ՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Ա. Սմբատյանի եւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավար Ս. Հովհաննիսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի դեկտեմբերի 2-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրության արդյունքներով թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 12-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 1 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Ս. Սաֆարյանի՝ 12.12.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ 2012թ. դեկտեմբերի 18-ի աշխատակարգային նիստում քննարկելով վերոհիշյալ դիմումը, որոշում է կայացրել՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերի, 74-րդ հոդվածի 4-րդ մասի՝ գործն ընդունել քննության, գործով որպես պատասխանող կողմ ներգրավել թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին, որպես հարակից պատասխանող՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Նշված որոշմամբ գործով զեկուցող է նշանակվել ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Ֆ. Թոխյանը:

Սահմանադրական դատարանի ՄԳԱՌ-90 աշխատակարգային որոշման 7-րդ կետով սահմանվել էր. «Դիմող եւ պատասխանող կողմերին, հարակից պատասխանողին՝ սույն գործով գրավոր բացատրությունները ՀՀ սահմանադրական դատարան ներկայացնել մինչեւ 2013թ. հունվարի 12-ը»: Գործով պատասխանող կողմը եւ հարակից պատասխանողը սահմանադրական դատարանի կողմից սահմանված ժամկետներում ներկայացրել են պահանջվող նյութերը: Գործի քննության գրավոր ընթացակարգի պահանջների շրջանակներում այդ նյութերը՝ 165 էջ ընդհանուր ծավալով, 28.12.2012թ. տրամադրվել են դիմողին՝ դրանց վերաբերյալ իր նկատառումները սահմանված ժամկետներում դատարանին ներկայացնելու համար: Դիմողը մինչեւ դատաքննության օրը ներառյալ (25.01.2013թ.), շուրջ մեկամսյա ժամանակահատվածում, ՀՀ սահմանադրական դատարան գրավոր բացատրություն կամ որեւէ նկատառում չի ներկայացրել: Սահմանադրական դատարանը որպես դիմողի ամբողջական դիրքորոշում ընդունել է դիմումում բերված փաստարկները:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, պատասխանող կողմի եւ հարակից պատասխանողի գրավոր բացատրությունները, հետազոտելով դիմումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

**1.** Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 1 ընտրատարածքում լրացուցիչ ընտրությունն անցկացվել է 2012 թվականի դեկտեմբերի 2ին՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 128-րդ հոդվածում նախատեսված ժամկետում: Ընտրատարածքը ներառում է թվով 35 ընտրական տեղամաս:

Թիվ 1 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով գրանցվել ու քվեաթերթիկներում ընդգրկվել են Ազգային ժողովի պատգամավորի 3 /երեք/ թեկնածուներ: Ըստ թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընտրատարածքում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության՝ ընտրողների ընդհանուր թիվը 64763 է, իսկ ընտրություններին մասնակցել է 23830 ընտրող: Թեկնածուների օգտին տրված ձայների թիվը 22946 է, որը բաշխվել է հետևյալ կերպ. Է. Պետրոսյան՝ 461, Ռ. Սարգսյան՝ 18805, Ս. Սաֆարյան՝ 3680: Անճշտությունների գումարային չափը կազմել է 8:

Թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. դեկտեմբերի 7-ի թիվ 12-Ա որոշումով թիվ 1 ընտրատարածքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավոր է ճանաչվել առավել կողմ ձայներ ստացած Ռ. Սարգսյանը:

2. Դիմողը գտնում է, որ անհրաժեշտ է անվավեր ճանաչել թիվ 1 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 12-Ա որոշումը:

Դիմողի պնդմամբ՝ ընտրությունների ժամանակ տեղ են գտել այնպիսի խախտումներ, որոնք, իր կարծիքով, համատարած էին, համակարգային էին, էապես ազդել են ընտրությունների արդյունքների վրա, խախտել են թեկնածուի պասիվ եւ քաղաքացիների ակտիվ ընտրական իրավունքները, եւ դրանց վերացման ուղղությամբ պետությունը չի կատարել իր պարտականությունները:

Նախ՝ դիմողը գտնում է, որ վերոնշյալ ընտրությունների ընթացքում տեղ են գտել նախընտրական քարոզչության սկզբունքների խախտումներ: Մասնավորապես, դիմողը նշում է թե՛ ԱԺ պատգամավորի ինքնաառաջադրված թեկնածու է. Պետրոսյանի, թե՛ ՀՀԿ թեկնածու Ռ. Սարգսյանի՝ նախընտրական հիմնադրամներ կատարված մուտքերի եւ դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում ներկայացված գումարների խիստ անհամապատասխանությունը կատարված իրական ծախսերին: Հատկապես, ըստ դիմողի, ապրանքների եւ ծառայությունների ձեռքբերման համար թեկնածու Ռ. Սարգսյանի ցույց տված փաստացի չափերը նվազեցված են, չեն համապատասխանում դրանց իրական շուկայական արժեքին եւ գերազանցում են հիմնադրամի միջոցներից կատարված բոլոր ծախսերի ընդհանուր չափը, ինչը, դիմողի պնդմամբ, ընտրական օրենսդրության կոպիտ խախտում է:

Նշված խախտումների կապակցությամբ նոյեմբերի 27-ին թիվ 1 ԸԸՀ-ին ներկայացված Ս. Սաֆարյանի դիմումը՝ ՀՀԿ-ի թեկնածու Ռ. Սարգսյանի թեկնածության գրանցումը դատական կարգով վիճարկելու եւ ուժը կորցրած ճանաչելու մասին, մերժվել է: Մերժվել է նաեւ Ս. Սաֆարյանի՝ թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 29.11.2012թ. որոշման դեմ դեկտեմբերի 1-ին ԿԸՀ բերած բողոքը:

Դիմողի կարծիքով, թե՛ թիվ 1 ԸԸՀ-ն, թե՛ ԿԸՀ-ն մակերեսորեն են անդրա-

դարձել թեկնածու Ռ. Սարգսյանի նախընտրական քարոզչության, ըստ դիմողի, ապօրինի եւ ստվերային գործունեությանը:

Երկրորդ՝ դիմողի կարծիքով տեղի են ունեցել նաեւ ընտրությունների հրապարակայնության սկզբունքի խախտումներ: Մասնավորապես, դիմողի խնդրանքով ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությունն առձեռն խտասկավառակով Ս. Սաֆարյանին է փոխանցել թիվ 1 ընտրատարածքի ընտրողների ցուցակը, սակայն մերժել է ՀՀ բոլոր ընտրողների ցուցակի տրամադրումը: Այդպիսով, ըստ դիմողի, ՀՀ ոստիկանությունը գրկել է թեկնածուին եւ իր ընտրական շտաբին ցուցակներն ստուգելու՝ կրկնվող հաշվառումով ընտրողներին հայտնաբերելու, կասկածելի հասցեներն ստուգելու հնարավորությունից:

Բացի դրանից, ըստ դիմողի՝ արձանագրվել են ընտրողների անձնագրերում դրված դրոշմակնիքների ժամանակից շուտ անհետանալու փաստեր, ինչի արդյունքում թեկնածու Սաֆարյանը եւ հանձնաժողովներում «Ժառանգություն» կուսակցության անդամները գրկվել են քվեարկությունը վերահսկելու եւ կրկնակի քվեարկությունները բացառելու հնարավորությունից: Այդ կապակցությամբ դեռեւս մինչեւ քվեարկությունը՝ 30.11.2012թ. դիմողը դիմել է ԿԸՀ՝ առաջարկելով օգտագործել սովորական թանաք, այնպես, ինչպես որ արվել էր 2012 թվականի մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ, երբ առկա դժգոհությունների կապակցությամբ ԿԸՀ-ն 2012թ. մայիսի 6-ին ընդունել էր համապատասխան որոշում, սակայն դիմողի վերը նշված առաջարկությունը ԿԸՀ-ի՝ 30.11.2012թ. որոշմամբ մերժվել է: Դիմողը փորձել է ԿԸՀ-ի նշված որոշումը բողոքարկել ՀՀ վարչական դատարան, սակայն, ըստ դիմողի, աշխատանքային ժամերին՝ 16:30-18:00, դատարանում եղել են միայն տարածքը հսկող ոստիկանները:

Երրորդ՝ որպես ընտրական իրավունքի հավասարության եւ գաղտնիության սկզբունքների խախտում դիմողը վկայակոչում է այն հանգամանքը, որ մի շարք տեղամասային հանձնաժողովներում հանձնաժողովների անդամներ են նշանակված եղել թաղապետարանների աշխատակիցներ, դպրոցների տնօրեններ ու մանկավարժներ, մանկապարտեզների վարիչներ, իսկ ՀՀԿ թեկնածու Ռ. Սարգսյանի վստահված անձեր են եղել համատիրությունների ղեկավարներ կամ աշխատակիցներ: Դիմողը պնդում է, որ ՀՀԿ ներկայացնող պաշտոնյաները՝ Երեւանի քաղաքապետը (ընդգծելով վերջինիս ազգակցական կապը թեկնածու Ռ. Սարգսյանի հետ), Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ղեկավարները համայնքային ռեսուրսները ծառայեցրել են իրենց կուսակցությունից առաջադրված թեկնածու Ռ. Սարգսյանի օգտին ձայներ ստանալու նպատակով:

Չորրորդ՝ դիմողը նշում է նաեւ քվեարկության օրը տեղի ունեցած՝ ՀՀ ընտրական օրենսգրքի մի շարք հոդվածների խախտումներ՝ կապված, մասնավորապես, իր կարծիքով, թեկնածու Ռ. Սարգսյանի օգտին քվեարկելու պատրաստականություն հայտնած ընտրողների կազմակերպված տեղափոխման, վերջինիս կողմնակիցների կողմից քվեարկությունն ուղղորդելու, տեղա-

կան իշխանությունների կողմից ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման ընթացքում, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում իրենց ռեսուրսներն ապօրինաբար օգտագործելու, լրագրողների, հանձնաժողովներում «Ժառանգություն» կուսակցության անդամների նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքների հետ:

**3.** Պատասխանող կողմը գտնում է, որ թիվ 1 ընտրատարածքում քվեարկության արդյունքներով ընդունված որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմողի պահանջն անհիմն է, քանի որ թիվ 1 ընտրատարածքում ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի լրացուցիչ ընտրության ընթացքում տեղի չեն ունեցել այնպիսի խախտումներ, որոնք կարող էին բացառել ընտրության իրական արդյունքները ճշգրտորեն որոշելու հնարավորությունն անգամ այն դեպքում, եթե հիպոթետիկ ընդունվի, որ դիմողի մատնանշած խախտումները հիմնավոր են: Ըստ պատասխանողի, ՀՀ ընտրական օրենսգիրքը չի սահմանում խախտումների տեսակներ կամ քանակ, ինչպես նաեւ սուբյեկտային կազմ, որոնց կողմից կատարված խախտումներն ավտոմատ կերպով կհանգեցնեն ընտրությունների անվավերության: Բոլոր դեպքերում, ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելը կարելի է միայն այն պարտադիր պայմանով, որ թույլ տրված խախտումները կբացառեն ճշգրտորեն որոշել ընտրողների կամաարտահայտության արդյունքները:

ՀՀ ընտրողների ամբողջական ցուցակը տրամադրելու պահանջը մերժելու առնչությամբ պատասխանողը նշում է, որ դիմողի մատնանշած՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կանոնակարգումները տվյալ դեպքում ընդհանրապես կիրառելի չեն, քանի որ այդպիսի պահանջը խիստ առանձնահատուկ մասնավոր դեպք է, որը կանոնակարգվում է ՀՀ ընտրական օրենսգրքով: Ավելին, պատասխանողը գտնում է, որ Ս. Սաֆարյանին տրամադրվել են թիվ 1 ընտրատարածքի ընտրողների ցուցակները, ինչը լրիվ բավարար էր համապատասխան ստուգումներ իրականացնելու համար: Բացի դրանից, մերժման վերաբերյալ դիմողը տեղեկացված է եղել 2012թ. նոյեմբերի 20-ին, այսինքն՝ քվեարկության օրվանից 12 օր առաջ, եւ ուներ անհրաժեշտ ու բավարար ժամանակ նշված մերժումը վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու համար, ինչը չի իրացրել: Պատասխանողը ուշագրավ է համարում այն հանգամանքը, որ ընտրատարածքի բոլոր ընտրական տեղամասերում դիմողն ունեցել է վստահված անձինք, նրանք գրանցամատյաններում կատարել են նաեւ գրառումներ, եւ առկա չէ գեթ մեկ գրառում, որ առանց համապատասխան հաշվառման անձ մասնակցած լինի քվեարկությանը:

Անձը հաստատող փաստաթղթերի վրա դրվող դրոշմակնիքների առնչությամբ պատասխանողը նշում է, որ դրոշմակնիքի արագ անհետանալու փաստը չի կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա, քանզի թանաքի կիրառումն ընդամենը լրացուցիչ, սակայն ոչ միակ միջոցն է կրկնակի քվեարկությունը բացառելու համար: Ավելին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողով որեւէ դիմում-բողոք չի ներկայացվել եւ տեղամասային ընտրա-

կան հանձնաժողովների գրանցամատյաններում չկան գրառումներ ընտրական տեղամասերում կրկնակի քվեարկության դեպքերի մասին:

Ինչ վերաբերում է պետական պաշտոն զբաղեցնող որոշ անձանց ընտրական գործընթացներին մասնակցելու հարցին, պատասխանողը գտնում է, որ քաղաքական կամ հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ընտրություններին մասնակցելը եւ նախընտրական քարոզչություն իրականացնելը չի կարող որակվել որպես ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածին հակասող: ՀՀ Սահմանադրությունը հստակ սահմանել է թե՛ ակտիվ եւ թե՛ պասիվ ընտրական իրավունքի սահմանափակումները: Այդ սահմանափակումները կոնկրետացված են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում: Ըստ պատասխանողի՝ օրենքն արգելում է պաշտոնատար անձին իրականացնել նախընտրական քարոզչություն՝ հանդես գալով հենց որպես պաշտոնատար անձ՝ քարոզչություն իրականացնելով իրեն վերապահված այս կամ այն իրավասության գործադրմամբ, օգտագործմամբ կամ միջոցով, սակայն օրենքը չի արգելում իրականացնելու տվյալ թեկնածուի օգտին նախընտրական քարոզչություն միայն այն պատճառով, որ տվյալ անձը միեւնույն ժամանակ հանդիսանում է պաշտոնատար անձ:

Պատասխանողը պնդում է, որ դիմողի ներկայացրած դիմումում անգամ առկա չէ որեւէ փաստարկ առ այն, որ որեւէ պաշտոնատար անձի կողմից խախտվել են ընտրական օրենսգրքի պահանջները: Վկայակոչվում է սոսկ թեկնածուի ազգակցական կամ ընկերական կապը որոշ պաշտոնատար անձանց հետ, ինչն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ ընտրախախտումների վերաբերյալ դատողություն անելու համար: Ավելին, ընտրական օրենսգրքով սահմանված սահմանափակումները նախընտրական քարոզչության ժամանակահատվածում պաշտոնատար անձանց կողմից խախտելու վերաբերյալ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու, դիմումատու Ս. Սաֆարյանի, ինչպես նաեւ որեւէ այլ անձի կողմից որեւէ դիմում դատարաններն ու ընտրական հանձնաժողովները չեն ստացել:

Դիմողի մատնանշած տեղամասային ընտրական հանձնաժողովներում նշանակված անդամների առնչությամբ պատասխանողը, վկայակոչելով ՀՀ ընտրական օրենսգրքի 39-րդ հոդվածը, գտնում է, որ դիմողի կողմից վկայակոչված անձինք կարող էին լինել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ, եւ նշվածով պայմանավորված՝ որեւէ խախտում առկա չէ: Ինչ վերաբերում է վստահված անձանց, ապա նրանց նկատմամբ կիրառվող սահմանափակումներն էլ սահմանված են ՀՀ ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով: Դիմողի վկայակոչած անձանց նկատմամբ նշված սահմանափակումները կիրառելի չեն:

Դիմողի կողմից մատնանշված ընտրախախտումների տարբեր դեպքերի առնչությամբ պատասխանողն արձանագրում է, որ թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է բոլոր 35 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանները, որից պարզվել է, որ 35 տեղամասային ընտրական հանձնաժողովներից 26-ում տեղամասային ընտ-

րական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը խախտումների վերաբերյալ գրառումներ չեն եղել, իսկ մնացած թվով 9 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա գրառումների ուսումնասիրությամբ 07.12.2012թ. թիվ 1 ԸԸՀ-ի կողմից կայացվել է թիվ 10-Ա որոշումը, որով հանձնաժողովը գտել է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները որեւէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա, իսկ նշված որոշումը վերադասության կամ դատական կարգով չի վիճարկվել: Բացի դրանից, քվեարկության օրվա ընթացքում որեւէ տեղամասային հանձնաժողովի ընդունած որոշման, գործողությունների կամ անգործության մասին դիմում (բողոք) ներկայացված չի եղել:

Ինչ վերաբերում է քվեարկության արդյունքներին, ապա պատասխանողը գտնում է, որ դիմողը դրանք չի բողոքարկել կամ դրանց վերահաշվարկի որեւէ պահանջ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով չի ներկայացրել, իսկ դիմումում ներկայացվող դատողություններն անհիմն են ու չփաստարկված:

4. Հարակից պատասխանողը գտնում է, որ թիվ 1 ընտրատարածքում քվեարկության արդյունքներով ընդունված որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմողի պահանջն անհիմն է, քանի որ թիվ 1 ընտրատարածքում ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի լրացուցիչ ընտրության ընթացքում տեղի չեն ունեցել այնպիսի խախտումներ, որոնք կարող էին բացառել ընտրության իրական արդյունքները ճշգրտորեն որոշելու հնարավորությունը:

Նախընտրական քարոզչության համար կատարված ծախսերը թեկնածուների կողմից ներկայացված հայտարարագրերում ճիշտ արտացոլված չլինելու առնչությամբ հարակից պատասխանողը նշում է, որ եթե նախընտրական քարոզչության համար կատարված ծախսերի գումարը չի գերազանցում ՀՀ ընտրական օրենսգրքով ամրագրված թույլատրելի շեմը, սակայն այն ընդամենը ճիշտ արտացոլված չէ հայտարարագրում, ապա միայն այդ հիմքով ընտրությունների արդյունքները վիճարկելն անհիմն է:

Թեկնածու Է. Պետրոսյանի կողմից առանց նախընտրական հիմնադրամ բացելու քարոզչական ծախսեր կատարելու առնչությամբ հարակից պատասխանողը նշում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքը չի արգելում թեկնածուներին նախընտրական հիմնադրամ բացել նախընտրական քարոզչության ցանկացած փուլում: Ավելին, թեկնածուները չունեն սահմանափակում մինչև նախընտրական հիմնադրամ բացելը ձեռք բերել ապրանքներ եւ ծառայություններ, սակայն դրանց ձեռքբերման ծախսերը շուկայական արժեքով պետք է ներառվեն նախընտրական հիմնադրամի ծախսերում, ինչը եւ կատարել է թեկնածու Է. Պետրոսյանը, իսկ ԿԸՀ-ն գնահատել է ձեռք բերված ապրանքների եւ ծառայությունների շուկայական արժեքը:

Թեկնածու Ռ. Սարգսյանի՝ նախընտրական քարոզչության համար կատարած ծախսերի փաստացի չափերն ակնհայտ նվազեցված լինելու եւ իրական



շուկայական արժեքներին չհամապատասխանելու առնչությամբ հարակից պատասխանողը նշում է, որ դիմողը չի բերել որևէ ապացույց եւ այդ հարցը չի վիճարկել վարչական կամ բողոքարկման վարույթի շրջանակներում:

Թեկնածու Ռ. Սարգսյանի կողմից «Լեդուս» ՍՊԸ-ի սեփականությունը հանդիսացող վահանակներում թեկնածուի վերաբերյալ տեղեկատվության տարածման իրավաչափության առնչությամբ հարակից պատասխանողը, հղում կատարելով ՀՀ ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ պարբերություններին, 10-րդ մասին, վկայակոչելով առկա քաղաքացիաիրավական պայմանագրերը, նշում է, որ տվյալ դեպքում կատարված նախընտրական քարոզչությունը համապատասխանում է քարոզչական պատասխանների համար ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին, թեկնածուի եւ «Լեդուս» ՍՊԸ-ի միջեւ կնքված գործարքը թե՛ գնի եւ թե՛ գործարքի առարկա հանդիսացող տեղեկատվության տեղաբաշխման վայրի տեսանկյունից լիովին համապատասխանում է ընտրական օրենսդրության պահանջներին:

Նախընտրական շտաբների թույլատրելի քանակի, նրանց վրա փակցվող ցուցանակների, շտաբների վարձակալման ծախսերի առնչությամբ հարակից պատասխանողը, վկայակոչելով ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը, գտնում է, որ վերը նշված նորմը չի կարող մեկնաբանվել որպես նախընտրական շտաբների քանակի վերաբերյալ սահմանափակում, քանզի այն բացառություն է նախատեսում որոշակի բնույթի եւ որոշակի թվաքանակի պատասխանների՝ քարոզչական նյութ հանդիսանալու մասին: Վերը նշված նորմով սահմանված պայմանները չբավարարող պատասխանները համարվում են քարոզչական նյութ, եւ դրանց ձեռքբերման ծախսերը պետք է իրականացվեն նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին: Այդուհանդերձ, հարակից պատասխանողը փաստում է, որ թեկնածու Ռ. Սարգսյանը բոլոր պատասխանները ձեռք է բերել նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին՝ չնայած դրանցից 35-ը, որոնք համապատասխանում են ընտրատեղամասերի քանակին, չեն հանդիսանում քարոզչական նյութ, եւ թեկնածուն կարող էր դրանք ձեռք բերել ոչ նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին: Ինչ վերաբերում է շտաբների վարձակալման ծախսերը նախընտրական հիմնադրամի միջոցներից կատարելուն, ապա, ըստ հարակից պատասխանողի, ՀՀ ընտրական օրենսգիրքն այդպիսի պահանջ չի նախատեսում, քանի որ այն բոլոր ապրանքները եւ ծառայությունները, որոնք ձեռք են բերվում ոչ թե բուն քարոզչական գործունեության, այն է՝ ուղղակիորեն ընտրողների կամքը ձեւավորելու համար, այլ կազմակերպչական, տեխնիկական եւ այլ բնույթի գործունեության համար, չեն համարվում հայտարարագրման եւ նախընտրական հիմնադրամի միջոցներից կատարման ենթակա ծախսեր: Միաժամանակ, հարակից պատասխանողը փաստում է, որ դիմողը, որպես թեկնածու, իր նախընտրական հիմնադրամի վերաբերյալ հայտարարագրում չի ներառել իր իսկ կողմից բացված շտաբների համար կատարված ծախսերը կամ դրանց շուկայական արժեքները:

Անձը հաստատող փաստաթղթերի վրա դրվող դրոշմակնիքների առնչությամբ պատասխանողը նշում է, որ դրոշմակնիքի արագ անհետանալու փաստը չի կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա, քանզի թանաքի կիրառումն ընդամենը լրացուցիչ, սակայն ոչ միակ միջոցն է կրկնակի քվեարկությունը բացառելու համար:

Դիմողի մատնանշած ընտրախախտումների առնչությամբ հարակից պատասխանողը նշում է նաև, որ դիմողի դատողությունները մերկապարանոց են, քանի որ դիմողը չի ներկայացրել որևէ պատշաճ փաստարկում կամ ապացույց:

**5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի հիմնական փաստարկը վերաբերում է նախընտրական քարոզչության սկզբունքների ենթադրյալ խախտումներին, որոնք, ըստ դիմողի, դրսևորվել են թեկնածուների համար անհավասար պայմանների ստեղծմամբ, հանրության եւ թեկնածուի համար ընտրական գործընթացի հրապարակայնության խախտումներով, թեկնածուների ծախսերի թափանցիկության եւ վերահսկելիության թերի ապահովմամբ եւ այլն:**

Գործի նյութերից փաստվում է, որ այդ ենթադրյալ խախտումների կապակցությամբ 2012թ. նոյեմբերի 27-ին թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին ներկայացված թեկնածու Ս. Սաֆարյանի դիմումը՝ ՀՀԿ-ի թեկնածու Ռ. Սարգսյանի թեկնածության գրանցումը դատական կարգով վիճարկելու եւ ուժը կորցրած ճանաչելու մասին, թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով եւ ժամկետներում քննարկել է եւ 29.11.2012թ. թիվ 7-Ա որոշմամբ մերժել: Նույն կերպ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2012թ. դեկտեմբերի 1-ին թիվ 327-Ա որոշմամբ մերժել է թեկնածու Ս. Սաֆարյանի՝ թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ 29.11.2012թ. թիվ 7-Ա որոշման դեմ դեկտեմբերի 1-ին բերած բողոքը: Ընդ որում, ԿԸՀ-ի այդ միստին մասնակցել է նաև դիմումատու Ս. Սաֆարյանը, ներկայացրել է իր դիմումը եւ լրացուցիչ հիմնավորումները: Նիստի ավարտից հետո նա ստացել է ԿԸՀ-ի որոշումը, որը սահմանված կարգով նաև հրապարակվել է ԿԸՀ-ի համացանցային կայքում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմող Ս. Սաֆարյանի պնդումները, թե նա 2012թ. դեկտեմբերի 1-ին զրկված է եղել ԿԸՀ-ի ընդունած որոշումները վարչական դատարանում բողոքարկելու իրավունքից, անհիմն են: Նախ՝ գործի նյութերից երևում է, որ դեկտեմբերի 1-ին ոչ աշխատանքային օրը (շաբաթ) վարչական դատարանում գործել է հերթապահություն, բայց դիմում նրանց չի ներկայացվել: Դրա մասին են վկայում վարչական դատարանի նախագահի՝ 26.11.2012թ. թիվ 0-33-Ա եւ 30.11.2012թ. թիվ 035-Ա հրամանները եւ ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավարի՝ 30.11.2012թ. թիվ 148-Ա հրամանները: Երկրորդ՝ դիմող Ս. Սաֆարյանը իբրեւ վարչական դատարան դիմումի ներկայացման ապացույց վկայակոչում է այն

հանգամանքը, որ նույն օրը դիմումատուի լիազոր անձը հայցադիմումի օրինակը փոստով առաքել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ նման պայմաններում դիմումատուն անհասկանալի պատճառով չի օգտվել օրենքով սահմանված՝ իր դատական պաշտպանության իրավունքից եւ բուն հայցադիմումը փոստով չի ուղարկել վարչական դատարան:

Սահմանադրական դատարանն իր՝ 2012թ. մայիսի 31-ի ՍԳՈ-1028 որոշման մեջ, անդրադառնալով թեկնածուների գրանցման շուրջ ծագած վեճերին եւ վերջիններիս առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի ու ՀՀ վարչական դատարանի իրավագործությունների տարանջատման խնդրին, վերահաստատելով իր՝ ՍԳՈ-433, ՍԳՈ-703 եւ ՍԳՈ-736 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները, ամրագրել է, որ «...բոլոր այն հարցերը, որոնք առնչվում են ընտրական գործընթացներում թեկնածուների գրանցման եւ այն վեճերին, որոնց լուծումն օրենքով սահմանված կարգով վերապահված է ՀՀ վարչական դատարանին, սահմանադրական դատարանում առանձին քննության առարկա չեն կարող հանդիսանալ, իսկ որպես ապացուցողական հիմք ընդունվում են վարչական դատարանի վերջնական ակտերը»: Դա բխում է ՀՀ Սահմանադրության 5 եւ 100-րդ հոդվածների պահանջներից:

Բոլոր դեպքերում, համաձայն ՀՀ Սահմանադրության 5 եւ 100-րդ հոդվածների, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի, ՀՀ ընտրական օրենսգրքի 46 եւ 118-րդ հոդվածների, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145 եւ 150-րդ հոդվածների՝ ՀՀ սահմանադրական դատարանն իրավասու չէ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի շրջանակներում քննության առարկա դարձնել բոլոր այն հարցերը, որոնց լուծման իրավասությամբ օրենքով սահմանված կարգով օժտված է ՀՀ վարչական դատարանը, եւ որի որոշումներն այդ հարցերով վերջնական են ու վերանայման ենթակա չեն, կամ գնահատել վարչական դատարանի դատական ակտի իրավաչափությունը:

**6.** Սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. հունիսի 10-ի ՍԳՈ-703 որոշման մեջ արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «...եթե դիմող կողմն ընտրությունների նախապատրաստման, անցկացման եւ արդյունքների ամփոփման գործընթացով պայմանավորված ընտրական հանձնաժողովների, իրավասու այլ մարմինների որոշումները, գործողությունները կամ անգործությունը մինչեւ սահմանադրական դատարան դիմելը ՀՀ ընտրական օրենսգրքով եւ իրավական այլ ակտերով նախատեսված՝ արտադատական (վարչական) կամ դատական կարգով չի բողոքարկել, այսինքն՝ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով եւ ժամկետներում չի օգտագործել (սպառել) իր ընտրական իրավունքների պաշտպանության՝ օրենքով նախատեսված բոլոր միջոցները, սպա լիարժեք չեն դառնում սահմանադրական դատարանում ընտրությունների արդյունքներով քննվող հանրային-իրավական վեճի շրջանակներում ապացուցողական նշանակություն ունեցող փաստեր ներկայացնելու եւ

դրանցով իր փաստարկները հիմնավորելու նրա դատավարական հնարավորությունները»։ Նշված իրավական դիրքորոշմանը համապատասխան գնահատելով դիմողի ներկայացրած մյուս բոլոր փաստարկները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է.

առաջին՝ դիմողի առանձին պնդումներ վերաբերում են նախընտրական քառօրյա կազմակերպման ընթացքում օրենքի պահանջների ենթադրյալ խախտումների: Այդ խախտումների առնչությամբ, սակայն, դիմողն օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում իրավասու մարմիններին համապատասխան դիմում չի ներկայացրել եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննության առարկա չի դարձրել,

երկրորդ՝ դիմողի պնդմամբ ընտրախախտումներ են տեղի ունեցել նաեւ քվեարկության փուլում: Վերոհիշյալ իրավական դիրքորոշմանը համապատասխան՝ նշված ենթադրյալ խախտումների վերաբերյալ պնդումները սահմանադրական դատարանում կարող էին ապացուցողական նշանակություն ստանալ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով եւ ժամկետներում դիմողի ընտրական իրավունքների պաշտպանության համապատասխան միջոցների օգտագործման արդյունքում ձեռք բերված նյութերով: Մինչդեռ դիմողը որեւէ տեղամասի առնչությամբ չի ներկայացրել քվեարկության արդյունքների վերահաշվարկի կամ տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջ:

Մասնավորապես, սահմանադրական դատարանը արձանագրում է, որ թիվ 1 ընտրատարածքում կազմավորված են եղել թվով 35 ընտրական տեղամասեր: Նշված բոլոր տեղամասերում ինչպես թեկնածու Ս. Սաֆարյանը, այնպես էլ մյուս բոլոր թեկնածուներն ունեցել են վստահված անձինք:

Քվեարկության օրը թիվ 1 ընտրատարածքի բոլոր 35 ընտրական տեղամասերում դիմողի թվով 50 վստահված անձինք հետեւել են քվեարկության ընթացքին, ամփոփման գործընթացին՝ իրացնելով իրենց իրավունքը:

Օրենքով սահմանված ժամկետներում՝ ինչպես դիմողի, այնպես էլ մյուս թեկնածուների վստահված անձանց կողմից քվեարկության օրվա ընթացքում որեւէ տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշման, գործողությունների կամ անգործության մասին դիմում (բողոք) ներկայացված չի եղել:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներում քվեարկության ընթացքին, ապա նաեւ արդյունքների ամփոփմանը հետեւել են թվով 23 տեղական դիտորդներ թվով 3 հասարակական կազմակերպություններից: Առկա չէ նաեւ որեւէ դիմում (բողոք) նշված դիտորդների կողմից:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքներին մասնակցել են ընդհանուր թվով 277 քաղաքացիներ, յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում ընդգրկված է եղել Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցության մեկ ներկայացուցիչ: Ի դեպ, թվով 35 տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներից 16-ը նշանակված են եղել Հայաստանի հանրապետական կուսակցության կողմից, 10-ը՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության կողմից, 3-ը՝ «Հայ ազգային կոնգ-

րես» կուսակցությունների դաշինքի կողմից, 2-ը՝ «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության կողմից, 2-ը՝ «Ժառանգություն» կուսակցության կողմից, 2-ը՝ «Օրինաց երկիր» կուսակցության կողմից: Նշված կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքի կողմից նշանակված հանձնաժողովների անդամները տեղամասային ընտրական հանձնաժողովներում զբաղեցրել են նաեւ քարտուղարների պաշտոններ՝ նույն թվաքանակով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություններն ստորագրված են եղել ամփոփման նիստերին ներկա հանձնաժողովների բոլոր անդամների կողմից: Տեղամասային ընտրական հանձնաժողովի որեւէ անդամ քվեարկության արդյունքների արձանագրության տվյալների վերաբերյալ առարկություն (հատուկ կարծիք) չի ներկայացրել:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածը կանոնակարգում է քվեարկության արդյունքների վերահաշվարկի ինստիտուտը: Վերահաշվարկ կատարելու դիմում ներկայացնելու իրավունք ունեն թեկնածուն, վստահված անձը, եթե ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաեւ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում: Ինչպես թիվ 1 ընտրատարածքում կազմավորված 35 տեղամասային ընտրական հանձնաժողովների թվով 277 անդամներից, այնպես էլ թեկնածուներից, այդ թվում՝ դիմողի կողմից, թեկնածուների վստահված անձանց կողմից, ըստ գործի նյութերի, որեւէ տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում չի ներկայացվել:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 3-րդ եւ 9-րդ մասերը սահմանում են համապատասխանաբար ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը եւ բողոք ներկայացնելու կարգն ու ժամկետները: Ընտրական օրենսգրքը սահմանել է սուբյեկտների բավական լայն շրջանակ, ովքեր իրավունք ունեն ներկայացնելու ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում: Չնայած նշված լայն վերահսկողական լիազորություններին՝ թիվ 1 ընտրատարածքում պատգամավորի որեւէ թեկնածուի, թեկնածուի որեւէ վստահված անձի, տեղամասային ընտրական հանձնաժողովի որեւէ անդամի կողմից ներկայացված չի եղել թեկուզեւ մեկ դիմում տեղամասում քվեարկության արդյունքն անվավեր ճանաչելու մասին:

Ինչ վերաբերում է ընտրողների ցուցակներում Հայաստանի Հանրապետությունից բացակայող քաղաքացիների ընդգրկման՝ դիմողի կողմից առաջադրված խնդրին, ապա դրա վերաբերյալ իր մոտեցումներն ու իրավական դիրքորոշումները սահմանադրական դատարանն արտահայտել է իր՝ 2012թ. մայիսի 31-ի ՍԳՈ-1028 որոշման մեջ:

7. Գործի նյութերի համադրված վերլուծությունը վկայում է, որ սույն գործի բնորոշ առանձնահատկություններն ամփոփ ձևով հանգում են հետևյալներին:

**Առաջին**՝ դիմողն ընդհանուր դժգոհություն արտահայտող գնահատողական դատողություններից բացի դատական քննության համար անհրաժեշտ ու օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ապացուցողական նշանակություն ունեցող որեւէ փաստարկ չի ներկայացնում քվեարկության արդյունքների ոչ հավաստի լինելու հիմքով իր պահիվ ընտրական իրավունքի խախտումը հիմնավորելու վերաբերյալ, ինչը պարտավոր կլիներ հաշվի առնել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը վեճի առարկա որոշումն ընդունելիս: Դիմողը ՀՀ ընտրական օրենսգրքով ընձեռված որեւէ վերահսկողական իրավասություն սահմանված կարգով չի իրացրել՝ փաստելու համար քվեարկության արդյունքների հետ կապված այնպիսի իրավախախտումներ, որոնք ազդել են իր ընտրական իրավունքի իրացման վրա: Դիմողը գլխավորապես հենվում է տարաբնույթ դատողությունների ու կարծիքների, այլ ոչ թե ապացուցողական նշանակություն ունեցող կոնկրետ փաստերի վրա, ինչը դատական գործընթացում ընդունելի չէ:

**Երկրորդ**՝ դիմողը չի ներկայացնում այնպիսի կոնկրետ փաստեր, որոնք հիմնավոր ձևով վկայել են ընտրական գործընթացներում իր կամ իր վստահված անձանց իրավունքների ռոտահարման մասին՝ տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկի կամ դրանք անվավեր ճանաչելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով քայլեր իրականացնելիս:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 եւ 74-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2012 թվականի դեկտեմբերի 2-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրության արդյունքներով թիվ 1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ «Թիվ 1 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» 2012 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 12-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**25 հունվարի 2013 թվականի  
ՍԳՈ-1072**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 30.2-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ, 2-ՐԳ  
ԵՎ 5-ՐԳ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**30 հունվարի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներ Ա. Վարդեանյանի, Հ. Աբգարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 06.09.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հարկերի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997 թվականի ապրիլի 14-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1997 թվականի մայիսի 12-ին եւ ուժի մեջ է մտել 1997 թվականի մայիսի 30-ից: Օրենքի՝ վեճի առարկա 30.2-րդ հոդվածը լրացվել է 11.05.2011թ. ՀՕ-154-Ն օրենքի հիման վրա:

Հիշյալ օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող 30.2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 5-րդ մասերում սահմանվում են.

«Գույքի արգելանքը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկ վճարողի գույքային իրավունքների սահմանափակման միջոցով հարկային մարմնի կողմից իրականացվող գործողություն է: Արգելադրումն իրականացվում է բանկային հաշիվների արգելադրման, ինչպես նաեւ գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքի սահմանափակման միջոցով՝ հարկային պարտավորությունների չափով:

Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորության չափը հինգ հարյուր հազար կամ ավելի դրամ կազմելու դեպքում հարկային մարմնի ղեկավարն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագիր հրապարակել:

...

Հարկ վճարողի գույքի արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձը գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագրի հիման վրա դրա հրապարակումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին ընդունում է որոշում, որտեղ նշվում են որոշումն ընդունելու ամիսը, ամսաթիվը, վայրը, որոշումն ընդունած անձի պաշտոնը, անունը, ազգանունը, քննվող հարցը, ընդունված որոշման հիմքերը այն օրենքների կամ այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, որոնցով որոշում ընդունող անձը ղեկավարվել է այն ընդունելիս, քննվող հարցի վերաբերյալ եզրահանգումը»:

2. Ըստ դիմող կողմի՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 5-րդ մասերը չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածին: Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածը, 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 17-րդ հոդվածը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Պետրոս Պապամիխայլույուն ընդդեմ Հունաստա-



նի», «Սպորրոնգը եւ Լոննրոթն ընդդէմ Շվեդիայի» եւ «Գասուս Գոսիեր եւ Ֆողդեթեշնիկ ՍՊԸ-ն ընդդէմ Նիդեռլանդների» գործերով որոշումները, ՀՀ եւ ՌԳ Սահմանադրությունների համապատասխան դրույթների մեկնաբանությունները՝ դիմողը նշում է, որ «սեփականությունից զրկել» դրույթը նշանակում է նաեւ անձի սեփականության իրավունքի ոչ միայն դադարում, այլեւ այնպիսի սահմանափակում, որի արդյունքում սեփականատերը զրկվում է իրեն պատկանող օբյեկտն իր հայեցողությամբ տիրապետելու, ըստ նշանակության օգտագործելու եւ այն տնօրինելու հնարավորությունից: Ուստի սեփականությունից զրկելը, որը ներառում է նաեւ սեփականության իրավունքի սահմանափակումը, կարող է իրականացվել միայն դատական կարգով: Իսկ վիճարկվող հողվածը, ըստ դիմող կողմի, նախատեսում է անձի սեփականության իրավունքի սահմանափակում՝ հարկային մարմնի կողմից անձի գույքի վրա արգելանք դնելու միջոցով: Հստակ չափորոշիչների բացակայության, ինչպես նաեւ վարչական մարմնի ցանկության եւ/կամ գնահատման հիման վրա անձի սեփականության իրավունքը սահմանափակող (զրկող) որոշումները, ըստ դիմողի, խթանում են այնպիսի իրավիճակի առաջացումը, երբ հնարավոր են չարաշահումներ եւ խտրական վերաբերմունքի դրսևորումներ անձանց նկատմամբ:

Գիմող կողմը նշում է նաեւ, որ գույքի վրա արգելանք դնելու ինստիտուտը հարկային իրավահարաբերությունների ոլորտում էականորեն տարբերվում է քրեական դատավարությունում գույքի վրա կալանք դնելու ինստիտուտից: Այնուամենայնիվ, քրեական դատավարության գործող օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ քրեական դատավարության ընթացքում անձանց բանկային ավանդների եւ այլ գույքի վրա կալանք կարող է դրվել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի որոշմամբ, սակայն քրեական դատավարության նոր օրենսգրքի պաշտոնական նախագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ քրեական վարույթի ընթացքում անձանց ֆինանսական միջոցների եւ այլ գույքի վրա արգելանք դնելն իրականացվում է միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ նշված օրենսգրքով նախատեսված անհետաձգելի դեպքերի: Անհետաձգելի դեպքերում, երբ հարկադրանքի միջոցի անհապաղ չկիրառումը կարող է հանգեցնել գույքի կորստի, վնասման կամ ոչնչացման, գույքի վրա կալանք դնելը կարող է կիրառվել դատախազի որոշմամբ: Այս դեպքում անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում պետք է համապատասխան որոշումը եւ այն հիմնավորող նյութերը ներկայացվեն դատարանի հաստատմանը:

**3.** Պատասխանող կողմը հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 31, 45 եւ 83.5-րդ հոդվածներին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին՝ նշում է, որ հարկ վճարողների հարկային պարտավորությունը ներառում է հասարակության բոլոր անդամների հանրային շահերը: Այդ պատճառով էլ պետությունն իրավունք ունի եւ պարտավոր է հարկային իրավահարաբերությունների կարգավորման ուղղությամբ միջոցներ ձեռ-

նարկել ոչ միայն հարկ վճարողների, այլև հասարակության այլ անդամների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության նպատակով:

Ըստ պատասխանող կողմի՝ սեփականության իրավունքն «անսահմանափակ» իրավունք չէ: Այդ իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը: Անձանց գույքային իրավունքների, մասնավորապես՝ սեփականության տիրապետման, օգտագործման եւ տնօրինման իրավունքների սահմանափակում է նախատեսված վիճարկվող հոդվածով, որի նպատակն անձանց, հանրության եւ պետության իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն է:

Ըստ պատասխանողի՝ գույքային իրավունքների ժամանակավոր սահմանափակումը, որը պարտավորությունների կատարումն ապահովող բնույթ է կրում եւ «չի առաջացնում սեփականության իրավունքի փոխանցում», ենթադրում է հետագա դատական վերահսկողություն, չի կարող դիտվել որպես սահմանադրական իրավունքների եւ ազատությունների խախտում, այդ թվում՝ սեփականության իրավունքից զրկում: Բացի դրանից, պատասխանող կողմը վկայակոչում է «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածը՝ նշելով, որ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են զանգատարկվել հարկային մարմնի զանգատարկման հանձնաժողովին կամ բողոքարկվել դատարան:

Պատասխանողը գտնում է նաեւ, որ դիմողի հղումները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին՝ հիմնավոր չեն, քանի որ հաշվի չեն առնվել հիշատակված գործերի առանձնահատկությունները եւ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ հարկային մարմնի ու հարկային ծառայողի գործողությունների բողոքարկման հնարավորությունը:

**4.** Սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականությունը որոշելիս ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում՝ ելնելով նաեւ դիմող կողմի հարցադրումներից, հարցը դիտարկել «սեփականության իրավունքից զրկելու» գործող սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում: Միաժամանակ, ելնելով միջազգային իրավական պրակտիկայում ամրագրված սկզբունքներից (մոտեցումներից) ու սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքից՝ կարելի է համարում պարզել, թե.

- վիճարկվող իրավակարգավորումները հանգեցնու<sup>մ</sup> են, արդյոք, անձի՝ սեփականության իրավունքից զրկման, թե<sup>՞</sup> նախատեսում են որոշակի իրավապայմաններ՝ հիշյալ իրավակարգավորումների շրջանակներում անձի սահմանադրական պարտականության կատարումն ապահովելու համար,
- լիազոր պետական մարմինը սահմանադրաիրավական իմաստով իրավասու<sup>մ</sup> է, արդյոք, կատարել անձի սահմանադրական պարտականության (տվյալ դեպքում՝ հարկային պարտավորության) կատարմանն ուղղված այնպիսի գործողություններ, որպիսիք նախատեսված են վիճարկվող նորմերով,

- վիճարկվող իրավակարգավորումների շրջանակներում առկա<sup>6</sup> են, արդյոք, բավարար երաշխիքներ ապահովելու անձի սահմանադրական իրավունքների պաշտպանությունը հնարավոր խախտումներից:

5. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն, որպես սահմանադրական կարգի սկզբունք, Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում է պաշտպանվում է սեփականության իրավունքը: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով (31, 42.1., 43, 44-րդ հոդվածներ, 83.5-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետեր, 89-րդ հոդվածի 3-րդ կետ, 105 եւ 105.1-րդ հոդվածներ), այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կարգավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները՝ սահմանելով սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները եւ այդ իրավունքն իրականացնելու ու պաշտպանելու պայմանները եւ կարգը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության միջոցները եւ այլն:

Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հատկապես կարեւորում է Սահմանադրության 31-րդ հոդվածում ամրագրված սեփականության իրավունքի իրացման հիմնական սահմանադրաիրավական սկզբունքները, համաձայն որոնց՝ անձի բացառիկ իրավունքն է իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իր սեփականությունը՝ պայմանով, որ այդ իրավունքի իրացումը չխախտի այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը, վնաս չպատճառի շրջակա միջավայրին: Իսկ որպես սեփականության անձեռնմխելիության ապահովման երաշխիք՝ սկզբունքային նշանակություն ունի նաեւ Սահմանադրության 31-րդ հոդվածի երկրորդ մասում հաստատագրված սեփականագրկման՝ բացառությամբ դատական կարգով եւ օրենքով նախատեսված դեպքերում իրականացման սկզբունքը, որը, ի տարբերություն օտարման ընթացակարգի (ՀՀ Սահմ. 31-րդ հոդվածի 3-րդ մաս), ենթադրում է օրենքով սահմանված իրավական պատասխանատվության համապատասխան միջոցի կիրառում:

Այդպիսիք են այն բացառիկ իրավապայմանները, որոնց շրջանակներում է Հայաստանի Հանրապետությունում իրացվելի ու պաշտպանելի սեփականության իրավունքը: Այդ իրավապայմանների երաշխավորված գործադրմանն են կոչված ընթացիկ օրենսդրական կարգավորումները, այդ թվում՝ նաեւ «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ոչ միայն հարկային իրավահարաբերությունների մասնակիցների վարքագծի կանոններն ու դրանց իրացման պայմանները, այլեւ, սույն գործով վեճի առարկայի իմաստով, կարգավորում է անձանց սեփականության տիրապետումից, օգտագործումից եւ տնօրինումից առաջացած հասույթներից պետական ու հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր եւ անհատույց վճարների գանձումն

ապահովելու միջոցներն ու կարգը, այդ թվում՝ պատասխանատվությունը հարկային օրենսդրությունը խախտելու համար:

Այսպիսով, արձանագրելով, մի դեպքում՝ սեփականության իրավունքի իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներն ու դրանց կիրառման օրենսդրական շրջանակները, մյուս դեպքում՝ օրենքով սահմանված հարկեր մուծելու՝ անձի սահմանադրական պարտականության կատարման անխուսափելիությունը, սահմանադրական դատարանը կարելոքում է վերջինիս իրավակարգավորման այնպիսի միջոցների ու ձեւերի սահմանումն ու կիրառումը, որոնց պարագայում իրավունքը չենթարկվի անիրավաչափ (անհամաչափ) սահմանափակման, իսկ օրենքով նախատեսված սահմանափակումները հետապնդեն սահմանադրորեն արդարացված նպատակ եւ որեւէ կերպ չգերազանցեն Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակները:

Վերոհիշյալ իրավապայմանների սահմանադրաիրավական բովանդակության եւ հասարակական հարաբերությունների կարգավորման բնագավառում դրանց գործադրման միջոցով իրավունքի գերակայության հաստատման գործում ունեցած սկզբունքային նշանակության վերաբերյալ սահմանադրական դատարանը մի շարք իրավական դիրքորոշումներ է արտահայտել իր որոշումներում: Մասնավորապես, ՄԴՈ-903 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է **սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման** միմյանցից տարանջատվող չորս հանգամանք.

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականագրկում (31-րդ հոդվ. 2-րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության եւ պետության կարիքների համար (31-րդ հոդվ. 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց համար:

Ինչպես հետեւում է նշված ա) ենթակետի բովանդակությունից, սեփականության իրավունքի իրականացումը սահմանադիրը կաշկանդում է որոշակի հանրային արժեքներ պահպանելու պահանջով: Դրանք են. շրջակա միջավայրը, **այլ անձանց**, հանրության եւ պետության իրավունքները եւ օրինական շահերը: Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ եւ այլոց իրավունքների ու հանրային շահերի միջեւ ողջամիտ հավասարակշռություն՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված, սակայն ոչ բացարձակ»:

Սույն գործով առաջադրված խնդրի բացահայտման տեսանկյունից կարելոք է հատկապես արձանագրել, որ սահմանադրաիրավական նորմերն ընթացիկ օրենսդրական կարգավորումների միջոցով կիրառելը հատկապես

երաշխավորելի է այնպիսի իրավաբանական դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքն օրենքով նախանշված հիմքերով միջոց է հանդիսանում սահմանադրական պարտականության կատարումն ապահովելու համար: Այսինքն՝ իրավունքն ու պարտականությունը հանդես են գալիս ոչ միայն որպես անձի սուբյեկտիվ կարգավիճակը բնորոշող կամ հասարակական հարաբերություններում սուբյեկտիվ օրինաչափ հնարավորությունների ու ցանկությունների իրականացմանը կոչված եւ իրենց երկմիասնությամբ պայմանավորված իրավաբանորեն թույլատրելի միջոցներ, այլեւ իրավակարգավորման կարելիոր բաղադրիչներ են, տվյալ դեպքում՝ անձի հարկային պարտավորության կատարումն ապահովելու միջոցով, պետական ու հասարակական կարիքների բավարարմանն ուղղված խնդիրներ լուծելու նպատակով: Այս առումով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող նորմերով նախատեսված կարգավորման որոշակիորեն արտահայտված իրավական կոնկրետ նպատակը պետական լիազոր մարմնի կողմից վերահսկվող անձի (ֆիզիկական եւ իրավաբանական) կողմից իր սուբյեկտիվ պարտականության կատարումն ապահովելն է, որն ունի սահմանադրորեն կանխորոշված հանրային-իրավական նշանակություն, քանի որ կոչված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրության 45, 48, 83.5, 89 եւ 106-րդ հոդվածներում նախանշված պատվիրանների կատարումը: Այդ նպատակի իրականացման օրենքով թույլատրելի միջոցը, ըստ վիճարկվող նորմերի իրավական բովանդակության, անձի գույքային իրավունքների սահմանափակումն է, որը կարող է դրսևորվել անձի պարտավորությունների կատարմանը համարժեք գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու արգելքի ժամանակավոր կիրառմամբ: Այսինքն՝ սույն գործով վիճարկվող նորմերում ամրագրված իրավակարգավորման գլխավոր միջոցը (մեթոդը) իր պարտավորություններին համարժեք անձի սահմանադրական իրավունքի ժամանակավոր սահմանափակմամբ նրա սահմանադրական պարտականության կատարումն ապահովելն է:

Անդրադառնալով հիշյալ միջոցի կիրառման իրավաչափության գնահատման խնդրին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում հարցը դիտարկել ինչպես վիճարկվող, այնպես էլ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի այլ նորմերի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ համապատասխան իրավակարգավորումներ նախատեսող նորմերի համալիր վերլուծության շրջանակներում, մասնավորապես պարզելու համար, թե համարժեքության առումով համադրելի<sup>6</sup> են, արդյոք, վիճարկվող նորմերը սեփականագրկման գործընթացի իրավակարգավորումների համատեքստում:

Սեփականության իրավունքից «զրկելու» ինստիտուտի ընդհանուր էությունը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի չորրորդ բաժնի նորմերից եւ, մասնավորապես՝ 279-րդ հոդվածից՝ որպես սեփականության իրավունքի հարկադիր դադարման հիմք: Սահմանադրական դատարանն այդ ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանն անդրադարձել է իր մի շարք որոշումներով (ՍԳՈ-92, ՍԳՈ-630, ՍԳՈ-649, ՍԳՈ-903, ՍԳՈ-1009): ՍԳՈ-903

որոշման մեջ բնութագրվում են դրա հիմնական եւ պարտադիր հետեւյալ տարրերը.

- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին եւ համաձայնությանը հակառակ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի **անհատույց** դադարեցում,
- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած՝ տիրապետման, տնօրինման եւ օգտագործման **իրավագորությունների միաժամանակյա եւ լիակատար դադարում՝ առանց շարունակականության երաշխավորման,**
- սեփականությունից զրկումը **կիրառվում է որպես պատասխանատվության միջոց:**

Համադրելով «սեփականագրկումը» բնորոշող վերոշարադրյալ տարրերը սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան նորմերի հետ՝ սահմանադրական դատարանն արձանագրում է հարկային մարմնի կողմից կիրառվող արգելադրման ինստիտուտի հետեւյալ առանձնահատկությունները, համաձայն որոնց՝ այն «սեփականագրկումից» էապես տարբեր ինստիտուտ է, մասնավորապես.

- անձի սեփականությունը հանդիսացող գույքի նկատմամբ արգելանքը կիրառվում է վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորության կատարումն ապահովելու սահմաններում ու նպատակով («Հարկերի մասին» օրենքի 30.2-րդ հոդվածի 1-ին մաս), հետեւաբար, այն **իրավախախտման դեպքում կիրառվող պատասխանատվության միջոց չէ,**
- արգելադրումն իրականացվում է գույքային իրավունքների (տնօրինում, տիրապետում կամ օգտագործում) սահմանափակման միջոցով («Հարկերի մասին» օրենքի 30.2-րդ հոդվածի 1-ին մաս), այն **սեփականատիրոջ իրավագորությունների միաժամանակյա եւ լիակատար դադարում չէ՝ առանց շարունակականության երաշխավորման,**
- արգելադրման դեպքում ընդհանրապես **կիրառելի չէ հատուցանելիության սկզբունքը,**
- հարկային մարմնի կողմից արգելադրումն իրականացվում է **արտադատական կարգով,**
- արգելանք դնելիս յուրաքանչյուր դեպքում հաշվի են առնվում գույքի նկատմամբ իրավունքների սահմանափակման տեսակները, ծավալները՝ ելնելով տվյալ գույքի հատկանիշներից ու սեփականատիրոջ (կամ տիրապետողի) համար դրա նշանակությունից («Հարկերի մասին» օրենքի 30.2-րդ հոդվածի 7-րդ մաս),
- հարկային պարտավորության ոչ պակաս, քան քսան տոկոսը մարելուց հետո կամ արգելանքի կիրառմամբ հարկ վճարողի գործունեության ակնհայտ վտանգման դեպքերում առկա է հարկ վճարողի հետ պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց կնքելու հնարավորություն («Հարկերի մասին» օրենքի 30.2-րդ հոդվածի 12-րդ մաս),

- արգելադրում կիրառվում է ժամանակային կրճատ տեւողութեամբ (մեկ ամսից ոչ ավելի) եւ պարտավորութեան չկատարման դեպքում դրան հաջորդում են դատական կարգով գույքի բռնագանձման պարտադիր գործընթացներ («Հարկերի մասին» օրենքի 30.2-րդ հոդվածի 13-րդ մաս), ընդ որում, **սեփականատիրոջ իրավունքը դադարում է** միայն դատական կարգով բռնագանձում տարածելուց հետո այն անձի սեփականութեան իրավունքի ծագման պահից, ում անցնում է տվյալ գույքը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 281-րդ հոդված),
- գույքն արգելանքի վերցնելու մասին հարկային մարմնի որոշումն ինչպես վարչական («Հարկերի մասին» օրենքի 30.2-րդ հոդվածի 14-րդ մաս), այնպես էլ դատական կարգով ենթակա է բողոքարկման («Հարկերի մասին» օրենքի 6-րդ գլուխ),
- հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորութեան դադարման, արգելանք դնելուց հետո՝ 1-ամսյա ժամկետում, հարկային մարմնի կողմից պարտավորութեան բռնագանձելու վերաբերյալ դատարան հայց չներկայացնելու կամ հարկ վճարողի հետ սույն հոդվածում նշված պարտավորութեան մարելու վերաբերյալ աստիճանական մարման ժամանակացույց կնքելու կամ դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդութեան վերաբերյալ որոշում կայացնելու դեպքերում գույքի արգելադրման մասին որոշումը համարվում է ուժը կորցրած («Հարկերի մասին» օրենքի 30.2-րդ հոդվածի 13-րդ մաս):

Այսպիսով, ակնհայտ են «սեփականագրկման» եւ հարկային պարտավորութեան կատարումն ապահովելու նպատակով գույքի նկատմամբ արգելանք կիրառելու ինստիտուտների ինչպես **մասնավոր**, այնպես էլ **հանրային-իրավական** էապես տարբեր նշանակությունն ու կիրառման առանձնահատկությունները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով առաջադրված հարցադրումների շրջանակներում գույքի արգելադրումն իր իրավակարգավորիչ բովանդակությամբ ու նշանակությամբ օրենսդրի կողմից՝ ՀՀ Սահմանադրութեան 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների իրացման նպատակով սահմանված **իրավապայման է՝** արտադատական (կամ՝ մինչդատական) կարգով ապահովելու հարկատու անձի սահմանադրական պարտականութեան կատարումը, որի շրջանակներում երաշխավորված է նաեւ ՀՀ Սահմանադրութեան 18-րդ եւ 19-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների՝ օրենքով սահմանված կարգով իրացումը: Այդ իրավապայմանը հետապնդում է սահմանադրորեն արդարացի, հետեւաբար՝ նաեւ իրավաչափ նպատակ, որի կիրառմանն ուղղված միջոցների եւ հետապնդվող նպատակի միջեւ օրենսդիրը պահպանել է ողջամիտ համաչափություն:

**6.** Անդրադառնալով սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների շրջանակներում լիազոր պետական մարմնի լիազորությունների բնույթի սահ-

մանադրաիրավական գնահատմանը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես գույքի արգելադրմանը, այնպես էլ հարկային մարմնի կողմից հարկատու անձի պետական (համայնքային) բյուջեի առջև ունեցած պարտավորության կատարումն ապահովելուն ուղղված եւ վիճարկվող նորմերով նախատեսված այլ լիազորությունները (ժամանակացույցի կնքում, գույքի բռնագանձման հայցի ներկայացում եւ այլն), բխում են ՀՀ Սահմանադրության 89-րդ եւ 106-րդ հոդվածներում նախանշված պատվիրաններից եւ պետական բյուջեի կատարումն ապահովելու բնագավառում գործադիր իշխանության՝ ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված սահմանադրական անմիջական լիազորությունից: Հարկային մարմնի վերոհիշյալ լիազորություններն այնքանով, որքանով պայմանավորված են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ, 7-րդ, 12-րդ, 18-րդ եւ 20-րդ մասերում նախանշված հանգամանքների առկայությամբ, օբյեկտիվորեն կարող են իրավաչափ համարվել:

Սակայն նկատի ունենալով նաեւ նման լիազորությունների կիրառման հետ կապված ու դիմողի կողմից մատնանշվող իրական ռիսկը՝ **ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ գույքի նկատմամբ արգելանքի կիրառումը պետք է իրացնել միայն հարկային պարտավորությունների կատարումն ապահովող՝ օրենքով նախատեսված այլ հնարավորությունների սպառման պարագայում, եւ խիստ վերահսկելի ձևով:**

7. Սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների բնագավառում առկա միջազգային իրավական փորձին անդրադառնալիս սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կարելորել նախ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձեւավորված սկզբունքային հետեւյալ մոտեցումները, համաձայն որոնց.

- հարկերի հավաքագրման ապահովման նպատակով կառուցակարգեր մշակելիս պետությունները պետք է ունենան որոշակի հայեցողական ազատություն, որն ընդգրկում է հարկեր վճարելուց խուսափելու կանխարգելումը որպես իրավաչափ նպատակ ճանաչելը եւ բխում է հանրային շահերից (Case of Hentrich v. France (Application no. 13616/88), 22 September 1994),
- «ցանկացած միջամտություն, ներառյալ հարկերի վճարման ապահովման միջոցի կիրառման արդյունք հանդիսացող միջամտությունը, պետք է ապահովի «ողջամիտ հավասարակշռություն» հասարակության ընդհանուր շահերի պահանջների եւ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջեւ: Այդպիսի հավասարակշռման հասնելու խնդիրն արտացոլված է 1-ին հոդվածի ողջ կառուցվածքում, ներառյալ՝ 2-րդ կետում: Անհրաժեշտ է պահպանել ողջամիտ համաչափություն օգտագործված միջոցների եւ հետապնդվող նպատակի միջեւ (ի թիվս այլոց, Gasus Dosier- und Fordertechnik GmbH v. The Netherlands գործով, պարբ. 49, 62),



- օրենսդիրը սկզբունքորեն կարող է դիմել այդ միջոցին (գույքի արգելադրմանը)՝ ապահովելու համար հասարակության շահերը՝ հարկերի վճարման եւ հարկային վճարումների հնարավորինս արդյունավետ իրականացման առումով» (Case of Gasus Dosier und Fordertechnik GmbH v. The Netherlands, (Application no. 15375/89) 23 February 1995):

Հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ մի շարք երկրներում (Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Ղազախստան, Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Գերմանիա, Բելառուս, Վրաստան, Դրոզդան, Մերքիա, Ուզբեկստան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ) առկա իրավակարգավորումների ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացությանը, որ այս հարցի վերաբերյալ առկա են տարբեր մոտեցումներ: Մասնավորապես՝

- գույքի արգելադրումը, որպես հարկային պարտավորությունների ապահովման միջոց, իրականացվում է հարկային մարմնի կողմից՝ դատախազի սանկցիայի հիման վրա (Ռուսաստանի Դաշնություն)։
- հարկային ծառայության մարմնի ղեկավարը (նրա տեղակալը) օրենքով սահմանված հիմքերից մեկի առկայության դեպքում որոշում է կայացնում հարկատուի գույքի վրա արգելանք դնելու մասին (Ուկրաինա, Բելառուս, Վրաստան)։
- հարկատու անձի գույքի տնօրինման սահմանափակման մասին որոշումը կայացվում է հարկային մարմնի կողմից (Ղազախստան, Լատվիա, Գերմանիա, Էստոնիա, Մերքիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ)։
- հարկատուի բանկային հաշիվների վրա արգելանք կարող է դրվել բացառապես դատարանի որոշման հիման վրա՝ պետական հարկային ծառայության մարմնի կողմից դատարան դիմելու միջոցով (Ուկրաինա, Դրոզդան) եւ այլն:

Բացի նշվածից, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը միանշանակ սահմանում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գույքից, **բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:** Շեշտադրվում է նաեւ, որ նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Այսպիսով, սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային պարտավորությունների կատարման ապահովման բնագավառում գույքային իրավունքների սահմանափակման ինստիտուտի կիրառման միջազգային իրավական փորձի ուսումնասիրությունը եւս վկայում է գործող իրավակարգավորումն օրենքով նախատեսելու օբյեկտիվ անհրաժեշտությունը եւ սույն գործով

վիճարկվող նորմատիվ դրույթների համապատասխանությունն այդ ինստիտուտի իրավաչափ կիրառման չափորոշիչներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 5-րդ մասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**30 հունվարի 2013 թվականի  
ՍԳՈ-1073**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՅԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ»  
ՀԿ-Ի ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻ ՌԱՇԻԳ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 113-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ  
2-ՐԳ ԵՎ 3-ՐԳ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**5 փետրվարի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Մ. Թովուզյանի (զեկուցող),  
Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,  
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի  
ներկայացուցիչներ Ա. Ջեյնալյանի, Ա. Դազարյանի, Հ. Տիգրանյանի,

դիմող Ռ. Մելիքսեթյանի ներկայացուցիչ Լ. Գրիգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրա-  
վաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մաս-  
նագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սար-  
դարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրա-  
կան դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Թրանսփարենսի Ինթեր-  
նեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի եւ քաղաքացի Ռաշիդ Մելիքսեթյանի  
դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդ-  
վածի 2-րդ եւ 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրու-  
թյանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի եւ քաղաքացի Ռ. Մելիքսեթյանի՝ 19.09.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտ ընդունելիս լուծման ենթակա հարցերը» վերտառությամբ 113-րդ հոդվածը սահմանում է.

«1. Վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1) գնահատում է ապացույցները.

2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, եւ որոնք չեն պարզվել.

3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները եւ այլ իրավական ակտերը.

4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

2. Վարչական դատարանը, անհրաժեշտ համարելով լրացուցիչ հետազոտել ապացույցները կամ շարունակել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը, վերսկսում է գործի քննությունը:

3. Գործի քննությունը վերսկսելու մասին կայացվում է միջանկյալ դատական ակտ»:

**2.** Գործի դատավարական նախապատմությունը՝ դիմող «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի առնչությամբ, հանգում է հետևյալին.

«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն 18.08.2011թ. վարչական մարմնի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, դիմողի տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքի խախտման փաստը ճանաչելու եւ հայցվող տեղեկատվությունը տրամադրելու պահանջների մասին հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան: Դատաքննության ընթացքում պատասխանող կողմն ընդունել է հայցի հիմնական պահանջը՝ հայցվորի վերը նշված իրավունքների խախտման փաստը, իսկ դատարանը կողմերի վրա ապացուցման բեռ չի դրել: Դատաքննությունն ավարտվել է 04.04.2012թ., դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ վճիռ կայացնելու, վճռի հրապարակման օր է

հայտարարվել 19.04.2012թ.: Սակայն նշանակված օրը դատարանը վճիռ չի կայացրել, փոխարենն ընդունել է «Գործի քննությունը վերսկսելու մասին» որոշում, որում մասնավորապես նշվում է, որ դատարանն անհրաժեշտ է համարում շարունակել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը, եւ նման պայմաններում պետք է վերսկսել գործի վարույթը:

Գործով վերսկսված դատաքննությունն ավարտվել է 20.06.2012թ., դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ վճիռ կայացնելու, վճռի հրապարակման օր է հայտարարվել 04.07.2012թ.: Սակայն այս անգամ եւս նշանակված օրը դատարանը վճիռ չի կայացրել եւ ընդունել է նույնաբովանդակ որոշում, ինչ վերը նշված որոշումը:

Գործի դատավարական նախապատմությունը՝ դիմող Ռ. Մելիքսեթյանի առնչությամբ, հանգում է հետեւյալին. Ռ. Մելիքսեթյանը ՀՀ ԴԱՀԿ ծառայության՝ 17.06.2011թ. կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումը վերացնելու պահանջով 06.07.2011թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան: Վարչական դատարանը տվյալ գործով անցկացրել է թվով յոթ նախնական դատական նիստեր (վերջինը՝ 15.06.2012թ.): Գործով դատաքննությունն ավարտվել է 17.07.2012թ., դատարանը հեռացել է խորհրդակցական սենյակ վճիռ կայացնելու, վճռի հրապարակման օր է հայտարարվել 31.07.2012թ.: Սակայն նշանակված օրը դատարանը վճիռ չի կայացրել, եւ կայացրել է «Գործի քննությունը վերսկսելու մասին» որոշում, նշելով, թե գործի համար նշանակություն ունեցող կոնկրետ ինչ նոր ապացույցներ պետք է հետազոտի դատարանը:

**3. Վիճարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի սահմանադրականությունը՝ դիմողները գտնում են, որ դրանք հակասում են ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ եւ (կամ) 1-ին, 18, 19-րդ հոդվածներին:**

Դիմողների կողմից բերված փաստարկները հիմնականում հանգում են նրան, որ, նախ՝ օրենսգրքի վիճարկվող դրույթներով դատարանի՝ լրացուցիչ ապացույցները հետազոտելու կամ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը շարունակելու իրավասությունը կարող է վտանգել մրցակցային դատավարության եւ կողմերի իրավահավասարության սկզբունքների իրացումը: Երկրորդ՝ դատարաններին տրված՝ գործի քննությունը վերսկսելու լայն հնարավորությունը գործնականում հանգեցնում է գործի քննության ողջամիտ ժամկետների խախտմանը: Եվ երրորդ՝ խնդրո առարկա դրույթները, չնախատեսելով գործի քննությունը վերսկսելու մասին որոշումը պատճառաբանելու ուղղակի պարտականություն, պատճառաբանական մասում որոշակի հարցերի պատասխանելու ենթակա շրջանակ, հակասում են արդար դատաքննության սահմանադրական իրավունքի՝ «պատճառաբանված դատական ակտի» բաղադրատարրին:

Ի հիմնավորումն այն հանգամանքի, որ բարձրացված հիմնախնդիրը եզակի բնույթ չի կրում, դիմողները ՀՀ սահմանադրական դատարան են ներկայաց-

րել վիճարկվող դրույթների իրավակիրառ պրակտիկայի մի շարք այլ՝ նմանատիպ օրինակներ, որոնցից մեկով ՀՀ վարչական դատարանը յոթ անգամ կայացրել է «Գործի քննությունը վերսկսելու մասին» որոշում:

Վերջապես, դիմողների տեսակետից, իրավակիրառական պրակտիկայում խնդրո առարկա իրավանորմերը դատարանների կողմից մեկնաբանվում եւ, հետեւաբար, կիրառվում են ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներին հակասող իմաստով եւ բովանդակությամբ: Վերջին հանգամանքին էապես նպաստում է նաեւ այն, որ սահմանադրաիրավական վեճի առարկա նորմերը դատավարության մասնակիցների համար անկանխատեսելի են դարձնում ինչպես դատարանի, այնպես էլ իրենց վարքագիծը, բացառելով դատարանի դատավարական նշված լիազորության իրականացման նկատմամբ որեւէ վերահսկողություն՝ նմանօրինակ միջանկյալ դատական ակտի իրավաչափությունը կողմերի կողմից վիճարկելու գործող ընթացակարգերի խսպառ բացակայության պատճառով:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողների փաստարկներին, գտնում է, որ օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Անդրադառնալով դիմողների այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ դատարանը չպետք է իրավասու լինի սրցակցող կողմերից որեւէ մեկի փոխարեն փաստի հաստատմանն ուղղված գործողություններ իրականացնել, պատասխանողը, հղում կատարելով գործի փաստերն ի պաշտոնէ պարզելու դատավարական սկզբունքին՝ ամրագրված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով, գտնում է, որ վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձեւավորելու, հիմնավորված վճիռ կայացնելու նպատակով, չսահմանափակելով կողմերի հավասարության սկզբունքը, դատարանն իրավասու է նման գործողություններ իրականացնել, եւ գործի քննությունը վերսկսելու հնարավորության նախատեսումը միանշանակ պայմանավորված է դատարանի հիմնական դերի՝ արդարադատության պատշաճ իրականացման անհրաժեշտությամբ: Ընդ որում, պատասխանողը տարբեր դատավարական օրենսգրքերի համեմատական ուսումնասիրության արդյունքներով վկայակոչելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քաղաքացիական եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխանաբար՝ 57, 131 եւ 363-րդ հոդվածները, փաստում է, որ նմանատիպ իրավակարգավորումներ նախատեսված են նաեւ սահմանադրական, քաղաքացիական եւ քրեական դատավարությունների ոլորտներում:

Չհամաձայնելով դիմողների այն տեսակետին, համաձայն որի՝ օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասում «ապացույցների լրացուցիչ հետազոտում» եւ «գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզում» հասկացությունները նույնաբովանդակ են, ինչն անորոշություն է ստեղծում, պատասխանողը, վկայակոչելով եւ մեկնաբանելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածը, գտնում է, որ վերը նշված հասկացություն-

ները տարբեր հասկացություններ են. «ապացույցների լրացուցիչ հետազոտում» հասկացությունը վերաբերում է նույն ապացույցի լրացուցիչ հետազոտմանը, իսկ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար կարող են պահանջվել եւ հետազոտվել նոր ապացույցներ:

Անդրադառնալով օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասում նշված դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ դիմողների դիրքորոշմանը՝ պատասխանողը, վկայակոչելով օրենսգրքի 112-րդ հոդվածը, որն էլ, իր հերթին, հղում է կատարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածին, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածը պատճառաբանված որոշում կայացնելու որոշակի իրավական երաշխիք է:

**5.** Հաշվի առնելով դիմողների փաստարկները՝ սահմանադրական դատարանը սույն գործով հարկ է համարում նախ բացահայտել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերով սահմանված իրավակարգավորման նպատակը եւ տրամաբանությունը՝ նշված նորմերը դիտարկելով օրենսգրքի 113-րդ հոդվածի մյուս նորմերի հետ համադրության մեջ:

Օրենսգրքի 113-րդ հոդվածը վերաբերում է գործով ըստ էության դատական ակտ կայացնելիս դատարանի գործողություններին: Վերջիններս այն անհրաժեշտ, պարտադիր եւ բավարար գործողություններն են, որոնք չկատարելու դեպքում կխաթարվեր արդարադատության էությունը՝ դրանից բխող բոլոր բացասական հետեւանքներով: Ակնհայտ է, որ արդարության պահանջները բավարարող դատական ակտ կայացնելու համար առնվազն հարկ է որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների եւ դրանք հիմնավորող վերաբերելի եւ թույլատրելի ապացույցների շրջանակը՝ այդ շրջանակից բացառելով ոչ վերաբերելի եւ ոչ թույլատրելի ապացույցները: Հարկ է նաեւ մրցակցային դատավարության սկզբունքի հիման վրա հնարավորություն ընձեռել կողմերին դատարանի կողմից հետազոտելու համար ներկայացնելու համապատասխան ապացույցները: Ինքնանպատակ չէ այն, որ մինչեւ բուն դատաքննության անցկացումը վարչադատավարական օրենսդրությամբ նախատեսված է նախնական դատական նիստեր անցկացնելու հնարավորություն:

Ինչ վերաբերում է դատական ակտի կայացմանը, որին նվիրված է օրենսգրքի 113-րդ հոդվածը, ապա այն ըստ էության հանդիսանում է նախնական դատական նիստերի եւ դատաքննության ամփոփումը, որի ժամանակ հարկ է ոչ միայն գնահատել գործով ձեռք բերված եւ հետազոտված ապացույցները եւ դրանց հիման վրա որոշել կիրառելի իրավունքը, այլ դատական քննության լրիվությունն ու բազմակողմանիությունն ապահովելու համար մեկ անգամ եւս ստուգել հնարավոր բացթողումների առկայությունը, այն է՝ որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների պարզված լինելը: Ընդ որում, գործնականում չի բացառվում դատական քննության ընթացքում հնարավոր սխալների, թերությունների առկայությունը: Դրանց բացառ-

մանն են ուղղված հենց օրենսգրքի վիճարկվող նորմերը: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը գտնվում են նույն հոդվածի 1-ին մասի դրույթների հետ տրամաբանական փոխկապվածության մեջ: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ օրենսդիրը, նախատեսելով գործի քննությունը վերսկսելու ինստիտուտ, հետապնդում է, առաջին հերթին, հնարավոր դատական սխալից խուսափելու, գործի լրիվ եւ բազմակողմանի քննություն ապահովելու, արդարադատությունն ամբողջ ծավալով իրականացնելու նպատակ: Նման իրավակարգավորման բացակայությունն, ընդհակառակը, կարող է հանգեցնել դատական սխալի, արդար եւ բազմակողմանի դատաքննության պահանջներին չհամապատասխանող դատական ակտ կայացնելուն: Ընդ որում, օրենսգրքի վիճարկվող նորմերով սահմանված իրավակարգավորումը բնորոշ է սահմանադրական, քաղաքացիական եւ քրեական դատավարություններին եւ նախատեսված է ոչ միայն ՀՀ օրենսդրությամբ, այլ նաեւ բազմաթիվ այլ պետությունների օրենսդրություններով (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության եւ արբիտրաժային դատավարության օրենսգրքեր, Ուկրաինա, Լատվիա եւ այլն):

**6.** Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում օրենսգրքի վիճարկվող նորմերը գնահատել ողջամիտ ժամկետում գործի քննության սահմանադրական սկզբունքի տեսանկյունից: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է հետեւյալը.

**առաջին՝** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81, 82, 117.9 եւ 118.11-րդ հոդվածները, որոնք վերաբերում են առաջին, վերաքննիչ եւ վճռաբեկ ատյանների դատարաններում գործի քննության ժամկետներին, նույնությամբ օգտագործում են Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում եւ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «ողջամիտ ժամկետ» եզրույթը՝ առանց կոնկրետացնելու այդ եզրույթի բովանդակային ծավալը, այսինքն՝ առանց մատնանշելու կոնկրետ օրացուցային օրեր, ամիսներ:

**Երկրորդ՝** օրենսդիրը, օգտագործելով «ողջամիտ ժամկետ» եզրույթը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին համահունչ հաշվի է առել տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող հանգամանքերի հնարավոր առկայությունը՝ հնարավորություն ընձեռելով դատական քննության տեւողության ողջամտությունը գնահատել՝ հաշվի առնելով յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքները: Որպես տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող հանգամանքներ կարող են հանդես գալ, ի թիվս այլնի, գործի բարդությունը, հայցվորի եւ իրավասու մարմինների վարքագիծը, այն հանգամանքը, թե տվյալ պահին ինչ վիճակում է գտնվում գործը եւ այլն: Այդ է պատճառը, որ օրենսդիրը վարչադատավարական օրենսդրության մեջ նախատեսել է նախնական դատական նիստերի ինս-



տիտուտը, որն ուղղված է գործը դատաքննության նախապատրաստելուն այն հաշվարկով, որպեսզի գործի դատաքննության ավարտից հետո չառաջանա գործի քննությունը վերսկսելու անհրաժեշտություն:

**Երրորդ՝** ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը նախատեսում է վիստերն ի պաշտոնն պարզելու սկզբունքը՝ ամրագրված օրենսգրքի 6-րդ հոդվածում, ինչը **պարտավորեցնում է** դատարանին, չկաշկանդվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով եւ գործում առկա այլ նյութերով, ձեռնարկել համապատասխան միջոցներ, որոնց համար տրամաբանորեն պահանջվում է որոշակի ժամանակահատված:

**Չորրորդ՝** Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «ողջամիտ ժամկետ» եզրույթը վերաբերում է ոչ միայն օրենսդրին, այլ, նախեւառաջ, իրավակիրառողին, որը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին համահունչ, պարտավոր է ապահովել գործի քննության ողջամիտ ժամկետները՝ **հաշվի առնելով յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքները**, որոնք չեն բացառում տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող հանգամանքների հնարավոր առկայությունը:

**Հինգերորդ՝** Եթե անգամ օրենսդիրը վարչադատավարական օրենսդրության մեջ կոնկրետացնի Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «ողջամիտ ժամկետ» եզրույթը՝ մատնանշելով կոնկրետ օրացուցային օրեր կամ ամիսներ, ապա, միեւնույն է, առաջանալու է այդ ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան իրավակարգավորում սահմանելու անհրաժեշտություն՝ հաշվի առնելով տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանքների հնարավոր առկայությունը: Այդ հանգամանքներով է պայմանավորված այն, որ օրենսդիրը վարչադատավարական օրենսդրության մեջ նախնական դատական նիստերի եւ գործի քննությունը վերսկսելու ինստիտուտների հետ մեկտեղ նախատեսել է նաեւ գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «ողջամիտ ժամկետ» եզրույթը չի բացառում տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանքների հնարավոր առկայությունը եւ դրանով պայմանավորված՝ նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը: Դա միաժամանակ ենթադրում է դատարանի կողմից գործի քննությունն անհարկի, կամայականորեն ձգձգելը բացառելու պատվիրան:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տարաբնույթ օբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքն իրավաչափորեն երկարաձգող հնարավոր հանգամանքների առկայությունը եւ դրանով

պայմանավորված՝ արդարադատության անաչառ ու արդյունավետ իրականացման շահերից ելնելով նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը հակասության մեջ չի գտնվում Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու սկզբունքի հետ:

7. Գործի քննության «ողջամիտ ժամկետ» հասկացության բովանդակության բացահայտմանն է անդրադարձել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «Դատարանը իրագեկ է այն դժվարությունների մասին, որոնք երբեմն դանդաղեցնում են ... վեճերի քննությունը, ինչը ծանոթ է ազգային դատարաններին, եւ որոնք բխում են տարբեր գործոններից: Մնում է միայն, որ 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ գործերը պետք է քննվեն ողջամիտ ժամկետում. Կոնվենցիան նշանակություն է տալիս այն հանգամանքին, որ արդարադատությունը չպետք է իրականացվի այնպիսի ընդհատումներով, որոնք կարող են վարկաբեկել դրա արդյունավետությունն ու ճշմարտացիությունը» (H. p. France, 58): «Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված՝ դատական քննության տեւողության ողջամիտ բնույթը պետք է գնահատվի յուրաքանչյուր դեպքում՝ գործի հանգամանքներին համապատասխան (Konig v. Germany, 99; Buchholz v. Germany, 49)», «եւ հաշվի առնելով դատարանի պրակտիկայում ամրագրված չափանիշները» (Wiesinger v. Austria, 54), «մասնավորապես, գործի բարդությունը, հայցվորի վարքագիծը, իրավասու մարմինների վարքագիծը: Այս վերջին կետով հաշվի է առնվում նաև հայցվորի համար դատական քննության առարկայի կարեւորությունը» (Zimmermann et Steiner v. Switzerland, 24; X. p. France, 32; Karakaya v. France, 30; տես նաև՝ Erkner et Hofauer c. Autriche, 66; Poiss v. Austria, 55; H. c. Royaume-Uni, 71; Allenet de Ribemont v. France, 47; Duclos V. France, 55; Ceteroni v. Italy, 22): «Հայցվորների վարքագիծը հանդիսանում է օբյեկտիվ հանգամանք, որը չի մեղսագրվում Պատասխանող պետությանը, եւ որը հաշվի է առնվում որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված՝ ողջամիտ ժամկետի սահմանազանցում» (Wiesinger v. Austria, 57; Erkner et Hofauer c. Autriche, 68; Poiss v. Austria, 57): «Ստուգելու համար ժամանակահատվածի ողջամիտ բնույթը, պետք է հաշվի առնել այն վիճակը, որում տվյալ պահին գտնվել է գործը» (Raffineries grecques Stran et Stratis Andreadis c. Grèce, 52; Baggetta v. Italy, 20):

Վերոգրյալը դիտարկելով սույն որոշման 6-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումների համատեքստում՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողների այն տեսակետը, որ օրենսգրքի վիճարկվող դրույթներով դատարաններին տրված՝ գործի քննությունը վերսկսելու հնարավորությունն իրավական հիմք է գործի քննության ողջամիտ ժամկետների խախտման համար:

8. Անդրադառնալով դիմողների այն պնդումներին, որ լրացուցիչ ապացույցները հետազոտելու կամ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը շարունակելու՝ դատարանի իրավասությունը կարող է վտանգել մրցակցային դատավարության եւ կողմերի իրավահավասարության սահմանադրական եւ կոնվենցիոն դրույթների պահպանումը, եւ որ նման իրավասությունը չի համապատասխանում դատարանի գործառույթի սահմանադրաիրավական բովանդակությանը, սահմանադրական դատարանը դրանք հիմնավոր չի համարում հետեւյալ պատճառաբանությամբ: Սահմանադրական դատարանը վարչադատավարական օրենսդրության ուսումնասիրության հիման վրա արձանագրում է, որ բոլոր դեպքերում, երբ գործի քննությունը վերսկսվում է, դատավարությունն ընթանում է այն նույն կանոններով եւ սկզբունքներով, ինչ մինչեւ դրա ավարտը, եւ վիճարկվող օրենսդրական կարգավորումների առկայությունը որեւէ դեպքում չի ենթադրում, որ կողմերը զրկվում են մրցակցային դատավարության կամ իրավահավասարության իրավունքներից:

Բացի դրանից, սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել, որ, ի տարբերություն դատավարության այլ ձեւերի (օրինակ՝ քաղաքացիական դատավարության), վարչադատավարական օրենսդրության մեջ կողմերի իրավահավասարության սկզբունքի հետ մեկտեղ գործում է նաեւ փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքը: Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն.

«1. Գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»):

2. Դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք, իր կարծիքով, էական են վեճի լուծման համար, եւ անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ:

3. Դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձեւավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով եւ գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի»:

Վերոգրյալի հիման վրա՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ գործի քննությունը վերսկսելու ինստիտուտի անհրաժեշտությունը բխում է նաեւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով ամրագրված՝ գործի փաստերն ի պաշտոնե («ex officio») պարզելու դատավարական սկզբունքի տրամաբանությունից:

9. Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում կարեւորում է նաեւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի սահմանադրականության գնահատման հարցը՝ դատական ակտերի պատճառաբանվածության տեսանկյունից:

Ինչպես նշվեց, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Վարչական դատարանը, անհրաժեշտ համարելով լրացուցիչ հետազոտել ապացույցները կամ շարունակել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը, վերսկսում է գործի քննությունը: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ գործի քննությունը վերսկսելու մասին կայացվում է միջանկյալ դատական ակտ: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը գտնվում են տրամաբանական փոխկապվածության մեջ. դրանցից առաջինը սահմանում է գործի քննությունը վերսկսելու հիմքերը, իսկ երկրորդը սահմանում է գործի քննությունը վերսկսելու վերաբերյալ դատական ակտի տեսակը: Ընդ որում, գործի քննությունը վերսկսելու հիմքերը շարադրված են հստակ և ինքնաբերաբար հանդես են գալիս նաև որպես գործի քննությունը վերսկսելու պատճառ կամ առիթ: Օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված՝ գործի քննությունը վերսկսելու հիմքերը պարտավորեցնում են դատարաններին գործի քննությունը վերսկսելու մասին դատական ակտ կայացնելիս դատական ակտում նշել այդ հիմքերը կամ համապատասխանաբար՝ դրանցից մեկը: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նման պարտականությունը միաժամանակ ապահովում է դատական ակտի պատճառաբանվածությունը, որի վերաբերյալ սահմանադրական դատարանն իր, մասնավորապես, ՄԴՈ-690, ՄԴՈ-691, ՄԴՈ-752, ՄԴՈ-754, ՄԴՈ-765, ՄԴՈ-818, ՄԴՈ-886, ՄԴՈ-919 որոշումներում բազմիցս արտահայտել է համապատասխան իրավական դիրքորոշումներ: Այսինքն՝ կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասը՝ դատարաններն ինքնին կիրառում են նշված մասում ամրագրված հիմքերից որեւէ մեկը, այն է՝ ապացույցները լրացուցիչ հետազոտելու անհրաժեշտությունը կամ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը շարունակելու անհրաժեշտությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ տվյալ դատական ակտը կայացնելու իրավասությունը **ենթադրում է իրավունքով սահմանափակված հայեցողություն և պատճառաբանված դատական ակտ կայացնելու պարտականություն:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ գործի քննությունը վերսկսելու մասին պատճառաբանված դատական ակտ կայացնելու որոշակի իրավական երաշխիք է հանդիսանում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի ուժով, ի թիվս այլնի, միջանկյալ դատական ակտին ներկայացվող պահանջների նկատմամբ տարածվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը, մասնավորապես, այդ օրենսգրքի 144-րդ հոդվածը, պարտավորեցնում է դատարաններին դատական ակտ կայացնելիս այդ ակտում նշել նաև այն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է համապատասխան հետետությունների:

**10.** Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև դիտարկվող հիմնահարցն ուսումնասիրել կոնկրետ սահմանադրական վերահսկողության առանձնահատկությունների համատեքստում՝ հաշվի առնելով իրավակիրառական պրակտիկայում ստեղծված իրավիճակը:

Այս առումով սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ինքնին գործի քննությունը վերսկսելու ինստիտուտի նպատակը թեև իրավաչափ է, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն **կիրառելի է բացառապես միայն այն դեպքերում**, երբ առկա են գործով ապացույցները լրացուցիչ հետազոտելու կամ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու՝ իրապես օբյեկտիվ հիմքեր եւ պատճառներ: Հակառակ պարագայում, ինչպես վկայում են դիմողները, դատարանների կողմից դիտարկվող ինստիտուտի անհարկի եւ չհիմնավորված (առանց պատշաճորեն պատճառաբանելու) կիրառումը գործնականում կարող է հանգեցնել գործի դատական քննության ողջամիտ ժամկետների չարդարացված եւ անթույլատրելի խախտումների եւ, վերջին հաշվով, արդարադատության բուն նպատակների խաթարմանը:

Սահմանադրական դատարանը չի կարող արդարացված համարել բոլոր այն դեպքերը, երբ, ինչպես վկայում են գործի նյութերը, 5-7 անգամ դատարանն անցկացնում է նախնական դատական նիստեր եւ ապա դատաքննության արդյունքում կրկին որոշում է կայացնում վերսկսել (ընդ որում՝ ոչ մեկ անգամ) գործի դատաքննությունը: Սա վկայում է արդարադատության որակի ու դատական վերահսկողական համակարգերի հնարավոր բացերի մասին: Նման պրակտիկայի առկայությունը պայմանավորված է ոչ թե վեճի առարկա ինստիտուտի առկայությամբ, այլ վերջինիս ոչ համարժեք կիրառման, դատաքննության ոչ պատշաճ իրականացման հանգամանքներով, ինչը բողոքարկման ինստիտուտի շրջանակներում պետք է անհրաժեշտ վերաբերմունքի արժանանա՝ նման դատական ակտերի գնահատման ու նախադեպային պրակտիկայի ձեւավորման իրավասությամբ օժտված դատական ատյանների կողմից:

Խնդրո առարկա ինստիտուտի ձեւական կիրառումը դատարանների գերծանրաբեռնվածության կամ այլ պատճառաբանությամբ, որոնք որեւէ անմիջական առնչություն չունեն օրենսգրքի 113-րդ հոդվածում ամրագրված հիմքերի հետ, սահմանադրաիրավական առումով իրավաչափ չէ:

Սահմանադրական դատարանը հանգում է այն եզրակացությանը, որ դիմողների իրավունքների հնարավոր խախտումները պայմանավորված չեն վեճի առարկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակությամբ կամ դրանց տրված որեւէ կոնկրետ մեկնաբանությամբ: Վեճի առարկան, ըստ էության, օրենքի նորմի այնպիսի կիրառումն է, երբ խնդիրն առնչվում է դատական հայեցողության սահմանների ոչ համարժեք ընկալմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ

հողվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**5 փետրվարի 2013 թվականի  
ՍԳՈ-1074**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 554-Ն ՈՐՈՇՄԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**22 փետրվարի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող),  
Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետ-  
րոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխա-  
տակիցներ Ա. Վարդեանյանի, Ս. Յուզբաշյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ կառավարության  
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Ա. Աշ-  
ոտյանի,

սահմանադրական դատարանի նիստին հրավիրված՝ Պետական բուհերի  
ռեկտորների խորհրդի նախագահ, Երևանի պետական համալսարանի ռեկ-  
տոր Ա. Սիմոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրա-  
կան դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունք-  
ների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կա-  
ռավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշման՝ Հայաստանի  
Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը  
որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝  
05.10.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի բացատրությունները, ԵՊՀ ռեկտորի պարզաբանումները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշումն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից՝ 2012թ. մայիսի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2012թ. մայիսի 17-ին:

«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2012/2013 ուսումնական տարվա՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձեռով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) եւ ուսման վարձի մասնակի գեղչի կիրառման իրավունքով (վճարովի) առկա ուսուցմամբ բակալավրիատի կրթական ծրագրով տեղերը հաստատելու մասին» վերտառությամբ որոշումն ընդունվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ «Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարությունը եւ ակադեմիական ազատությունները» վերտառությամբ 28-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է պետական պատվեր՝ ըստ մասնագիտությունների, ուսումնական հաստատությունների, սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերի: Բարձրագույն ուսումնական հաստատությունը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրեն հատկացված ընդունելության ընդհանուր տեղերի շրջանակներում կարող է ձեռավորել ուսանողական համակազմի անվճար եւ վճարովի չափաքանակներ՝ յուրաքանչյուր մասնագիտության համար նախատեսելով անվճար ուսուցման տեղեր՝ առնվազն տասը տոկոսի սահմաններում»:

«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրները» վերտառությամբ 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը սահմանում է. «Պետությունն ապահովում է բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության զարգացում հետեւյալ ձեւերով ... օրենքով սահմանված կարգով բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության համակարգի ուսանողներին եւ ասպիրանտներին պետական ֆինանսական օժանդակություն (կրթաթոշակներ, ուսման վարձի փոխհատուցում (լրիվ եւ մասնակի (գեղչ), կրթական դրամաշնորհներ, վարկեր)»:

Որոշման 1-ին կետով ՀՀ կառավարությունը հաստատել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ բակա-



լավրիատի ծրագրով 2012/2013 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ տեղերը՝ համաձայն նույն որոշման բաղկացուցիչ մաս հանդիսացող թիվ թիվ 1, 2, 3, 4, 5 եւ 6 հավելվածների:

Որոշման՝ «2012/2013 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձեռով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրիատի կրթական ծրագրով ընդունելության տեղերը» վերտառությամբ թիվ 2 հավելվածի՝ «Երեւանի պետական համալսարան» վերտառությամբ 1-ին կետով ըստ մասնագիտությունների սահմանվել են, ի թիվս այլնի, պետության կողմից ուսանողական նպաստների ձեռով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրիատի կրթական ծրագրով ընդունելության տեղերը, որոնք չեն ներառում «իրավագիտություն» եւ «միջազգային հարաբերություններ» մասնագիտությունները:

2. Դիմողը՝ վկայակոչելով մի շարք երկրների սահմանադրությունների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունքն ամրագրող համապատասխան դրույթները, Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին 1966 թվականի միջազգային դաշնագրի եւ Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի համապատասխան դրույթները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք նախադեպային վճիռներ, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1998թ. թիվ R (98) 3 եւ CM/Rec (2007) 6 հանձնարարականները, գտնում է, որ ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշմամբ հաստատված՝ Երեւանի պետական համալսարանում պետության կողմից ուսանողական նպաստների ձեռով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրիատի կրթական ծրագրով ընդունելության տեղերում «իրավագիտություն» եւ «միջազգային հարաբերություններ» մասնագիտությունները չներառելը հակասում է ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածին:

Ի հիմնավորումն իր դիրքորոշման՝ դիմողը ներկայացնում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ նախադասության դրույթների վերաբերյալ սեփական մեկնաբանությունը եւ գտնում է, որ նշված նախադասությունում՝ «կարող է» եզրույթի սահմանումով օրենքն ուսումնական հաստատությանը հայեցողական իրավասություն է տվել ձեւավորել ուսանողական համակազմի անվճար եւ վճարովի չափաքանակներ՝ միաժամանակ սահմանելով անվճար ուսուցման տեղերի պարտադիր չափ:

3. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ քննության առարկա՝ ՀՀ կառավարության որոշումն ընդունվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան, չի հանգեցնում ՀՀ Սահմանադրության եւ այլ միջազգային նորմերի խախտման:

Ի հիմնավորումն իր դիրքորոշման՝ պատասխանողը դիմողի մատնանշած

միջազգային իրավական փաստաթղթերի համապատասխան դրույթների վերլուծության հիման վրա արձանագրում է, որ միջազգային իրավական գրեթե ոչ մի փաստաթուղթ պետությանն անվերապահորեն չի պարտադրում անվճար բարձրագույն կրթության իրավունքը նախատեսել որպես բացարձակ, սահմանափակումների չենթարկվող իրավունք:

Հղում կատարելով «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասին եւ ընդգծելով նշված մասի այն դրույթը, համաձայն որի՝ պետության համար առաջնահերթ եւ կարեւորություն ներկայացնող ոլորտների մասնագիտությունների ցանկը եւ քանակը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ պատասխանողը ողջամիտ է համարում գործադիր իշխանությանն անվճար ուսումնառության տեղեր սահմանելու կամ, որոշ դեպքերում, դրանց թիվը սահմանափակելու իրավասության տրամադրումը, հիմք ընդունելով կոնկրետ բնագավառներում բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստմամբ պայմանավորված պետության պահանջումը, որը ձեւավորվում է յուրաքանչյուր տարվա կտրվածքով՝ ըստ մասնագիտությունների:

Անդրադառնալով դիմողի վկայակոչած՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ նախադասության դրույթին՝ պատասխանողը գտնում է, որ հոդվածի նշված մասի 1-ին նախադասությամբ պետական պատվերի ամրագրումը բխում է Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ նախադասության դրույթներից եւ չի առնչվում «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ նախադասությանը:

4. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողը վիճարկում է ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշման թիվ 2 հավելվածում, իր կարծիքով, առկա իրավական բացը, որը, ըստ դիմողի, դրսևորվում է նրանում, որ որոշման թիվ 2 հավելվածի 1-ին կետում բացակայում է «իրավագիտություն» եւ «միջազգային հարաբերություններ» մասնագիտությունների վերաբերյալ նշումը:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը հռչակելով իրեն որպես իրավական պետություն՝ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածով հստակ նախատեսում եւ երաշխավորում է կրթության իրավունքը: Սահմանադրության այս հոդվածը, վերաբրտադրելով Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածի, Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածի դրույթները եւ սահմանելով կրթության իրավունքը, միաժամանակ մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի իրացման դեպքերի եւ կարգի սահմանումն թողնում է օրենսդիր մարմնի հայեցողությանը: Ընդ որում, վերը նշված միջազգային իրավական ակ-

տերի համապատասխան դրույթները չեն նախատեսում պարտադիր կարգով ստեղծելու անվճար բարձրագույն կրթության համակարգ: Իսկ Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը սահմանում է հետեւյալ իրավակարգավորումը. «Մույն դաշնագրին մասնակցող պետությունները գտնում են, որ այդ իրավունքի լրիվ իրականացման համար ... բարձրագույն կրթությունը պետք է կազմակերպվի հավասարապես մատչելի բոլորի համար՝ յուրաքանչյուրի ընդունակությունների հիման վրա բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկման եւ, մասնավորապես, աստիճանաբար անվճար կրթություն մտցնելու ուղիով»:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրելով մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը՝ սահմանադիրը միեւնույն ժամանակ դիտարկվող իրավունքի իրացումը երաշխավորելու համար նույն հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասությամբ սահմանել է պետության պարտականության բնույթը՝ ֆինանսական եւ այլ աջակցություն ցուցաբերել բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին եւ դրանցում սովորողներին: Ընդ որում, նույն երկրորդ նախադասությամբ սահմանադիրը պետության դիտարկվող պարտականության իրականացման **դեպքերի եւ կարգի** սահմանումը վերապահել է օրենսդրին՝ դրանով իսկ կանխատեսելով օրենքի միջոցով մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի **սահմանափակման հնարավորությունը**, քանի որ իրավական ակտի շարադրանքի տեսանկյունից ակնհայտ է, որ օրենսդրին ֆինանսավորման կոնկրետ դեպքերը սահմանելու իրավասություն վերապահելով՝ սահմանադիրը հնարավոր է համարել բացառելու ֆինանսավորման մյուս բոլոր հնարավոր դեպքերը, այլապես սահմանադիրը Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասությամբ օրենսդրին կվերապահեր միայն ֆինանսավորման **կարգը**, այլ ոչ թե ֆինանսավորման **դեպքերը եւ կարգը** սահմանելու իրավասություն: Միաժամանակ, Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասությամբ սահմանադիրը չի բացառում, որպեսզի օրենսդիրը հասարակական կյանքի զարգացմանը զուգընթաց ընդլայնի ֆինանսավորման դեպքերի շրջանակը: Վերոգրյալը թույլ է տալիս պնդել, որ Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին եւ երկրորդ նախադասություններով ամրագրված դրույթները գտնվում են միմյանց հետ տրամաբանական փոխկապվածության մեջ: Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթի մեկուսի, երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթից կտրված վերլուծության դեպքում ստեղծվում է այն թյուր կարծիքը, որ պետությունը բոլոր դեպքերում եւ ցանկացած մասնագիտության համար պարտավոր է երաշխավորել մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը: Իրականում դա այդպես չէ, քանի որ Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի համա-

տեքստում դիտարկելու եւ ըստ այդմ՝ վերլուծելու դեպքում է միայն հնարավոր դառնում պարզելու մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն է՝ պետությունը չի կարող ունենալ այնպիսի սահմանադրական պարտականություն, որ պարտավոր լինի երաշխավորել առանց բացառության բոլոր ու ցանկացած մասնագիտության գծով մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածը կրթության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է, սակայն, իրավունքների իրացման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրության հենց տվյալ հոդվածն է նախատեսում բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի իրացման կարգի, ինչպես նաեւ պետության կողմից իրականացվելիք ֆինանսական եւ այլ աջակցություն ցուցաբերելու դեպքերի ու կարգի սահմանումն օրենսդրին վերապահելը:

Անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքին է առնչվում նաեւ ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 8-րդ կետը, որը որպես պետության խնդիր է դիտարկում անվճար բարձրագույն եւ այլ մասնագիտական կրթության զարգացմանը նպաստելը: Այս կետի դրույթը հանդիսանում է նորմ-խնդիր, որն էլ ենթադրում է պետության նպատակային քաղաքականություն, եւ որի իրացումը պահանջում է որոշակի ժամանակահատված՝ հաշվի առնելով նաեւ պետության ֆինանսական հնարավորությունները, քանի որ անվճար տեղեր սահմանելիս պետությունը պարտավորվում է ֆինանսավորել ուսումնական հաստատության տվյալ տեղերում սովորողների ուսումնառությունը:

Ընդ որում, հարկ է նշել, որ ՏՆտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը եւս անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքն ապահովելու՝ պետության պարտականությունը չի դիտարկում որպես ամբողջ ծավալով անվերապահորեն կատարման ենթակա պարտականություն, քանի որ նախատեսում է **աստիճանաբար** անվճար կրթություն մտցնելու պարտականություն, ինչը եւս նշված պարտականության կատարման համար ենթադրում է որոշակի ժամանակ եւ համապատասխան ֆինանսական հնարավորություններ:

Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասի եւ 48-րդ հոդվածի 8-րդ կետի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը չի կարող բացարձականացվել եւ տարածվել բարձրագույն կրթություն պահանջող անսահմանափակ թվով մասնագիտությունների վրա:

## 6. Անդրադառնալով Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասի երկ-

րորդ նախադասությամբ ամրագրված եւ օրենքով սահմանման ենթակա՝ բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին եւ դրանցում սովորողներին ֆինանսական եւ այլ աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ պետության պարտականության կատարման դեպքերին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ դեպքերը սահմանված են «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, նշված օրենքի՝ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրները» վերտառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներն են ... պետության համար առաջնային եւ կարեւորություն ներկայացնող բնագավառներում ... մասնագետների պատրաստմանն աջակցելը»: Սահմանադրական դատարանը, վերլուծելով դիտարկվող դրույթը, արձանագրում է, որ նշված դրույթում «պետության համար առաջնային եւ կարեւորություն ներկայացնող բնագավառներում» բառակապակցությունը նշանակում է աջակցություն ցուցաբերելուց առաջ պետության համար առաջնային եւ կարեւորություն ներկայացնող բնագավառները որոշելու՝ պետության պարտականության իրականացում: Իսկ նույն դրույթում «մասնագետների պատրաստմանն աջակցելը» բառակապակցությունը ներառում է նաեւ Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ անվճար բարձրագույն կրթության իրավունքը երաշխավորելու համար պետության կողմից ցուցաբերվելիք ֆինանսական աջակցությունը: Այսինքն՝ Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ ֆինանսական աջակցություն ցուցաբերելուց առաջ պետությունը պարտավոր է, նախելառաջ, որոշել իր համար առաջնային եւ կարեւորություն ներկայացնող բնագավառները:

«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հետ տրամաբանական փոխկապվածության մեջ է գտնվում նույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը, որը սահմանում է՝ «Պետությունն ապահովում է բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության զարգացում հետեւյալ ձեւերով ... պետության պահանջներին համապատասխան՝ բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին եւ դրանցում սովորողներին ֆինանսական աջակցության ապահովում»: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի դիտարկվող դրույթում «**պետության պահանջներին համապատասխան**» բառակապակցությունը ներառվում է «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված՝ պետության համար առաջնային եւ կարեւորություն ներկայացնող բնագավառները կամ որ նույնն է՝ կրթության բնագավառում իր պահանջները որոշելու պարտականության բովանդակային ծավալում:

Հինք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ

Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված է օրենքով սահմանման ենթակա՝ բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին ֆինանսական և այլ աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ պետության պարտականության կատարման ղեկավարող հենց պետության կողմից իր համար առաջնային և կարեւորություն ներկայացնող բնագավառները կամ որ նույնն է՝ կրթության բնագավառում իր պահանջները որոշելն է՝ նախատեսված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասի 5-րդ կետով: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ **Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքն ապահովելու նպատակով ֆինանսական աջակցություն ցուցաբերելու՝ պետության պարտականությունը սահմանափակված է պետության համար առաջնային և կարեւորություն ներկայացնող կրթական բնագավառներով կամ կրթության բնագավառում պետության պահանջներով կամ որ նույնն է՝ իր համար առաջնային և կարեւորություն ներկայացնող մասնագիտություններով, ինչը չի բացառում այլ մասնագիտությունների համար, ինչպես նաև ցանկացած մասնագիտության համար, անկախ դրա՝ պետության համար առաջնային և կարեւորություն ներկայացնելու հանգամանքից, եւս ֆինանսավորելու՝ պետության իրավական հնարավորությունները:**

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշման թիվ 2 հավելվածում առկա իրավական բացի վերաբերյալ դիմողի փաստաթղթերը:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն ի հիմնավորումն իր դիրքորոշման՝ ներկայացնում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների վերաբերյալ սեփական մեկնաբանությունը, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում համադրված ուսումնասիրել «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն և 10.10.2012թ. թիվ 1323-Ն որոշումների դրույթները և ուսումնասիրության արդյունքների հիման վրա բացահայտել «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրված՝ «պետական պատվեր» բառակապակցության բովանդակությունը:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, մասնավորապես՝ 3, 5, 6, 17 և 21-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն և 10.10.2012թ. թիվ 1323-Ն որոշումների ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանը գտնում է, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրված՝ «պետական պատվեր» բառակա-

պակցությունը ենթադրում է բուհերին ըստ մասնագիտությունների անվճար տեղերի հատկացում՝ նշված տեղերում պետական բյուջեի միջոցների հաշվին **ուսանողական նպաստի միջոցով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ**՝ ելնելով պետության համար առաջնային եւ կարեւորություն ներկայացնող բնագավառների կամ որ նույնն է՝ կրթության բնագավառում պետության պահանջների առկայությունից եւ բացառապես դրա հիման վրա մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթության իրավունքի երաշխավորման նպատակից: Դրա հետ մեկտեղ, պետությունը պարտավորվում է ոչ պետական պատվերի շրջանակներում բարձրագույն կրթություն ստացողներին աջակցություն՝ մի շարք չափորոշիչներից ելնելով:

Մասնավորապես, «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձեռով տրվում է մրցութային արդյունքներով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, ինչպես նաեւ սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին՝ անկախ ուսումնառության համակարգից (անվճար, վճարովի, վճարովի՝ առանց տարկետման իրավունքի), Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին եւ կարգին համապատասխան»:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն. «Պետությունը սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերում հաշվառված եւ վերջին ութ տարում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային կարգով՝ անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունք: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուր մրցութից առանձնացված կարգով, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը միայն սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերի քաղաքացիների համար»:

ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի համաձայն՝ «Պետությունն ուսանողական նպաստի ձեռով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է՝

ա) մեկ ուսումնական տարվա քննությունների եւ ստուգաքրքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով.

բ) օրենքով նախատեսված հետեւյալ սոցիալական խմբերին՝

առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին եւ նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամներին եւ հաշմանդամ երեխայի կարգա-

վիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին՝ համաձայն «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

զ) պետության համար առաջնահերթություն եւ կարելություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

Առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին եւ նրանց թվին պատկանող անձանց, զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին ուսանողական նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսից մինչեւ ծրագրի ավարտը, իսկ 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամներին եւ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին ուսանողական նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրվում են 1-ին կուրսի սկզբում եւ վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում»:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը **մրցութային հիմունքներով անվճար (ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ)** բարձրագույն կրթության իրավունքը երաշխավորել է 3 խումբ սուբյեկտների համար.

- ընդունելության քննությունների արդյունքներով տվյալ գնահատման համակարգում ամենաբարձր գնահատականներ ստացած ուսանողներ («Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մաս, ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետ),
- մեկ ուսումնական տարվա կտրվածքով ուսումնառության ընթացքում բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներ («Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մաս, ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի «ա» ենթակետ, 4-րդ կետ/,
- սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներ՝ անկախ ուսումնառության համակարգից՝ անվճար, վճարովի, վճարովի՝ առանց տարկետման իրավունքի, որոնց մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուր մրցութից առանձնացված կարգով, որը սահմանում է ՀՀ կառավարությունը միայն սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերի քաղաքացիների համար («Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերություն, 6-րդ հոդվածի 4-րդ մաս):

Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշմամբ



հաստատված կարգի 2-րդ կետի «գ» ենթակետում նշված՝ պետության համար առաջնահերթություն եւ կարեւորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին, ապա «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ պարբերության դրույթների վերլուծության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **դրանք ներառվում են «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերության եւ 6-րդ հոդվածի 4-րդ մասում նշված՝ սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողների շրջանակում: Այսինքն՝ դրանք «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասում նշված սուբյեկտներից տարբերվող նոր սուբյեկտներ չեն: Մասնավորապես, «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ պարբերության դրույթների համաձայն. «Սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում է նաեւ հետեւյալ պայմանը. ուսանողը ավարտելուց հետո առնվազն 5 տարի ժամկետով գործուղվում է աշխատելու Հայաստանի Հանրապետության կառավարության նախատեսած բնակավայրերում: Այս պայմանը չկատարելու դեպքում շրջանավարտը պարտավոր է փոխհատուցել իր ուսման ծախսերը: Փոխհատուցման կարգը, չափը եւ ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:**

Միաժամանակ, սոցիալապես անապահով ուսանողների համար (առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներ եւ նրանց թվին պատկանող անձինք՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամներ եւ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, զոհված զինծառայողի երեխա-ուսանողներ, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներ՝ համաձայն «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի, օրենսդիրը եւս երաշխավորել է անվճար (ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) բարձրագույն կրթության իրավունք, ինչը, սակայն, **պայմանավորված չէ մրցույթի արդյունքներով** («Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մաս, ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի «բ» ենթակետ):

Ինչ վերաբերում է ֆինանսական աջակցության մյուս ձեւերին, որոնք կարող են սահմանվել ոչ միայն պետության, այլ նաեւ բուհի կողմից՝ իրենց ֆինանսական միջոցների շրջանակներում, ինչպիսիք են՝ կրթաթոշակը, ուսանողական նպաստի միջոցով ուսման վարձի **մասնակի փոխհատուցումը**, ինչպես նաեւ կրթական դրամաշնորհը, ուսանողական վարկը, ապա դրանք որեւէ առնչություն չունեն «պետական պատվեր» հասկացության շրջանակներում մրցութա-

յին հիմունքներով անվճար բարձրագույն կրթության իրավունքի ապահովման նպատակի հետ:

**8. Հաշվի առնելով դիմողի փաստարկները՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ուսանողական նպաստի միջոցով ուսման վարձի մասնակի փոխհատուցման վերաբերյալ սահմանված իրավակարգավորումներին:**

Այսպես. «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերությունը սահմանում է. «Բարձրագույն ուսումնական հաստատությունն վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին փոխհատուցում է ուսման տարեկան վարձը՝ հիմք ընդունելով ուսանողների առաջադիմությունը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված դրույթներում օրենսդիրը չի բացահայտում փոխհատուցման եղանակը՝ լրիվ, թե՛ մասնակի: Այդ եղանակը բացահայտված է ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետում, որը սահմանում է հետեւյալ իրավակարգավորումը. ««Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատությունը, վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի առնվազն 10 տոկոսին՝ ուսանողի սոցիալական վիճակի եւ բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, իր միջոցների հաշվին ուսման վճարը ուսանողական նպաստի ձեւով մասնակի փոխհատուցում է՝

ա) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին.

բ) միակողմանի ծնողագուրկ (միածնող) ուսանողներին.

գ) 3 եւ ավելի անչափահաս կամ 3 եւ ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին.

դ) վճարովի ուսուցման համակարգում 2 եւ ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին.

ե) 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամ ծնողներ ունեցող ուսանողներին.

զ) հեռավոր լեռնային եւ սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին.

է) մինչեւ մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին.

ը) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ բուհի հայեցողությամբ.

թ) բուհի հայեցողությամբ՝ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին»:

Ինչ վերաբերում է պետության կողմից ուսման վճարն ուսանողական նպաստի ձեւով մասնակի փոխհատուցելու դեպքերին եւ կարգին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշումը չի սահմանում այդ դեպքերը եւ կարգը: Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարության 10.10.2012 թվականի թիվ 1323-Ն որոշմամբ, **որն ուժի մեջ է մտնելու 2013 թվա-**

**կանի սեպտեմբերի 1-ից**, լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված կարգում, որոնք ներառում են նաեւ պետության կողմից ուսման վճարն ուսանողական նպաստի ձեւով մասնակի փոխհատուցելու դեպքերը եւ կարգը: Մասնավորապես, ՀՀ կառավարության 10.10.2012 թվականի թիվ 1323-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված է ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշման հավելվածը 2-րդ կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.1 կետով. «Պետությունն ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած եւ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող հետեւյալ խմբերին՝

ա) մինչեւ 5 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50 տոկոսի չափով.

բ) 5-10 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 60 տոկոսի չափով.

գ) 10-15 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 70 տոկոսի չափով.

դ) 15-20 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 80 տոկոսի չափով.

ե) 20-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 100 տոկոսի չափով»:

«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն եւ 10.10.2012թ. թիվ 1323-Ն որոշումների ուսումնասիրության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ի տարբերություն **պետության կողմից** ուսման վճարն ուսանողական նպաստի ձեւով փոխհատուցելու վերաբերյալ իրավակարգավորումների, որոնց շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են **թե լրիվ եւ թե մասնակի** փոխհատուցման դեպքերը եւ կարգը, **բարձրագույն ուսումնական հաստատության կողմից** ուսման վճարն ուսանողական նպաստի ձեւով փոխհատուցելու վերաբերյալ իրավակարգավորումների շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են **միայն մասնակի** փոխհատուցման դեպքերը եւ կարգը, **ինչն էլ դիմողի մոտ ձեւավորել է թյուր կարծիք, որ քննության առարկա որոշման մեջ առկա է օրենսդրական բաց:**

Վերոգրյալի կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, **նախ՝** քննության առարկա որոշման խնդիրը չէ սահմանել բարձրագույն ուսումնական հաստատության կողմից ուսման վճարն ուսանողական նպաստի ձեւով լրիվ փոխհատուցելու (անվճար տեղեր սահմանելու) վերաբերյալ իրավակարգավորումներ, **երկրորդ՝** նշված խնդիրը վերապահված է ՀՀ կա-

ռավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշմանը, որի սահմանադրականության հարցի որոշումը դուրս է սույն գործով քննության առարկայի շրջանակներից, **երրորդ՝ «Կրթության մասին»** ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության երկրորդ նախադասությամբ սահմանված՝ «Բարձրագույն ուսումնական հաստատությունը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրեն հատկացված ընդունելության ընդհանուր տեղերի շրջանակներում կարող է ձեռավորել ուսանողական համակազմի անվճար եւ վճարովի չափաքանակներ՝ յուրաքանչյուր մասնագիտության համար նախատեսելով անվճար ուսուցման տեղեր՝ առնվազն տասը տոկոսի սահմաններում» դրույթը վերաբերում է նրան, որ բարձրագույն ուսումնական հաստատությունը, ելնելով Սահմանադրության 39-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իր ինքնավարությունից, **ունի պետության կողմից իրեն հատկացված ընդհանուր տեղերի տասը տոկոսի շրջանակներում անվճար տեղեր նախատեսելու հայեցողական ազատություն**, ինչը որեւէ կապ չունի պետության կողմից ըստ մասնագիտությունների եւ ըստ բուհերի սահմանված՝ անվճար ուսուցման տեղերի կամ պետական պատվերի հետ, որտեղ բուհը որեւէ հայեցողական լիազորություն չունի, եւ դա իրավակիրառողի մոտ չպետք է շփոթ առաջացնի: Այսինքն՝ անվճար բարձրագույն կրթության զարգացմանը նպաստելու համար նախատեսված են զուգահեռաբար գործող, միաժամանակ եւ՝ պետության, եւ՝ բուհի կողմից իրականացվող տարբեր ձեւեր եւ եղանակներ: **Պետությունը, բուհից անկախ, եւ հակառակը՝ բուհը պետությունից անկախ, յուրաքանչյուրն օժտված են անվճար տեղեր սահմանելու իրավասությամբ, որտեղ պետությունն օրենքով նախատեսված դեպքերի առկայության պարագայում ունի մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթության իրավունքը երաշխավորելու սահմանադրական պարտականություն, իսկ բուհը՝ հայեցողական ազատություն: Պետության պարտավորությունը չի սահմանափակվում միայն անհրաժեշտ մասնագետների պատրաստման պետական պատվերով: Այն ներառում է նաեւ մասնագիտական ազատ կողմնորոշման շրջանակներում պետական աջակցությունը, ինչը, մասնավորապես, նախատեսված է նաեւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով:**

Այլ խնդիր է, որ, **մի կողմից**, ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշումը չի ապահովում «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված՝ բուհերի հայեցողական լիազորության վերաբերյալ դրույթի համարժեք իրացումը, ինչի վրա սահմանադրական դատարանը հարկ է համարում հրավիրել ՀՀ կառավարության ուշադրությունը: **Մյուս կողմից՝** դիմողի արդարացի մտահոգությունը պայմանավորվել է նաեւ նրանով, որ ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշմամբ լիարժեք չեն իրացվել «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները: Վերջինս հաղթահարվել է կառավարության 10.10.2012թ. թիվ 1323-Ն որոշմամբ, որն ուժի մեջ է մտնելու 2013թ. սեպտեմբերի 1-ից: Այս որոշման գոր-

ծողությունը, ինչպես նաև ուսանողների ուսուցման վճարի վարկավորման նոր ներդրվող համակարգն անհրաժեշտ նախադրյալներ կապահովեն, որպեսզի յուրաքանչյուր ուսանող, անկախ սոցիալական վիճակից, իր ցանկացած մասնագիտության գծով անհրաժեշտ առաջադիմություն ապահովելու դեպքում չի գրկվի մասնագիտական բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշումը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**22 փետրվարի 2013 թվականի  
ՍԳՈ-1075**



**ՔԱՂԱՔԱՅԻ ՆԱՐԻՆԵ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՄԿՐՏՉՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 23-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ,  
24-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ, 38-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ, 79-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ  
4-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 80-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**5 մարտի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (գեկուցող), Հ. Նազարյանի (գեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող Ն. Սկրտչյանի, նրա ներկայացուցիչ Տ. Սարգսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի եւ նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց միատում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Նարինե Սկրտչյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի, 24-րդ հոդվածի, 38-րդ հոդվածի 7-րդ մասի, 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի եւ 80-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ն. Սկրտչյանի՝ 30.01.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողների գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

1. ՀՀ ընտրական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2011թ. մայիսի 26-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2011թ. հունիսի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2011թ. հունիսի 26-ին:

Սույն գործով վիճարկվող նորմերը համապատասխանաբար սահմանում են.

օրենսգրքի՝ «Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման ֆինանսավորումը» վերտառությամբ 23-րդ հոդվածի 3-րդ մասում.

«3. Եթե բյուջետային միջոցները ժամանակին չեն տրամադրվում, կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պահուստային ֆոնդում միջոցներ չկան, կամ տրամադրված միջոցները չեն բավարարում ընտրությունները կամ ընտրությունների երկրորդ փուլը ֆինանսավորելու համար, ապա կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավունք ունի մրցութային հիմունքներով վարկ ստանալու մասնավոր բանկերից կամ օգտագործելու կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ ընտրական գրավների հատուկ հաշվեհամարում առկա միջոցները: Վարկը կամ ընտրական գրավների հատուկ հաշվեհամարից օգտագործված միջոցները կառավարությունը եռամսյա ժամկետում վերականգնում է»:

օրենսգրքի՝ «Ընտրական գրավը» վերտառությամբ 24-րդ հոդվածում.

«1. Թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաշվեհամարին վճարում են ընտրական գրավ:

2. Ընտրական գրավի գումարը դիմումը ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, վերադարձվում է՝

1) ընտրվելու կամ համամասնական ընտրակարգով մանդատների բաշխմանը մասնակցելու,

2) թեկնածուներին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվի 5 կամ 5-ից ավելի տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստանալու,

3) մինչեւ թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումն ինքնաբացարկ ներկայացնելու,

4) ընտրության արդյունքներն անվավեր ճանաչվելու եւ նոր ընտրություն նշանակվելու դեպքերում եւ

5) ժառանգներին՝ թեկնածուի մահվան դեպքում:

Մյուս բոլոր դեպքերում ընտրական գրավի գումարը չի վերադարձվում»:

օրենսգրքի՝ «Ընտրական հանձնաժողովների ֆինանսավորումը, ընտրական հանձնաժողովների անդամների վարձատրությունը» վերտառությամբ 38-րդ հոդվածի 7-րդ մասում.

«7. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ ընտրական գրավների հատուկ հաշվեհամարում առկա միջոցների մինչև 15 տոկոսը՝ յուրաքանչյուր տարվա համար կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ հաստատված նախահաշվին համապատասխան, կարող է օգտագործվել ընտրական վարչարարության փորձի ուսումնասիրման, ընտրական վարչարարության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման, ընտրական հանձնաժողովների տեխնիկական վերազինման եւ ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի պատրաստման եւ հրապարակման համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ ընտրական գրավների հատուկ հաշվեհամարում մնացած մյուս միջոցները Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են օգտագործվել ընտրական հանձնաժողովների տեխնիկական վերազինման եւ ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի պատրաստման եւ հրատարակման համար».

օրենսգրքի՝ «Հանրապետության Նախագահի թեկնածուի առաջադրումը» վերտառությամբ 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետում.

«2) ընտրական գրավի վճարման անդորրագիրը».

օրենսգրքի՝ «Հանրապետության Նախագահի թեկնածուի ընտրական գրավը» վերտառությամբ 80-րդ հոդվածում.

«Հանրապետության Նախագահի թեկնածուները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացված կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաշվեհամարին վճարում են ընտրական գրավ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվարկային նվազագույն աշխատավարձի (այսուհետ՝ նվազագույն աշխատավարձ) 8000-ապատիկի չափով»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ 2013թ. փետրվարի 18-ին նշանակված էին ՀՀ Նախագահի ընտրություններ: Դիմողն իր լիազոր ներկայացուցչի միջոցով 2012թ. դեկտեմբերի 29-ին ՀՀ ընտրական օրենսգրքի 79-րդ հոդվածի համաձայն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացրել առաջադրման փաստաթղթերը՝ դիմում առաջադրման մասին (վավերացված նոտարական կարգով), լիազոր ներկայացուցչի տվյալները, տեղեկանք թեկնածուի՝ վերջին տասը տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, այլ պետության քաղաքացիություն չունենալու եւ վերջին տասը տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին, թեկնածուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը: Չի ներկայացվել ՀՀ ընտրական օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված ընտրական գրավի վճարման անդորրագիրը:



ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունել է վերոհիշյալ փաստաթղթերը եւ 2013թ. հունվարի 8-ին գումարված իր նիստում, ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի 79-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ պարբերությամբ, կայացրել է թիվ 4-Ա որոշումը՝ դիմողի դիմումին կից ներկայացված փաստաթղթերը լրացնելու, այն է՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի ուժից բացառված չլինելու ընտրական գրավի վճարման անդորրագրով լրացնելու համար քառասունութ ժամ ժամանակ տալու մասին: Նշված ժամանակահատվածում դիմողն ընտրական գրավի վճարման անդորրագիր չի ներկայացրել: 2013թ. հունվարի 14-ին հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 79, 80 եւ 82-րդ հոդվածների դրույթները, կայացրել է 22-Ա որոշումը, որով մերժել է դիմողի գրանցումը որպես Հանրապետության Նախագահի թեկնածու:

Դիմողը 2013թ. հունվարի 17-ին, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 143-րդ եւ 146-րդ հոդվածներով, ՀՀ ԿԸՀ թիվ 22-Ա որոշումը բողոքարկել է ՀՀ վարչական դատարան: Վերջինս, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-114-րդ, 150-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, մերժել է հայցը: Քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերջնական են, վերանայման ենթակա չեն եւ ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, Ն. Սկրտչյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան:

3. Դիմողը գտնում է, որ իր նկատմամբ կիրառված ՀՀ ընտրական օրենսգրքի 24-րդ եւ 80-րդ հոդվածները, 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը, ինչպես նաեւ 23-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «կամ օգտագործելու կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ ընտրական գրավների հատուկ հաշվեհամարում առկա միջոցները» բառերը, 38-րդ հոդվածի 7-րդ մասը հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6, 14.1. եւ 50-րդ հոդվածներին՝ հետեյալ հիմնավորումներով:

Դիմողի կարծիքով, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանվում է Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժ ունենալու եւ դրա նորմերի անմիջականորեն գործելու, ինչպես նաեւ օրենքների նկատմամբ միջազգային պայմանագրերի գերակայության սկզբունքը, ինչից բխում է, որ Սահմանադրության 14.1-րդ եւ 50-րդ հոդվածներով սահմանված դրույթները պետք է գործեն անմիջականորեն: Բացի դրանից, ՀՀ ընտրական օրենսգրքի հիշյալ դրույթները հակասում են օրենքի նկատմամբ գերակա ուժ ունեցող ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին: Դիմողը գտնում է, որ Սահմանադրության 50-րդ հոդվածը սահմանում է Հանրապետության Նախագահ ընտրվելու համար նախատեսված չափորոշիչները եւ չի նախատեսում որեւէ այլ արգելք, գրավ, գումարային կամ այլ սահմանափակումներ: Ավելին, ՀՀ

ընտրական օրենսգրքի 82-րդ հոդվածը որպես թեկնածուի գրանցումը մերժելու հիմքերից մեկն է դիտում հենց Սահմանադրությամբ նախատեսված սահմանափակումները: Այսպիսով, դիմողի կարծիքով, վիճարկվող դրույթները պարունակում են Սահմանադրությամբ չնախատեսված լրացուցիչ սահմանափակումներ, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի դրույթներին:

Ըստ դիմողի՝ այդ դրույթները հակասում են նաև Սահմանադրության 14.1-րդ հոդվածի դրույթներին, քանզի թեկնածուին ուղղակիորեն ֆինանսական (տվյալ դեպքում՝ գրավի տեսքով) պահանջի ներկայացումը, ըստ էության, պայմանավորում է թեկնածուի գրանցումը նրա գույքային դրությամբ եւ խտրական մոտեցում է կիրառում հնարավոր թեկնածուների միջև: Դիմողը նշում է, որ ճիշտ է, թեև ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով սահմանվում է, որ Հանրապետության Նախագահն ընտրվում է Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված կարգով, սակայն այստեղ կարելի է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ թեկնածուից ոչ թե պահանջվում է որոշակի ժամկետում հանգամանակել որոշակի թվով ընտրողներից որոշակի գումար կամ ներկայացնել որոշակի քանակությամբ ստորագրություններ, կամ գործողությունների որեւէ այլ հաջորդականությամբ եւ արդյունքով հիմնավորել իր առաջադրման հիմնավորվածությունը եւ թեկնածության լրջությունը, այլ պարզապես պահանջվում է վճարել նվազագույն աշխատավարձի 8000-ապատիկի չափով ընտրական գրավ եւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնել վճարման անդորրագիր, ինչը թեկնածուին ներկայացվող նույնպիսի պահանջ է (եւ ոչ ընտրության կարգի բաղկացուցիչ), ինչպիսին վերջին 10 տարվա ընթացքում ՀՀ քաղաքացի հանդիսանալու եւ ՀՀ-ում մշտապես բնակվելու մասին տեղեկանքի ներկայացումն է կամ անձնագրի պատճենի ներկայացումը՝ թեկնածուի իրական տարիքը պարզելու համար: Դիմողի պնդմամբ, ինքնաառաջադրման պարագայում թեկնածուն գրկված է իր ընտրվելու հնարավորությունները գնահատելու որեւէ էմպիրիկ եւ շոշափելի հնարավորությունից:

Դիմողի կարծիքով, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 78-րդ հոդվածը որպես առաջադրման ձեւերից մեկն է սահմանում ինքնաառաջադրումը, ինչը ենթադրում է, որ քաղաքացին առաջադրվում է իր ցանկությամբ, այլ ոչ թե ընտրողների նախաձեռնությամբ կամ որոշմամբ: Այդ առումով ընտրական գրավի 8 միլիոն դրամ սահմանված չափն ինքնին վերածվում է գույքային ցենզի, քանի որ, համաձայն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանված է երեսուհինգ հազար ՀՀ դրամի չափով, իսկ միջին աշխատավարձը, ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, կազմում է 114000 ՀՀ դրամ, ինչը փաստացի անհնարին է դարձնում մեծ նյութական կարողությունների չտիրապետող անձանց առաջադրումը՝ անկախ իրենց քաղաքական ակտիվությունից կամ վարկանիշից: Դիմողը գտնում է, որ համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Ընտրողները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական

կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթու-  
նից, ընտրելու եւ ընտրվելու իրավունք ունեն» դրույթը, որպէս ընտրությունների  
հիմունքներից մեկը, եւս ամրագրում է ընտրելու եւ ընտրվելու իրավունքը՝ ան-  
կախ անձի գույքային վիճակից, ուստի ՀՀ ընտրական օրենսգրքի վիճարկվող  
դրույթները չեն բխում նաեւ ՀՀ ընտրական համակարգի հիմունքներից:

Դիմողը գտնում է, որ Սահմանադրության հիշատակվող հողվածները նե-  
րառված չեն Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված օրենքով  
սահմանափակման ենթակա իրավունքների ցանկում:

Սահմանադրական դատարան ներկայացրած իր բացատրությունում՝  
կապված ընտրական գրավի ինստիտուտի իրավաչափ լինելու, ստորագրահա-  
վաքի, ինչպէս նաեւ գրավի չափի վերաբերյալ պատասխանող կողմի դիրքո-  
րոշումների եւ բերված փաստարկների հետ, դիմող կողմը շարադրում է իր  
մոտեցումները Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի, ինչ-  
պէս նաեւ Գրղզստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի նախագծի  
վերաբերյալ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի եւ ժողովրդավարական  
հաստատությունների ու Մարդու իրավունքների ԵԱՀԿ գրասենյակի համատեղ  
եզրակացությունների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նա-  
խադէպային իրավունքի եւ միջազգային այլ փորձի վերաբերյալ:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է,  
որ ՀՀ ընտրական օրենսգրքի վիճարկվող դրույթները համապատասխանում են  
ՀՀ Սահմանադրությանը՝ հետեյալ հիմնավորումներով:

Ընտրական գրավը դրամական գումար է, որը վճարվում է որոշ ընտրովի  
պաշտոններում որպէս թեկնածու առաջադրվելիս: Ընտրական գրավը, որպէս  
կանոն, չի վերադարձվում այն դեպքում, երբ թեկնածուն ընտրության արդյուն-  
քում չի ստանում ընտրողների ձայների օրենքով սահմանված նվազագույն քա-  
նակություն: Այն իրենից ներկայացնում է թեկնածուի գրանցման պայման եւ  
հանդէս է գալիս որպէս ընտրությունները ձեւական թեկնածուներից զերծ պա-  
հելու լրացուցիչ միջոց:

Հայաստանի Հանրապետությունում ընտրական գրավը կիրառվում է ինչ-  
պէս Հանրապետության Նախագահի, այնպէս էլ ՀՀ Ազգային ժողովի եւ տե-  
ղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ:

Ըստ պատասխանող կողմի՝ ընտրական գրավի ինստիտուտը չի կարող  
մեկնաբանվել որպէս ՀՀ Սահմանադրության 6, 14.1. եւ 50-րդ հոդվածներին  
հակասող, թեւս ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով կարգավորվում են  
ՀՀ քաղաքացիների կողմից Հանրապետության Նախագահ ընտրելու, Հան-  
րապետության Նախագահի լիազորությունների ժամկետի, Հանրապետու-  
թյան Նախագահի թեկնածուներին առաջադրվող պահանջների, նոր կամ  
արտահերթ ընտրությունների կարգի հետ կապված հարաբերությունները, ար-  
դուհանդերձ, ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ «Հանրապե-  
տության Նախագահն ընտրվում է Սահմանադրությամբ եւ օրենքով սահման-  
ված կարգով»:

Ըստ պատասխանողի՝ Սահմանադրությունը հասարակության իրավական համակարգի միջուկն է, այն սահմանում է հիմնարար իրավական դրույթներ, որոնք համարվում են ելակետային եւ որոշիչ իրավունքի առանձին ճյուղերի համար: Սահմանադրությունը կարգավորում է հասարակական կյանքի տարբեր ոլորտները կազմող առավել կարեւոր, հիմնարար, առանցքային հասարակական հարաբերությունները: Ընտրական իրավունքը եւս բացառություն չի կազմում: Հանրապետության Նախագահի ընտրության կարգի առնչությամբ ՀՀ Սահմանադրության՝ «Հանրապետության Նախագահը» վերտառությամբ 3-րդ գլխով կարգավորվում են Հանրապետության Նախագահի լիազորությունների ժամկետի, ընտրությունների անցկացման ժամկետի, Նախագահ ընտրվելու համար անհրաժեշտ ձայների քանակի, ընտրությունների երկրորդ փուլի անցկացման պայմանների, նոր կամ արտահերթ ընտրություն անցկացնելու հիմքերի եւ ժամկետների հետ կապված հարցեր:

Պատասխանողը նաեւ գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածը սահմանում է Հանրապետության Նախագահի թեկնածուին առաջադրվող պահանջները, իսկ 51-րդ հոդվածը սահմանում է Հանրապետության Նախագահի ընտրություն անցկացնելու ժամկետները, ընտրվելու նախապայմանները եւ դրանց առնչվող այլ հարաբերություններ, որոնք կարգավորվում են օրենքով եւ կոնկրետացված են ՀՀ ընտրական օրենսգրքում: Այսինքն՝ Հանրապետության Նախագահի ընտրության կարգին վերաբերող մնացած հարցերի, այդ թվում՝ թեկնածուների առաջադրման, գրանցման ընթացակարգերի իրավական կարգավորումն իրականացվում է օրենքով՝ ՀՀ ընտրական օրենսգրքով: Առերեսույթ, ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածը, ընտրական գրավ վճարելու պայման չներառելով, կարծես թե ստեղծում է մի իրավիճակ՝ իբրեւ ընտրական գրավ վճարելը պարտադիր չէ: Մինչդեռ, ըստ պատասխանողի՝ ՀՀ Սահմանադրությունը բաղկացած չէ մեկ հոդվածից, եւ ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրապետության Նախագահն ընտրվում է Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված կարգով»: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 79 եւ 80-րդ հոդվածներով սահմանված ընտրական գրավը, ինչպես նաեւ թեկնածուների առաջադրման, գրանցման ընթացակարգերը հանդիսանում են ընտրական կարգի բաղադրիչ՝ որպիսի կարգով էլ պետք է իրականացվի առաջադրումը, ինչ փաստաթղթերի ներկայացմամբ եւ այլն: Այդպիսով, ընտրական գործընթացը դիտելով իբրեւ պարտադիր կարգով միմյանց հաջորդող փուլերի ամբողջություն:

Պատասխանող կողմն է իր հիմնավորումներում վկայակոչում է նաեւ միջազգային փորձը հիմնահարցի վերաբերյալ:

**5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրաիրավական վեճի առարկան առաջին հերթին ընտրական գրավի ինստիտուտի սահմանադրականության հարցն է եւ ընտրական գրավի մեծության համաչափությունն իրավաչափ նպատակին: Մնացած բոլոր հարցադրումները, ինչպես վկայում է նաեւ դիմողը, ածանցյալ բնույթ ունեն այս հիմնահարցերից: Ուստի**

անհրաժեշտ է առաջին հերթին բացահայտել ընտրագրավի ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը եւ օրենքի հիման վրա դրա կիրառման իրավաչափությունը:

6. Ինչպես վկայում է միջազգային իրավական պրակտիկան, ներկայացուցչական ժողովրդավարության իրականացման համար ելակետային նշանակություն ունեցող հանգամանքներ են թե՛ ընտրական իրավունքի ճանաչումը եւ երաշխավորումը եւ թե՛ այնպիսի ընտրակարգի սահմանումը, երբ թեկնածուի ընտրությունը կատարվում է ոչ թե պատահականորեն, ինչը կարող է վտանգել հանրային շահը, այլ հանրային աջակցության որոշակի երաշխիքների առկայության պայմաններում:

Եթե առաջին խնդիրը լուծվում է անձի ընտրական իրավունքի ճանաչման եւ սահմանադրորեն ամրագրման միջոցով, ապա երկրորդ խնդրի լուծումն օրենսդրական կանոնակարգման առարկա է եւ, որպես կանոն, օրենսդիր մարմնի հայեցողության շրջանակներում է լուծվում:

Միջազգային փորձը նաեւ վկայում է, որ երկրորդ խնդրի լուծման ընդունելի ու լայն տարածում գտած միջոցները երկուսն են՝ որոշակի թվով նախնական ստորագրահավաքի միջոցով ընտրվել ցանկացողի նկատմամբ հանրային վստահության նվազագույն շեմի ապահովումը կամ նույն նպատակով՝ ընտրագրավը: Այս հարցում եվրոպական երկրների համար ելակետ են ընդունվում Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 30 հոկտեմբերի 2002թ. CDL-AD(2002)023rev «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնադիրք. ցուցումներ եւ բացատրական գեկույց» փաստաթղթում ամրագրված մոտեցումները: Վերջինիս 1.3 /թեկնածուների առաջադրում/ կետով, մասնավորապես, փաստվում է, որ «Անհատական թեկնածությունների կամ թեկնածուների ցուցակների ներկայացումը կարող է ենթակա լինել ստորագրությունների նվազագույն քանակի հավաքագրման պահանջին»: Ապա շեշտված է նաեւ. «Եթե կանխավճար է պահանջվում, ապա թեկնածուի կամ կուսակցության կողմից որոշակի միավորների հավաքագրման դեպքում այն պետք է փոխհատուցվի: Պահանջվող գումարը եւ միավորները չպետք է լինեն չափազանց մեծ»:

Այստեղ էականն այն է, որ նշված պահանջները չեն դիտարկվում որպես թեկնածուի ընտրական իրավունքի ճանաչման բաղադրատարր, ինչն ակնարկում է դիմողը, այլ այդ պայմաններն **ընտրակարգի այնպիսի տարրեր են**, որոնք անհրաժեշտ են անհատի ու հանրության շահերը ներդաշնակելու եւ ընտրական գործընթացն իր նպատակին ծառայեցնելու համար: Նման ընտրակարգն առաջին հերթին ակտիվ ընտրական իրավունքի իրացման կարելու բաղադրատարր է՝ նկատի ունենալով **ընտրողների կողմից իրենց ժողովրդաիշխանական լիազորությունների պատվիրակման ժամանակ այն սուբյեկտի ճիշտ ընտրությունը, որին պատվիրակվում է դրանց իրացումը: Ժողովրդաիշխանության սկզբունքի իրավաչափ իրացման համար ոչ միայն կարելու է պետության նախագահ դառնալ ցանկացողի սուբյեկտիվ կամքն ու ընտրվելու իրավունքը, այլև հանրային-բաղաքական նման գործառույթ իրականացնելու համար հայտ**

**ներկայացնողի պատասխանատվության ու կարողունակության վերաբերյալ ժողովրդի նախնական վստահության որոշակի (կամ՝ նվազագույն) աստիճանը:** Իսկ դա, որպես կանոն, որոշվում է վերոնշյալ երկու ինստիտուտների միջոցով՝ **թույլ չտալով նաեւ ընտրական իրավունքի չարաշահում**, ինչն առանձնապես կարելու է համապետական ընտրությունների դեպքում: Միջազգային պրակտիկայում դա նաեւ ընդունված է անվանել, այսպես կոչված, «նախնական վստահության» միջոց:

7. ՀՀ սահմանադրական դատարանը կարելու է նաեւ նույն փաստաթղթում բերված բացատրություններն ընտրագրավի ինստիտուտի վերաբերյալ: Այսպես, բացատրական զեկույցի 8-րդ մասում նախ շեշտվում է, որ «Ընտրություններին առաջադրվելու համար ստորագրությունների որոշակի քանակ հավաքագրելու պարտավորությունը տեսականորեն **համատեղելի է համընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի հետ**»: Իսկ 9-րդ մասում հետետություն է արվում, որ «Գոյություն ունի մեկ այլ ընթացակարգ, երբ թեկնածուները կամ կուսակցությունները պետք է կանխավճար ներդնեն, որը կփոխհատուցվի միայն, եթե տվյալ թեկնածուն կամ կուսակցությունը հավաքի ձայների նախատեսված տոկոսից ավելին: **Այդօրինակ գործընթացներն ավելի արդյունավետ են, քան ստորագրությունների հավաքագրումը**»:

Կատարված ընդգծումները հստակեցնում են երկու կարելու հանգամանք: Նախ՝ ստորագրահավաքը եւ ընտրական գրավը ոչ այլ ինչ են, քան **ընտրությունների ընթացակարգի բաղադրատարր**: Երկրորդ՝ **նախապատվությունը տրվում է ընտրական գրավի ինստիտուտին**:

Այս մոտեցումներն են հիմք հանդիսացել Հայաստանում ընտրողների ստորագրահավաքի ինստիտուտից հրաժարվելու համար: Դրա մասին են վկայում նաեւ ՀՀ ընտրական օրենսգրքի բարեփոխումների վերաբերյալ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի CDL(2011)020 եւ CDL(2011)081 փաստաթղթերի ուսումնասիրությունը:

Ընտրագրավի ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունն աղճատվում է, երբ այն չի դիտարկվում իրավակարգավորման ամբողջականության մեջ: Այդ ինստիտուտի եւ ընտրողների **երաշխավորական վստահության** միջեւ փոխկապվածությունը, որպես ժողովրդաիշխանության իրականացման կարելու բաղադրատարր, դրսեւորվում է նաեւ այդ **գրավի վերադարձնելիության հատուկ կարգի սահմանման միջոցով**: Օրինակ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված է, որ ընտրական գրավը վերադարձվում է թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվի 5 կամ 5-ից ավելի տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստանալու դեպքում: **Ակնհայտ է, որ ընտրագրավը ոչ թե թեկնածուի ունեցվածքի գնահատման միջոց է կամ պասիվ ընտրական իրավունքի ճանաչման ցենզ, այլ որոշակի թվով ընտրողների վստահության երաշխիք է՝ նրանցից պետական իշխանության կրողի մանդատ հայցելու ու այդ նվազագույն վստահությունն ու անհրաժեշտ պատասխանատվությունը նախապես ունեցող կամ ակնկալող այլ թեկնածու-**

**ների հետ ընտրական մրցակցությանը մասնակցելու համար:** Յուրաքանչյուր թեկնածու, ով օբյեկտիվորեն է գնահատում իր հնարավորությունները, չի չարաշահում իր պասիվ ընտրական իրավունքը, պատասխանատվությամբ է վերաբերում համապետական ընտրություններին եւ ունի ընտրողների գոնե ավելի քան 5 տոկոսի կողմից ակնկալվող մանդատն ստանալու վստահություն, նույն կերպ պետք է վստահ լինի, որ ընտրագրավը վերադարձվելու է եւ իր նյութական վիճակի վրա այն որեւէ ազդեցություն ունենալ չի կարող:

Վեճի առարկա հիմնախնդրի տեսանկյունից ուշադրության են արժանի նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներն ընտրագրավի ինստիտուտի վերաբերյալ, մասնավորապես՝ Սուխովեցկին ընդդեմ Ուկրաինայի գործով /թիվ 13716/02, 28.03.2006թ./: Այս գործով վեճի առարկան դարձյալ եղել է ընտրական գրավի ինստիտուտի իրավաչափությունը: Անդրադառնալով ընտրական գրավի վերաբերյալ Ուկրաինայի սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին /ընդհուպ վկայակոչելով նաեւ Հայաստանում ընտրական գրավի որոշման օրենսդրական կարգը/, ներկայացնելով տարբեր երկրների մոտեցումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ.

- ընտրական գրավը կիրառվում է Եվրոպայի խորհրդի անդամ շատ երկրներում եւ հետապնդում է իրավաչափ նպատակ,
- այն չի հասցեագրված կոնկրետ անձանց եւ խտրականություն չի ենթադրում,
- այն հանրային եւ մասնավոր շահերի ներդաշնակման միջոց է,
- դրա սահմանումը, չափի որոշումը երկրի օրենսդիր իշխանության հայեցողության սահմաններում է:

Արդյունքում՝ Եվրոպական դատարանը հանգել է այն հետեւությանը, որ Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածի խախտում առկա չէ:

**8.** ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ երկրում համապետական ընտրություններն առաջին հերթին հենվում են հասարակության քաղաքական կառուցակարգերի վրա: 2009թ. հունիսի 30-ի ՄԳ-Ո-810 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Կուսակցությունների մասին ցանկացած դասական սահմանում ելնում է այն ակնհայտ ճշմարտությունից, որ տվյալ միավորման գործունեության նպատակը հասարակության եւ պետության քաղաքական կյանքին մասնակցելն է, քաղաքական իշխանության մաս կազմելը, քաղաքական պատասխանատվություն ստանձնելն ու այն իրականացնելը: Անառարկելի է, որ չի կարող լինել ժողովրդավարական պետական համակարգ՝ առանց անհրաժեշտ քաղաքական կառուցակարգերի: Չի կարող լինել նաեւ հասարակական կայունություն՝ առանց **կարողունակ քաղաքական ուժերի կողմից** երկրի այսօրվա ու վաղվա համար ժողովրդավարական եղանակներով քաղաքական պատասխանատվություն ստանձնելու: **Կուսակցությունն իր հանրային առաքելությունը կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ ոչ միայն ծրագրային ցանկություն, այլեւ անհրաժեշտ ու**

**բավարար կարողունակություն ունի քաղաքական պատասխանատվություն ստանձնելու համար, եւ դա տեսանելի ու գնահատելի է ընտրողի կողմից»:**

ՀՀ Սահմանադրության մակարդակով է ամրագրված կուսակցությունների սահմանադրական գործառույթը, այն է՝ **ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորմանն ու արտահայտմանը նպաստելը** (7-րդ հոդվածի 2-րդ մաս): Իրենց այդ առաքելությունը կատարելու համար կուսակցությունները ժողովրդի կողմից վստահության քվե ստանում են բոլոր կարգի ընտրությունների ժամանակ: Առավել եւս՝ Հանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ, եթե կուսակցությունները նախորդ ընտրությունների արդյունքներով ու իրենց գաղափարախոսական–ծրագրային կողմնորոշումներով նախապես վաստակել են ժողովրդի վստահության համապատասխան աստիճան, ապա ժողովրդից պետության գլխի մանդատ ակնկալող ինքնաառաջադրվող անհատը չի կարող միայն իր պասիվ ընտրական իրավունքի ուժով կուսակցությունների կողմից առաջադրված ու երաշխավորված թեկնածուների հետ ընթացակարգային միեւնույն պայմաններում գրանցվել որպես նախագահի թեկնածու: Այս հանգամանքը հաշվի առնելով է, որ պետությունների մեծ մասում, որտեղ առկա է ինքնաառաջադրման ինստիտուտը, նման հայտ ներկայացնող անձը նախապես ձեւավորում է որոշակի թվով **ընտրողների խումբ** կամ **առաջադրող կոմիտե** /Ռուսաստանի Դաշնություն, Սերբիա, Բուլղարիա, Լեհաստան եւ այլն/ թեկնածությանն աջակցելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ **տարբերակների ընտրությունը ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է**, սակայն պետության ժողովրդավարական կառուցակարգերի բնականոն զարգացման շահերից ելնելով կարող է ընդհուպ տարբերակային մոտեցում դրսևորվել ընտրագրավի ու ստորագրահավաքի ինստիտուտների առանձին-առանձին կամ **համակցված կիրառման** հարցում /ինչպես, օրինակ, Բուլղարիայում/ պառլամենտական խմբակցություններ ունեցող, այդպիսին չունեցող կուսակցությունների կողմից թեկնածուների առաջադրման ու ինքնաառաջադրումների դեպքերում: Ի դեպ, ԱՄՆ գերագույն դատարանը 1972 թվականին ըստ էության իրավական դիրքորոշում է արտահայտել, որ նույնիսկ **անհրաժեշտ է** ստորագրահավաքի ու ընտրագրավի համակցված կիրառումը: ՀՀ սահմանադրական դատարանը նույնպես գտնում է, որ համադրելի չէ այն իրողությունը, երբ առանձին կուսակցություններ, որոնք արդեն իսկ ունեն ընտրողների 5 տոկոսից ավելիի վստահությունը եւ **ժողովրդավարական ընթացակարգերով ու իրենց երաշխավորությամբ** թեկնածու են առաջադրում, հայտնվում են հավասար վիճակում մեկ առանձին՝ հաճախ հանրությանը բացարձակապես անհայտ ու առաջադրող խումբ, կոմիտե կամ այլ մարմին չունեցող անհատի հետ: Միայն ընտրագրավն այս պարագայում կարող է նաեւ ոչ իր իրավական բնույթին համարժեք դերակատարություն ունենալ, քանի որ այն համեմատաբար քիչ թափանցիկ է ու որոշակի իրավական ու քաղաքական մշակույթի պակասի պայմաններում կարող է առանձին ուժերի կողմից քաղաքական պատվերի ու ոչ իրավաչափ գործընթացների տեղիք տալ:



Մյուս կողմից՝ ինչպես բազմիցս նշել են Եվրախորհրդի դիտորդները /օրինակ՝ 2012թ. մարտին Ռուսաստանի Դաշնության նախագահական ընտրությունների արդյունքներով ներկայացված զեկույցում/ միայն ստորագրահավաքը նույնպես խնդիրներ է բովանդակում, երբ այդ հարցում հատկապես ընդդիմադիր թեկնածուների համար արհեստական դժվարություններ են ստեղծվում: Ժամանակին այս հանգամանքը շեշտադրվում էր նաև Հայաստանի քաղաքական ընդդիմադիր դաշտի կողմից: Այս ամենը հաշվի առնելով՝ հատկապես նոր ժողովրդավարության երկրների համար ցանկալի տարբերակն այդ երկու ձեւերի համակցումը կարող է լինել, երբ ինքնաառաջադրման դեպքում կամ ընտրողների առնվազն 5 տոկոսի քվեի չստացած կուսակցությունների կողմից թեկնածու առաջադրելու դեպքում նախապես հավաքվելիք ստորագրությունների՝ օրենքով սահմանված պահանջը չի գերազանցում ընտրողների թվի 1 տոկոսը, իսկ ընտրագրավ սահմանվում է այն հաշվով, որ այն ոչ միայն կաշկանդի թեկնածության «հետաքրքրությունից դրդված» առաջադրումը, այլև ընտրողներն ունենան դրա ձեւավորմանը որոշակի մասնակցություն՝ որպես ինքնաառաջադրվողի նկատմամբ հանրային վստահության արտահայտություն: Հօգուտ այդ տարբերակի է, մասնավորապես, վկայում նաև այն փաստը, որ 2013թ. ՀՀ Նախագահի ընտրության հրապարակված արդյունքներով թեկնածուների կեսը չհավաքեցին ընտրողների ձայների նույնիսկ 1 տոկոսը:

**9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում դիմողի հղումները Սահմանադրության 6, 14.1, 43, 50 եւ 51-րդ հոդվածներին կամ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին՝ ակնհայտ անհիմն են: ՀՀ ընտրական օրենսգրքի ողջ 15-րդ գլուխը, որով սահմանվում են Հանրապետության Նախագահի թեկնածուի առաջադրման իրավունքը եւ դրա իրացման կարգը, ընտրական գրավը, թեկնածուի գրանցման ու դրա ուժը կորցնելու կարգը, օրենսգրքի մյուս բոլոր դրույթների հետ մեկ միասնականության մեջ ներկայացնում է ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված պահանջի հիմքով նախագահի ընտրության՝ **օրենքով սահմանված կարգը:** Ի դեպ, երկրների գերակշիռ մասում սահմանադրաիրավական համանման իրավակարգավորումների պայմաններում նույն օրենքով սահմանված կարգի շրջանակներում, այսպես կոչված, «գուտ անձնական ցանկության վրա հիմնված» ինքնաառաջադրում չի նախատեսվում: Սահմանվում է, որ պասիվ ընտրական իրավունքն իրացնելի է միայն կուսակցությունների, որոշակի թվով ընտրողների կամ պատգամավորների կողմից թեկնածու առաջադրվելու պայմանով:**

Չնայած եվրոպական եւ այլ երկրների ընտրանքային օրինակների վկայակոչմանը, դիմողը, այդուհանդերձ, հիմնավոր կերպով չի ամրապնդում իր փաստարկները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրոք գրավի «պահանջվող գումարը չպետք է լինի չափազանց մեծ», ինչպես նշված է նաև Վենետիկի հանձնաժողովի ու ԵԱՀԿ Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական հաստատությունների գրասենյակի /ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ/ մոտեցումներում:

Սակայն այն չի կարող լինել նաեւ «սիմվոլիկ»՝ կորցնելով իր իրավական իմաստն ու կանխարգելիչ նշանակությունը: Այս շրջանակներում համապատասխան **գումարի չափի որոշումը Ազգային ժողովի իրավասության հարցն է** եւ քննության առարկա գործի իրավական փաստարկների առումով սահմանադրականության խնդիր չի առաջացնում: **Պատարանը միաժամանակ գտնում է, որ տվյալ համակարգը հետագա օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտություն ունի՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասը, 24-րդ հոդվածը, 38-րդ հոդվածի 7-րդ մասը, 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը եւ 80-րդ հոդվածը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**5 մարտի 2013 թվականի  
ՍԳՈ-1076**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ  
ՐԱՖՅՖԻ Կ. ՌԻԶԱՐԳԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԵՎ ԱՆԴՐԻԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ  
ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ  
ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 62-Ա ՈՐՈՇՈՒՄԸ  
ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**14 մարտի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Ֆ. Թոխյանի (գեկուցող), Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի (գեկուցող), Վ. Հովհաննիսյանի,  
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի՝ ՀՀ Նախագահի թեկնածու Րաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի ներկայացուցիչներ Կ. Մեծյունյանի եւ Չ. Փոստանջյանի,

դիմող կողմի՝ ՀՀ Նախագահի թեկնածու Ա. Ղուկասյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներ՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տ. Մուկուչյանի, նույն հանձնաժողովի քարտուղար Ա. Սմբատյանի եւ աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ն. Հովհաննիսյանի,

որպես հարակից պատասխանողներ ներգրավված՝ ՀՀ դատախազության ներկայացուցիչներ՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Թամազյանի, ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն եւ կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետ Կ. Փիլոյանի, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Հ. Հարությունյանի,

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ներկայացուցիչ՝ ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ Թ. Պետրոսյանի,

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով դատավարությանը որպես երրորդ անձ ներգրավված՝ ՀՀ Նախագահի թեկնածու Ս. Սարգսյանի ներկայացուցիչներ Գ. Հարությունյանի եւ Հ. Թովմասյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 51-րդ հոդվածի 5-րդ մասի, 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 9-րդ կետի. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 74-րդ հոդվածների.

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Նախագահի թեկնածուներ Րաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի եւ Անդրիաս Գուկասյանի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» թիվ 62-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ են հանդիսացել 2013թ. փետրվարի 18-ի ընտրություններում ՀՀ Նախագահի թեկնածուներ Րաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի եւ Ա. Գուկասյանի՝ 04.03.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումները:

Սահմանադրական դատարանը 2013 թվականի մարտի 5-ի ՍԳ-ԱՌ-13 աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունել «ՀՀ Նախագահի թեկնածու Րաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» թիվ 62-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործը: Միաժամանակ, նույն աշխատակարգային որոշմամբ, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասով, որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որպես հարակից պատասխանողներ են ներգրավվել ՀՀ դատախազությունը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը: Սահմանադրական դատարանի 2013թ. մարտի 5-ի ՍԳ-ԱՌ-14 աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունվել «ՀՀ Նախագահի թեկնածու Անդրիաս Գուկասյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 25.02.2013թ. թիվ 62-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործը:

ՀՀ Նախագահի թեկնածուներ Րաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի եւ Անդրիաս Գուկասյանի դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածին համապատասխան, 2013թ. մարտի 5-ի ՍԳ-ԱՌ-14 աշխատակարգային որոշմամբ միավորվել են՝ դատարանի նույն նիստում քննելու համար: Միաժամանակ, 05.03.2013թ. ՍԳ-ԱՌ-13 աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննության նախապատրաստման անհրաժեշտությունից ելնելով պահանջվել են.

ա) ՀՀ վարչական դատարանից՝ 2013թ. ՀՀ Նախագահի ընտրության հար-

ցերով ներկայացված դիմում-բողոքների կապակցությամբ ընդունված դատական ակտերը.

բ) ՀՀ ԿԸՀ-ից՝

- քվեարկության արդյունքների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով կազմված արձանագրությունը,
- ընտրական հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքներով ընդունված որոշումները,
- տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները,
- ըստ կոնկրետ ընտրական տեղամասերի՝ տեղեկանք ներկայացնել 18.02.2013թ. անցկացված ՀՀ Նախագահի ընտրության հետ կապված Նախագահի թեկնածուների դիմում-բողոքների հիման վրա կատարված վերահաշվարկների արդյունքների վերաբերյալ,
- քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունված որոշումները,
- տեղեկանք տեղամասային ընտրական հանձնաժողովներում տարբեր քաղաքական ուժերի կողմից ներկայացված անդամների, հանձնաժողովների նախագահների եւ քարտուղարների թվաքանակի, ինչպես նաեւ Նախագահի թեկնածուների վստահված անձանց թվաքանակի վերաբերյալ.

գ) ՀՀ դատախազությունից՝ 18.02.2013թ. անցկացված ՀՀ Նախագահի ընտրության հետ կապված ընտրախախտումների կանխման եւ տեղ գտած դեպքերի առնչությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն.

դ) ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունից՝ 18.02.2013թ. անցկացված ՀՀ Նախագահի ընտրության հետ կապված իրավախախտումների կանխման եւ տեղ գտած դեպքերի առնչությամբ ոստիկանության մարմինների կողմից ձեռնարկված միջոցների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

Բոլոր նյութերն օրենքով սահմանված կարգով տրամադրվել են նաեւ դատավարության կողմերին:

Սահմանադրական դատարանի 2013թ. մարտի 11-ի ՍԳ-ԱՌ-18 աշխատակարգային որոշմամբ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով, իր դիմումի հիման վրա դատավարությանը որպես երրորդ անձ է ներգրավվել 2013թ. փետրվարի 18-ի Հանրապետության Նախագահի ընտրություններում ՀՀ Նախագահի թեկնածու Ս. Սարգսյանը:

Լսելով գործով զեկուցողների զեկույցը, կողմերի, հարակից պատասխանողների եւ երրորդ անձի ներկայացուցիչների բացատրությունները, ուսումնասիրելով ու համադրելով նրանց կողմից ներկայացված փաստարկները, ինչպես նաեւ հետազոտելով դիմումները եւ գործում առկա նյութերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց**.

1. Հանրապետության Նախագահի ընտրությունն անցկացվել է 2013 թվականի փետրվարի 18-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 51-րդ հոդվածում նախատեսված ժամկետում: Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածին համապատասխան քվեարկությունը կազմակերպելու եւ արդյունքներն ամփոփելու նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել է թվով 1988 ընտրական տեղամաս: Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված կարգով հանրապետության տարածքում կազմավորվել է 41 ընտրատարածք: Նույն օրենսգրքի 34-րդ հոդվածին համապատասխան կազմավորվել է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներ: Օրենքով նախատեսված լիազորությունների շրջանակներում ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել եւ վերահսկել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

2013թ. փետրվարի 18-ի ՀՀ Նախագահի ընտրություններում դիտորդական առաքելություն են իրականացրել թվով 12 միջազգային կազմակերպություններ /թվով 632 դիտորդ/, ինչպես նաեւ թվով 26 տեղական հասարակական կազմակերպություններ /թվով 6251 դիտորդ/:

ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան 2013 թվականի ՀՀ Նախագահի ընտրություններում որպես թեկնածուներ են գրանցվել եւ քվեաթերթիկներում ընդգրկվել՝ Հրանտ Արարատի Բագրատյանը, Պարույր Արշավիրի Հայրիկյանը, Բաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանը, Անդրիաս Մարատի Դուկասյանը, Արման Վարդանի Մելիքյանը, Մերժ Ազատի Սարգսյանը, Վարդան Ժորժիկի Սեդրակյանը:

2. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2013 թվականի փետրվարի 25-ին ամփոփել է ՀՀ Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրության արդյունքները: Համաձայն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանադրական դատարան ներկայացված՝ Հանրապետության Նախագահի ընտրությունների քվեարկության արդյունքների արձանագրության՝ քվեաթերթիկներում ընդգրկված 7 թեկնածուներին կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվը կազմել է 1.468.864, որը ՀՀ Նախագահի թեկնածուների միջեւ բաշխվել է հետեւյալ համամասնությամբ. Հրանտ Բագրատյան՝ 31.643 ձայն, Պարույր Հայրիկյան՝ 18.096 ձայն, Բաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյան՝ 539.693 ձայն, Անդրիաս Դուկասյան՝ 8.329 ձայն, Արման Մելիքյան՝ 3.520 ձայն, Մերժ Սարգսյան՝ 861.373 ձայն, Վարդան Սեդրակյան՝ 6.210 ձայն:

Վերոհիշյալ արդյունքների հիման վրա եւ ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով եւ 92-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունել է իր՝ 2013թ. փետրվարի 25-ի թիվ 62-Ս որոշումը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության Նախագահ է ընտրվել Մերժ Ազատի Սարգսյանը:

3. Գիմեղով սահմանադրական դատարանը՝ դիմողները գտնում են, որ անհրաժեշտ է անվավեր ճանաչել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 25.02.2013թ. թիվ 62-Ա որոշումը: Գիմողներից ՀՀ Նախագահի թեկնածու Րաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանը գտնում է նաեւ, որ անհրաժեշտ է ընտրված ճանաչել իրեն կամ անվավեր ճանաչել Հանրապետության Նախագահի 2013թ. փետրվարի 18-ին անցկացված ընտրության արդյունքները:

Գիմող՝ ՀՀ Նախագահի թեկնածու Րաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանը, վկայակոչելով ՀՀ Նախագահի՝ սփյուռքահայ երաժիշտ Սերժ Թանգյանին ուղղված պատասխան նամակը, 2013 թվականի փետրվարի 18-ին կայացած ՀՀ Նախագահի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 19.02.2013թ. նախնական, ինչպես նաեւ միջանկյալ զեկույցները, մի շարք մարզպետների եւ քաղաքապետների հարցազրույցներն ու նրանցից մի քանիսի հրաժարականների մասին տեղեկատվությունը, գտնում է, որ իշխանության բաժանման եւ հավասարակշռման՝ Սահմանադրության 5-րդ հոդվածով նախատեսված համակարգը կամ փաստացի գոյություն չունի, կամ այն նույնանում է ՀՀ Նախագահի ինստիտուտի հետ: Ըստ դիմողի՝ բազմաթիվ դեպքերում ՀՀ Նախագահի թեկնածու՝ ՀՀ գործող Նախագահի 1600 ընտրական շտաբները գործել են պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, իսկ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման համակարգերը ՀՀ Նախագահի ընտրության ժամանակ վերածվել էին ընտրական մեխանիզմների:

Առանձին վերլուծություններ եւ 2013թ. փետրվարի 18-ին կայացած ՀՀ Նախագահի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 02.03.2013թ. միջանկյալ արտահերթ զեկույցը դիտարկելով, իր կարծիքով, տեղի ունեցած մի շարք իրավախախտումների եւ տարբեր այլ հանգամանքների ազդեցության համատեքստում, ինչպիսիք են՝ անձնագրի վրա դրվող թանաքանյութի արագ անհետանալը եւ սովորական թղթով մաքրվելու հանգամանքը, այլ անձի, ներառյալ՝ հանրապետությունից բացակայող, փոխարեն քվեարկելու եւ լցոնումների դեպքերը, անվավեր քվեաթերթիկների մեծ թիվը, մի տեղամասում անվավեր քվեաթերթիկների բացակայությունը, մյուսում՝ թվով 337 անվավեր քվեաթերթիկի առկայությունը, դիմող Րաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանն իր կասկածն է արտահայտում որոշ տեղամասերում ընտրողների մասնակցության՝ իր կարծիքով չափազանց մեծ թվի վերաբերյալ եւ արձանագրում է, որ բոլոր այն տեղամասերում, որոնցում ընտրողների մասնակցության թիվը գերազանցել է հանրապետությունում գրանցված միջին ցուցանիշը, ըստ պաշտոնական արդյունքների՝ մեծ առավելությամբ շահել է գործող Նախագահը, ինչի պատճառը, ըստ դիմողի, ՀՀ ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթն է, որն արգելում է հրապարակել ընտրողների ստորագրած ցուցակները, ինչպես նաեւ սուբյեկտիվ միջամտությունը:

Ի հիմնավորումն իր դիմումի՝ դիմողը, մասնավորապես, ներկայացրել է նաեւ հետեւյալ փաստարկները.

- ՀՀ Նախագահի թեկնածու՝ ՀՀ գործող Նախագահը քարոզչական նպա-

- տակով հայտարարագրման ենթակա ծախսերն արել է ոչ նախընտրական հիմնադրամի միջոցներից,
- ՀՀ Նախագահի թեկնածու՝ ՀՀ գործող Նախագահի՝ քարոզչական նպատակով կատարած հայտարարագրման ենթակա ծախսերի գումարը գերազանցել է թույլատրելի առավելագույն սահմանը,
- ՀՀ Նախագահի թեկնածու՝ ՀՀ գործող Նախագահի նախընտրական քարոզչական պատասխաններն ընդհանուր թվով գերազանցել են 1600-ը, քանի որ դրանք փակցված են եղել ընտրական շտաբների ոչ միայն դրսի, այլև ներսի կողմից,
- ՀՀ Նախագահի թեկնածու՝ ՀՀ գործող Նախագահի ընտրական շտաբների՝ որպես քարոզչական տարածքների վարձակալության վարձավճարները պետք է ներառվեին քարոզչական ծախսերի մեջ, սակայն ՀՀ ԿԸՀ-ի որոշմամբ դրանք հանվել են ծախսերի ցուցակից, մինչդեռ դրանց վերաբերյալ առկա են 2013թ. փետրվարի 18-ին կայացած ՀՀ Նախագահի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի՝ 19.02.2013թ. միջանկյալ, ինչպես նաև 02.03.2013թ. միջանկյալ արտահերթ զեկույցները,
- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ըստ դիմողի, ցուցաբերել է անգործություն. չի ուսումնասիրել վերը նշված փաստերը եւ չի դիմել դատարան՝ ՀՀ Նախագահի թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար, փոխարենը 25.02.2013թ. ընդունել է թիվ 60-Ա որոշումը, որով, ըստ դիմողի, փորձել է արդարացնել իր անգործությունը,
- ընտրական հանձնաժողովները ցուցաբերել են անգործություն, իրենց նախաձեռնությամբ որեւէ տեղամասում չեն կատարել վերահաշվարկ, տեղամասերում ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմողի՝ շուրջ 125 դիմումներ մերժվել են:

ՀՀ Նախագահի թեկնածու Բա.Ֆ.Ֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված դիմումը կազմված է 16 էջից: Առաջին 5 էջերում, որոնք բովանդակում են «Ընտրությունների ամփոփ գնահատականը» կից նյութերին կատարված թվով 11 հղումներով, ներկայացվում են ենթադրյալ ընտրախախտումների վերաբերյալ վերլուծական դիտարկումներ: Երկրորդ մասը՝ «Դիմումի փաստարկները եւ իրավական հիմնավորումները» վերտառությամբ, 3.5 էջերի շրջանակներում, պարունակում է մեջբերումներ համապատասխան իրավական ակտերից: Հաջորդող 6 էջերում շարադրված են այն փաստարկները, որոնք ներկայացված են եղել ՀՀ վարչական դատարան եւ վերջինիս իրավասության շրջանակներում քննության են առնվել ու 04.03.2013թ. ընդունվել է թիվ ՎԳ/1423/05/13 վերջնական որոշումը, որով հայցը ճանաչվել է անհիմն ու մերժման ենթակա: Վերոհիշյալ դիմումի վերջին էջում ներկայացված է դիմողի խնդրանքը եւ կից նյութերի ցանկը (պետական տուրքի վճարման անդորրագիր, լիազորագիր, դիմողի եւ ներկայացուցչի անձնագրերի պատճենները, արտոնագրի պատճենը, մամուլի հրապարակումներ, տեսագրություններ, լուսանկարներ եւ այլ նյութեր էլեկտրոնային կրիչների վրա՝ թվով 24):



Գիմումին կից ներկայացված նյութերի շուրջ 40 տոկոսը տարբեր ընտրական հանձնաժողովների որոշումներ են, 18 տոկոսն ընտրական հանձնաժողովներին հասցեագրված դիմումներ են, շուրջ 24 տոկոսը համացանցային տարբեր կայքերից վերցված տեղեկատվություն է, շուրջ 7 տոկոսն ընտրությունների ընթացքի նկատմամբ դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպությունների գեկույցներ են, մնացած 11 տոկոսը՝ տարաբնույթ այլ նյութեր: ՀՀ Նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի դատաքննության փուլում, բացառությամբ լուսանկարների երկու պատճենների, այլ լրացուցիչ նյութեր դիմողը սահմանադրական դատարան չի ներկայացրել:

4. Գիմող՝ ՀՀ Նախագահի թեկնածու Ա. Գուկասյանը, վկայակոչելով ՀՀ Նախագահի թեկնածու՝ ՀՀ գործող Նախագահ Ս. Սարգսյանի երկու հայտարարությունները, մեկը՝ կապված սփյուռքահայ երաժիշտ Սերժ Թանգյանին ուղղված պատասխան մամակի, մյուսը՝ Գյումրի քաղաքում լրագրողի հարցին տրված պատասխանի հետ, գտնում է, որ իր կարծիքով ՀՀ Նախագահի ընտրության ժամանակ ՀՀ ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգը ղեկավարվել է ՀՀ գործող Նախագահի կողմից, եւ վերջինս՝ որպես ՀՀ Նախագահի թեկնածու, ի սկզբանե ունեցել է լծակներ քվեարկության ցանկացած արդյունք ապահովելու համար:

Գիմողն իր կասկածն է արտահայտում թվով 576 ընտրատեղամասերում քվեարկության մասնակցության իր կարծիքով բարձր ցուցանիշի առնչությամբ, եւ գտնում է, որ նշված փաստն էապես ազդել է ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա:

Ի հիմնավորումն իր դիմումի՝ դիմողը, մասնավորապես, ներկայացրել է նաեւ հետեւյալ փաստարկները.

- թվով 414 ընտրատեղամասերում ընտրությունների մասնակիցների թիվը գերազանցել է քվեատուփում առկա սահմանված մնուշի ծրարների թիվը 1729-ով,
- թվով 469 ընտրատեղամասերում քվեատուփերից պակաս է հանվել ընդհանուր թվով 1883 քվեաթերթիկ,
- վերը նշված անհամապատասխանությունները չեն ներառվել ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններում,
- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ցուցաբերել է անգործություն, քանի որ անտեսել է վերը նշված փաստերը:

ՀՀ Նախագահի թեկնածու Ա. Գուկասյանի դիմումը կազմված է 7 էջից, որում, իր մոտեցումները եւ մտահոգությունները ներկայացնելով ընտրական համակարգի անկախ ու օբյեկտիվ գործունեության առնչությամբ, դիմողը հիմնականում ներկայացնում է ըստ ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների վերաբերյալ իր կողմից կատարված վերլուծություններ ու դրանցից բխող եզրահանգումներ:

Գործի քննության ընթացքում ՀՀ Նախագահի թեկնածու Ա. Գուկասյանը նշեց նաեւ, որ իր փաստարկների հիմքում գլխավորապէս դրվում են ոչ թե իր սուբյեկտիվ ընտրական իրավունքի պաշտպանության հարցերը, այլ՝ սահմանադրաիրավական համակարգային բարեփոխումների խնդիրը, ինչը կարելու էր աշխիք կարող է հանդիսանալ ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու համար:

Դիմողներն իրենց բացատրություններում բարձրացրեցին նաեւ պետական պաշտոն զբաղեցնող անձանց՝ ընտրական գործընթացներին մասնակցելու օրինականության, ընտրողների ցուցակների կազմման կարգի եւ ստորագրված ընտրացուցակների հրապարակայնության, հանրապետությունից ժամանակավոր բացակայող քաղաքացիների տվյալները դիմող կողմին ներկայացնելու, ՀՀ Նախագահի թեկնածու Ս. Սարգսյանի գրանցումը դատական կարգով ուժը կորցրած ճանաչելու հետ կապված հարցեր: Դիմողներն անդրադարձան նաեւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անկախության, այդ հանձնաժողովի եւ ՀՀ Նախագահի միջեւ կառուցակարգային փոխհարաբերությունների իրավական բովանդակության, ինչպէս նաեւ ընտրական ողջ գործընթացում օրինականության ապահովման ուղղությամբ իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության գնահատման հարցերին:

**5. Պատասխանող կողմը, չընդունելով դիմողների փաստարկները դիմումներում ներկայացված պահանջների բավարարման վերաբերյալ, գտնում է, որ ՀՀ ԿԸՀ 25.02.2013թ. թիվ 62-Ա որոշումն իրավաչափ է, այն կայացվել է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջների լիակատար պահպանմամբ, իսկ եռաստիճան ընտրական հանձնաժողովները կազմավորվել ու գործել են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ու լիազորությունների շրջանակներում:**

Անդրադառնալով դիմող՝ ՀՀ Նախագահի թեկնածու Բաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի կողմից բարձրացված՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց՝ ընտրական գործընթացներին մասնակցելու հարցին, պատասխանող կողմը, հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 6-րդ մասը, 22-րդ հոդվածը, նշում է, որ պաշտոնատար անձինք, ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված սահմանափակումների հաշվառմամբ, ազատ են իրականացնել նախընտրական քարոզչություն:

Պատասխանող կողմը նշեց նաեւ, որ 2013թ. հունվարի 21-ից մինչեւ փետրվարի 18-ն ընկած ժամանակահատվածում ՀՌԱՀ-ը Հանրապետության Նախագահի թեկնածուներից, ինչպէս նաեւ պետական մարմիններից, հասարակական եւ միջազգային կազմակերպություններից, լրատվամիջոցներից, քաղաքացիներից նախընտրական քարոզչությանը վերաբերող որեւէ դիմում-բողոք չի ստացել: 2013թ. փետրվարի 18-ի Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների քարոզարշավի (21.01.13-16.02.13թթ.), ինչպէս նաեւ «լռության» եւ քվեարկության օրերին մինչեւ ժամը 20:00-ն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի եւ «Հեռուստատեսության եւ ռադիո-

ոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

Անդրադառնալով դիմողի կողմից բարձրացված՝ ՀՀ Նախագահի թեկնածու՝ գործող Նախագահի շտաբների տեղակայման վերաբերյալ հարցադրմանը, պատասխանող կողմը, հղում կատարելով ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասին, դիմողի կողմից վկայակոչված՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Ընտրությունների նախնական հանգամանքների եւ եզրակացությունների վերաբերյալ 19.02.2013թ. նախնական զեկույցին, արձանագրում է, որ անգամ այդ պարագայում ներկայացված դատողությունները համահունչ չեն այն աղբյուրին, որը վկայակոչվել է դիմողի կողմից, քանզի ներկայացված եզրակացությունում նշված է. պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից **գրադեցված շենքերում** նախընտրական շտաբների տեղակայման **մի քանի դեպքեր**: Պատասխանող կողմն արձանագրելով, որ նշված դեպքերի մասին որեւէ դիմում-բողոք ներկայացված չի եղել, այդուհանդերձ, փաստում է, որ ՀՀ ԿԸՀ-ն 07.02.2013թ. թիվ 42-Ա որոշմամբ սեփական նախաձեռնությամբ հարուցել է վարչական վարույթ, անցկացրել վարչական վարույթով լսումներ, որին հրավիրվել է նաեւ դիմողի լիազոր ներկայացուցիչը, եւ արդյունքում՝ 11.02.2013թ. կայացրել է թիվ 49-Ա որոշումը:

Ընտրողների ցուցակների կազմման հարցի առնչությամբ պատասխանող կողմը, հղում կատարելով ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածին, 7-րդ հոդվածի 1-ին մասին, 8-րդ հոդվածի 1-ին մասին, արձանագրում է, որ ընտրողների ցուցակի կազմման սկզբունքները, կազմման ու վարման ամբողջ կարգը մանրամասն կանոնակարգված է ՀՀ ընտրական օրենսգրքով, իսկ ինչ վերաբերում է դիմողի հայեցակարգային առաջարկություններին՝ կապված այլ սկզբունքով ընտրողների ցուցակ կազմելու հետ, ապա պատասխանող կողմը գտնում է, որ սույն գործի քննության առարկայի շրջանակներում չէ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների քննարկումը:

Դիմողի կողմից բարձրացված՝ ընտրողների ցուցակների հրապարակման սահմանափակումների արդյունքում ընտրակեղծիքների դեմ պայքարի բացարձակ անհնարինության եւ անարդյունավետության հարցի առնչությամբ, հղում կատարելով ՀՀ ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասին, 31, 33, 48-րդ հոդվածներին, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) եւ ԵԱՀԿ Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական հաստատությունների գրասենյակի կողմից մշակված չափորոշիչներին, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. ցուցումներ եւ բացատրական զեկույց» 30.10.2002թ. (CDL-AD (2002) 23) փաստաթղթի 4-րդ կետի (գաղտնի ընտրական իրավունք (c)-րդ ենթակետին, ԵԱՀԿ Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական հաստատությունների գրասենյակի եւ Վենետիկի հանձնաժողովի CDL-EL (2010) 003, 2010թ. փետրվարի 3-ի համատեղ դիտողություններին, 2010թ. դեկտեմբերի 22-ի CDL-AD (2010) 043 զեկույցին, Ընտրողների գրանցման գործընթացի նկատմամբ մոնիտորինգի

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ CDL-EL (2009) 015 փաստաթղթին, ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին, պատասխանող կողմը գտնում է, որ դիմողն ընտրողների ստորագրած ցուցակներին ծանոթանալու և դրանցից քաղվածքներ կատարելու որեւէ խոչընդոտ չի ունեցել:

Անդրադառնալով դիմող կողմի բարձրագրած՝ 25.02.2013թ. ԿԸՀ ներկայացված այն դիմումի հետ կապված հարցին, որով պահանջվում էր, որպեսզի կենտրոնական ընտրական հանձնաժողովը դիմեր դատարան՝ ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով, պատասխանող կողմն արձանագրում է նաեւ, որ նշված դիմումի քննության արդյունքում ԿԸՀ-ն 25.02.2013թ. կայացրել է թիվ 60-Ա որոշումը, որը վիճարկվել է վարչական դատարանում, և առկա է դատարանի վերջնական դատական ակտ, որով ԿԸՀ-ի թիվ 60-Ա որոշումը ճանաչվել է իրավաչափ:

Ընտրական իրավունքների պաշտպանության ինստիտուտների առնչությամբ, ինչպիսիք են ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկը, ընտրական տեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելը, պատասխանող կողմն արձանագրում է, որ ներկայացված բոլոր դիմումները Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 45-րդ, 46-րդ և 47-րդ հոդվածների պահանջներին համապատասխան քննարկվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից և կայացվել են համապատասխան որոշումներ, տրվել գրավոր պատասխաններ: Դիմումների քննարկման օրվա և ժամի մասին դիմողները եղել են պատշաճ ծանուցված, իսկ դիմումների քննության արդյունքում կայացված որոշումները սահմանված կարգով ուղարկվել են դիմողներին և հրապարակվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Ըստ պատասխանող կողմի՝

- ընտրությունների կազմակերպման ընթացքում, մինչև քվեարկության օրն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին չի ներկայացվել որեւէ դիմում կամ բողոք,
- քվեարկության օրը 41 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից միայն մեկում՝ թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում է ստացվել մեկ դիմում՝ ընտրողների ցուցակում անճշտության վերաբերյալ, որին պատասխանվել է հանձնաժողովի նախագահի գրությամբ, և մեկ հաղորդում՝ թիվ 29 ԸԸՀ-ում, որով կայացվել է համապատասխան որոշում,
- Հանրապետության Նախագահի ընտրության քվեարկության օրվանից հետո քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու և վերահաշվարկի վերաբերյալ արդեն իսկ ներկայացված դիմումներից զատ միայն թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում են ստացվել թվով 7 դիմումներ, որոնք սահմանված կարգով քննվել են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից: Թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կենտրոնական ընտրական հանձնա-

ժողովից վերահասցեագրման կարգով ստացել եւ քննել է տեղական դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպության կողմից ներկայացված մեկ դիմում,

- Իրավիճակային վերլուծությունների կենտրոնի կողմից հատկապես քվեարկության օրն ուսումնասիրվել են էլեկտրոնային կայքերում (panorama.am, news.am, hra.am, lurer.com, asparez.am, ilur.am, haynews.am, aravot.am, 1in.am, tert.am, slaq.am, galatv.am եւ այլն) եւ զանգվածային լրատվության միջոցներում ներկայացվող տեղեկությունները, պարզվել է տեղեկությունների հավաստիությունը, 65 հրապարակումներով ներկայացվել են պարզաբանումներ կամ տրամադրվել են տեղեկություններ, իսկ խախտումներին վերաբերող փաստերի հաստատման դեպքում հանձնաժողովի կողմից անմիջապես ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ խախտումները կանխելու, հետեւանքները վերացնելու համար,
- 1988 տեղամասային ընտրական հանձնաժողովներից միայն թվով 40 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգի համաձայն կատարվել գրառումներ,
- Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրության նախապատրաստման եւ անցկացման ընթացքում մինչեւ ընտրության արդյունքի ամփոփումն ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան է ներկայացվել երեք հայցադիմում, որոնց կապակցությամբ առկա են Վարչական դատարանի թիվ ՎՂ/0094/05/13, ՎՂ/0359/05/13 եւ ՎՂ/0377/05/13 դատական ակտերը՝ հայցերը մերժելու մասին,
- Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքների ամփոփումից հետո ՀՀ վարչական դատարան է ներկայացվել եւս երկու հայցադիմում, որոնց վերաբերյալ առկա են Վարչական դատարանի թիվ ՎՂ/1423/05/13 եւ ՎՂ/1606/05/13 դատական ակտերը՝ հայցերը մերժելու մասին:

Անդրադառնալով սահմանադրական դատարան ներկայացված նյութերին՝ պատասխանող կողմն արձանագրում է, որ դրանք իրենցից ներկայացնում են թղթակցություններ, տարբեր էլեկտրոնային կայքերից վերցված նյութեր, որոնք որեւէ ապացուցողական նշանակություն չունեն եւ չեն կարող ընդհանրապես հանդիսանալ քննարկման առարկա սահմանադրական դատարանում:

Անդրադառնալով դիմող՝ ՀՀ Նախագահի թեկնածու Ա. Դուկասյանի կողմից բարձրացված՝ որոշ տեղամասերում մասնակցության բարձր տոկոսի եւ ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի ստացած բարձր ձայների հարցին՝ պատասխանող կողմը գտնում է, որ այդ տեղամասերն առանձնացնել մնացած տեղամասերից գուտ այն բանի համար, որ թեկնածուներից մեկն այդ տեղամասերում ստացել է 64 տոկոսից ավելի ձայներ, անտրամաբանական է: Ըստ պա-

տասխանող կողմի՝ միայն թվային ցուցանիշի հիման վրա առանձնացնել տեղամասեր եւ առաջ բերել վարկած, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովն այդ տեղամասերի արդյունքների կեղծված չլինելու հարցում պետք է առանձնահատուկ վստահ լինի, անընկալելի է: Ըստ պատասխանողի՝ դիմողը թվային դատողություններն իրականացրել է սուբյեկտիվ մոտեցմամբ, ինչը չի արտացոլում ամբողջ պատկերը, ինչպես նաեւ դիմումում առկա չէ գեթ մեկ փաստ, որի հիման վրա ներկայացված տեղամասերի քվեարկության արդյունքները պետք է կասկածի տակ առնել:

Այն տեղամասերի առնչությամբ, որտեղ քվեարկությանը մասնակցել են բոլոր ընտրողները, պատասխանող կողմը փաստում է, որ բոլոր 6 տեղամասային կենտրոնները, որտեղ մասնակցությունը եղել է 100 տոկոս, հանդիսանում են քրեակատարողական հիմնարկներում ձեւավորված տեղամասային կենտրոններ, որտեղ, որպես կանոն, մասնակցում են բոլոր ընտրողները, եւ այս տեղամասային կենտրոնների ընտրողների ընդհանուր թիվը 248 է, միջինը՝ 40 ընտրող: 95 տոկոսից բարձր մասնակցությամբ թվով ընդամենը 5 տեղամասային կենտրոններից մեկը, որտեղ գրանցվել է ամենաբարձր՝ 98,44 տոկոս մասնակցություն, եւս եղել է քրեակատարողական հիմնարկում ձեւավորված տեղամասային կենտրոն, իսկ մնացած տեղամասերն իրենցից ներկայացնում են փոքր գյուղական համայնքներ:

Ըստ պատասխանողի՝ դիմումում առանձնացվել են 63 եւ ավելի տոկոս մասնակցություն ունեցած տեղամասերը, եւ եթե այս տրամաբանությամբ առանձնացվեն բոլոր այդպիսի տեղամասերը, ապա այդ տեղամասերի քվեարկության արդյունքներով 61 տեղամասում հաղթել է երկրորդ տեղը գրաված թեկնածուն, եւ ըստ դիմողի տրամաբանության՝ տվյալ տեղամասերի քվեարկության արդյունքները պետք է կասկածի տակ դնել, անկախ այն փաստից, թե որ թեկնածուն է ավելի շատ ձայներ ստացել, ինչն ըստ պատասխանող կողմի՝ անբացատրելի մոտեցում է:

Պատասխանող կողմը նաեւ արձանագրում է, որ ՀՀ Նախագահի թեկնածու Ա. Գուկասյանի կողմից տեղամասերի քվեարկության արդյունքները վիճարկելու փորձ չի արվել, եւ դիմումում առկա չէ որեւէ փաստ կամ ապացույց որեւէ տեղամասի արդյունքների ոչ հավաստի լինելու մասին, սակայն դիմումում հնչեցվել են մտքեր, որ ընտրատեղամասերի զգալի մասում քվեարկության արդյունքները հակասում են իրողությանը, եւ որ ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգն ամբողջությամբ անգործություն է ցուցաբերել, ինչը, ըստ պատասխանող կողմի կարծիքի՝ անհիմն է:

**6. Հարակից պատասխանող՝ ՀՀ դատախազության ներկայացուցիչներն** արձանագրում են, որ նախընտրական քարոզարշավի ընթացքում ընտրական գործընթացի հետ առնչվող հանցագործության դեպքեր, բացի ՀՀ Նախագահի թեկնածու Պ. Հայրիկյանի նկատմամբ կատարված մահափորձի դեպքի, չեն եղել: Նախընտրական քարոզարշավի ընթացքում ընտրական խախտումների վերաբերյալ դատախազության մարմինների կողմից ընթացք է տրվել 88 հա-

դորդումների, հայտարարությունների եւ հրապարակումների, որոնք, սակայն, չեն պարունակել որեւէ հանցագործության հատկանիշներ: Նախընտրական քարոզչության ընթացքում թույլ տրված ընտրախախտումների մասին ստացված հաղորդումների, հայտարարությունների, հրապարակումների վերաբերյալ նախաքննական մարմինների կողմից կայացված որոշումների օրինակներն ուղարկվել են դրանց հեղինակներին, եւ նշված որոշումներից որեւէ մեկը չի բողոքարկվել:

Ընտրական գործընթացի մյուս փուլի՝ քվեարկության առնչությամբ դատախազության կողմից ընթացք է տրվել 159 հաղորդումների, հայտարարությունների եւ հրապարակումների, հարուցվել է 12 քրեական գործ, 4 քրեական գործեր մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարաններ:

Գնահատելով ընտրական գործընթացում իրավախախտումների ամբողջական պատկերը՝ ՀՀ դատախազության ներկայացուցիչներն արձանագրում են, որ ըստ էության ողջ ընտրական գործընթացի ընթացքում արձանագրված խախտումները զանգվածային ու տարածված բնույթ չեն կրել, իսկ տեղ գտած հանցագործության փաստերն առանձին եւ միմյանցով չպայմանավորված դեպքեր են:

7. Հարակից պատասխանող՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված եզրակացության մեջ դիմումին կից նյութերի առնչությամբ արձանագրվում է, որ դիմումներում ներկայացված տեղեկությունները «... բովանդակային առումով առավելապես ունեն ընդհանրական բնույթ, ընտրությունների հետ կապված տարբեր հանգամանքներ առանց որեւէ հստակ փաստարկման ներկայացվում են կասկածելի, վերլուծությունները կրում են սուբյեկտիվ բնույթ, իսկ ընտրությունների ընթացքի առանձին իրավիճակները որպես իրավախախտում մեկնաբանվում են սեփական ընկալման տեսանկյունից չունենալով որեւէ հստակ հիմնավորումներ»: Փաստվում է նաեւ, որ ընտրախախտումների վերաբերյալ ահազանգերը եւ դրանց ուսումնասիրումը վկայում են, որ դրանք չեն կրել համատարած ու համակարգված բնույթ, միաժամանակ դրանց գերակշիռ մասը եղել է չհիմնավորված ու չփաստարկված:

Անդրադառնալով ՀՀ Նախագահի թեկնածուների դիմումներում ներկայացված տեղեկություններին, այդ թվում՝ տեսաձայնագրություններով ներկայացված, ՀՀ ոստիկանության ներկայացուցիչը գտնում է, որ դրանց մի մասը բովանդակային առումով առավելապես ունեն ընդհանրական բնույթ, ներկայացված են առանց որեւէ հստակ փաստարկման, վերլուծությունները կրում են սուբյեկտիվ բնույթ եւ դրանք մեկնաբանվում են սեփական ընկալման տեսանկյունից: Ներկայացված տեղեկությունների մյուս մասի առնչությամբ 19 իրավախախտումներից 13-ով ոստիկանությունն արդեն իսկ իրականացրել եւ շարունակում է իրականացնել քննություն: Նշված 13 դեպքերից 8-ով կայացվել են որոշումներ քրեական գործի հարուցումը մերժելու մասին, 2-ով հարուցված քրեական գործերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարաններ, 2-ով նախապատրաստված նյութերն ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական

ծառայություն, իսկ 1 դեպքով շարունակվում է նախապատրաստվել նյութեր: Մնացած 6 դեպքերի վերաբերյալ ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներում որևէ ահազանգ չի ստացվել: Այդուհանդերձ, նշված 6 դեպքերի առնչությամբ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարություններ են տրվել ստուգումներ կատարելու եւ օրենքով սահմանված կարգով հետազա ընթացքը լուծելու վերաբերյալ:

**8.** Գործով որպես երրորդ անձ ներգրավված՝ ՀՀ Նախագահի թեկնածու Ս. Սարգսյանի ներկայացուցիչները, անդրադառնալով դիմող կողմերի փաստարկներին, նախ արձանագրեցին, որ 1988 տեղամասային ընտրական հանձնաժողովներից 1884-ում (95 տոկոս) «Ժառանգություն» կուսակցությունն ունեցել է առաջադրած անդամներ, որոնցից 38-ը քվեարկության օրը չեն ներկայացել, 108-ում ունեցել է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ, 104-ում՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղար: Միայն 79 տեղամասում (3.9 տոկոս) չեն եղել միաժամանակ «Ժառանգություն» կուսակցության կողմից առաջադրված հանձնաժողովի անդամ եւ ՀՀ Նախագահի թեկնածու Բ. Հովհաննիսյանի վատահված անձ:

Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ ներկայացված է եղել 120 դիմում, որոնք, ըստ երրորդ անձի ներկայացուցիչների գնահատման, չեն հանդիսանում պատշաճ դիմումներ: Այդուհանդերձ, արձանագրվում է, որ եթե անգամ հիպոթետիկ ընդունվի, որ ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ ներկայացված բոլոր 120 դիմումներն էլ հիմնավոր են, ապա այդ ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դեպքում անգամ ՀՀ Նախագահի թեկնածու Բ. Հովհաննիսյանի ձայները կդառնային 37.85 տոկոս, իսկ ՀՀ Նախագահի թեկնածու Ս. Սարգսյանի ձայները՝ 57.46 տոկոս, այսինքն՝ քվեարկության արդյունքները փաստացի չէին փոխվի:

Միաժամանակ, գործով որպես երրորդ անձ ներգրավված՝ ՀՀ Նախագահի թեկնածու Ս. Սարգսյանի ներկայացուցիչներն ի հակադրություն դիմողների կողմից ներկայացված՝ ըստ ընտրական տեղամասերի քվեարկությունների արդյունքների տարբեր չափանիշներով աղյուսակավորման ու դրանից բխող հետետությունների, ներկայացրեցին իրենց կողմից նույնպես իրականացված համանման ու տարբեր չափանիշներով կատարված վերլուծություններ: Մասնավորապես, առանձնացնելով բոլոր այն տեղամասերը, որտեղ տեղամասային ընտրական հանձնաժողովներում նախագահներ կամ քարտուղարներ են եղել «Ժառանգություն» կամ «ՀՅԴ» կուսակցությունների կողմից առաջադրված անձինք, եւ համադրելով դրանցում քվեարկության արդյունքները՝ ակնհայտ համարեցին, որ դրանք էապես չեն շեղվում ընտրությունների ամբողջական ու վերջնական պաշտոնական արդյունքներից:



9. ՀՀ սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է համարում, մասնավորապես, հաշվի առնել.

- ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ «Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

- Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով ամրագրված լիազորության իրավական շրջանակները, համաձայն որի՝ **սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով լուծում է Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճը:**

- Նման վեճերի քննության եւ լուծման դատավարական կարգի վերաբերյալ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով ամրագրված լիազորության սահմանադրաիրավական բովանդակության եւ շրջանակների վերաբերյալ իր հստակ իրավական դիրքորոշումները ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է 2008թ. մարտի 8-ի ՍԳՈ-736 որոշման 12-րդ եւ 13-րդ կետերում, ինչպես նաեւ 2012թ. մայիսի 31-ի ՍԳՈ-1028 որոշման 6-րդ եւ 7-րդ կետերում:

ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, 2008թ. մարտի 8-ի ՍԳՈ-736 որոշման մեջ արձանագրել է. «2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքներով կատարված սահմանադրական փոփոխությունների հիման վրա ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 3.1. կետի համաձայն սահմանադրական դատարանը լուծում է ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճ: Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքներով ՀՀ ԿԸՀ-ի որոշման իրավական հիմնավորվածությունը սահմանադրական դատարանում կարող է վիճարկվել երկու տեսանկյունից. ինչպես դրա ընդունման սահմանված կարգի (ընթացակարգի)՝ օրենքով պահանջվող ձեւի պահպանվածության (ձեւական հիմքեր), այնպես էլ նյութական իրավունքի նորմերի կիրառման ենթադրյալ սխալների հիմքով, որով ընտրությունների արդյունքներն ամփոփող կենտրոնական ընտրական հանձնաժողովը սխալ հետեւության է հանգել թեկնածուների ընտրվելու կամ չընտրվելու փաստի վերաբերյալ (նյութական հիմքեր)»:

2012թ. մայիսի 31-ի ՍԳՈ-1028 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրեց, որ «ընտրական գործընթացների իրավակարգավորման վերջին տարիների փոփոխությունները Հայաստանում կարելուք անդրադարձ ունեցան ընտրական իրավունքի դատական պաշտպանության ոլորտում, ինչը, սակայն, դեռեւս պատշաճ ձեւով չի ընկալվել ընտրական գործընթացին մասնակից իրավասուբյեկտների կողմից»: Այնուհետեւ կարելուքեց, որ «ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության համար անհրաժեշտ է.

ա/ նկատի ունենալ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ յուրաքանչյուր մարմին իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքներով,

բ/ հստակ պատկերացնել դատական յուրաքանչյուր ստյանի իրավագործության շրջանակները,

գ/ օրենքով սահմանված ժամկետներում եւ կարգով իրականացնել ընտրական իրավունքի պաշտպանությանն ուղղված միջոցներն՝ այն դատարանում, որն ունի համապատասխան իրավագործություն,

դ/ հաշվի առնել, որ ընտրական իրավունքի դատական պաշտպանության հարցերով ՀՀ սահմանադրական դատարանը ոչ թե այլ դատարանների նկատմամբ վերադաս դատարան է, այլ իրականացնում է Սահմանադրությամբ իրեն վերապահված կոնկրետ իրավասություն,

ե/ ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը չեն կարող դիտարկվել որպես իրավական նորմի սահմանադրականության վեճեր, քանի որ վերջիններիս լուծման համար սահմանադրաիրավական այլ պահանջներ ու ընթացակարգեր են նախատեսված»:

Սահմանադրական դատարանը նաեւ արձանագրեց, որ «ՀՀ օրենսդրությամբ սահմանադրական դատարանն իրավասու չէ քննության առարկա դարձնել բոլոր այն հարցերը, որոնք նախապես քննության պետք է առնվեն եւ իրավական լուծում ստանան ՀՀ վարչական դատարանում, որի որոշումներն այդ հարցերում ... վերջնական են եւ վերանայման ենթակա չեն»:

Ընտրական իրավահարաբերությունների հետ կապված սահմանադրական դատարանի լիազորության փոփոխությամբ էր պայմանավորված նաեւ այն հանգամանքը, որ եթե մինչեւ 2005 թվականը ՀՀ Սահմանադրությամբ նման հարցերի քննության ժամկետային սահմանափակումներ չէին նախատեսվում, ապա, սահմանադրական փոփոխությունների արդյունքում, Սահմանադրության 51-րդ հոդվածի 5-րդ մասով խիստ սահմանափակվեց 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի հիմքով վեճերի քննության համար նախատեսված ժամկետը, եւ ելնելով վերոհիշյալ իրավասության բնույթից՝ նախատեսվեց 10-օրյա ժամկետ: Այսինքն՝ այդ ժամկետի սահմանափակումը պայմանավորվեց ընտրական վեճերով սահմանադրական դատարանի իրավասության փոփոխությամբ, ինչին համապատասխան նախատեսվեց պարզման ենթակա իրավական նշանակություն ունեցող հարցերի առավել սեղմ շրջանակ:

Սույն գործով դիմողները ողջ ընտրական գործընթացում ու նաեւ ՀՀ սահմանադրական դատարան դիմելիս ոչ միայն պետք է հաշվի առնեին տվյալ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումներում, ինչպես նաեւ 2012թ. մայիսի 5-ի ՍԴՈ-1027 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, այլեւ համակարգային ամբողջականության մեջ նկատի ունենալին ու հիմք ընդունելին.

1. ՀՀ Սահմանադրության 5 (մաս 2), 51 (մաս 5), 94 (մաս 3), 100 (կետ 3.1.) եւ 101 (մաս 1, կետ 9)-րդ հոդվածների պահանջները,

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի պահանջները՝ օրենքի այլ դրույթների հետ համակարգային ամբողջականության եւ փոխկապակցվածության մեջ,

3. ՀՀ ընտրական օրենսգրքի, մասնավորապես, 37-րդ հոդվածի 12-րդ մասի, 46-րդ հոդվածի 1, 3, 5, 7, 8 եւ 9-րդ մասերի, 48-րդ հոդվածի 1-ին մասի, 66-րդ հոդվածի 6-րդ մասի, 91-րդ հոդվածի, ինչպես նաեւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ամբողջ 25-րդ գլխի պահանջները:

**Գործի քննությունը վկայեց, որ դիմողների կողմից դրանք հիմնականում անտեսվել են կամ իրավաչափ ձեւով ու օրենքով սահմանված կարգին ու ժամկետներին համահունչ չեն իրացվել:** Ակնհայտ դարձավ նաեւ, որ դիմողները պատշաճ չեն պատկերացնում 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ընտրական իրավունքի դատական պաշտպանության նոր կարգն ու սահմանադրական դատարանին՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով վերապահված լիազորությունը՝ չտարբերակելով «**ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման վիճարկում**» եւ «**ընտրությունների արդյունքների վիճարկում**» իրավադրույթներին համապատասխան լիազորությունների իրականացման կարգն ու առանձնահատկությունները:

Ընդ որում, ՀՀ ընտրական օրենսգրքի 91-րդ հոդվածով հստակ սահմանված է նաեւ, թե ինչ կարգով են ամփոփվում ընտրությունների արդյունքները եւ **ինչ որոշում է ընդունվում, որը կարող է ՀՀ սահմանադրական դատարանում դառնալ վիճարկման առարկա:** Հաշվի առնելով ՀՀ ընտրական օրենսգրքի 91-րդ հոդվածով եւ 75-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված դրույթները, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի պահանջները՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման հետ կապված վեճերով սահմանադրական դատարանը պարզում է՝ արդյո՞ք տվյալ որոշման ընդունման ժամանակ օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան առկա են եղել ու հաշվի են առնվել.

ա/ քվեարկության արդյունքների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով կազմված արձանագրությունը,

բ/ վարչական դատարանի իրավասության շրջանակներում ընտրական գործընթացներին առնչվող վճիռները,

գ/ ընտրական հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքներով ընդունված որոշումները,

դ/ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները,

ե/ քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունված որոշումները:

Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջներից ելնելով՝ սահմանադրական դատարանը պարզում է նաեւ իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ներկայացված բողոքների

քննարկումը (քննությունը) անհիմն մերժելու, նման բողոքները սահմանված ժամկետներում չքննարկելու (չքննելու) եւ քննարկումից (քննությունից) հրաժարվելու կամ խուսափելու հանգամանքները:

Այսպիսով, սահմանադրական դատարանի՝ օրենսդրությամբ կանխորոշված խնդիրն է՝ որպես իրավունքի (եւ ոչ՝ փաստի) դատարան, գնահատել, թե իրավական նշանակություն ունեցող վերոթվարկյալ հանգամանքները հաշվի առնելու արդյունքում որքանո՞վ է իրավաչափ ընտրության արդյունքների վերաբերյալ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայացրած վերջնական որոշումը:

**ՀՀ սահմանադրական դատարանն իրավասու չէ ու չի կարող ստանձնել օրենքով նախատեսված կարգով ու համապատասխան լիազորությամբ ընտրական գործընթացին մասնակից քաղաքական ուժերի ու նրանց ներկայացնող կամ նրանց կողմից առաջադրված տասնյակ հազարավոր իրավասուբյեկտների, ընտրական հանձնաժողովների, այլ դատարանների լիազորությունների ու պարտականությունների վերակատարումը 10-օրյա ժամկետում, որոնք ի պաշտոնե պարտավորված են եղել ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ու հստակ ժամկետներում կատարել համապատասխան գործողություններ: Ժամանակին իրենց առնչվող մասով այդ գործողությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը դիմողի ներկայացուցիչները ձգտում էին լրացնել ոչ իրավաչափ կամ գործնականում անիրագործելի միջնորդություններով՝ հանրային տպավորություն ստեղծելով, որ սահմանադրական դատարանն իբր կարող էր, սակայն չցանկացավ իրականացնել այն, ինչն իրենք էին պարտավոր ժամանակին ու օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացնել եւ ապացուցողական նշանակություն ունեցող իրավական փաստարկներով հիմնավորված դիմում ներկայացնել սահմանադրական դատարան:**

**Սահմանադրական դատարանի որոշման իրավական հիմք կարող է հանդիսանալ բացառապես նշված սուբյեկտների իրավաչափ գործողության արդյունքում ձեւավորված ապացուցողական նշանակության իրավական փաստերի համակցության համադրված գնահատումը: Սա է ՀՀ Սահմանադրության եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջը:**

**10.** Սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ սահմանադրաիրավական տեսանկյունից երկրում ստեղծված նախընտրական ու հետընտրական իրավիճակը չի կարող քննության առարկա լինել միայն ապացուցողական նշանակություն ունեցող իրավական փաստերի անմիջական համադրման շրջանակներում: Կան նաեւ իրողություններ, որոնք, առնչվելով սահմանադրական հիմնարար սկզբունքներին, Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության երաշխավորմանը, համարժեք իրավական դիրքորոշումների անհրաժեշտություն ունեն:

ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է այն փաստը, որ հատկապես համապետական ընտրությունների արդյունքներով դատարանի

նախորդ որոշումները, որքան էլ իրավական առումով հիմնավոր ու փաստարկված են եղել, բովանդակել են իրավական հիմնարար դիրքորոշումներ, այսուամենայնիվ, հանրության որոշ շերտերի կողմից միանշանակ չեն ընդունվել: Դրա պատճառը ոչ միայն իրավագիտակցության, իրավական ու քաղաքական մշակույթի առկա մակարդակն է, այլև այն օբյեկտիվ իրողությունը, որ տվյալ ընկալումն առաջին հերթին երկրի քաղաքական համակարգի ու իշխանության նկատմամբ անվստահության արտացոլանքն է, ինչը դեռևս չի հաղթահարվում: Խնդիրը պահանջում է այնպիսի իրավաքաղաքական լուծումներ, որոնք սահմանադրական հիմնարար սկզբունքների արդյունավետ իրացման ճանապարհով կայուն զարգացման երաշխիքներն ու հանրային վստահության աստիճանն էապես կամրապնդեն:

Իրողություն է նաև այն, որ ներկա ընտրությունների ցանկացած արդյունքների դեպքում արդեն իսկ խորհրդարանական քաղաքական ուժերի կեսից ավելիի կողմից, որոնք նաև ընտրական գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը մասնակից լինելու իրավունք ու պարտականություն ունեն, դրանց նկատմամբ անվստահության մթնոլորտ էր ձեւավորվել: Փաստ է նաև, որ թեկնածուների 2/3-ը միասին վերցրած չեն հավաքել ընտրողների ձայների 5 տոկոսից ավելին: Տարաբնույթ գրառումներով անվավեր ճանաչված քվեաթերթիկների թիվն էապես գերազանցում է թեկնածուների կեսից ավելիի ստացած ձայները: Սրանք իրողություններ են, որոնք նաև սոցիալական համարժեք սպասելիքների արտացոլանք են ու իրավական գործընթացների նկատմամբ համապատասխան վերաբերմունք են սերմանում:

Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդիրը ոչ միայն վեճի առարկայի շրջանակներում փաստական հանգամանքների գնահատումն է, այլև սահմանադրական արժեքանության տեսանկյունից ստեղծված իրավիճակի ու դրա սահմանադրաիրավական պատճառների հնարավոր բացահայտումը եւ դրան համարժեք իրավական դիրքորոշումների արտահայտումը, ինչին անդրադարձ եղավ նաև սույն գործով դատաքննության ընթացքում:

Ընտրական գործընթացներով պայմանավորված հանրային դժգոհության նման արտահայտման խորքային պատճառները սահմանադրաիրավական գնահատումների տեսանկյունից շատ ավելի խորն են: Դրանք զգալի չափով պայմանավորված են տասնամյակների ընթացքում երկրում քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճման այն միտումներով, երբ սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների, մասնավորապես՝ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի, ձեւախեղման վտանգ է առաջանում: ՀՀ սահմանադրական դատարանը դեռևս 10.06.2007թ. ՍԳՈ-703 եւ 08.03.2008թ. ՍԳՈ-736 որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրության 2-րդ եւ 4-րդ հոդվածներում ամրագրված հիմնարար սկզբունքների համաձայն՝ իրավական պետության համար ելակետայինն ընտրական գործընթացներում հասարակության քաղաքական շահերի գերակայության օրենսդրական ու կառուցակարգային այնպիսի երաշխիքների ապահովումն է, որը **կբացառի առաջնային մանդատով օժտ-**

**ված իշխանության ներկայացուցչական մարմինների ձեւավորման գործում քաղաքական եւ գործարար շահերի անմիջական միախառնման որեւէ հնարավորություն:** Այս իրավական դիրքորոշումը, որը նախորդ ընտրություններում արտահայտվել էր նաեւ միջազգային դիտորդների կողմից, դեռեւս բավարար չափով ուշադրության չի արժանացել ՀՀ ընտրական օրենսգրքի եւ ողջ իրավական համակարգի բարեփոխման ընթացքում, **մասնավորապես, նաեւ՝ ՀՀ Սահմանադրության 65 եւ 67-րդ հոդվածների պահանջների ամբողջական կատարումը երաշխավորելու առումով:** Դա էապես կարող էր նպաստել երկրում քաղաքական կառուցակարգերի բնականոն զարգացմանը, պետական իշխանության ինստիտուտների սահմանադրական գործառույթների արդյունավետ իրականացմանը, ինչպես նաեւ ընտրական համակարգի ու կոնկրետ ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության ամրապնդմանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ միայն ընտրական տեխնոլոգիաների բարելավման ու դրանց անգամ հնարավոր անթերի կիրառման պայմաններում դժվար կլինի իրավիճակի արմատական փոփոխություն ակնկալել: Այս հանգամանքը նկատի ունենալով դեռեւս 2008թ. մարտի 8-ի ՍԳՈ-736 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. «ՀՀ Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքների հիմնարար սկզբունքներից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում ընտրությունները պետք է դառնան քաղաքական հակամարտությունների հաղթահարման եւ պետական կարգի հիմքերն ամրապնդող գործոն: Իրականում հետընտրական գործընթացներն ավելի են սրում թե՛ քաղաքական եւ թե՛ հասարակական հակամարտությունը՝ վտանգելով ժողովրդավարական այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, բազմակարծությունը, համագործակցությունը, հանրային վստահությունը, քաղաքակիրթ երկխոսությունը: Նման իրավիճակը նաեւ սահմանադրաիրավական լուծումներ պահանջող հիմնախնդիր է, որին բազմիցս անդրադարձել է ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում, ինչպես նաեւ 2006 եւ 2007 թվականների տարեկան հաղորդումներում»:

**ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այս իրողության պատշաճ արժեվորումն ու դրանից բխող գործնական հետեւությունները միայն կարող են նպաստել օբյեկտիվ իրավիճակին համարժեք իրավաքաղաքական օրակարգի ձեւավորմանը, երկրի բնականոն զարգացմանը, մարդկանց ու հանրության այնպիսի սոցիալական վարքագծի դրսեւորմանը, որի արժեքանական առանցքն իրավունքի գերակայության երաշխավորումն է:**

Վերջին տարիներին այս խնդիրը Հայաստանում բարձրացվել է պետական քաղաքականության մակարդակի: Սակայն ընտրական ու հետընտրական գործընթացները վկայեցին, որ արվածը դեռեւս համարժեք չէ իրական մարտահրավերներին եւ սահմանադրաիրավական նոր մոտեցումներ ու համարժեք ակտիվ լուծումներ է պահանջում:

**11.** Գործի փաստական նյութերի քննության շրջանակներում եւ դատաքննության արդյունքներով ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է,

որ 2013թ. փետրվարի 18-ի ՀՀ Նախագահի ընտրության ողջ գործընթացում, ՀՀ Նախագահի առանձին թեկնածուների գրանցման հետ կապված վեճերից բացի, հիմնական բողոքները վերաբերել են քվեարկության եւ ընտրությունների արդյունքների ամփոփման փուլերին:

Հայաստանի Հանրապետությունում 2013թ. փետրվարի 18-ի ՀՀ Նախագահի ընտրությունների անցկացման նպատակով, ինչպես նշվեց, կազմավորվել է 1988 ընտրական տեղամաս:

«Ժառանգություն» կուսակցությունը ՀՀ Նախագահի ընտրության ընթացքում պաշտպանել է Բաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի թեկնածությունը: Խորհրդարանական երկու կուսակցություն՝ «ՀՅԴ» եւ «ԲՀԿ», ինչպես նաեւ կուսակցությունների «ՀԱԿ» դաշինքը պաշտոնապես հայտարարել են, որ ընտրական գործընթացում չեն պաշտպանելու ՀՀ Նախագահի որեւէ թեկնածուի: Նշված բոլոր քաղաքական ուժերն օրենքով սահմանված կարգով մասնակցել են տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորմանը եւ դրանցում քվեարկության օրը փաստացի մասնակցություն են ունեցել նրանց կողմից առաջադրված ու նախապես համապատասխան ուսուցում անցած հետեւյալ թվով անդամներ. ԲՀԿ-ի կողմից՝ 1950, «Ժառանգություն» կուսակցության կողմից՝ 1884, ՀՅԴ-ի կողմից՝ 1909, ՀԱԿ-ի կողմից՝ 1481: Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների ընդհանուր թիվը կազմել է 15652, որից 7224-ը կամ հանձնաժողովների անդամների փաստացի թվի 46,03 տոկոսն առաջադրվել է նշված քաղաքական ուժերի կողմից: Նրանց կողմից առաջադրվածներից հանձնաժողովների նախագահներ կամ քարտուղարներ են եղել. ԲՀԿ-ից՝ 1225, ՀՅԴ-ից՝ 211, «Ժառանգություն» կուսակցության առաջադրածներից՝ 212, ՀԱԿ-ից՝ թվով 265 անձինք: Այդ անձանց ընդհանուր թիվը կազմել է 1913: Ընդ որում, հիշյալ քաղաքական ուժերի կողմից առաջադրվածներն են ներկայացրել տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների 48.8 տոկոսը, քարտուղարների՝ 47.4 տոկոսը: **Նրանցից 1912-ն իրենց ստորագրությամբ վավերացրել են քվեարկության արդյունքներով կազմված արձանագրությունները՝ առանց որեւէ վերապահման:**

Քվեարկության օրը տեղամասային կենտրոններում ներկա են գտնվել թվով 5038 վստահված անձինք, որոնցից՝ Նախագահի թեկնածուներ Հ. Բագրատյանի կողմից՝ 299, Պ. Հայրիկյանի կողմից՝ 141, Բաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի կողմից՝ 1009 անձ, Ս. Սարգսյանի կողմից՝ 3589 անձ: Դիմող ՀՀ Նախագահի թեկնածու Ա. Դուկասյանը տեղամասային կենտրոններում ներկայացված վստահված անձինք չի ունեցել:

Քվեարկության օրը, ըստ ԿԸՀ տվյալների, միջազգային դիտորդներն այցելել են թվով 1208 տեղամասային կենտրոններ: Թվով 1426 տեղամասային կենտրոններում ներկա են գտնվել 4469 տեղական դիտորդներ: Թվով 1321 տեղամասային կենտրոններում ընտրությունների ընթացքին հետեւել են զանգվածային լրատվության միջոցների թվով 1993 ներկայացուցիչներ, ովքեր ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով ունեցել են նաեւ վերահսկողական բնույթի լայն լիազորություններ:

Սահմանադրական դատարանը կարելի է համարում արձանագրել, որ ՀՀ ընտրական օրենսգրքը, մասնավորապես, ընտրական հանձնաժողովների կազմավորման կառուցակարգային նոր լուծումների արդյունքում ամրագրել է գործառույթների ու դրանց իրացման այնպիսի համակարգ, ինչը ՀՀ Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի կողմից, օրենքով սահմանված իրավունքների ու պարտականությունների պատշաճ կատարման պայմաններում, կարող է երաշխավորել ընտրական գործընթացի անհրաժեշտ ու բավարար վերահսկողություն եւ ընտրական իրավունքի արդյունավետ իրացում: Հետեւաբար, սույն գործով ներկայացված ընտրական վեճի շրջանակներում, ինչպես նաեւ ընտրական համակարգի նկատմամբ վստահության տեսանկյունից իրավագնահատման կարելի է չափանիշ է նաեւ այն հանգամանքը, թե ընտրական գործընթացներում ներգրավված քաղաքական ուժերը որքանով են վերոհիշյալ նպատակով լիարժեք իրացրել ՀՀ ընտրական օրենսգրքով իրենց վերապահված գործառույթները:

Հետընտրական գործընթացների իրավական ընթացքը նույնպես պետք է խարսխված լինի այդ համակարգի իրավաչափ գործունեության արդյունքների վրա: Սա է գործող ընտրական համակարգի իրավակարգավորման առանցքը եւ ժողովրդավարական պետության իրավական ու քաղաքական մշակույթի անհրաժեշտ ու օբյեկտիվ պահանջը:

**12.** 2013թ. փետրվարի 18-ին ընտրական իրավահարաբերություններին մասնակից ու օրենքով նախատեսված իրավասություն ունեցող ընդհանուր թվով 20690 անձինք միայն տեղամասային ընտրական կենտրոններում (այդ թվում՝ 8233-ը ՀՀ Ազգային ժողովի վերոնշյալ չորս քաղաքական ուժերի կողմից ներկայացված)՝ իրենց իսկ իրավունքով ու պատասխանատվությամբ ընտրական գործընթացներին ներգրավված մյուս իրավասուբյեկտների հետ մեկտեղ, կոչված են եղել երաշխավորելու քվեարկության պատշաճ ընթացքը, ապահովելու վերահսկողական գործառույթների լիարժեք իրականացումը, նպաստելու ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի արդյունավետ իրացմանը: Իսկ դա կարող էր իրականացվել, մասնավորապես, օրենքով նախատեսված հետեւյալ իրավասությունների իրավաչափ, հետեւողական ու ժամանակին կատարման արդյունքում:

**Նախ՝** ՀՀ ընտրական օրենսգրքի 37-րդ հոդվածի 12-րդ մասին համապատասխան.

«Ընտրական հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հանձնաժողովի իր մասնակցած առաջին նիստում հրապարակայնորեն ընթերցում եւ ստորագրում է պարտավորություն «Ընտրական հանձնաժողովների անդամի պարտականությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու մասին», որը կցվում է ընտրական հանձնաժողովի գրանցամատյանին ...»:



Այս պարտականությունը հանձնաժողովի անդամն ստանձնում է որպես քաղաքական վստահության արդյունքում նշանակված ու նաև գործառնական անկախությամբ օժտված անձ: Բազմակուսակցական հիմունքներով տեղամասային ընտրական հանձնաժողովների ձևավորումը վերահսկողական հակաշիռների ապահովման արդյունավետ միջոցներից է միջազգային պրակտիկայում: Երկար տարիներ դրան էին ձգտում նաև ՀՀ քաղաքական ուժերը: ՀՀ ընտրական օրենսգիրքն այդ հնարավորությունն ապահովեց որպես ընտրական գործընթացի նկատմամբ վստահության ամրապնդման երաշխիք: Այս ընտրություններում ընտրական ողջ գործընթացի նկատմամբ համարժեք պարտականություն է ստանձնել ՀՀ Ազգային ժողովը ներկայացնող քաղաքական ուժերի կողմից առաջադրված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ հանդիսացող եւ հիմնականում բարձր որակավորում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության 15652 քաղաքացի:

Միաժամանակ, ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է. «Եթե հանձնաժողովի անդամը կամ վստահված անձը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականը արձանագրվի գրանցամատյանում»:

Անկախ փաստացի արձանագրված նյութի բովանդակությունից ու իրավական հիմնավորվածությունից, օրենքով նախատեսված 20690 իրավասուրբյեկտների կողմից (որպես հանձնաժողովի անդամ կամ վստահված անձ) 1988 ընտրական տեղամասերից միայն թվով 40 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում են կատարվել գրառումներ, ինչը կազմում է ընտրատեղամասերի ընդհանուր թվի միայն 2 տոկոսը:

Երկրորդ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է. որ, ի թիվս այլևի, ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում կարող են ներկայացնել նաև՝ վստահված անձը, եթե ներկա է եղել տվյալ ընտրական տեղամասում, ինչպես նաև համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե քվեարկության ամփոփիչ արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին:

Որպես հանձնաժողովի անդամ ու վստահված անձ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի ու ՀՀ Նախագահի թեկնածուների կողմից առաջադրված թվով 20690 իրավասուրբյեկտների կողմից նման որեւէ դիմում չի ներկայացվել: Այսինքն՝ նշված անձանց կողմից իրենց իսկ ստանձնած պարտականությունների շրջանակներում նաև ստորագրված արձանագրությունները համարվել են հավաստի ու ոչ բողոքարկելի:

Վերոհիշյալ նույն հոդվածի հիմքով ՀՀ Նախագահի թեկնածու Բաֆֆի Կ.

**Ռիչարդի Հովհաննիսյանի դիմումներին ընթացք է տրվել օրենքով սահմանված կարգով: Ըստ գործի նյութերի՝ դրանց վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները վերադասության կամ դատական կարգով չեն բողոքարկվել, իսկ դիմումներում նշված ընտրատարածքներից շուրջ 85 տոկոսի վերաբերյալ որեւէ ահազանգ չի եղել կամ գրանցամատյաններում որեւէ գրառում չի կատարվել:**

**Գատաքննությամբ փաստվեց նաեւ, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 13-րդ մասի հիմքով իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ներկայացված բողոքների քննարկումը /քննությունը/ անհիմն մերժելու, նման բողոքները սահմանված ժամկետում չքննարկելու /չքննելու/ եւ քննարկումից /քննությունից/ հրաժարվելու կամ խուսափելու դեպքեր չեն արձանագրվել:**

**Երրորդ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Թեկնածուն, վստահված անձը, եթե ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաեւ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով եւ ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին (այսուհետ՝ վերահաշվարկ) դիմում:**

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչեւ ժամը 18.00-ն»:

**Ըստ գործի նյութերի՝ ներկայացվել է ընդամենը նման 12 դիմում /ընտրական տեղամասերի 0.6 տոկոսի վերաբերյալ/, որից 10-ը՝ 2 անձի կողմից:**

**Գործնականում վերահաշվարկի դիմում կարող էր ներկայացվել 20690 իրավասուբյեկտի կողմից, այդ թվում՝ միայն Բ. Հովհաննիսյանի շահերի պաշտպանության իրավական պատասխանատվություն ստանձնած 1009 վստահված անձի կողմից:**

**Վերջիններս ներկայացրել են օրենքի պահանջների հիման վրա կազմված ընդամենը 1 դիմում:**

**ՀՀ Նախագահի ընտրությունների քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովների թվով 15652 անդամներից միայն 1 անձ է ներկայացրել հատուկ կարծիք (3/33 տեղամաս, որտեղ էլ կատարվել է վերահաշվարկ): Դա նշանակում է, որ ՀՀ Ազգային ժողովի բոլոր քաղաքական ուժերի**

կողմից առաջադրված ու հատուկ պարտավորություն ստանձնած 15651 իրավասուբյեկտներ հավաստի են համարել քվեարկության արդյունքները եւ իրենց իսկ ստորագրությամբ վավերացրել այն: **Դրանք էլ ընտրությունների արդյունքների ամփոփման հիմք են հանդիսացել:**

**Օրենքով նախատեսված այս հնարավորությունը՝ քվեարկության արդյունքները վերահաշվարկի միջոցով բողոքարկելու եւ քվեարկությանը մասնակցած ընտրողների կողմից ստորագրված ընտրացուցակների հավաստիությունն ստուգելու, տարաբնույթ կասկածները փարատելու՝ օրենքով նախատեսված հիմնական միջոցն է, ինչից գրեթե չեն օգտվել դիմողները:**

**Չորրորդ՝** ընտրական գործընթացին առնչվող տարաբնույթ իրավախախտումների վերաբերյալ դիմող կողմի ներկայացրած նյութերը սահմանադրական դատարանի կողմից տրամադրվել են գործով որպես հարակից պատասխանող ներգրավված չէ դատախազությանը եւ չէ կառավարությանն առընթեր չէ ոստիկանությանը՝ իրենց իրավասության սահմաններում ուսումնասիրելու, ինչպես նաեւ 18.02.2013թ. անցկացված չէ Նախագահի ընտրությունների հետ կապված ընտրախախտումների կանխման եւ արձանագրված դեպքերի առնչությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ամբողջական բացատրություն ներկայացնելու համար: Ըստ չէ դատախազության կողմից ներկայացված բացատրությունների՝ չէ Նախագահի թեկնածու Բաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի դիմումին կից տեսաձայնագրությունների ուսումնասիրմամբ պարզվել է, որ տեսանյութերից մեկը պարունակում է ՎԳ/423/05/13 վարչական գործով չէ վարչական դատարանի նիստի ձայնագրությունը, ինչը սահմանադրական դատարանում քննարկման առարկա լինել չի կարող, իսկ մյուսներում առկա են տարբեր ընտրական տեղամասերում, դրանց հարակից հատվածներում եւ այլ վայրերում կատարված տեսաձայնագրություններ եւ լուսանկարներ, որոնց մի մասը ժամանակին ուսումնասիրվել, մյուսները՝ ուսումնասիրվում են համապատասխան իրավասությամբ օժտված մարմինների կողմից:

Միաժամանակ, ընտրական ողջ գործընթացի շրջանակներում չէ դատախազությունն ստացել է 247 հաղորդում, այդ թվում՝ 187-ը ՁԼՄ-ներում գետեղված հրապարակումներից, 5-ը՝ չէ գլխավոր դատախազության թեժ գծով: **Ստացված 247 հաղորդումներից 13-ին (կամ՝ 5.3%) տրվել է պարզաբանում, 13-ով (կամ՝ 5.3%) որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու մասին, 218-ով (կամ՝ 88.3%) որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքերով,** 3 հաղորդում քննարկման փուլում է: Ընդ որում, մերժված գործերից եւ ոչ մեկով օրենքով սահմանված կարգով բողոք չի ներկայացվել: Փաստվում է նաեւ, որ առկա իրավախախտումները, ինչպես նաեւ դրանց վերաբերյալ ահազանգերը եղել են սահմանափակ թվով եւ չեն կրել զանգվածային բնույթ:

Չէ ոստիկանության կողմից տեղեկացվում է, որ չէ Նախագահի ընտրությունների քարտզարչավի, քվեարկության եւ հետընտրական փուլերում առե-

րետույթ իրավախախտումների վերաբերյալ ՀՀ ոստիկանության ստացած ահազանգերով քննարկվել կամ քննարկման ընթացքում են 276 հաղորդումներ: **Դրանցից 250-ը կամ 90.6 տոկոսը մերժվել է կամ թողնվել է անհետևանք՝ հանցադեպի, հանցակազմի բացակայության կամ անհիմն լինելու հիմքերով:**

**Ամբողջական պատկերն այսպիսին է. ընտրական ողջ գործընթացին մասնակցած 27152 իրավասուբյեկտներ ունեցել են օրենքով նախատեսված վերահսկողական լիազորություններ եւ կարող էին ոչ միայն կանխել, այլեւ առնվազն ահազանգել հնարավոր ընտրախախտումների մասին: Փաստացի ահազանգերի թիվը կազմել է դրանք ներկայացնելու իրավասությամբ օժտվածների թվի 1.9 տոկոսի չափով: Ընդ որում, այդ ահազանգերի զգալի մասը եղել է ընտրական գործընթացներում կոնկրետ իրավասությամբ հանդես չեկող քաղաքացիների կողմից:**

**Հինգերորդ՝** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ գլուխը (ուժի մեջ է մտել 2008թ. հունվարի 1-ից) ամբողջությամբ նվիրված է ընտրական իրավունքի դատական պաշտպանության դատավարական ընթացակարգերին: Այդ գլխի 144-րդ հոդվածը սահմանում է. «Ընտրական գործերով վարչական դատարան կարող են դիմել սույն օրենսգրքի 3-րդ հոդվածում նշված անձինք, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում՝ համապատասխան ընտրական հանձնաժողովը»:

Սույն օրենսգրքի 3-րդ հոդվածը, մասնավորապես, սահմանում է, որ.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները»:

Իսկ ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանվում է. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) (բացառությամբ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել **վարչական դատարան...»:**

**Մինչեւ ընտրության արդյունքների ամփոփումը 2013թ. փետրվարի 18-ի ՀՀ Նախագահի ընտրությունների հետ կապված վեճերով ՀՀ վարչական դատարան ներկայացվել է 3 հայցադիմում՝ թեկնածուների գրանցմանն առնչվող հարցերով: ՀՀ ընտրական օրենսգրքի 91-րդ հոդվածի հիմքով ընտրությունների արդյունքների ամփոփման պահին քվեարկության եւ դրա արդյունքների վիճարկման հետ կապված հայցադիմում ՀՀ վարչական դատարան ներկայացված չի եղել:**

**Ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումից եւ ԿԸՀ թիվ 62-Ա որոշումն ընդունելուց հետո 28.02.2013թ. եւ 07.03.2013թ. ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել ընտրական գործընթացին առնչվող երկու հայցադիմում, որոնք բացառապես վերաբերել են վարչական դատարանի իրավասությանը եւ դատաքննության արդյունքներով մերժվել են: Ընդ որում, ինչպես նշվեց, թեկնածուների գրանցման հարցով ՀՀ վարչական դատարանի որոշումը վերջնական է եւ սահմանադրական դատարանում քննարկման առարկա լինել չի կարող, ինչին նույնպես դիմող կողմի ներկայացուցիչներն անհրաժեշտ ուշադրություն չեն դարձրել:**

**Վեցերորդ`** դիմող կողմերը դատարանում ապացուցողական նշանակություն ունեցող որեւէ իրավական փաստարկ չեն ներկայացրել ընտրություններում Բաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի հնարավոր հաղթանակի վերաբերյալ: Այս առնչությամբ միակ փաստարկը ՀՀ Նախագահի թեկնածու Ս. Սարգսյանի գրանցման վիճարկումն է եղել, ինչը նախապես դատական կարգով ըստ ընդդատության քննության է առնվել եւ ՀՀ վարչական դատարանի վերջնական որոշմամբ մերժվել է: Ի դեպ, ՀՀ վարչական դատարանի կողմից տվյալ գործով կիրառված օրենքների դրույթների սահմանադրականության հարցերով Բ. Հովհաննիսյանը ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով 07.03.2013թ. անհատական դիմում է ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան, ինչն օրենքով սահմանված կարգով գտնվում է ուսումնասիրման փուլում:

Սույն դատաքննության ընթացքում դիմողների հարցադրումները գլխավորապես վերաբերել են ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելուն` դիմումներին կից ներկայացված նյութերի շրջանակներում: Այդ նյութերի նկատմամբ կողմերն հնարավորություն են ունեցել սահմանադրական դատարանում արտահայտել ամբողջական դիրքորոշում: Դրանց համակցված գնահատման արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանք կարող էին օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները բողոքարկելու հիմք կամ առիթ հանդիսանալ, ինչը չի արվել: Բացառությունը, թերեւս, 17/5 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքներին առնչվող փաստարկներն են, ինչի ուսումնասիրման արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ արդյունքները չեն կարող համարվել հավաստի: Ուստի ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 10-րդ մասի հիմքով այդ տեղամասում քվեարկության արդյունքները պետք է ճանաչվեն անվավեր, իսկ ՀՀ ընտրական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով այդ տեղամասում քվեարկության մասնակիցների թիվն արձանագրվի որպես տեղամասում անճշտությունների գումարային չափ: Այդ ընտրական տեղամասին առնչվող բոլոր նյութերը ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 10-րդ մասի հիմքով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից պետք է ուղարկվի ՀՀ դատախազություն:

**Յոթերորդ`** բացի վերոնշյալներից, ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված է. «Ընտրության արդյունքները անվավեր ճանաչելու մասին դիմում համապատասխան ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 2 օր առաջ` մինչև ժամը 18.00-ն»:

**Հիշյալ նորմն ընտրության արդյունքներով վերջնական որոշում կայացնելուց առաջ այդ արդյունքների վիճարկման օրենքով նախատեսված հստակ ու բացառիկ կարելուր ընթացակարգ է:**

**Գործի նյութերից հետևում է, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանված ժամկետում ՀՀ Նախագահի թեկնածուներից մեկն դիմում չի ստացել, ընտրության արդյունքներն օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում չեն վիճարկվել` բաց թողնելով քվեարկության արդյունքների նկատմամբ հնարավոր կասկածները փարատելու օրենքով նախատեսված եւս մեկ հնարավորություն:**

**Գործի քննության ընթացքում ներկայացվեցին նաեւ փաստարկներ առանձին ընտրական տեղամասերում տեղ գտած թերացումների, դրանցում տեսականորեն անհավանական քվեարկության արդյունքների, առանձին թեկնածուների կողմից արված տարբեր հայտարարությունների վերաբերյալ, որոնք մույնպես ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքով ու ժամկետներում չեն վիճարկվել եւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013թ. փետրվարի 25-ի թիվ 62-Ա որոշումն ընդունելիս նախապես քննարկման առարկա չեն եղել:**

Ըստ գործի նյութերի եւ դատաքննության արդյունքների` այսպիսին են 2013թ. փետրվարի 18-ի ՀՀ Նախագահի ընտրություններում պասիվ ընտրական իրավունքի պաշտպանությանն առնչվող վեճի շրջանակներում բացառապես իրավական գործընթացների ընդհանուր պատկերն ու փաստացի արդյունքները: **Գրանք էլ, իրենց հերթին, պայմանավորել են ընտրությունների արդյունքներով ԿԸՀ-ի կողմից ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ու ժամկետներում կայացրած վերջնական որոշման իրավական բովանդակությունն ու տրամաբանությունը:**

**Վերոշարադրյալ փաստերի համակցված գնահատումը վկայում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով ու ժամկետներում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն այլ որոշում կայացնել չէր կարող:**

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրական համակարգի հնարավոր անկատարությունների առնչությամբ կողմերի նկատառումները դուրս են սույն գործի քննության առարկայի շրջանակներից, եւ դրանք օրենսդրական բարեփոխումների խնդիր կարող են հանդիսանալ` հաշվի առնելով նաեւ այդ հարցերում ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: **Քացի դրանից, ինչպես նշվեց սույն որոշ-**

ման տասներորդ կետում, հետընտրական առկա իրավիճակի պայմաններում երկրի բնականոն զարգացումը երաշխավորելու եւ սահմանադրականության ամրապնդման իրավաչափ ու արդյունավետ միջոց կարող է դառնալ ժողովրդավարական հիմնարար սկզբունքներից ելնելով քաղաքական լայն համաձայնության, հանդուրժողականության, քաղաքակիրթ երկխոսության արդյունքում անհրաժեշտ սահմանադրաիրավական բնույթի բարեփոխումների իրականացումը, ինչի անհրաժեշտությունը նույնպես կարելու էր դատաքննության ընթացքում:

Ելնելով գործի քննության արդյունքներից, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 եւ 74-րդ հոդվածներով, հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 25-ի թիվ 62-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**14 մարտի 2013 թվականի  
ՍԳՈ-1077**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 44-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**16 ապրիլի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գ. Ջհանգիրյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գ. Հարությունյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների.

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ Ազգային ժողովի թվով 34 պատգամավորների՝ 2012 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:



Լսելով սույն գործով զեկուցողի զեկույցը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, ինչպես նաեւ հետազոտելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002 թվականի փետրվարի 20-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի մարտի 21-ին եւ ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 12-ին:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի՝ «Ազգային ժողովի նիստում պատգամավորների գրանցումը» վերտառությամբ 44-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 4-րդ մասը սահմանում է.

«4. Նիստն իրավագոր է, եթե սահմանված կարգով գրանցվել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին (քվորումն ապահովված է)»:

2. Վիճարկելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ այն արտահերթ նստաշրջան կամ նիստ անցկացնելու մասով հակասում է ՀՀ Սահմանադրության 70 եւ 71-րդ հոդվածներին:

Ի հիմնավորումն իր դիրքորոշման՝ դիմողը, մասնավորապես, ներկայացնում է հետեւյալ փաստարկները.

պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ նախաձեռնելու սահմանադրական լիազորությունը կոչված է հնարավորություն տալու Ազգային ժողովում ներկայացված ընդդիմությանը (փոքրամասնությանը: իր համար նախընտրելի ժամկետներում եւ օրակարգով Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ հրավիրել, ինչը Սահմանադրությունը չի կապում կամ պայմանավորում Ազգային ժողովի մեծամասնության կամքի կամ ցանկության այս կամ այն դրսեւորման հետ:

Ըստ դիմողի՝ ՀՀ Սահմանադրությունն Ազգային ժողովի նստաշրջանների եւ նիստերի (այդ թվում՝ նաեւ արտահերթ) իրավագործության՝ քվորումի որեւէ շեմ չի նախատեսում: Սահմանադրության պահանջները վերաբերում են քվեարկության մասնակիցների թվին եւ ընդունված որոշումներին:

Ելնելով սահմանադրական նորմերի իր վերլուծությունից՝ դիմողը հանգում է այն հետեւությանը, որ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարելիս նիստերը պետք է համարվեն իրավագոր Ազգային ժողովի պատգամավորների նույն՝ մեկ երրորդի շեմն ապահովված լինելու դեպքում:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթն Ազգային ժողովի փոքրամասնության կողմից նախատեսված արտահերթ նստաշրջանի կամ նիստի իրավագործության՝ Սահմանադրությամբ չնախատեսված պայման է առաջադրում՝ պահան-

ջելով, որ այդ նիստում գրանցված պատգամավորների թիվը պակաս չլինի, քան պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

**3.** Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Ի հիմնավորումն իր դիրքորոշման՝ պատասխանողը, մասնավորապես, ներկայացնում է հետևյալ փաստարկները.

դիմողի պնդումը՝ այն մասով, որ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ նախաձեռնելու սահմանադրական լիազորությունը կոչված է հնարավորություն տալու Ազգային ժողովում ներկայացված ընդդիմությանը (փոքրամասնությանը) իր համար նախընտրելի ժամկետներում եւ օրակարգով Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ **հրավիրել**, մասնավորապես՝ հրավիրել եզրույթը կիրառելու մասով արդեն իսկ սխալ շեշտադրում է, այն սահմանադրական եզրույթ չէ եւ դրանով պայմանավորված ստեղծվում է շփոթ: Ըստ պատասխանողի՝ ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվածը հստակ կիրառում է արտահերթ նստաշրջան կամ նիստ **նախաձեռնելու եւ գումարելու** եզրույթները, պատգամավորների ընդհանուր թվի մեկ երրորդի իրավունքները վերագրում է ոչ միայն ընդդիմությանը, այլեւ իշխանությանը, եւ ընդհանուր առմամբ սահմանադրական հիշյալ նորմն ուղղված է Ազգային ժողովի լիազորությունների իրացմանը:

Ըստ պատասխանող կողմի՝ ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածն ամրագրելով ՀՀ Ազգային ժողովի իրավազորության (քվորումի, որոշում կայացնելու) սահմանները, ըստ էության նախանշում է այն շրջանակները, որոնց առկայության դեպքում միայն Ազգային ժողովն իրավասու է կատարելու իր՝ որպես օրենսդիր իշխանության, սահմանադրական լիազորությունները:

Ի հակադրություն դիմողի այն փաստարկի, որ Սահմանադրությունը նախատեսել է արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգում ընդգրկված հարցի առնվազն քննարկում Ազգային ժողովի լիազումար նիստում, պատասխանող կողմը գտնում է, որ Ազգային ժողովը կոչված է ոչ միայն ապահովել քաղաքական քննարկումներ, այլեւ կայացնել որոշումներ: Ըստ պատասխանողի՝ հիշյալ հարցը կարող էր քննության առարկա լինել, եթե Ազգային ժողովն իր գործունեության շրջանակներում չունենար եւ չապահովեր քննարկումների իրացման առանձին ինստիտուտներ, մասնավորապես՝ խորհրդարանական լսումները, եւ այլն:

**4.** ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայում նույնպես անդրադարձներ եղել են խորհրդարանական (պատգամավորական) փոքրամասնության իրավունքների պաշտպանության հիմնախնդրին՝ հատկապես հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2008թ. հունվա-

րի 23-ին ընդունված թիվ 1601 բանաձեռի դրույթները, որոնք վերաբերում են ժողովրդավարական խորհրդարաններում ընդդիմության իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ընթացակարգային երաշխավորություններին: Մասնավորապես, Չեխիայի սահմանադրական դատարանի 2011թ. մարտի 1-ի որոշման մեջ առանձնակի կարելովում է իրավական կարգավորումների և օրենսդրական գործընթացի շրջանակներում սահմանադրական այնպիսի սկզբունքները հաշվի առնելը, ինչպիսիք են իշխանությունների տարանջատումը, բազմակարծությունը, քաղաքական ուժերի ազատ մրցակցությունը, ներկայացուցչական ժողովրդավարությունը: Գրանցից բխում է նաև խորհրդարանական փոքրամասնության իրավունքների պաշտպանության, առաջարկվող նախագծերի հրապարակային ու թափանցիկ քննարկման, բոլոր կողմերին լսելու պահանջը:

Հիշյալ բանաձեռն նախատեսում է ներկայացուցչական ժողովրդավարության արդյունավետության ու քաղաքական հանդուրժողականության երաշխավորման առումով օրենսդիր մարմնի գործունեության կանոնակարգման այնպիսի ընթացակարգեր, որոնք, մասնավորապես, կապահովեն խորհրդարանական քննարկումներին ու խորհրդարանների գործառնական լիազորությունների իրականացման գործում ընդդիմության ակտիվ դերակատարությունը:

Նման նպատակ է հետապնդում նաև Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի /Վեներտիկի հանձնաժողով/ կողմից 2010թ. նոյեմբերի 15-ին ընդունված զեկույցը՝ «Ժողովրդավարական խորհրդարանում ընդդիմության դերի մասին»: Վերջինս հատուկ կարևորում է **խորհրդարանական մեծամասնության և փոքրամասնության միջև գործառնական հավասարակշռության ապահովումը**՝ ի նպաստ օրենսդիր մարմնի գործունեության արդյունավետության երաշխավորման: Շեշտվում է նաև, որ կախված այն բանից, թե որքանով է կոնկրետ խորհրդարանական ընդդիմությանը հնարավորություն տրվում փաստացիորեն իրականացնելու իր գործառույթները, կարող է գնահատվել ժողովրդավարական հասունության աստիճանը /կետ 26/: Նման խնդրի լուծման համար առաջադրվում է այն ելակետային մոտեցումը, որ խորհրդարանների կանոնակարգերը հնարավորինս պետք է ձեռակերպվեն այնպես, որպեսզի «...բարդացնեն պարզ մեծամասնության կողմից քաղաքական փոքրամասնության խմբերի իրավաչափ նպատակներն անտեսելու հնարավորությունը» /կետ 96/:

Հաշվի առնելով քննության առարկա հիմնախնդրի վերաբերյալ կողմերի ներկայացրած դիրքորոշումները, ինչպես նաև միջազգային սահմանադրաիրավական փորձն ու արդարադատական պրակտիկան՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում համակարգային մոտեցմամբ անհրաժեշտ է պարզել.

- որքանով է ՀՀ Սահմանադրությունը հստակ ամրագրել օրենսդիր մարմնի իրավագործության շրջանակները,
- սահմանադրորեն ի՞նչ երաշխիքներ են նախատեսված խորհրդարանական ընդդիմության իրավունքների իրացման, խորհրդարանական մեծա-

մասնության եւ փոքրամասնության միջեւ գործառնական հավասարակշռություն ապահովելու համար,  
- որքանով են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի՝ վեճի առարկա ու դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերը համահունչ սահմանադրական լուծումներին:

5. Ինչպես սահմանադրական իրավունքի միջազգային պրակտիկայում, այնպես էլ մեր երկրում պետական իշխանության մարմնի իրավագործությունը պայմանավորվում է նրա կողմից գործառնական իրավասության իրացման կարողունակությամբ: Դա իր հերթին պայմանավորվում է քվորումի առկայությամբ: Օրինակ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «Նախագահողը, նշանակված ժամին հավաստիանալով, որ նիստն իրավագործ է, բացում է այն եւ հայտարարում դատաքննության ենթակա գործը»: Տվյալ պարագայում նիստի իրավագործությունն անմիջականորեն պայմանավորված է քննության առարկա հարցով գործը քննելու եւ որոշում կայացնելու համար անհրաժեշտ քվորումի առկայությամբ:

«Քվորում» եզրույթը լատիներեն ծագում ունի /quorum praesentia sufficit/ եւ բառացի նշանակում է «որոնց ներկայությունը բավարար է»: Ներկայացուցչական մարմնի պարագայում **բավարար է այն ներկայությունը**, որի դեպքում տվյալ մարմնին իր սահմանադրաիրավական կարգավիճակին համապատասխան գործունեություն իրականացնելու իրավասություն կունենա: **Քվորումի առկայությունն է տվյալ մարմնի իրավագործության վկայությունը եւ գործառույթների իրացման իրավաչափության երաշխիքը**: Քվորումն է այն չափորոշիչը, որը սահմանված թվով պատգամավորների առկայությանը տալիս է գործառնական բնույթի որակական բնութագրիչ՝ ճանաչելով այն որպես Ազգային ժողով:

Որքանով է ՀՀ Սահմանադրությունը ՀՀ Ազգային ժողովի գործունեության առնչությամբ ամրագրել օրենսդիր մարմնի իրավագործության սահմանները: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ հարցն ստացել է հստակ ու ամբողջական պատասխան: Այն արտահայտված է ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Օրենքները եւ Ազգային ժողովի որոշումները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին»:

Այս եւ վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված մի շարք այլ հոդվածներից բխում է, որ.

ա/ ՀՀ Սահմանադրությունը ՀՀ Ազգային ժողովի համար **սահմանում է քվորումի ընդհանուր կանոն** եւ դրանից բացառություններ՝ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում /մասնավորապես՝ 72-րդ հոդվածի 1-ին մաս, 74-րդ հոդված, 79-րդ հոդվածի 1-ին մաս, 83.1-րդ հոդվածի 1-ին մաս, 84-րդ հոդվածի 1-ին մաս եւ այլն/,

բ/ տարբերակվում են նիստի իրավագործության եւ որոշում կայացնելու (օրենք ընդունելու) իրավագործության փոխկապակցված ինստիտուտները: Ազգային ժողովը կարող է ընդունել օրենք կամ որոշում քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, բայց պայմանով, որ այդ նիստն իրավագործ լինի ճանաչվելու որպես օրենսդիր իշխանության մարմնի նիստ: Իսկ դա առկա է այն դեպքում, երբ քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: **Քացառությամբ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված առանձին դեպքերի, պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելիի առկայությունն է ՀՀ Ազգային ժողովի իրավագործության սահմանը:** Դրանից պակաս պատգամավորների որեւէ այլ թվի պարագայում, ըստ ՀՀ Սահմանադրության, Ազգային ժողովը՝ որպես օրենսդիր իշխանություն իրականացնող մարմին, հանդես գալու իրավագործություն չի կարող ունենալ,

գ/ ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածը համակարգային առումով թղթակցում է նաեւ Սահմանադրության 74.1-րդ հոդվածի հետ, որում անդրադարձ է կատարվում օրենսդիր մարմնի անգործության այնպիսի դրսեւորումներին, որոնք վերջինիս արձակման հիմք կարող են հանդիսանալ: Նման անգործությունը, մասնավորապես, կարող է դրսեւորվել գործառույթն իրացնելու կամ որոշման կայացման համար անհրաժեշտ քվորում չսպաստվելու հետեւանքով: Տվյալ դեպքում քվորումը հանդես է գալիս որպես Ազգային ժողովի իրավագործության իրացման բնութագրիչ:

Քննության առարկայի շրջանակներում ուշադրության են արժանի նաեւ ՀՀ Սահմանադրության մի շարք այլ դրույթներ: Մասնավորապես, Սահմանադրության 62-րդ հոդվածը /4-րդ մաս/ սահմանում է, որ Ազգային ժողովի գործունեության կարգը սահմանվում է ոչ միայն Սահմանադրությամբ, **այլեւ Ազգային ժողովի կանոնակարգով**, որն օրենք է: Սա նշանակում է, որ սահմանադրական կանոնակարգման շրջանակներում **օրենսդիր մարմինն օժտվում է նաեւ որոշակի հայեցողությամբ՝ սահմանելու իր գործունեության կարգը:** Ինչ վերաբերում է Սահմանադրության 70-րդ հոդվածում պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի ամրագրմանը, ապա տվյալ համատեքստում հստակեցվում է ոչ թե Ազգային ժողովի գործունեության կարգը, այլ լուծվում է իրավասուբյեկտության խնդիր՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդին օժտելով Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի կամ նիստի հրավիրում նախաձեռնելու իրավասությամբ: Նման իրավասություն ունեն նաեւ Հանրապետության Նախագահը եւ կառավարությունը:

Սահմանադրական նման լուծումների շրջանակներում պատգամավորների, այդ թվում՝ պատգամավորական փոքրամասնության իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքներ են հանդիսանում, մասնավորապես.

ա/ Ազգային ժողովի գործունեության երաշխավորումն իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման, իրավունքի գերակայության եւ ժողովրդա-իշխանության ապահովման, իրավական եւ ժողովրդավարական պետության կայացման հիմնարար սկզբունքների հիման վրա,

բ/ մշտական հիմունքներով ու ազատ մանդատի հիման վրա պատգամավորի լիազորությունների կատարման երաշխավորումը,

գ/ Սահմանադրության 66-րդ հոդվածի հիման վրա պատգամավորի կարգավիճակին համապատասխան անձեռնմխելիության նախատեսումը,

դ/ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդին սահմանադրական սուբյեկտ ճանաչելը եւ վերջինիս Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարելու նախաձեռնությամբ օժտելը,

ե/ սահմանադրական մակարդակում Ազգային ժողովի պատգամավորի օրենս- դրական նախաձեռնության իրավունքի ճանաչումը,

զ/ պատգամավորներին սահմանադրական իրավասությամբ օժտելը՝ կառավարությանն ուղղելու գրավոր եւ բանավոր հարցեր կամ խմբերի ու խմբակցությունների միջոցով հանդես գալու հարցապնդմամբ:

Նման պարագայում հիմնական խնդիրն այն է, թե այս երաշխիքներն ինչպես են օրենսդրորեն ապահովվում եւ իրացվում:

**6. «Ազգային ժողովի կանոնակարգ»** ՀՀ օրենքի՝ վեճի առարկա 44-րդ հոդվածի 4-րդ մասը, դիմողի կարծիքով, ինչպես նշվեց, խոչընդոտում է պատգամավորական փոքրամասնության՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի իրացումը, քանի որ այն պայմանավորվում է Ազգային ժողովի մեծամասնության կամքի կամ ցանկության այս կամ այն դրսեւորմամբ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման հետեւությունը բխում է ոչ թե տվյալ օրենսդրական դրույթի իրավակարգավորման բուն էությունից, այլ պարզապես արտացոլում է խորհրդարանական գործունեության ձեւավորված պրակտիկան:

Ինչ վերաբերում է վեճի առարկա դրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը, ապա.

**Նախ՝** տվյալ դրույթը **սահմանում է ընդհանուր կանոն** եւ վերաբերում է Ազգային ժողովի բոլոր նիստերին: Դա նկատի ունենալով՝ դիմողների կողմից հարց կարող էր բարձրացվել պատգամավորական փոքրամասնությանն առընչվող մասով լրացուցիչ իրավակարգավորման կամ իրավակարգավորման բացի հաղթահարման մասին, ինչն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է,

**Երկրորդ՝** ինչպես նշվեց, քվորումի ապահովումը տվյալ ինստիտուտի իրավազորության բնութագրիչն է եւ ՀՀ Սահմանադրության, մասնավորապես, 62, 67 եւ 71-րդ հոդվածների համաձայն քվեարկության ու դրան մասնակցելու միջոցով են իրացվում առանձին պատգամավորների ու օրենսդիր մարմնի գործառնական լիազորությունները,

**Երրորդ՝** ՀՀ Սահմանադրությունը եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը, այդ թվում՝ վերջինիս 5-րդ հոդվածը, **որեւէ պատգամավորի իրավունք չեն վերապահում անհարգելի բացակայել Ազգային ժողովի նիստերից, խուսափել մշտական հիմունքներով իր լիազորությունները կատարելու սահմանադրական պահանջից:** Ավելին, «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 6-րդ

հողվածը **պարտավորեցնում է** պատգամավորին մասնակցել Ազգային ժողովի նիստերին՝ առանց որեւէ վերապահման,

**չորրորդ՝ իրավական առումով անհիմն է Ազգային ժողովի նիստերից բացակայելը որպէս «քաղաքական բռնկոտ» ներկայացնելը:** «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը սահմանել է քվեարկությանը չմասնակցելու միայն երկու հնարավոր ինստիտուտ, երբ, մի դեպքում, օրենքով սահմանված կարգով, համաձայն տվյալ օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ մասի դ/ կետի, Ազգային ժողովի նիստում պատգամավորը հանդես է գալիս տվյալ քվեարկությանը մասնակցելուց հրաժարվելու մասին հայտարարությամբ, մյուս դեպքում՝ նույն հոդվածի 3-րդ մասի ե/ կետի հիմքով քվեարկությունից առաջ նման հայտարարությամբ հանդես է գալիս պատգամավորական խումբը կամ խմբակցությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությունը քաղաքական դրդապատճառներով **Ազգային ժողովի նիստերին չմասնակցելու** որեւէ իրավական հիմք չի նախատեսում: Բացառությամբ Ազգային ժողովի նիստերից օրենքով նախատեսված հարգելի բացակայությունների սպառիչ ցանկի (ներառյալ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» եւ «ե» կետերով նշված հիմքերով քվեարկությունից պատգամավորի բացակայությունը), մյուս բոլոր բացակայություններն անհարգելի են եւ ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածով սահմանված կարգով պետք է առաջացնեն համարժեք իրավական հետեւանքներ:

ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ խորհրդարանական փոքրամասնության իրավունքների պաշտպանության խնդիրն իրոք առկա է, սակայն այն պայմանավորված է ոչ թե վեճի առարկա դրույթով, այլ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերի իրավակարգավորումներով, որոնց ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներից ելնելով:

Սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ անկախ այն բանից, թե ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվածում նախատեսված որ սուբյեկտի կողմից է նախաձեռնվել Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի կամ նիստի գումարումը, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի ա/ կետի պահանջներից ելնելով բոլոր պատգամավորները **պարտավոր են** մասնակցել Ազգային ժողովի նիստերին: Բացակայությունը կարող է հարգելի համարվել միայն օրենքով սահմանված կոնկրետ հիմքերի առկայության դեպքում: Այս սկզբունքից շեղվելու բոլոր դեպքերը կհանգեցնեն պատգամավորի ու օրենսդիր մարմնի անգործության՝ դրանից բխող համարժեք իրավական հետեւանքներով:

Ամբողջ խնդիրն այն է, թե ինչպիսին են այդ հետեւանքները եւ որքանով են դրանք երաշխավորում նաեւ պատգամավորական փոքրամասնության իրավունքների իրացումը: Օրենսդրական առկա կարգավորումների ուսումնասիրումը վկայում է, որ տեղ են գտել այնպիսի լուծումներ, որոնք ընդհուպ անիրագործելի են դարձնում ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի ուղղակի գոր-

ծողությունը՝ մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայելու դեպքում պատգամավորի լիազորությունների **դադարման** վերաբերյալ: Գործնականում, անկախ հարգելի բացակայությունների վերաբերյալ օրենքով նախատեսված հիմքերից, վերջին հաշվով Ազգային ժողովին է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածով իրավասություն վերապահվում որոշումով լուծելու բացակայությունները հարգելի կամ անհարգելի համարելու հարցը, ինչն ըստ էության դառնում է պատգամավորական մեծամասնության կամաարտահայտումը: Նման պայմաններում մեծ վերապահումով կարելի է խոսել պատգամավորական փոքրամասնության իրավունքների պաշտպանվածության կամ Սահմանադրության 67-րդ հոդվածի վերոհիշյալ դրույթի ուղղակի գործողության մասին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ տվյալ իրավակարգավորումը հետեւանք է ՀՀ Սահմանադրության 62 եւ 67-րդ հոդվածների միջեւ առերեսույթ անհամապատասխանության, ինչին դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ՝ առկա սահմանադրաիրավական խնդրի արդյունավետ լուծումը գտնելու տեսանկյունից:

7. ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածը ոչ միայն ամրագրում է ՀՀ Ազգային ժողովի տեղն ու դերը պետական իշխանության համակարգում, այլեւ սահմանում է օրենսդիր իշխանության մարմնի գործունեության ընթացակարգային սահմանները: Վերջիններիս թվին են պատկանում նաեւ հարցերի այն շրջանակի որոշակիացումը, որոնց վերաբերյալ Ազգային ժողովն ընդունում է որոշումներ:

Վերոհիշյալ հոդվածում իրենց իրավական բնույթից ելնելով առկա են երկու տիպի իրավանորմեր՝ նյութական, որոնցով կանոնակարգվում են իրավահարաբերությունները, որոշակիացվում են օրենսդիր մարմնի իրավասության շրջանակները, երկրորդ՝ ընթացակարգային, որոնց միջոցով գործառույթի իրացման խնդիրն է լուծվում:

Եթե ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը» դրույթը սահմանում է օրենսդիր մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակը, ապա որոշումներ ընդունելու իրավասության իրացման շրջանակի հստակեցումն առաջին հերթին Ազգային ժողովի գործունեության կանոնակարգման նպատակ է հետապնդում: Ընդ որում, Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված բոլոր հոդվածներով, բացառությամբ 67-րդ հոդվածի (առանձին քննարկման առարկա կարող է լինել նաեւ 74.1-րդ հոդվածը), նախատեսված են Ազգային ժողովի կոնկրետ լիազորություններ, որոնց իրացման ձեւ է սահմանված որոշման ընդունումը: Այդ մասին է վկայում Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրաիրավական բովանդակության համադրումը 55-րդ հոդվածի 13-րդ եւ 14-րդ կետերի, 57, 59-րդ հոդվածների, 62-րդ հոդվածի 2-րդ մասի, 66, 69, 73, 74, 75, 77, 79-րդ հոդվածների, 80-րդ հոդվածի 2-րդ մասի, 81, 83, 83.1, 83.2, 83.3, 83.4, 84, 94.1-րդ հոդվածներ:



րի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 103, 111 եւ 112-րդ հոդվածների իրավակարգավորումների հետ: Վերջիններով հստակ սահմանված են Ազգային ժողովի լիազորությունները տվյալ իրավակարգավորման շրջանակներում:

Սահմանադրության 67-րդ հոդվածով ամբողջությամբ կանոնակարգված են հանրային բնույթի նյութաիրավական հարաբերություններ, սահմանված են այն բոլոր ու նաեւ սպառիչ դեպքերը, երբ **դադարում են** Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունները: Ընդ որում, այդ դեպքերը ներկայացվում են թվարկումով՝ առանց որեւէ առանձնահատուկ բնութագրիչների ու բացառությունների: Այս թվարկումների մեջ, թերեւս, առանձնահատուկ մոտեցում է պահանջում Սահմանադրության 65-րդ հոդվածին կատարվող հղումը, որը ենթադրում է, որ տվյալ դրույթի օրենսդրական իրացումը պետք է հստակ թրթակցի Սահմանադրության 65-րդ հոդվածի պահանջների կատարումն օրենսդրութեն երաշխավորելու հետ:

Ներկայացված համատեքստում ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածում ամրագրված «**դադարում» եզրույթը** սահմանադրաիրավական այն բնույթն ունի, որ հետեւանքն առաջանում է իրավունքի ուժով /ex jure/, **երբ առկա է փաստը**: Մասնավորապէս, Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը կամ Ազգային ժողովի արձակումն իրավունքի ուժով հանգեցնում է պատգամավորի լիազորությունների դադարման: Որեւէ որոշմամբ կամ նույնիսկ օրենքով սահմանադրական տվյալ նորմի գործողությունն արգելափակել հնարավոր չէ, քանի որ դա անմիջականորեն կհակասի Սահմանադրության 6-րդ հոդվածի /1-ին եւ 2-րդ մասեր/ պահանջներին:

Սահմանադրության 67-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից բխում է, որ նման մոտեցումը հավասարապէս վերաբերում է նաեւ մեկ հերթական մատաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայությանը եւ չի նախատեսվում լիազորությունների **դադարեցման** կոնկրետ իրավասություն:

Սահմանադրական տարբեր հոդվածների համադրված վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ստեղծված իրավիճակի հաղթահարման համար հիմք պետք է ընդունել սահմանադրական իրավունքի երկու հիմնարար սկզբունք:

**Առաջին**՝ Սահմանադրությունն ինքնաբավ է եւ տեքստային առերեսույթ անհամապատասխանությունները կարող են հաղթահարվել Սահմանադրության արժեքանության ու հիմնարար սկզբունքների վրա հենվելով: Տվյալ պարագայում էական է այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի **անմիջական գործողության ապահովումը**, դրա համար անհրաժեշտ իրավական նախադրյալների ստեղծումը երկրում ժողովրդաիշխանության ամրապնդման, ներկայացուցչական ժողովրդավարության արդյունավետ իրացման, օրենսդիր իշխանության գործունակության ապահովման կարեւորագույն երաշխիքներից մեկն է:

**Երկրորդ**՝ իրավունքի ընթացակարգային նորմը չի կարող նյութական նորմի ամբողջական ու լիարժեք իրացման խոչընդոտ հանդիսանալ: Այս առումով

ՀՀ Ազգային ժողովը Սահմանադրության 67-րդ հոդվածի պահանջների իրացման շրջանակներում վեճի առարկա դրույթի մասով կարող է միայն **«ի գիտություն ընդունել»** իրավական փաստի ու դրանից բխող հետեւանքի առկայությունը, իրավասություն չունենալով քվեարկությամբ կասեցնել սահմանադրական նորմի գործողությունը եւ **«դադարում» եզրույթը գործնականում փոխակերպել «դադարեցում» եզրույթով**, երբ վերջինս ենթադրում է հստակ ու համարժեք լիազորության առկայություն: Դրա մասին է վկայում նաեւ ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածում, 55-րդ հոդվածի 10-րդ կետի 2-րդ պարբերության մեջ ու 83-րդ հոդվածի 3-րդ կետում **«դադարում» եւ «դադարեցում»** եզրույթների սահմանադրաիրավական բովանդակության համադրված վերլուծությունը: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածը սահմանում է, որ **«Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ»:** Իսկ Սահմանադրությունը մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայության պարագայում ՀՀ Ազգային ժողովին պատգամավորի լիազորությունների **դադարեցման** իրավասությամբ չի օժտել, այն էլ՝ որոշման միջոցով:

Հետեւությունն այն է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի, մասնավորապես, 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերի դրույթները, Ազգային ժողովի պատգամավորի բացակայության քննարկման եւ **քվեարկությամբ** այն հարգելի կամ անհարգելի համարելու վերաբերյալ որոշում կայացնելու մասով, փոխում են սահմանադրական նորմի իրավական բովանդակությունը, **իրավունքի ուժով լիազորությունների դադարումը փոխակերպում են դրանց դադարեցման գործընթացի:** Եթե դադարման ինստիտուտի պարագայում երաշխավորվում են նաեւ խորհրդարանական փոքրամասնության իրավունքները, ապա դադարեցումը պայմանավորվում է խորհրդարանական մեծամասնության կամաարտահայտմամբ եւ ընդհուպ կորցնում է իր կանխարգելիչ նշանակությունը: ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի պահանջներից ելնելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերը պետք է իրավակարգավորման այնպիսի հնարավորություն նախատեսեն, որի պայմաններում **օրենքով նախատեսված իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ընդունելով ի գիտություն**՝ կազմվի արձանագրություն պատգամավորի **լիազորությունները՝ իրավունքի ուժով /ex jure/ դադարելու** վերաբերյալ:

Անհրաժեշտ է նաեւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 6-րդ եւ 99-րդ հոդվածներում փոխհամաձայնեցված հաշվի առնել այն հանգամանքը, որ պատգամավորի բացակայությունը կարող է հարգելի համարվել **միայն օրենքով նախատեսված կոնկրետ հիմքերի առկայության դեպքում** ու կարգով, եւ այն չի կարող հայեցողական գնահատման արդյունք լինել: Սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխան փոփոխությունների անհրաժեշտություն ունի նաեւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Սույն գործով վեճի առարկա դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերի դրույթները, այն մասով, որով առկա ընթացակարգերը պատգամավորի «լիազորությունների դադարում» սահմանադրական ինստիտուտը գործնականում փոխակերպում են ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ նրա «լիազորությունների դադարեցման» ինստիտուտի, ճանաչել ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածին հակասող եւ անվավեր:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**16 ապրիլի 2013 թվականի  
ՍԳ-Ո-1081**



## **ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 51-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 54-ՐԴ  
ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**23 ապրիլի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներ Ա. Վարդեանյանի, Ս. Յուզբաշյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի եւ 54-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 11.10.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանն իր՝ 26.02.2013թ. ՍԳ-ԱՌ-12 աշխատակարգային որոշմամբ սույն գործի քննությանը որպես փորձագետ է ներգրավել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր Ա. Գաբուզյանին՝ առաջարկելով նրան սահմանադրական դատարանին տրամադրել ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի եւ 54-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների վերաբերյալ փորձագիտական եզրակացություն: Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարությունից պահանջվել է գրավոր հիմնավորումներ՝ սույն գործով վիճարկվող իր ավակարգավորումների վերաբերյալ:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, ՀՀ արդարադատության նախարարության ներկայացրած հիմնավորումները, գործով ներգրավված փորձագետի եզրակացությունը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի ապրիլի 29-ին եւ ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ից:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Տուգանքը» վերտառությամբ 51-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«4. Տուգանքը վճարելու անհնարինության դեպքում դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց: Եթե տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում ստացվում է պակաս, քան երկու հարյուր յոթանասուն ժամը, ապա նշանակվում է երկու հարյուր յոթանասուն ժամ, իսկ եթե այն գերազանցում է երկու հազար երկու հարյուր ժամը, ապա նշանակվում է երկու հազար երկու հարյուր ժամ»:

Վերոհիշյալ հոդվածը գործող խմբագրությամբ շարադրվել է 26.06.2006թ. ՀՕ-119-Ն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն:

Օրենսգրքի՝ «Հանրային աշխատանքները» վերտառությամբ 54-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«5. Հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ՝ կալանքի կամ որոշակի ժամկետով ազատազրկման մեկ օրը հաշվարկելով հանրային աշխատանքների երեք ժամվա դիմաց»:

ՀՀ քրեական օրենսգրքի հիշյալ հոդվածը 01.07.2004թ. ՀՕ-97-Ն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն ենթարկվել է փոփոխությունների, իսկ 26.06.2006թ.

ՀՕ-119-Ն 4-րդ հոդվածի համաձայն՝ 1-ից 3-րդ մասերը շարադրվել են նոր խմբագրությամբ, իսկ 5-րդ մասում կատարվել է փոփոխություն:

2. Դիմող կողմը գտնում է, որ օրենսգրքի վերոհիշյալ դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը՝ հետևյալ հիմնավորումներով:

Հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածը՝ դիմող կողմը փաստում է, որ այդ նորմը սահմանում է պատժի տեսակները, հաշվի առնելով դրանց համեմատական ծանրության չափանիշը՝ ավելի մեղմ պատժից դեպի ավելի խիստը, ըստ որի՝ տուգանքն ամենամեղմ պատժատեսակն է, որին հաջորդում են որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները եւ այլն: Հանրային աշխատանքը պատիժների համակարգում իր զբաղեցրած տեղով եւ ներգործությամբ ավելի խիստ պատժատեսակ է, քան տուգանքը, քանի որ սահմանափակում է դատապարտյալի ազատությունը:

Վկայակոչելով նաեւ օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասը՝ դիմող կողմը փաստում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ պետք է նշանակվի արդարացի պատիժ, որը որոշվում է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները: Ըստ դիմող կողմի՝ հիշյալ նորմը պարտադրում է դուրս չգալ օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայի սահմաններից: Մինչդեռ 66-րդ եւ 67-րդ հոդվածների համաձայն՝ «դատարանին կարող է իրավունք վերապահվել դուրս գալ Հատուկ մասով սահմանված կոնկրետ հանցակազմի համար նախատեսված պատժի սահմաններից նշանակելով ավելի խիստ պատիժ, քան համապատասխան հոդվածի առավելագույն պատժատեսակը, բայց միայն հանցագործությունների եւ դատավճիռների համակցության դեպքերում»:

Հիմք ընդունելով Սահմանադրության 22-րդ հոդվածի 3-րդ մասը՝ դիմողը գտնում է նաեւ, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նշված հանցակազմի համար նախատեսված տուգանքից ավելի ծանր պատժի տեսակի նշանակումը՝ «դատաքննության հստակ երաշխիքների բացակայության պատճառով» կարող է առաջացնել ՀՀ Սահմանադրությանը եւ ՄԻԵԿ-ի համապատասխան հոդվածներին անհամապատասխանության խնդիր:

Բացի դրանից, ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի ուսումնասիրությունից դիմող կողմը եզրակացնում է, որ առկա չէ հստակ տարբերակում տուգանք վճարելու անհնարինության եւ վճարումից չարամտորեն խուսափելու միջեւ: Դիմողը գտնում է, որ տուգանքը հանրային աշխատանքով, իսկ վերջինս կալանքով փոխարինելու իրավակարգավորումը պետք է տարբերակում նախատեսի տուգանքի վճարման անհնարինության եւ դրանից չարամտորեն խուսափելու դեպքերի միջեւ, որի պայմաններում միայն պատժի կատարումը չի հանգեցնի մարդու իրավունքների խախտման:

Սահմանադրական դատարան ներկայացրած իր լրացուցիչ բացատրություններում դիմող կողմը պնդում է դիմումում վիճարկվող իրավադրույթների վերաբերյալ արտահայտած իր տեսակետը:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող դրույթները չեն հակասում Սահմանադրությանը, մասնավորապես, ըստ միջազգային իրավական պրակտիկայի, ինչպես նաև գործող օրենսդրության վերլուծության՝ պատասխանողը հանգել է այն եզրակացությանը, որ դիմումում առաջադրված հարցի շրջանակներում գործում է «...չկա պատիժ առանց այդ մասին օրենքում նշված լինելու» սկզբունքը: Ըստ պատասխանող կողմի՝ խնդիրը կարող է ծագել այն դեպքում, երբ հանցանքը կատարվել է գործող քրեական օրենքի գործողության ժամանակ, իսկ դատավճիռը կայացնելու ժամանակ գործողության մեջ է եղել մեկ այլ քրեական օրենք:

Վիճարկվող նորմերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը պատասխանող կողմը փաստարկում է նաև այն հիմնավորմամբ, համաձայն որի՝ «հանցագործության կատարման ժամանակ ... դատարանի կողմից կայացված որոշումներից առաջ եւ դրա կայացման ժամանակ, գործող քրեական օրենքով (ՀՀ քրեական օրենսգրքով) պատժի նշանակման նման կարգ եւ պատժի նման տեսակ սահմանված է եղել: Ընդ որում, քրեական օրենք ասելով՝ պետք է հասկանալ ամբողջ քրեական օրենսգիրքը, եւ ոչ թե միայն դրա Հատուկ մասը»:

Անդրադառնալով տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու, որպես առավել խիստ պատիժ կիրառելու անթույլատրելիության խնդրին՝ պատասխանող կողմը նշում է, որ երկու պատժատեսակները կազմում են պատժի համակարգի ազատագրկման հետ չկապված պատիժների խումբը եւ մեկը մյուսով փոխարինելիս օրենքով նախատեսված է հաշվարկի որոշակի կարգ, որի նպատակը համամասնությունն ապահովելն է, բացի դրանից, տուգանքի չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում դատապարտվողի գույքային դրությունը, եւ եթե առկա է տուգանքը վճարելու անհնարինություն, ապա այն կարող է փոխարինվել այլ պատժատեսակով, «... թեկուզ իր բնույթով ավելի խիստ՝ հանրային աշխատանքով»: Հակառակ դեպքում, ինչպես եզրակացնում է պատասխանողը, «... կառաջանան կոռուպցիոն ռիսկեր՝ կտուգանվեն, տուգանքի վճարումը կհետաձգեն կամ կտարածանկետեն եւ այդ կերպ կխուսափեն պատասխանատվությունից ու պատժից»:

Սահմանադրական դատարան ներկայացրած իր լրացուցիչ բացատրությունում պատասխանող կողմը միաժամանակ գտնում է, որ «...տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելիս կիրառվող հաշվարկի մեխանիզմը չի ապահովում երկու պատժատեսակների համամասնությունն այն դեպքում, երբ հաշվարկի արդյունքում ստացվում է պակաս, քան օրենքով սահմանված նվազագույն երկու հարյուր յոթանասուն ժամը ... մինչդեռ օրենքը, փաստորեն հնարավորություն չտալով նշանակելու օրենքով սահմանված նվազագույն ժամկետից պակաս ժամկետով հանրային աշխատանքներ, վատթարացնում է տուգանքը վճարելու հնարավորություն չունեցող անձի վիճակը»:

Հանրային աշխատանքները կալանքով կամ որոշակի ժամկետով ազատագրկմամբ փոխարինելը, երբ դատապարտյալը չարամտորեն խուսափում է այդ աշխատանքները կատարելուց, պատասխանող կողմը գնահատում է իրա-

վաչափ եւ եզրակացնում, որ «... հանրային աշխատանքները կալանքով կամ որոշակի ժամկետով ազատագրկմամբ փոխարինելիս կիրառվող հակազդեցության միջոցն իր խստությամբ կարող է նաեւ գերազանցել մինչ այդ նշանակված պատժին»:

**4.** Սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականությունը ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում գնահատել.

- քրեական պատասխանատվության անխուսափելիության եւ անհատականացման սկզբունքների իրավաչափ կիրառումն ապահովելու տեսանկյունից,
- պատժատեսակը փոխարինելու ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխանության եւ իրավունքի գերակայության երաշխավորման տեսանկյունից,
- խնդրո առարկա իրավակարգավորման վերաբերյալ միջազգային փորձի համակողմանի ուսումնասիրման եւ գնահատման տեսանկյունից:

Վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս հիմք են ընդունվում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, ի թիվս այլնի, մասնավորապես, պարզելու մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

Ելնելով դիմող կողմի հարցադրումներից եւ արված եզրահանգումներից՝ սահմանադրական դատարանը կարելու է համարում վիճարկվող նորմերով նախատեսված իրավակարգավորումների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտել նաեւ ՀՀ քրեական օրենսգրքում այդ նորմերի հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի համադրված վերլուծության արդյունքում:

**5.** ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ եւ 54-րդ հոդվածների՝ սույն գործով վիճարկվող նորմերն ուղղակիորեն ամրագրում են ազատագրկման հետ չկապված պատիժների՝ տուգանքի եւ հանրային աշխատանքների կիրառման կարգի ու պայմանների տարրերը, մասնավորապես՝ կապված որոշակի կոնկրետ իրավապայմանների առկայության դեպքում դատարանի կողմից այդ պատժատեսակները հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ հարկադրանքի այլ կոնկրետ միջոցներով փոխարինելու, այսինքն՝ պատժատեսակը փոխարինելու ինստիտուտի կիրառման կարգի ու պայմանների հետ:

Տուգանքի եւ հանրային աշխատանքների՝ որպես ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման կարգն ու պայմանները նախատեսված են ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 24-ից 26-րդ եւ 32-ից 35-րդ հոդվածներով, որոնց առնչությունները վիճարկվող իրավակարգավորումների



հետ՝ սահմանադրաիրավական առումով, դուրս են սույն գործի քննության առարկայի շրջանակներից:

Սույն գործով վիճարկվող եւ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան այլ նորմերի ընդհանուր իրավական բովանդակությունից բխում է, որ տուգանքը դատապարտյալի գույքային իրավունքները սահմանափակող, անգուշությամբ կամ շահադիտական նպատակներով եւ դիտավորությամբ կատարված հանցավոր արարքի մեջ մեղավոր անձանց նկատմամբ կիրառվող պատժատեսակ է: Այն դրամական տուժանք է, որը նշանակվում է ոչ մեծ եւ միջին ծանրության հանցանքների համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված դեպքերում եւ սահմաններում՝ պատիժ նշանակելու պահին ՀՀ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հազարապատիկի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր եւ հատուկ մասերի համապատասխան հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ տուգանքի չափը տարբերակված է: Այն որոշվում է դատարանի կողմից՝ հաշվի առնելով կատարված հանցագործության ծանրությունը եւ դատապարտյալի գույքային դրությունը (վաստակի չափը, ընտանիքի ապահովվածությունը եւ այլն): Տուգանքը կարող է նշանակվել միայն որպես հիմնական պատիժ, ինչպես նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ եւ 77-րդ հոդվածներում նախատեսված դեպքերում:

Հանրային աշխատանքները դատարանի կողմից նշանակված, իրավասու մարմնի կողմից որոշված վայրում չվարձատրվող, դատապարտյալի կողմից հանրության համար օգտակար աշխատանքների կատարումն է: Այն որպես հիմնական պատիժ կարող է նշանակվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած, առավելագույնը երկու տարի ժամկետով ազատագրկման դատապարտված անձանց նկատմամբ, որպես ազատագրկմանն այլընտրանքային պատժատեսակ՝ ուժի մեջ մտած դատավճիռն ի կատար ածելու կարգադրությունն ստանալուց հետո՝ քսանօրյա ժամկետում՝ դատապարտյալի գրավոր դիմումի հիման վրա, ինչպես նաեւ որպես տուգանքին փոխարինող պատժատեսակ՝ օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված կարգով:

Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ինչպես տուգանքը, այնպես էլ հանրային աշխատանքները, ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի բնորոշմամբ, **պետական հարկադրանքի (իրավական պատասխանատվության) միջոցներ** են, որոնք պետության անունից նշանակվում են հանցավոր արարքի համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ եւ արտահայտվում են այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված կարգով գրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ, հետեւաբար՝ բխում են ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետով նախանշված իրավակարգավորման անհրաժեշտությունից: Այդ միջոցները, ի թիվս օրենքով նախատեսված հարկադրանքի այլ միջոցների, կիրառվելով իրավասու դատարանի որոշմամբ, հետապնդում են հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության բարոյականության, այլոց սահմա-

նադրական իրավունքների ու ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության նպատակներ, հետեւաբար՝ իրավաչափ են, միտված են սահմանադրական կարգի հիմունքների եւ օրինականության պահպանմանը:

Անդրադառնալով տուգանքն ու հանրային աշխատանքներն այլ պատժատեսակներով փոխարինելու ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն իրենից սահմանադրական եւ իրավունքի այլ ճյուղերի (քրեական, քրեադատավարական, քրեակատարողական) նորմերի համակարգված ամբողջություն է, որը կոչված է օրենքով որոշված դեպքերում ու կարգով պատժի կատարման շրջանակներում ապահովելու հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի փոխարինումը մեկ այլ՝ օրենքով նախատեսված համապատասխան պատժով: Ըստ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների բովանդակության՝ պատժի փոխարինման անհրաժեշտությունը պայմանավորված է այնպիսի հանգամանքների (իրավապայմանների) առկայությամբ, որպիսիք խոչընդոտում են նախկինում նշանակված պատժի կատարմանը:

Մասնավորապես, ըստ վերոհիշյալ իրավակարգավորման՝ տուգանքը (կամ տուգանքի չվճարված մասը) օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերում նախանշված որոշակի իրավապայմանների առկայությամբ փոխարինվում է հանրային աշխատանքներով **նախ**, երբ **դատապարտվողն ի վիճակի չէ անհապաղ եւ ամբողջությամբ վճարելու նշանակված տուգանքը**: Այսինքն՝ օրենսդիրը նկատի է ունեցել, մասնավորապես, դատապարտյալի անձնական կամ նյութական ոչ բարենպաստ վիճակը: Այդ դեպքում դատարանը նրա համար վճարման ժամկետ է սահմանում առավելագույնը մեկ տարի ժամկետը կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում, եւ սահմանում է վճարման ժամանակացույց՝ որոշելով յուրաքանչյուր անգամ վճարման ենթակա գումարի չափը (այսինքն՝ պատիժ կրելու հարցում, ըստ օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի ձեւակերպման, սահմանվում է արտոնություն): Երբ դատապարտյալը վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը (արտոնությունից օգտվելու հնարավորությունը) խախտում է, դատարանն այդ դեպքում է տուգանքը կամ դրա չվճարված մասը փոխարինում հանրային աշխատանքներով: Ընդ որում, օրենսդիրը **կարենորել է հիշյալ պարտավորությունների (իրավապայմանի) խախտման եւ ոչ թե՛ դրանց չկատարման դրդապատճառների փաստը**: Փաստորեն, տվյալ դեպքում, օրենքով նախատեսված իրավակարգավորման «բարենպաստ» (արտոնյալ) իրավական ռեժիմը դատապարտյալի կողմից խախտվելուն իրավաչափորեն հաջորդում են իրավական, համեմատաբար, անբարենպաստ հետեւանքներ:

**Երկրորդ** իրավապայմանը (օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մաս), համաձայն որի՝ տուգանքը փոխարինվում է հանրային աշխատանքներով, **տուգանքը վճարելու անհնարինությունն է**: Եւ չնայած օրենսդիրը չի հստակեցրել «անհնարինության» դրսեւորումները (այն հստակ չէ նաեւ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասում), այնուհանդերձ, դրա ներքո

կարող են դասվել փաստական այնպիսի հանգամանքներ, որպիսիք նախանշված չեն օրենսգրքի քննարկվող հոդվածի 3-րդ մասում: Միաժամանակ, ակնհայտ է, որ «անհնարինություն» եզրույթը չի կարող ներառել «դիտավորություն» կամ «չարամիտ խուսափում» եզրույթները: ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորման բովանդակությունից բխում է, որ իրավասու դատարանի մեկնաբանման խնդիրն է որոշելու, թե այս կամ այն փաստական հանգամանքը խոչընդո՞ւմ է դատապարտյալի կողմից տուգանքի վճարման համար, թե՞ ոչ: Որպես այդպիսիք կարող են լինել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված հանգամանքներ:

Սահմանադրական դատարանը կարելու է համարում արձանագրել, որ օրենսգրքի վերոհիշյալ 51-րդ հոդվածում (3-րդ եւ 4-րդ մասեր) նախանշված երկու խումբ իրավապայմանների առկայությունը հանգեցնում է **իրավական միեւնույն հետեւանքի՝** տուգանքի հանրային աշխատանքներով փոխարինմանը (պատժատեսակի փոխարինմանը): Այդպիսով օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովել դատարանի կողմից նշանակված պատժի կատարումը, իրացնել պատժի նպատակները՝ սոցիալական արդարության վերականգնումը, հանցանք կատարած անձի ուղղումը եւ հանցագործությունների կանխումը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի վերոհիշյալ իրավակարգավորման շրջանակներում տուգանքը վճարելու «անհնարինության» իրավական բովանդակության բացակայությունն իրավակիրառական պրակտիկայում կարող է հանգեցնել տարակերպ մեկնաբանման: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջինս ՀՀ քրեական օրենսգրքում բացահայտված չի եղել նաեւ վիճարկվող իրավակարգավորման նախորդ՝ փոփոխված շարադրանքում: Մասնավորապես, տարբերակված չեն տուգանք վճարելու անհնարինության եւ տուգանքը չվճարելու (վճարումից խուսափելու) հնարավոր հանգամանքները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ պատժատեսակի փոխարինման (տուգանքը՝ հանրային աշխատանքներով) ինստիտուտի կիրառումն ինքնին հետապնդում է իրավաչափ նպատակ, սակայն այն պահանջում է նաեւ տարբերակված մոտեցում՝ ելնելով փոխարինման դրդապատճառներից: Հետեւաբար, օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորման շրջանակներում տուգանքի վճարումից խուսափելու հնարավոր հանգամանքները չնախատեսելը կարող է գործնականում սահմանադրականության խնդիր առաջացնել:

Բացի դրանից, կարելու է նաեւ պատիժը (տվյալ դեպքում՝ տուգանքը) մեկ այլ պատժով (տվյալ դեպքում՝ հանրային աշխատանքներով) փոխարինելու համաչափության խնդիրը՝ կապված վիճարկվող իրավակարգավորմամբ տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքով փոխարինելու համար նախատեսված հաշվարկի կիրառման հետ: Վեճի առարկա դրույթի համաձայն՝ «...Եթե տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում ստացվում է պակաս, քան երկու հարյուր յոթանասուներեւ ժամը, ապա նշանակվում է երկու հարյուր յոթանասուներեւ ժամ, իսկ եթե այն գերազանցում է

երկու հազար երկու հարյուր ժամը, ապա նշանակվում է երկու հազար երկու հարյուր ժամ»։ Բացի դրանից, վերոհիշյալ իրավակարգավորման շրջանակներում օրենսդիրն սկզբունքորեն ընդհանրապես չի անդրադարձել տուգանք վճարելուց չարամտորեն (կամ դիտավորության այլ դրսեւորումներով) խուսափելու պայմաններում այն առավել խիստ պատժով փոխարինելու ինստիտուտի կիրառման անհրաժեշտության խնդրին, ինչն առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող մասում։ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես հանրային աշխատանքներից, այնպես էլ տուգանքից, որպես ազատագրկման հետ չկապված պատժատեսակից, խուսափելը հասարակական վտանգավորության միեւնույն աստիճանի տեսանկյունից օրենսդիր մարմնից պահանջում է իրավական համարժեք գնահատական, հետեւաբար՝ նաեւ համապատասխան իրավակարգավորում այն սկզբունքով, որպեսզի հաշվի առնվեն դատապարտյալի կողմից ոչ միայն տուգանք վճարելու պարտականության չկատարման (անհնարինության), այլեւ դրանից խուսափելու հանցավոր դրսեւորումները։

ՀՀ քրեական օրենսգրքի 4-րդ եւ 10-րդ հոդվածների համաձայն՝ արդարությունը քրեաիրավական հարաբերությունների կարգավորման (քրեաիրավական ներգործության) հիմնական սկզբունքներից է, որի դրսեւորումներից է այն, որ պատիժը եւ քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ եւ բավարար լինեն նրան ուղղելու եւ նոր հանցագործությունները կանխելու համար։ Այս համատեքստում միայն վիճարկվող իրավակարգավորումը կարող է գնահատվել իրավաչափ՝ երբ պահպանվել է հետապնդվող նպատակի եւ դրան հասնելու իրավական միջոցների համարժեքության սկզբունքը։

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի նորմատիվ կարգավորման իրավաչափության (համաչափության) խնդրին՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ երբ առկա չէ դատապարտյալի կողմից պատիժը կրելուց խուսափելու օրենքով նախատեսված կարգով փաստված անվիճելի հանգամանք, ապա **իրավաչափ չէ նշանակված պատժի փոխարինմամբ դրա առավել խստացումը**, ինչին գործնականում կարող է հանգեցնել վերոհիշյալ իրավակարգավորումը։ Բանն այն է, որ պատժի փոխարինման նախատեսված հաշվարկի արդյունքում ստացված պակաս ժամկետով հանրային աշխատանքների փոխարեն նախատեսվում են առավել երկար ժամկետով այդպիսի աշխատանքներ (երբ տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում ստացվել է պակաս, քան երկու հարյուր յոթանասուն ժամը), այսինքն՝ արդյունքում խախտվում է նախկին եւ փոխարինված պատժատեսակների միջեւ համամասնությունը, անհիմն վատթարացվում է այն անձի վիճակը, որը հնարավորություն չի ունեցել վճարելու տուգանքը, եւ երբ առկա չեն այդպիսի խստացման իրավական ընդհանուր (քրեական օրենսդրությամբ նախատեսված) հիմքեր (դիտավորություն կամ այլ հանգամանքներ)։ Արդյունքում՝ անձը

(դատապարտյալը) գործնականում զրկվում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իր իրավունքի իրացման հնարավորությունից: Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի նորմերը բովանդակում են իրավակարգավորիչ անհամաչափ միջոցներ՝ պատժի խստացում (դատապարտյալ անձի վիճակի անհիմն վատթարացում) այն դեպքում, երբ առկա չէ դրա կիրառման իրավաչափ հիմքը, եւ այդպիսի խստացման բացակայություն՝ իրավական համապատասխան հիմքերի (դիտավորության) հնարավոր առկայության դեպքերում:**

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ որոշակի հստակ իրավապայման է նախատեսված հանրային աշխատանքները՝ որպես պատժատեսակ, հարկադրանքի այլ միջոցներով փոխարինելու դեպքում: Մասնավորապես, օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատագրկմամբ, երբ **դատապարտյալը հանրային աշխատանքների կատարումից չարամտորեն խուսափում է:** Այսինքն, չարամտությունը՝ որպես քրեորեն դատապարտելի սուբյեկտիվ գործոն եւ հասարակական առավել վտանգավոր երեւույթ, օբյեկտիվորեն հանգեցնում է փոխարինվող պատժի խստացմանը (ազատագրկման հետ կապված պատժի փոխարինմանն ու կիրառմանը), հետեւաբար՝ նաեւ իրավակարգավորման արդյունավետ միջոցի գործադրմանը: Դրանով նպատակ է հետապնդվում վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, կանխել հանցագործությունները, այսինքն՝ երաշխավորել սահմանադրական կարգի հիմունքների պահպանումը:

Հետեւաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական հետեւանքի առումով օրենսդիրը վերոհիշյալ դեպքում պահպանել է հետապնդվող նպատակի եւ դրան հասնելու իրավական միջոցների համարժեքության սկզբունքը:

Գնահատելով վերոհիշյալ իրավակարգավորումը պատժի անխուսափելիության, պատասխանատվության եւ անհատականացման սկզբունքների իրավաչափ կիրառման, ինչպես նաեւ պատիժը փոխարինելու ինստիտուտի արդյունավետության եւ մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու եւ իրավունքի գերակայության ապահովվածության տեսանկյուններից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի նորմերով առկա են բավարար երաշխիքներ ինչպես պատժի արդյունավետ եւ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածում, 14.1-րդ հոդվածի առաջին մասում, 16-րդ եւ այլ հոդվածներում ամրագրված սկզբունքներին համապատասխան կիրառման, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներին եւ 20-րդ հոդվածի երրորդ մասին համապատասխան անձի իրավունքների դատական պաշտպանության ապահովման համար, ինչը լիարժեք երաշխավորված չէ օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված իրավակարգավորման շրջանակներում:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ վեճի առարկա իրավակարգավորումներին տրված օրենսդրական լուծումներն ունեն թե՛ ընդհանրություններ եւ թե՛ որոշակի առանձնահատկություններ: Հիմնականում դրանք հանգում են հետեւյալին.

ա/ երկրների գերակշիռ մասում տարբերակում է դրվում տուգանքը չվճարելու անհնարինության եւ դրանից չարամտորեն խուսափելու դեպքում պատժատեսակի փոխարինման ինստիտուտի կիրառման հարցերում,

բ/ ազատագրկումը համարվում է այն ծայրահեղ միջոցը, երբ անձը չարամտորեն խուսափում է վճարել տուգանքը կամ կատարել հանրային /ուղղիչ, սոցիալապես օգտակար/ աշխատանք,

գ/ ազատագրկումը որոշակի հարաբերակցության մեջ է դրվում չվճարված տուգանքի չափից կամ չկատարած հանրային աշխատանքից:

Առանձնահատկությունները հանգում են հետեւյալին.

ա/ երկրների զգալի մասում չվճարված տուգանքին համամասնորեն /անկախ չվճարման հանգամանքներից/ նախատեսվում է ազատագրկում.

բ/ տուգանքը հանրային աշխատանքով կամ ազատագրկմամբ փոխարինելու հարցը լուծվում է միաժամանակ՝ տուգանքը չվճարելու հանգամանքի հետ կապված:

Ելնելով միջազգային փորձի վերոհիշյալ ընդհանրացումներից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումներում խնդրին տրվել է փուլային լուծում, նախ՝ տուգանքը միայն հանրային աշխատանքով փոխարինում՝ տուգանքի չվճարման անհնարինության դեպքում, եւ հանրային աշխատանքն ազատագրկմամբ փոխարինում՝ այդ աշխատանքից չարամտորեն խուսափելու դեպքում: Հետեւաբար, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պատժատեսակի փոխարինման ինստիտուտի օրենսդրական կարգավորումների մակարդում այդ ինստիտուտի առավել լիարժեք ու արդյունավետ գործադրման երաշխավորումը, որը կնպաստի ոչ միայն քրեաիրավական ներգործության, այլեւ սահմանադրական կարգի եւ անձանց իրավունքների ու ազատությունների իրավական պաշտպանության միջոցների կատարելագործմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասն այնքանով, որքանով տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի

արդյունքում համարժեքորեն չի երաշխավորում երկու հարյուր յոթանասուն ժամից պակաս տեւողությամբ հանրային աշխատանքների կիրառման իրավական հնարավորություն այն անձանց նկատմամբ, որոնք չունեն տուգանքը վճարելու հնարավորություն՝ արգելափակելով նրանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը, ինչպես նաև տարբերակված մոտեցում չի դրսևորում տուգանքը վճարելու անհնարինության եւ դրանից խուսափելու հանգամանքների միջեւ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**23 ապրիլի 2013 թվականի  
ՍԳ-Ո-1082**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԾԻԾԵՌՆԱԿ-8» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 118.7-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ,  
ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 91-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ, «ՊԵՏԱԿԱՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 4-ՐԳ  
ԵՎ 5-ՐԳ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ, ՀՀ ՀՈԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 75-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**7 մայիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պոդոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, մույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ծիծեռնակ-8» ՄՋԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության



Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Ծիծեռնակ-8» ՄՅԸ-ի՝ 05.10.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով վեճի առարկա իրավական ակտերը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1.** Քննության առարկա գործի վարույթը մասամբ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի, «Պետական ոչ առետրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ ենթակետերի, 1-ին մասի երկրորդ պարբերության, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ մասերի մասով ենթակա է կարճման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերի, 60-րդ հոդվածի 1-ին կետի եւ 69-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

սույն շրջանում դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից բխում է, որ դատարաններն իրավական ակտերի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթներից **կիրառել են միայն** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի եւ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի դրույթները: Ինչ վերաբերում է «Պետական ոչ առետրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածներին, ապա դրանք հանդիսանում են ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1321-Ն որոշման իրավական հիմքերը. ՀՀ կառավարության նշված որոշումը հղում է կատարում «Պետական ոչ առետրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածներին՝ անդրադառնալով «Ղեկավարվելով «Պետական ոչ առետրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածներով» բառակապակցությանը: Իրականում դատարանները կիրառել են ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1321-Ն որոշման դրույթները՝ մեջբերելով այդ որոշման որոշ հատվածներ, ներառյալ՝ «Ղեկավարվելով «Պետական ոչ առետրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածներով» բառակապակցությունը, ինչն էլ դիմողի մոտ առաջացրել է թյուր կարծիք, որ դատարանները կիրառել են «Պետական ոչ առետրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածները: **Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանների կողմից որևէ իրավական ակտի կիրառումը դեռևս չի նշանակում տվյալ իրավական ակտում նշված եւ այդ իրավական ակտի ընդունման համար իրավաբանական հիմք հանդիսացող այլ իրավական ակտերի համապատասխան դրույթ-**

**ների կիրառում:** Հետեւաբար, Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի ուժով տվյալ դեպքում դիմողը ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածում, «Պետական ոչ առետրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածներում, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ ենթակետերում, 1-ին մասի երկրորդ պարբերությունում, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ մասերում ամրագրված դրույթների սահմանադրականությունը որոշելու հարցով **իրավասու չէ դիմելու սահմանադրական դատարան:**

Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասին, ապա նշված մասը բաղկացած է երկու նախադասություններից, որոնցից **դիմողն իրականում վիճարկում է միայն երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթը**, այն է՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված»: Ընդ որում, դիմողի կողմից բարձրացված հարցի, այն է՝ օրենսդրությամբ Վճռաբեկ դատարանի դատական ակտի պատճառաբանվածության չափանիշներն ամրագրելու անհրաժեշտության վերաբերյալ **առկա է սահմանադրական դատարանի որոշում:** Մասնավորապես, նման հարց բարձրացվել էր դեռեւս 2009 թվականին «Գեղեցիկ քնար» արտադրական կոոպերատիվի դիմումով, ինչի առնչությամբ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի հուլիսի 21-ի ՍԳՌ-817 որոշմամբ, հղում կատարելով իր ՍԳՌ-765 որոշմանը, որոշել է կարճել գործի վարույթը՝ դիմողին տրամադրելով սահմանադրական դատարանի 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԳՌ-765 որոշումը:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը ֆիզիկական անձին թույլ է տալիս դիմելու սահմանադրական դատարան կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ երբ տվյալ ֆիզիկական անձը վիճարկում է այդ ակտով **իր նկատմամբ կիրառված** օրենքի դրույթի սահմանադրականությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Սույն հոդվածում նշված գործերով դիմում ... կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը»:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «Սահմանադրական դատարանը գործի քննությունը ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում՝ ... եթե դիմողն իրավասու չէ դիմելու սահմանադրական դատարան»:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ

հողվածի 3-րդ կետի՝ «Սահմանադրական դատարանը գործի քննությունը ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում՝ ... եթե սույն օրենքի 68-75-րդ եւ 77-րդ հոդվածներում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով քննության առարկա կարող է հանդիսանալ միայն ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի սահմանադրականության հարցը:

2. ՀՀ հողային օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2001թ. մայիսի 2-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2001թ. հունիսի 4-ին եւ ուժի մեջ է մտել 2001թ. հունիսի 15-ից:

ՀՀ հողային օրենսգրքի՝ «Պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողերի անհատույց (մշտական) օգտագործման տրամադրման կարգը» վերառությամբ 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը սահմանում է. «Պետության սեփականությանը պատկանող հողերն առանց մրցույթի, անհատույց (մշտական) օգտագործման են տրամադրվում՝ ... պետական կամ համայնքային հիմնարկներին ու կազմակերպություններին»:

3. Գործի համառոտ դատավարական նախապատմությունը հետեւյալն է. Երեւանի քաղաքապետի 04.10.2000թ. թիվ 1320 որոշմամբ դիմողին Երեւան քաղաքի Ծիծեռնակաբերդի պուրակում գտնվող սրճարան-տաղավարի վերակառուցման, բարեկարգման եւ կանաչապատման նպատակով, վարձակալության իրավունքով 50 տարի ժամկետով հատկացվել է 6646 քմ մակերեսով հողամաս եւ **09.11.2001թ. կատարվել է դիմողի վարձակալության իրավունքի պետական գրանցում:**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2004թ. հուլիսի 15-ի թիվ 1043-Ն որոշման 3-րդ կետի՝ Երեւանի քաղաքապետը որոշել է Ծիծեռնակաբերդի զբոսայգու սահմաններում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մարզամշակութային կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքերի եւ շինությունների պահպանման եւ սպասարկման համար անհրաժեշտ 19.54 հա մակերեսով հողամասն անհատույց (մշտական) օգտագործման թողնել նշված ՊՈԱԿ-ին՝ վերջինիս վերապահելով Հայաստանի Հանրապետության անունից որպես վարձատու հանդես գալու իրավասություն վերը նշված 19.54 հա մակերեսով հողամասի սահմաններում գտնվող այն հողամասերի առնչությամբ, որոնք համապատասխան վարձակալական պայմանագրերի հիման վրա օգտագործման իրավունքով հատկացված են այլ անձանց: Դրա արդյունքում՝ «Կարեն Դեմիրճյանի անվան

Երեւանի մարզամշակութային կենտրոն» ՊՈԱԿ-ի եւ դիմողի միջեւ 2005թ. հուլիսի 19-ին մեկ տարի ժամկետով կնքվում է դիմողի կողմից արդեն իսկ օգտագործվող՝ վերը նշված 6646 քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր, որի հիման վրա կատարվում է դիմողի վարձակալության իրավունքի պետական գրանցում:

Այնուհետեւ ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1321-Ն որոշման 9-րդ կետի ուժով Երեւանի քաղաքապետն իր՝ 2005թ. նոյեմբերի 2-ի թիվ 2342-Ա որոշմամբ «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մարզամշակութային կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքերի եւ շինությունների պահպանման եւ սպասարկման համար անհրաժեշտ 19.54 հա մակերեսով հողամասը, ներառյալ՝ դիմողի կողմից վարձակալական հիմունքներով օգտագործվող հողամասը, 50 տարով վարձակալական հիմունքներով տրամադրել է «ԲԱՄՕ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրվող «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ին՝ գնման նախապատվության իրավունքով:

Գտնելով, որ ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1321-Ն որոշմամբ խախտվել է իր՝ գնման նախապատվության իրավունքը, դիմողը ՀՀ կառավարության վերը նշված որոշումը մասնակի անվավեր ճանաչելու հայցապահանջով դիմել է ՀՀ վարչական դատարան, որն իր՝ 13.09.2011թ. ՎԳ/0676/05/08 որոշմամբ մերժել է դիմողի հայցը:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 26.01.2012թ. որոշմամբ, վերահաստատելով ՀՀ վարչական դատարանի՝ վերը նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, մերժել է դիմողի վերաքննիչ բողոքը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 21.03.2012թ. որոշմամբ վերադարձրել է դիմողի վճռաբեկ բողոքը:

4. Դիմողը գտնում է, որ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով որ ՀՀ կառավարությանն իրավունք է տալիս պետական սեփականություն հանդիսացող, սակայն այլ անձի անշարժ գույքով ծանրաբեռնված ու այլ անձի օգտագործման ներքո գտնվող հողամասը վարձակալության եւ գնման նախապատվության իրավունքով տրամադրել նաեւ մեկ այլ անձի, հակասում է իրավական որոշակիության սկզբունքին եւ դրա արդյունքում՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 8 եւ 31-րդ հոդվածներին:

Ըստ դիմողի՝ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասը, «որպես այդպիսին օրենք չէ, քանի որ այդ դրույթների բովանդակության մեջ նման իրավունք ուղղակիորեն սահմանված չէ, նման բան գրված չէ եւ իրավունքի սուբյեկտների համար հնարավոր չէ կանխատեսել օրենքի նշված դրույթներով կառավարության նման իրավունքը, ինչը իրավահարաբերության մասնակցի համար անհրաժեշտ է կանխատեսելի իրավական դաշտում գործելու եւ իր իրավունքների պաշտպանության համար»:

5. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները համապա-

տասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին: Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանող կողմը, մասնավորապես, արձանագրում է, որ պետական սեփականություն հանդիսացող գույքը պետական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով հանձնելու հետ կապված իրավահարաբերությունները, ի թիվս այլ իրավական ակտերի, կարգավորվում են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքին՝ պատասխանող կողմն արձանագրում է, որ պետությունն իրավունք ունի իր կողմից հիմնադրվող կազմակերպությանը գույքը հանձնել ինչպես սեփականության, այնպես էլ անհատույց օգտագործման իրավունքով՝ երաշխավորելով տվյալ գույքի նկատմամբ այլ անձանց, մասնավորապես՝ վարձակալների իրավունքները: Այս առումով, ըստ պատասխանող կողմի՝ ՀՀ օրենսդրությունը նախատեսում է երաշխիքներ անձանց իրավունքների պաշտպանության համար: Մասնավորապես, պատասխանող կողմն արձանագրում է, որ ըստ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ հիմնադրի կողմից գույքը պետական կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար, իսկ ըստ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի՝ պետության սեփականությանը պատկանող հողերն առանց մրցույթի, անհատույց (մշտական օգտագործման) տրամադրելիս պահանջվում է հողօգտագործողի գրավոր համաձայնությունը: Անհամաձայնության դեպքում հողօգտագործողի իրավունքները տվյալ հողամասի նկատմամբ կարող են դադարել ՀՀ հողային օրենսգրքով սահմանված կարգով: Այդ կապակցությամբ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ հողային օրենսգրքի 1-ին հոդվածը հղում է կատարում ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, պատասխանող կողմը, հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագրերին վերաբերող մի շարք դրույթներին, գտնում է նաև, որ պայմանագրի դադարումը չի կարող կամայական բնույթ կրել, այլ պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով:

Անդրադառնալով դիմողի կողմից բարձրացված՝ հողամասի վարձակալի՝ հողամասի գնման նախապատվության իրավունքին, պատասխանող կողմն արձանագրում է, որ նշված իրավունքն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ հողային օրենսգրքում:

**6. Հաշվի առնելով դիմողի դիրքորոշումները՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում բացահայտել պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օգտագործման տրամադրելու վերաբերյալ առկա իրավակարգավորումների բնույթը՝ խնդրո առարկա հարցը դիտարկելով սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության համատեքստում:**

Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է սեփականության իրավունքի բովանդակային ծավալում ներառվող երեք իրավագործությունները՝ տնօրինում, տիրապետում, օգտագործում, որոնք սեփականա-

տերը, ըստ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի, իրականացնում է սեփական հայեցողությամբ: Ընդ որում, տնօրինման, տիրապետման, օգտագործման իրավագործությունների բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Սեփականության իրավունքի հասկացությունը եւ բովանդակությունը» վերտառությամբ 163-րդ հոդվածում: Նշված հոդվածի համաձայն՝

«1. Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով եւ այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու իրեն պատկանող գույքը:

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաեւ դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնածի եւ այլ ձեւերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

2. Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող եւ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման եւ տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

3. Սեփականատերը կարող է իր գույքը հանձնել այլ անձի հավատարմագրային կառավարման: Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում սեփականության իրավունքի փոխանցման: Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է գույքը կառավարել ի շահ սեփականատիրոջ կամ նրա կողմից նշված երրորդ անձի»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի դրույթների վերլուծության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից իր՝ 2004թ. հուլիսի 15-ի թիվ 1043-Ն որոշմամբ պետության սեփականությունը հանդիսացող հողամասը «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մարզամշակութային կենտրոն» ՊՈԱԿ-ին անհատույց (մշտական) օգտագործման թողնելը, ինչպես նաեւ իր՝ 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1321-Ն որոշմամբ նույն հողամասը վարձակալական հիմունքներով «ԲԱՍՕ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրվող «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ին գնման նախապատվության իրավունքով տրամադրելը, հետեւաբար նաեւ՝ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի դրույթը գտնվում են ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ իր սեփականությունն իր հայեցողությամբ տնօրինելու իրավագործության բովանդակային ծավալում:

Հինք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի այն դիրքորոշումը, որ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 8 եւ 31-րդ հոդվածներին, քանի որ.

**Ուստի,** ըստ գործի նյութերի՝ դիմողը չի հանդիսանում իր կողմից օգտագործվող հողամասի սեփականատեր,

**Երկրորդ,** իր սեփականությունը հանդիսացող գույքը վարձակալության տրամադրելը՝ անկախ այդ գույքի կամ դրա մի մասի նկատմամբ այլ անձանց իրավունքների առկայությունից, բխում է սեփականատիրոջ կողմից իր սեփականությունն իր հայեցողությամբ տնօրինելու սահմանադրական իրավագործությունից,

**Երրորդ,** ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համահունչ՝ ՀՀ քաղաքացիական եւ հողային օրենսգրքերը թույլատրելի են համարում, մասնավորապես, սեփականատիրոջ կողմից իր գույքը վարձակալության հանձնելն այն դեպքում, երբ այդ գույքը կամ դրա մի մասը ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով՝ միաժամանակ երաշխավորելով տվյալ անձանց իրավունքները,

**չորրորդ,** ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի նպատակը չէ երաշխավորելու պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալի իրավունքներն այն դեպքում, երբ նշված հողամասի նկատմամբ պետության եւ մեկ այլ սուբյեկտի միջեւ կնքվում է վարձակալության պայմանագիր,

**հինգերորդ,** վարձակալի եւ վարձակալության հանձնված գույքի նկատմամբ այլ անձանց իրավունքների երաշխավորմանն են մվիրված, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 206, 207, 627-րդ հոդվածները, ՀՀ հողային օրենսգրքի 47, 48, 49, 64, 66, 78 եւ 118-րդ հոդվածները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Ծիծեռնակ-8» ՄՋԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի, «Պետական ոչ առետրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համաատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի, «Պետական ոչ առետրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածների, ՀՀ հողային

օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ ենթակետերի, 1-ին մասի երկրորդ պարբերության, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ մասերի մասով կարճել:

2. ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**7 մայիսի 2013 թվականի  
ՍԳՈ-1092**





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ԱՐԱՄ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻ  
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.9-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**31 մայիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողների ներկայացուցիչներ Ա. Չեյնայանի եւ Ա. Ղազարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Աշոտ Մանուկյանի եւ Արամ Բարեղամյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Աշոտ Մանուկյանի եւ Արամ Բարեղամյանի՝ 12.10.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Սահմանադրական դատարանի 13.11.2012թ. ՍԳԱՈ-78 աշխատակարգային որոշմամբ որոշվել է «Քաղաքացի Աշոտ Մանուկյանի եւ քաղաքացի Արամ Բարեղամյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործի դատաքննությունն սկսել 2013թ. մարտի 26-ին եւ անցկացնել գրավոր ընթացակարգով:

Սահմանադրական դատարանի 26.03.2013թ. ՍԳԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ որոշվել է բավարարել միավորված գործի դատաքննության օրը մեկ այլ օր փոխադրելու վերաբերյալ դիմողների ներկայացուցիչների միջնորդությունը, գործի դատաքննությունը հետաձգել եւ սկսել 2013թ. ապրիլի 30-ին:

Սահմանադրական դատարանի 30.04.2013թ. ՍԳԱՈ-37 աշխատակարգային որոշմամբ, ելնելով գործով լրացուցիչ նյութերի ուսումնասիրման եւ գործի հանգամանքների համակողմանի բացահայտման անհրաժեշտությունից, որոշվել է գործի դատաքննությունը հետաձգել ու սկսել 2013թ. մայիսի 31-ին եւ այն անցկացնել բանավոր ընթացակարգով, ՀՀ դատական դեպարտամենտից պահանջել՝ մեկշաբաթյա ժամկետում սահմանադրական դատարան ներկայացնել 2012 եւ 2013 թվականների ընթացքում ՀՀ դատարանների կողմից նոր հանգամանքների հիմքով ներկայացված դիմումների հիման վրա ընդունված դատական ակտերը:

Ի կատարումն սահմանադրական դատարանի՝ վերը նշված աշխատակարգային որոշման պահանջի, 07.05.2013թ. սահմանադրական դատարանում ստացվել են 2012 եւ 2013 թվականների ընթացքում ՀՀ դատարանների կողմից նոր հանգամանքների հիմքով ներկայացված դիմումների հիման վրա ընդունված դատական ակտեր:

Լսելով գործով զեկուցողի զեկույցը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց**.

**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքն (այսուհետ՝ օրենսգրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի «Դատական ակտերի վերանայումը» վերտառությամբ 426.9-րդ հոդվածը սահմանում է.

«1. Նոր երեսան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով:

2. Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն

օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա:

3. Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող է բողոքարկվել վճռաբեկ դատարան»:

Օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասը 26.12.08թ. ՀՕ-237-Ն ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն շարադրվել է նոր խմբագրությամբ, իսկ 26.10.11թ. ՀՕ-270-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն օրենսգրքի 426.9-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ:

2. Դիմողները, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 25.02.2011թ. ՍԳ-Ո-943 եւ 15.07.2011թ. ՍԳ-Ո-984 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, կարծում են, որ եթե չապահովվի հիշյալ որոշումներով սահմանված կարգը, այն է՝ սահմանադրական դատարանի որոշումը, որով օրենքի դրույթը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող կամ ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտվել է դրա սահմանադրաիրավական բովանդակությունը եւ սահմանադրական դատարանը գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ, ընդհանուր իրավասության դատարաններում գործի վարույթը նորոգելու համար արդյունավետ ազդակ եւ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանման հիմք չհանդիսանա, ապա ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետով երաշխավորված անձի՝ «սահմանադրական դատարան դիմելու իրավունքը» կլինի ոչ իրական, իսկ սահմանադրական դատարանում սահմանադրաիրավական վեճ նախաձեռնելը կիմաստագրվի:

Վերլուծելով սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-984 որոշման հիման վրա օրենսգրքի 426.9-րդ հոդվածում կատարված օրենսդրական փոփոխությունները՝ դիմողները եզրահանգում են, որ դրանք հակասում են սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմանն առ այն, որ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի վերանայումը պետք է տեղի ունենա *ipso facto* (փաստի ուժով), որը ենթադրում է, որ վերանայման համար միակ պայման պետք է հանդիսանա դատական ակտում հակասահմանադրական նորմի կիրառման փաստը եւ որեւէ այլ հանգամանք, պայման, փաստ կամ փաստարկ որպես այլընտրանք չի կարող առաջ քաշվել կամ սահմանվել ի հավելումն նշված փաստի:

Դիմողները նաեւ գտնում են, որ վերանայման արդյունքում ընդունված նոր դատական ակտում բացառված չէ եզրափակիչ մասի համընկնումը բեկանված դատական ակտի եզրափակիչ մասին, սակայն դա կարող է տեղի ունենալ բացառապես գործի նոր քննության արդյունքում:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող իրավական նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, քանի որ չբացառելով այն հնարավորությունը, երբ գործով նոր կամ նոր երեսան եկած հանգամանքը կա-

րող է ազդած չլինել գործի ելքի վրա, օրենսդիրը, որպես բացառիկ դեպք եւ մի-աժամանակ որպես նոր կամ նոր երեսան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնող անձանց իրավունքների եւ օրինա-կան շահերի պաշտպանության երաշխիք, նախատեսել է, որ դատարանը ծանրակշիռ փաստարկների հիման վրա կարող է չփոփոխել դատական ակ-տի եզրափակիչ մասը: Սակայն, վերջինիս գնահատմամբ, վիճարկվող դրույ-թով նախատեսված՝ նոր կամ նոր երեսան եկած հանգամանքների հիմքով հարուցված վարույթով օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով դա-տական ակտ կայացնելու եւ վերանայված դատական ակտի եզրափակիչ մա-սը չփոփոխելու հնարավորությունը, ըստ էության, վերաբերում է միայն դատական ակտը բեկանելուց հետո գործի նոր քննության արդյունքում կա-յացվող նոր դատական ակտին: Այսինքն՝ երբ վերանայման վարույթի շրջա-նակներում հաստատվում է նոր կամ նոր երեսան եկած հանգամանքի առկայության փաստը, ապա վերանայման վարույթի արդյունքում պետք է ու-ժը կորցրած ճանաչվեն վերանայվող դատական ակտերը: Վերանայման վա-րույթի արդյունքում տվյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան, կամ դատական ակտը բեկանած դատարանը կա-րող է փոփոխել բեկանած ակտը, եթե հաստատված փաստական հանգա-մանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի առնելով արձանագրված խախտման բնույթը եւ դրա ազդեցությունը գործի ելքի վրա: Այսպիսով, նոր երեսան եկած հանգա-մանքների, ՀՀ սահմանադրական դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների առկայությունն ինքնին չի կարող կան-խորոշել գործի ելքը, չի կարող հանգեցնել անձի արդարացման կամ մեղավո-րության: Այս հարցում պետք է հաշվի առնել արձանագրված խախտման բնույթը եւ համարժեք իրավական միջոցներով ուղղել այն՝ «մինչեւ խախտու-մը եղած վիճակի վերականգնման» սկզբունքով:

Վերոգրյալի հիման վրա պատասխանող կողմն իր բացատրությունում գտնում է, որ վերանայման վարույթի արդյունքում գնահատելով խախտման բնույթը եւ դրա ազդեցությունը գործի ելքի վրա՝ պետք է կայացվի նոր դատա-կան ակտ՝ օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով: Ուստի, ըստ պա-տասխանող կողմի, օրենսգրքի վիճարկվող դրույթն այնքանով, որքանով բացառում է անձի սահմանադրական կամ կոնվենցիոն իրավունքները խախ-տող դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը, համա-պատասխանում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 18-րդ, 19-րդ, 93-րդ հոդվածների եւ 101-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին:

**4. Դիմողներից Ա. Մանուկյանի առնչությամբ սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. Ա. Մանուկյանի վերաբերյալ Երեսանի քրեական դատարանի կողմից ԵԿԴ/0106/01/08 քրեական գործով 12.12.2008թ. կայացված դատավճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 10.03.2009թ. որոշմամբ մերժվել է: Վճռա-**

բեկ դատարանն իր՝ 19.05.2009թ. որոշմամբ վերադարձրել է Ա. Մանուկյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը:

Օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասի եւ 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ Ա. Մանուկյանի դիմումի հիման վրա գործով սահմանադրական դատարանը 02.04.2010թ. կայացրել է ՍԳ-Ո-872 որոշումը:

Սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-872 որոշման հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 19.05.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր երեւան եկած հանգամանքով կամ նոր հանգամանքով վերանայելու վերաբերյալ Ա. Մանուկյանի բողոքի հիման վրա գործով ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 07.06.2010թ. որոշմամբ վերադարձրել է Ա. Մանուկյանի՝ վերը նշված բողոքը:

Օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կամ 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ Ա. Մանուկյանի դիմումի հիման վրա գործով սահմանադրական դատարանը 25.02.2011թ. կայացրել է ՍԳ-Ո-943 որոշումը:

Սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-943 որոշման հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 07.06.2010թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր հանգամանքով վերանայելու վերաբերյալ Ա. Մանուկյանի բողոքի հիման վրա գործով ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 06.03.2012թ. որոշմամբ հարուցել է վերանայման վարույթ, որի արդյունքում իր՝ 30.03.2012թ. որոշմամբ մերժել է Ա. Մանուկյանի՝ վերը նշված բողոքը:

Գիմողներին Գ. Բարեղամյանի առնչությամբ սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. Ա. Բարեղամյանի վերաբերյալ Երեւանի քրեական դատարանի կողմից թիվ ԵՔԲԳ/0205/01/08 գործով 14.07.2008թ. կայացված դատավճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 03.10.2008թ. որոշմամբ մերժվել է: Վճռաբեկ դատարանն իր՝ 07.05.2009թ. որոշմամբ վերադարձրել է Ա. Բարեղամյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը:

Սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-923 որոշման հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 07.05.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր երեւան եկած հանգամանքով կամ նոր հանգամանքով վերանայելու վերաբերյալ Ա. Բարեղամյանի բողոքի հիման վրա գործով ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 04.03.2011թ. որոշմամբ վերադարձրել է Ա. Բարեղամյանի՝ վերը նշված բողոքը:

Սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-943 որոշման հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 04.03.2011թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր հանգամանքով վերանայելու վերաբերյալ Ա. Բարեղամյանի բողոքի հիման վրա գործով ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 13.03.2012թ. որոշմամբ հարուցել է վերանայման վարույթ, որի արդյունքում իր՝ 30.03.2012թ. որոշմամբ մերժել է Ա. Բարեղամյանի՝ վերը նշված բողոքը:

5. Գիմումների ուսումնասիրությունից բխում է, որ դիմողներն առաջադրում են նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի շրջանակներում հակասահմանադրական ճանաչված իրավական նորմի կիրառմամբ ընդունված դատական ակտի օրինական ուժի մեջ մնալու իրավական հնարավորության հարցը: Այսինքն՝ դիմողները վիճարկում են օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասը միայն նոր հանգամանքի, այլ ոչ թե նոր երեւան եկած հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթի տեսանկյունից, ուստի սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը քննության առարկա է դարձնում միայն նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի տեսանկյունից:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների կողմից առաջադրված՝ վերը նշված խնդիրը հարկ է քննարկել՝ հաշվի առնելով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի առնչությամբ սահմանադրական դատարանի՝ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները: Միեւնույն ժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում պարզել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում /մասնավորապես՝ ՍԳՈ-701, ՍԳՈ-751, ՍԳՈ-758, ՍԳՈ-767, ՍԳՈ-833, ՍԳՈ-866, ՍԳՈ-871, ՍԳՈ-935, ՍԳՈ-943, ՍԳՈ-984/, ինչպես նաեւ սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում անդրադարձել է նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորումներին առնչվող հիմնախնդիրներին՝ առաջադրելով այն հայեցակարգային դիրքորոշումը, որ սահմանադրական դատարանն ընդունելու՝ անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը:

Սահմանադրական դատարանը գտել է նաեւ, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը **պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը**, որոնց օրենսդրորեն հստակեցումը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

2008 թվականի հոկտեմբերի 21-ի ՍԳՈ-767 որոշման 9-րդ կետում սահմանադրական դատարանը հարկ է համարել ընդգծել նաեւ, որ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման լիարժեք եւ արդյունավետ համակարգի առկայությունն է՛լ ավելի է կարեւորվում քրեական դատավարության շրջանակներում, քանզի քրեական պատասխանատվություն նախատեսող դատական ակտերն անձի իրավունքների եւ ազատությունների փաստացի վիճակի վրա ազդեցության առումով ունեն առանձնակի նշանակություն, մասնավորապէս՝ հաշվի առնելով անձի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելու եւ դրանից բխող հետեւանքների առկայության հանգամանքը:

Սահմանադրական դատարանն իր՝ 15.07.2011թ. ՍԳՈ-984 որոշման 7-րդ կետում արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումները. «... սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի վերանայումը պետք է փաստի ուժով (ipso facto) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանմանը: Ինչ վերաբերում է բեկանման արդյունքում իրավասու մարմնի լիազորություններին, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ պայմանավորված յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններով՝ **տվյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան, կամ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանված ակտը, եթե հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի առնելով կիրառված իրավանորմի՝ «Տահմանադրությանը հակասող ճանաչված լինելու փաստը»:**

Ելնելով մարդկանց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության առումով քննության առարկա իրավակարգավորումների բացառիկ կարեւորությունից, ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Ազգային ժողովի եւ ՀՀ վճռաբեկ դատարանի ուշադրությունը հրավիրելով սահմանադրական դատարանի՝ 15.07.2011թ. ՍԳՈ-984 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների վրա, կրկին արձանագրում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով **ապահովվում է խախտված սահմանադրական եւ/կամ կոնվենցիոն իրավունքների վերականգնումը:** Վերջինս, իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, պահանջում է խախտման արդյունքում տուժողի համար առաջացած բացասական հետեւանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս **վերականգնել մինչեւ իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum):** Այն դեպքում, երբ անձի սահմանադրական եւ/կամ կոնվենցիոն իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչեւ իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է տվյալ անձի համար այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում: Այսինքն, խնդրո առարկա դեպքում, խախտված իրա-

վունքի վերականգնումը **հնարավոր է ապահովել համապատասխան դատական ակտի իրավական ուժը կորցնելու պարագայում**: Հետեւաբար, նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթը՝ որպես անձի խախտված սահմանադրական եւ/կամ կոնվենցիոն իրավունքի վերականգնման միջոց, առաջին հերթին պետք է հանգեցնի իրավունքը խախտած դատական ակտի վերացմանը /բեկանմանը/, եւ սա օրենսդրորեն հստակ ամրագրման անհրաժեշտություն ունի:

Անդրադառնալով Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին R (2000)2 հանձնարարականի դրույթներին՝ ՍԴՈ-984 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաեւ, որ այդ հանձնարարականում որպես *restitutio in integrum* սկզբունքի արդյունավետ երաշխավորման միջոց մատնանշվում է գործի վերաքննությունը, նոր քննությունը, իսկ որպես **գործի վերաքննության հատուկ միջոց է դիտարկվում գործի նորոգումը, այն է՝ գործի վարույթի վերաբացումը**: Ընդ որում, քրեական գործերի պարագայում Եվրոպական դատարանի վճռի հիման վրա քրեական գործի նոր քննությունը, որպես կանոն, հանդիսանում է *restitutio in integrum* սկզբունքի ապահովման միակ միջոցը:

Հիմք ընդունելով խախտված իրավունքների վերականգնման ինստիտուտի վերոհիշյալ բովանդակությունը, ինչպես նաեւ *restitutio in integrum* սկզբունքի բովանդակությունն ու այդ սկզբունքի երաշխավորմանն ուղղված՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի նշված հանձնարարականի վերլուծությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքի հիմքով «դատական ակտի վերանայում» եզրույթն իր բովանդակությամբ համարժեք է «գործի նորոգում», «գործի վարույթի վերաբացում» եզրույթների բովանդակությանը, **եւ դատական ակտի վերանայման հասկացության նշված ընկալումն էլ պետք է կանխորոշի վերանայման վարույթի բովանդակությունը, դրա խնդիրները եւ դրա շրջանակներում լուծման ենթակա հարցերը**: Ըստ այդմ, դատական ակտի վերանայման վարույթի, նույնն է, թե գործի նորոգման վարույթի շրջանակներում պետք է ձեռնարկվեն արդարադատական այնպիսի միջոցառումներ, որոնք կապահովեն գործի վերաքննություն, նոր քննություն, ինչը հնարավոր է միայն հակասահմանադրական նորմ կիրառած՝ օրինական ուժի մեջ մտած **դատական ակտերի բեկանման պայմաններում**: Վերանայման ինստիտուտը կարող է ծառայել իր նպատակին միայն այն դեպքում, երբ ապահովվի տվյալ գործի նոր քննություն՝ կիրառված նորմի հակասահմանադրականության եւ կոնվենցիոն իրավունքի խախտման փաստի առկայության պայմաններում՝ **հաշվի առնելով նաեւ սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նոր հանգամանք հանդիսացող դատական ակտում արտահայտված իրավական դիրքորոշումները**:

Նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է *ipso facto* հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դա-



**տական ակտի եւ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը:**

Սակայն հիմնախնդիրը միայն դրանով անհրաժեշտ լուծում չի ստանում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթը կարող է ապահովել այդ վարույթի սահմանադրաիրավական նպատակի ու խնդիրների իրացումն այն դեպքում, երբ վերանայման վարույթը կանոնակարգող օրենսդրությունը եւ իրավակիրառական պրակտիկան ձեւավորվեն հետեւյալ իրավական մոտեցումներին համապատասխան.

ա/ վերանայման բողոքում նոր հանգամանքի շարադրանքի եւ բողոքին կից՝ նոր հանգամանքը հաստատող ապացույցի առկայությունը, ի լրումն բողոքին ներկայացվող մյուս վավերապայմանների առկայությանը, բավարար հիմք պետք է դիտվի վերանայման վարույթ հարուցելու համար,

բ/ վերանայման պահանջը կարող է մերժվել, եթե միայն հարուցված վերանայման վարույթի շրջանակներում բողոքի քննության արդյունքներով պարզվում է, որ բողոքում մատնանշված հանգամանքը տվյալ դատական ակտը վերանայելու համար հիմք չէ, այսինքն՝ այդ հանգամանքը տվյալ դեպքում նոր հանգամանք չի հանդիսանում,

գ/ եթե վերանայման վարույթի շրջանակներում հաստատվում է նոր հանգամանքի առկայության փաստը, ապա վերանայման վարույթի արդյունքում պետք է ուժը կորցրած ճանաչվեն հակասահմանադրական նորմ կիրառած կամ կոնվենցիոն իրավունքի խախտմամբ ընդունված դատական ակտերը,

դ/ վերոհիշյալ դատական ակտերի՝ ուժը կորցնելու պայմաններում կազմակերպվող՝ գործի կամ բողոքի նոր քննությունը պետք է հաշվի առնի նոր հանգամանք հանդիսացող դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման ինստիտուտի արդյունավետ կիրառումը պահանջում է նաեւ իրավական մշակույթի անհրաժեշտ մակարդակ: Առաջին հերթին խնդիրն առնչվում է մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության հարցում պետության պոզիտիվ պարտականության կատարմանը: Եթե հակասահմանադրական նորմի կիրառմամբ է անձի նկատմամբ դատական ակտ կայացվել, ապա ոչ միայն անխուսափելի պետք է լինի այդ ակտի բեկանումը, այլեւ արդարադատության խնդիրն է նոր հանգամանքներում դատական ճշմարտության բացահայտումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի առաջին մասը միանշանակ սահմանում է, որ «Նոր երեսան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով»: Դրանից բխում է, որ դատարանին լիարժեք հնարավորություն է ընձեռվում վերականգնել անձի խախտված իրավունքը եւ կայացնել հիմնավոր ու իրավունքի գերակայության պահանջներից բխող դատական ակտ:

Նույն հոդվածի 2-րդ մասում շարադրված՝ սույն գործով վեճի առարկա դրույթն առաջին հայացքից վերոնշյալ ընդհանուր մոտեցումից բացառություն է ենթադրում, նկատի ունենալով, որ «Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա»: Նման ձեւակերպումն իրականում իրավունքների պաշտպանության երաշխիքի դեր է կատարում: Առանց այդ դրույթի հնարավոր է, որ նոր երեսան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը հանգի նույնաբովանդակ եզրակացության: Խնդիրն այն է, թե նախորդ եւ վերաքննված դատական ակտով դատարանն **ինչ իրավական բովանդակություն է դրել «նորմի կիրառում» եզրույթի հիմքում:** Դատական պրակտիկայի ուսումնասիրումը վկայում է, որ հաճախ օրենքների տարբեր հոդվածների թվարկումը բովանդակային անհրաժեշտ հիմնավորում չունի, այդ նորմերի իրավական բովանդակության եւ եզրահանգման միջեւ տրամաբանական ու օրգանական կապը թույլ է: **Այն դեպքում, երբ դատարանները կխուսափեն օրենքի նորմերի պարզապես ձեւական թվարկումից եւ օրենքի նորմի կիրառումն իրական բովանդակություն կունենա, անխուսափելի կլինի գործն ամբողջությամբ վերանայելու արդյունքում նաեւ եզրափակիչ մասի բովանդակային վերանայումը:**

Ներկա պայմաններում սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն դատական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմատիվ պարտադրանք՝ նման հնարավոր դեպքերում **ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ:** Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պատշաճ մակարդակ եւ «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հստակեցում, ինչն օրենսդրի եւ դատական համարժեք նախադեպ ստեղծելու խնդիրն է: Նկատի ունենալով, որ այս եզրույթն ամրագրված է նաեւ այլ հոդվածներում /մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մաս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մաս/, ՀՀ Ազգային ժողովը եւ ՀՀ վճռաբեկ դատարանն իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են իրավական որոշակիության սկզբունքի պահանջներից ելնելով ապահովել տվյալ դրույթի միատեսակ ընկալումն ու կիրառումը: Անհրաժեշտ է նաեւ հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անփոփոխ թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին եւ իրավական պետության հիմնարար արժեքներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասը՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի մասով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, հաշվի առնելով, որ վերանայման վարույթի արդյունքում ընդունված նոր դատական ակտի եզրափակիչ մասի չփոփոխվելու հանգամանքը ծանրակշիռ փաստարկներով հիմնավորելու պարտադիր նորմատիվ պահանջը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**31 մայիսի 2013 թվականի  
ՍԳՈ-1099**



## **ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ», «ԱԿԲԱ-ԿՐԵԳԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»,  
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ԵՎ «ԱՐՑԱԽԵՐԱՆԿ» ՓԲԸ-ՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԳԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀՀ ՕՐԵՆՔԻ 26-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**28 հունիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խա-  
չատրյանի, Հ. Նազարյանի (գեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,  
մասնակցությամբ՝

դիմողների ներկայացուցիչներ Հ. Հարությունյանի, Ս. Գիշյանի, Կ. Պետ-  
րոսյանի եւ Մ. Սյուրյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրա-  
վաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մաս-  
նագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սար-  
դարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրա-  
կան դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դրնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հա-  
յաստան», «Ալբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ», «ՎՏԲ-Հայաստան Բանկ» եւ «Ար-  
ցախբանկ» ՓԲԸ-ների դիմումի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր  
կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի՝ Հայաստանի  
Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը  
որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան», «Ալբա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ», «ՎՏԲ-Հայաստան Բանկ» եւ «Արցախբանկ» ՓԲԸ-ների՝ 29.03.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, հետազոտելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքն ու գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունիսի 3-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Հիշյալ օրենքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Վճռի կատարման շրջադարձը» վերտառությամբ 26-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Եթե ի կատար ածված վճիռը բեկանվել է եւ կայացվել է հայրը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր վճիռ, կամ գործի վարույթը կարճվել է, կամ հայրը թողնվել է առանց քննության, ապա դատարանը կայացնում է դատական ակտ՝ գույքը պարտապանին լրիվ կամ մասնակի վերադարձնելու մասին՝ նոր դատական ակտին համապատասխան»:

2. Սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2009թ. հոկտեմբերի 12-ին թիվ ԵԿԴ-0094/01/09 քրեական գործով դատավճիռ է կայացրել, որով Ռումինիայի քաղաքացի Կոռնել-Կոնստանտին Ռոմիկայի Ստենգաչուին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով եւ դատապարտել 12 տարի ժամկետով ազատազրկման, ամբողջ գույքի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի 64.142.000 ՀՀ դրամից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ: Դատարանը սույն գործով դիմողների քաղաքացիական հայցերը բավարարել է՝ որոշելով դատապարտյալից հոգուտ տուժողների բռնագանձել ընդհանուր առմամբ 25.457.000 ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետեւանքով պատճառված վնասի հատուցում: Դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ սույն գործով դիմողներն իրենց քաղաքացիական հայցի բավարարման մասով դատավճռի հարկադիր կատարման համար ստացել են կատարողական թերթեր, որոնք ներկայացրել են ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն, որից տեղեկացել են, որ ՀՀ դատախազությունն առաջինն է այդ գործով ներկայացրել կատարողական թերթ՝ դատապարտյալի ամբողջ գույքի, բայց ոչ ավելի, քան 64.142.000 ՀՀ դրամի բռնագրավման մասին: Սույն գործով դիմողները դիմումներ են ներկայացրել Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ վերը նշված քրեական գործով կայացված դատական

ակտի անհատակությունը մեկնաբանելու պահանջով՝ կապված դատապարտ-  
յալի գույքային պարտավորությունների մասով դատավճռի կատարման եւ  
հանցավոր ճանապարհով ստացված գույքը բռնագրավելու վերաբերյալ դրույթ-  
ների հետ: Դատարանն իր՝ 2010թ. հունիսի 3-ի որոշմամբ մեկնաբանելով կա-  
յացված դատավճռի անհատակությունը՝ նշել է, որ իրեղեն ապացույցներ  
ճանաչված եւ հանցավոր ճանապարհով ստացված գույքը ենթակա է բռնա-  
գրավման՝ անկախ դատապարտյալին կամ որեւէ երրորդ անձի սեփականու-  
թյունը հանդիսանալուց կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից, եւ  
որ այդ գույքը (գումարները, առարկաները) հոգուտ քաղաքացիական հայցվոր-  
ների բռնագրավվել չեն կարող, տուժողներին եւ քաղաքացիական հայցվորնե-  
րին պատճառված վնասների փոխհատուցմանն ուղղվել չեն կարող, այլ՝  
բավարարված քաղաքացիական հայցերի մասով դատավճիռը կատարելիս բռ-  
նագանձումը պետք է տարածվի դատապարտյալին պատկանող այլ դրամա-  
կան միջոցների եւ գույքի վրա: Դիմողների վերաքննիչ բողոքները մերժվել են,  
իսկ վճռաբեկ բողոքները՝ վերադարձվել:

Սույն գործով դիմողների դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դա-  
տարանը քննության առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ  
մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը (ՄԳՈ-983),  
որոշել է, որ այն՝ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանու-  
թյամբ, այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորում տուժողի  
(օրինական տիրապետողի) գույքային շահերի եւ սեփականության իրավուն-  
քի անհրաժեշտ պաշտպանություն, չի համապատասխանում ՀՀ Սահմանադ-  
րության 20-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջ-  
ներին:

Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման հիման վրա դիմող-  
ները նոր հանգամանքի հիմքով 2011թ. հոկտեմբերի 12-ին վերաքննիչ բողոք են  
ներկայացրել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ Կենտրոն եւ Նորք-Մարաշ  
վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հոկտեմ-  
բերի 12-ի ԵԿԳ-0094/01/09 դատավճիռը (2010թ. հունիսի 3-ի նույն դատարանի՝  
դատավճռի անհատակությունը մեկնաբանելու մասին որոշմամբ դրան տրված  
մեկնաբանությամբ) բեկանելու (հանցավոր ճանապարհով ձեռք բերված եւ իրե-  
ղեն ապացույցներ ճանաչված գույքն առաջնահերթ կարգով տուժողներին վե-  
րադարձնելու երաշխիքներ չնախատեսելու մասով) եւ, մասնավորապես՝  
դատական ակտի շրջադարձ կատարելու պահանջով, որը 2011թ. նոյեմբերի  
14-ին մերժվել է: 2012թ. մարտի 30-ին ընդունված վճռաբեկ բողոքի քննության  
արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանել է ՀՀ վերաքննիչ քրեական դա-  
տարանի հիշյալ որոշումը եւ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննություն  
իրականացնելու պահանջով: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012թ. հու-  
նիսի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարվել են, որի համաձայն  
իրեղեն ապացույց ճանաչված դրամական միջոցները համամասնորեն բաշխ-  
վել են տուժողների միջեւ: Միաժամանակ, չի բավարարվել Կենտրոն եւ Նորք-

Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի ակտի շրջադարձի վերաբերյալ (պետական բյուջե բռնագանձված իրեղեն ապացույցների մասով) դիմողների պահանջը: 2012թ. հուլիսի 13-ին այդ հարցով սույն գործով դիմողները դիմում են ներկայացրել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որը թողնվել է առանց քննության՝ դատական ակտի շրջադարձ կատարելն այդ դատարանի իրավասության շրջանակներից դուրս լինելու պատճառաբանությամբ: Իսկ վճռաբեկ բողոքը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. սեպտեմբերի 24-ի որոշմամբ վերադարձվել է:

3. Վիճարկելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից 2012թ. հուլիսի 27-ին ԵԿԳ-0094/01/09 գործով դրան տրված մեկնաբանությամբ, վկայակոչելով միջազգային իրավական փաստաթղթեր եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի 2011թ. հուլիսի 12-ի ՄԳՈ-983 որոշումը՝ դիմողները գտնում են, որ գրկվել են իրենց իրավունքների արդյունավետ եւ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորություններին համահունչ պաշտպանության միջոցներից, ինչը, ըստ դիմողների, հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին: Գտնում են նաեւ, որ գրկվում են խախտված իրավունքների պաշտպանության նպատակով իրենց գործի դատաքննության հնարավորությունից, ինչն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի հետ: Այն իր հերթին հանգեցնում է նաեւ նրան, որ չի պաշտպանվում դիմողների սեփականության իրավունքը եւ իրենք, որպես քրեական գործով տուժողներ, չեն ստանում իրենց պատճառված վնասի հատուցում, որը հակասում է Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասին եւ 20-րդ հոդվածի 5-րդ մասին: Արդյունքում՝ կողմը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից առաջարկված մեկնաբանությունը հանգեցնում է դրա հակասահմանադրականությանը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմերը, ըստ էության, քաղաքացիական դատավարական նորմեր են, եւ որ դրանք կարգավորում են «...միայն ի օգուտ պարտապանի վճռի կատարման շրջադարձի հարցը՝ որպես պարտապանի իրավունքների պաշտպանության եղանակ»:

Ըստ պատասխանողի՝ «Քրեական դատավարությունում դատական ակտի շրջադարձ նախատեսված է այն դեպքերի համար, երբ արդարացման դատավճիռը կամ քրեական գործը կարճելու կամ հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, որի հիման վրա կատարվել է վնասի հատուցում, վերացվել է եւ համապատասխան անձի նկատմամբ նույն գործով կայացվել է մեղադրական դատավճիռ: Այս դեպքում գումարները, որոնք վճարվել են որպես վնասի հա-

տուցում, կարող է առգրավել դատարանը որոշման կատարման շրջադարձման կարգով»:

Պատասխանողը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում բացակայում է դատական ակտի կատարման շրջադարձի հնարավորությունը «...մեկ անձից հօգուտ տուժողի»: Եվ այդպիսի իրավակարգավորումը, ըստ պատասխանող կողմի, բոլորովին էլ պայմանավորված չէ վիճարկվող նորմում «դատավճիռ» եզրույթի բացակայությամբ, այն ուղղված է պարտապանի շահերի պաշտպանությանը: Սակայն, ինչպես գտնում է պատասխանողը, առկա է «...օրենսդրական բաց, որը չի կարգավորում հօգուտ տուժողի դատական ակտի կատարման շրջադարձի հարցը, եւ որի պայմաններում չի ապահովվում անձանց խախտված իրավունքների արդյունավետ վերականգնման հնարավորությունը»:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելիս անդրադառնալ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԳՈ-983 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին այնքանով, որքանով քննության առարկա խնդիրն առնչվում է պետության՝ մասնավոր անձանց սեփականությունն այլոց ապօրինի գործողություններից պաշտպանելու պոզիտիվ պարտականությանը, ինչպես նաեւ այդ պարտականության կատարման շրջանակներում գույքային վնաս կրած անձանց իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանության երաշխավորմանը: Այս առումով վիճարկվող նորմն անմիջականորեն սահմանում է ի կատար ածված վճռի կատարման որոշակի կոնկրետ հիմքերով շրջադարձի կարգն ու պայմանները քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում, որը, ընդհանուր առմամբ, երաշխիք է իրավախախտման հետեւանքով տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության, ինչպես նաեւ Սահմանադրությամբ երաշխավորված արդար դատաքննության, արդարադատության մատչելիության իրավունքի իրացման համար:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ վիճարկվող իրավակարգավորման բովանդակությունից հետեւում է, որ **դատավարական իմաստով** դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել, եթե՝

- առկա է դատարանի ի կատար ածված վճիռ, եւ
- դատարանի ի կատար ածված վճիռն իրավասու դատական ատյանի կողմից քեկանվել է եւ կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր դատական ակտ, գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության:

Վերոհիշյալ իրավապայմանների առկայության դեպքում իրավասու դատարանը կայացնում է դատական ակտ, այսինքն՝ վճիռ կամ որոշում, **գույքը** (շարժական, անշարժ) շահագրգիռ կողմին՝ պարտապանին (այսինքն՝ դատա-



կան նախկին ակտին համապատասխան շահագրգիռ մյուս կողմի հանդեպ պարտականություն կրած անձին) լրիվ կամ մասնակի վերադարձնելու մասին՝ նոր դատական ակտին համապատասխան: Այսինքն, միանշանակ է, որ վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը **կոչված է կարգավորելու քաղաքացիա-իրավական հարաբերություններ**՝ կապված դատական սխալի (նոր կամ նոր ի հայտ եկած կամ այլ հանգամանքների) արդյունքում կայացված դատական ակտի կատարմամբ անձին (անձանց) պատճառված նյութական վնասի վերականգնման (հատուցման) հետ:

Վերոհիշյալ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված են դատական այն ակտի կատարման շրջադարձի պայմանները, որը դեռևս ի կատար չի անվել:

**Նյութական-իրավական իմաստով** դատարանի ի կատար անված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել մասնավոր այնպիսի դեպքերում, երբ առկա են դատարանի կայացրած ակտի բեկանման (լրիվ կամ մասնակի), գործի վարույթը կարճելու, հայցն առանց քննության թողնելու՝ օրենքով նախատեսված հիմքեր, հետևաբար՝ նաեւ այդ ակտն ի կատար անելու արդյունքում առաջացած իրավական հետեւանքները վերացնելու (այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը, գործի հանգամանքներով պայմանավորված շահագրգիռ կողմի (տուժողի) նախկին իրավունքներն ու պարտականությունները վերականգնելու) իրավական անհրաժեշտություն: Այսինքն՝ դատարանի ի կատար անված վճռի կատարման շրջադարձի նպատակն արդար էւ արդյունավետ արդարադատության իրականացման (արդարադատության նպատակների իրականացման) ապահովումն է, իսկ օբյեկտը՝ **գույքային իրավունքն է** եւ դրանով պայմանավորված կողմերի՝ միմյանց հանդեպ ունեցած իրավունքներն ու պարտականությունները, դրանց իրացման իրավաչափությունը՝ քաղաքացիաիրավական տվյալ վեճի շրջանակներում: Այսինքն՝ վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի կիրառմամբ պետությունը, ի դեմս իրավասու դատարանի, նպատակ ունի կատարելու անձանց սեփականությունը պաշտպանելու (այդ թվում՝ այլոց ապօրինի գործողություններից) իր պոզիտիվ պարտականությունը, որը նաեւ արդարադատության իրականացման հիմնական խնդիրներից է:

Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանի ի կատար անված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը կարելի էր երաշխիք է ՀՀ Սահմանադրության ինչպես 8-րդ, 18-րդ եւ 19-րդ, այնպես էլ այլ հոդվածներին համապատասխան անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության առումով, եւ սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում այն ինքնին սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել, եթե օրենսդրությամբ նախատեսված է դրա իրացման արդյունավետ ընթացակարգ, մասնավորապես՝ անիրավաչափ դատական ակտի ի կատար անման հետեւանքով անձանց խախտված իրավունքների ու ազատությունների **արագ, լիարժեք ու արդյունավետ** վերականգնման հնարավորություն: Դիմումին կից ներկայացված փաստաթղթերի եւ, մասնավորապես՝

դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն գործով վեճի առարկայի վերաբերյալ դիմողների հարցադրումներն իրենց բովանդակությամբ պարունակում են **հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման** այդպիսի ընթացակարգերի երաշխավորման անհրաժեշտության փաստացի պահանջ, որը, ինչպես հետևում է գործում առկա դատավարական նախապատմությունից, չնայած անմիջականորեն կապված չի եղել քաղաքացիական գործով ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի կիրառման անհրաժեշտության խնդրի հետ, սակայն իրավակարգավորման ընդհանուր նպատակներով միտված է նաև այդ խնդրի լուծմանը: Հետևաբար, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ հանցագործությամբ անձանց պատճառված նյութական (գույքային) վնասի վերականգնման սահմանադրաիրավական սկզբունքների երաշխավորման, եւ հատկապես՝ իր նախորդ որոշումներով այդ հարցի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխան օրենսդրական կարգավորումների անհրաժեշտության խնդրին:

**6.** Սույն գործով քննության առարկա հարցադրումների շրջանակներում դատավարական հարաբերություններ կարգավորող օրենսդրական ակտերի համալիր ուսումնասիրությունը վկայում է, որ օրենքի կարգավորման մակարդակում բավարար չափով դեռևս առկա չեն իրավախախտմամբ անձին պատճառված նյութական վնասի հատուցման արդյունավետ ընթացակարգեր: Մասնավորապես, սահմանադրական դատարանը կարելու է օրենսդրական կարգավորման մակարդակում հայեցակարգային այնպիսի մոտեցման հետետողական կիրառման անհրաժեշտությունը, որի դեպքում կերաշխավորվի **մեկ գործի շրջանակներում արդարադատական միասնական ընթացակարգով, հնարավորինս պարզեցված կարգով** այդ վնասի արագ, լիարժեք ու արդյունավետ (արդարացի) վերականգնումը (հատուցումը): Այդպիսի իրավապայմանների՝ օրենքով երաշխավորման անհրաժեշտությունը սահմանադրաիրավական պահանջ է, բխում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 14-րդ, 14.1-րդ, 18-րդ, 19-րդ եւ բազմաթիվ այլ հոդվածներից: Այդ երաշխիքների ապահովմամբ արդարադատության իրականացման անհրաժեշտությունը կարելու է նաև սահմանադրական դատարանի որոշումներով (ՄԳՈ-929, ՄԳՈ-983):

Արձանագրելով դրանց առաջնահերթ կարելուությունը, նկատի ունենալով 2011 թվականի հուլիսի 12-ի ՄԳՈ-983 որոշմամբ սույն գործով վեճի առարկա խնդրի հետ կառուցակարգային առումով կապված իրավակարգավորման (ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի) սահմանադրականության հարցի քննության առանձնահատկությունները՝ սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում հատկապես այդ որոշմամբ արտահայտած իր հետևյալ իրավական դիրքորոշումների վրա.

- « ... սեփականության անձեռնմխելիության սկզբունքը ոչ միայն նշանակում է, որ սեփականատերը՝ որպես սուբյեկտիվ իրավունքների կրող, իրավասու է պահանջելու, որպեսզի այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև ենթադրում է պետության պարտականությունը՝ անձի սեփականությունը պաշտպանելու անօրինական ոտնձգություններից: Պետության այս պարտականությունը խնդրո առարկա իրավիճակում պահանջում է **ապահովել արդյունավետ կառուցակարգ հանցագործությունից տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության եւ կրած վնասի վերականգնման համար**»,
- « ... Եթե 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատժատեսակի դեպքում բռնագրավման օբյեկտը բացառապես դատապարտյալի **օրինական** գույքն է, ապա նույն հոդվածի վիճարկվող 4-րդ մասով նախատեսված բռնագրավման օբյեկտն այլ է, քան դատապարտյալի օրինական գույքը, այսինքն՝ այն գույքը, որը ձեռք է բերվել հանցագործությունը կատարելու արդյունքում եւ, որպես կանոն, **հանդիսանում է տուժողի սեփականությունը**»,
- « ... հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման պարագայում բռնագրավման նպատակը հանցավոր ճանապարհով ստացված գույքը դատապարտյալից հետ վերցնելն է, ինչի դեպքում դատապարտյալի սեփականության իրավունքի սահմանափակում տեղի չի ունենում: Հետեւաբար, հաշվի առնելով, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքը, որպես կանոն, հանդիսանում է տուժողի սեփականությունը, այդ գույքի բռնագրավման պարագայում բռնագրավման հասկացության ընկալումը ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, այն է՝ որպես բռնագրավվող գույքի անհատույց անցում ի սեփականություն պետության՝ առանց տուժողի սեփականության իրավունքի վերականգնման, անթույլատրելի է, քանի որ նման ընկալման դեպքում բռնագրավման միջոցառումն անմիջականորեն ուղղվում է տուժողի սեփականության իրավունքի դեմ՝ ոչ իրավաչափորեն սահմանափակելով նրա սեփականության իրավունքը: **Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ գույքն անհատույց պետության սեփականությանը հանձնելն արգելափակում է հանցավոր ճանապարհով ստացված գույքի հաշվին տուժողների գույքային շահերի բավարարման եւ խախտված սեփականության իրավունքի վերականգնման հնարավորությունը**»,
- « ... առանցքային նշանակություն ունի հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման վերաբերյալ վիճարկվող նորմերի կիրառման գործընթացում տուժողներին հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման երաշխավորման խնդիրը, որպես նաև ՀՀ Սահմանադրության մասնավորապես՝ 3-րդ, 20-րդ (5-րդ մաս), 43-րդ (2-րդ մաս) հոդվածներում ամրագրված պետության սահմանադրաիրավական պարտականություն»,
- « ... դրամը, այլ արժեթղթերը եւ մյուս առարկաները, **որոնք օրինական**

**տիրապետումից դուրս են եկել հանցագործության հետեւանքով, հանձնվում են տիրապետողին, սեփականատիրոջը կամ նրանց իրավահաջորդներին ...** հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեթղթերը եւ մյուս առարկաները դատարանի դատավճռով ուղղվում են դատական ծախսերի հատուցմանը, **հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը**, իսկ եթե հայտնի չէ վնաս կրած անձը, որպես եկամուտ՝ հանձնվում են պետությանը: Միաժամանակ, այս դրույթներին համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետում եւ 61-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում ամրագրված են համապատասխանաբար՝ տուժողի եւ քաղաքացիական հայցվորի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես իրեղեն ապացույց վերցված գույքը հետ ստանալու իրավունքը»,

- «Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որեւէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից, որպես պայման չի նախատեսում տուժողի սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան: Նման իրավիճակում ոչ միայն առաջացել են ներհամակարգային հակասություններ, այլև նույնացվել են դատապարտյալի գույքի բռնագրավման՝ որպես պատժատեսակի, եւ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման ինստիտուտները: Վիճարկվող իրավակարգավորումն իրավակիրառական պրակտիկայում ստացել է այնպիսի մեկնաբանություն, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման դեպքում այդ գույքն ամբողջությամբ անհատույց անցնում է ի սեփականություն պետության՝ առանց տուժողի /օրինական տիրապետողի/ գույքային շահերի ու սեփականության իրավունքի պաշտպանության»:

Այսպիսով, սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշմամբ կարեւորելով հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտի իրավաչափ կիրառման երաշխավորումն իրավակիրառական պրակտիկայում՝ նախանշել էր վերջինիս օրենսդրական կարգավորումն ապահովելու սահմանադրաիրավական սկզբունքներ, որոնք երաշխիք կհանդիսանան նաեւ սույն գործով վեճի առարկա խնդրի համալիր եւ արդյունավետ իրավակարգավորման, ինչպես նաեւ դատական հետագա միասնական պրակտիկա ձեւավորելու համար:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումները, նկատի ունենալով ձեւավորված իրավակիրառական պրակտիկան, հաշվի պետք է առնվեն նաեւ ՀՀ դատախազության կողմից՝ իր իրավասության շրջանակներում տուժողների խախտված իրավունքների վերականգնումն երաշխավորելու առումով:

Միաժամանակ, ՀՀ Ազգային ժողովի խնդիրն ու սահմանադրական պար-

տականությունն է՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի պահանջներից, հաղթահարել իրավակարգավորման բացը, սահմանել հստակ դրույթներ քննության առարկա հիմնախնդրի շրջանակներում ապահովելու անձանց խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունը:

7. Միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ հանցագործությանը անձանց պատճառված վնասի հատուցման օրենսդրական իրավակարգավորման տարբեր լուծումներ են առկա: Սակայն դրանց ընդհանրական վերլուծությունը վկայում է հետեւյալ հիմնական մոտեցումների մասին.

- իրավախախտմամբ պատճառված վնասի հատուցման խնդիրը լուծվում է մեկ վարույթի շրջանակներում՝ որոշ դեպքերում շահագրգիռ անձանց հնարավորություն ընձեռելով կատարել դատավարական տեսակի (քաղաքացիական կամ քրեական) ընտրություն,
- իրավախախտմամբ ձեռք բերված որեւէ գույքի՝ դրա օրինական տիրոջը վերադարձնելու պահանջի բավարարման հստակ ընթացակարգի նախատեսում,
- վնասի հատուցման հայց կարող է ներկայացվել գործը քննող միեւնույն դատարանին, որի դեպքում անձը գրկվում է ընդհանուր իրավասության այլ դատարան միաժամանակ դիմելու հնարավորությունից,
- վնասի հատուցման ուղղությամբ քրեական գործով դատարանի գործողությունները, առանց վերապահումների, կարգավորվում են քաղաքացիադատավարական կարգով,
- քրեական գործից բխող քաղաքացիական հայցը քննության է առնվում քաղաքացիական դատավարության կանոններին համապատասխան,
- վնասի հատուցման վերաբերյալ քաղաքացիական հայցը դատարանում կարող է քննության առարկա լինել անկախ քրեական գործով քննության արդյունքներից,
- քաղաքացիական հայցով հիմնական վնասին զուգահեռ կարող է բարձրացվել նաեւ բարոյական վնասի հատուցման պահանջ,
- որոշ դեպքերում վնասի հատուցման պահանջը դատարանում կարող է ներկայացվել նույնիսկ բանավոր կարգով, որը կարող է քննության առնվել անհապաղ,
- եթե վարույթն իրականացվում է քրեական դատավարության շրջանակներում, ապա վնասի հատուցման պահանջը պարտադիր քննության առարկա է միայն տվյալ դատարանում,
- քաղաքացիական դատավարության կարգով վնասի հատուցման հայցը կարող է քննության առարկա լինել, եթե քրեական վարույթի շրջանակներում ձեռք բերված փաստերը բավարար չեն,
- մինչեւ քրեական գործով դատաքննության ավարտը կարող են ձեռնարկվել անհապաղ միջոցներ վնասի հատուցման վերաբերյալ քաղաքացիական հայցի ապահովման ուղղությամբ,

- վնասի հատուցման հայցը կարող է ներառել գույքը վերադարձնելու պահանջ,
- քրեական գործի շրջանակներում վնասի հատուցման վերաբերյալ դատարանի որոշումն այդ մասով կարող է բողոքարկվել քաղաքացիական դատավարության կանոններին համապատասխան:

**8.** Հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ դատարանը՝ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման ապահովման առումով բողոք բերելու միջոցների սահմանումը դիտարկում է պետության լայն հայեցողության շրջանակներում: Այնուամենայնիվ, նշել է, որ երկարաձգված հատուցումը, որով դիմողի վրա անհամաչափ պարտավորություն է դրվում, արդյունքում խախտում է այն հավասարակշռությունը, որը պետք է առկա լինի անձի սեփականության իրավունքի պաշտպանության եւ ընդհանուր շահի միջեւ (CASE OF KRROLY HEGEDJS v. HUNGARY, (Application no. 11849/07), JUDGMENT, November 2011, FINAL, 03/02/2012),

- եկել է այն եզրահանգման, որ փոխհատուցման վերաբերյալ քաղաքացիական հայցը սկզբունքորեն հանդիսանում է դատական պաշտպանության արդյունավետ միջոց (տե՛ս Lukenda v. Slovenia, no. 23032/02, « 59, ECHR 2005 X; Jazbec v. Slovenia, no. 31489/02, «75, 14 December 2006; Varacha v. Slovenia, no. 9303/02, «32, 9 November 2006, and Lakota v. Slovenia, no. 33488/02, «35, 7 December 2006; a contrario, Ommer v. Germany (no. 1), no. 10597/03, «75, 13 November 2008),
- արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆն իրենից ներկայացնում է «դատարանի իրավունքը», որի հետ կապված դատարանի մատչելիությունը, այսինքն՝ քաղաքացիական հայցով դատարանի առջեւ վարույթ հարուցելու իրավունքը հանդիսանում է դրա մի տարրը (տե՛ս The Holy Monasteries v. Greece judgment of 9 December 1994, Series A no. 301-A, pp. 36-37, para. 80): Այնուհետեւ հավելել է, որ, անկասկած, 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը կիրառելի է պետական պաշտոնատար անձանց վատ վերաբերմունքի արդյունքում առաջացած վնասի հատուցման հայցերի նկատմամբ (տե՛ս The Tomasi judgment cited at paragraph 61 above, p. 43, paras. 121-22), (CASE OF AKSOY v. TURKEY, (Application no. 21987/93), JUDGMENT, 18 December 1996):

Հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման խնդրում Եվրոպայի խորհրդի շրջանակներում ներդրված իրավական սկզբունքները հանգում են հետեւյալին, որ՝

- տուժող կողմը պետք է տեղեկացվի քրեական դատավարության ընթացքում վնասի հատուցում, իրավաբանական օգնություն եւ խորհրդատվություն ստանալու իր հնարավորությունների մասին,
- քրեական գործերով դատարանը պետք է հնարավորություն ունենա որո-

շում կայացնել հանցանք կատարած անձի կողմից տուժողին փոխհատուցում տրամադրելու մասին: Այդ նպատակով գոյություն ունեցող սահմանափակումները,

- սահմանները եւ տեխնիկական խոչընդոտները, որոնք կանխում են այդպիսի հնարավորության գործնական իրականացումը, պետք է վերացվեն,
- տուժողի կրած բոլոր վնասների եւ կորուստների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի դատարանին, որպեսզի այն կարողանա պատժի ձեւի եւ չափի վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի առնել.

ա) տուժողի՝ վնասի հատուցում ստանալու անհրաժեշտությունը,

բ) հանցանք կատարած անձի կողմից կատարված վնասի հատուցումը կամ այդ նպատակով գործադրված ջանքերը.

- դատավճռի կատարման փուլում, եթե փոխհատուցումը քրեական սանկցիա է, ապա այն պետք է իրականացվի տուգանքների հավաքման համար սահմանված կարգով եւ առաջնահերթություն ունենա հանցանք կատարած անձի վրա դրված ցանկացած տեսակի այլ ֆինանսական սանկցիայի նկատմամբ: Բոլոր այլ դեպքերում տուժողին պետք է աջակցություն ցուցաբերվի գումարի հնարավորինս հավաքման հարցում (Հանձնարարական No. R (85) 11 on the position of the victim in the framework of criminal law and procedure (Adopted by the Committee of Ministers on 28 June 1985 at the 387th meeting of the Minister's Deputies):

Միաժամանակ, կարելու է նաեւ, որպեսզի՝

- փոխհատուցում ստանալու հարցում, ապահովագրական ընկերությունների կամ այլ կազմակերպությունների կողմից վճարվող գումարների եւ, հնարավորության դեպքում, պետության կողմից տրվող փոխհատուցում ստանալու հարցում աջակցություն տրամադրվի (Հանձնարարական Rec(2006)8 of the Committee of Ministers to member states on assistance to crime victims (Adopted by the Committee of Ministers on 14 June 2006 at the 967th meeting of the Ministers' Deputies),
- պետությունները ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ ապահովելու համար տուժողների քաղաքացիական պաշտպանության միջոցների մատչելիությունը եւ ապահովեն ողջամիտ ժամկետում իրավասու դատարանների մատչելիության իրավունքը եւ համապատասխան դեպքերում՝ իրավաբանական օգնությունը,
- պետությունները սահմանեն տուժողների համար քրեական դատավարության շրջանակներում հանցագործություն կատարած անձից վնասի փոխհատուցում հայցելու ընթացակարգեր: Տուժողներին նաեւ պետք է տրամադրվի խորհրդատվություն եւ աջակցություն այդ հայցերը կազմելու եւ սահմանված վճարները գանձելու ուղղությամբ,
- փոխհատուցումը հատկացվի ֆիզիկական եւ բարոյական վնասների վերականգնման եւ բուժման համար (Rec(2006)8 հանձնարարականի հավելված):

9. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի առարկա խնդրի օրենսդրական կարգավորման մակարդակում պետք է հաշվի առնվեն նաև միջազգային պրակտիկայում հաստատագրված վերոհիշյալ հայեցակարգային մոտեցումները՝ որպես ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի դրույթներից անմիջականորեն բխող պահանջներ:

Այսուհանդերձ, մինչև օրենսդրական հստակեցումները, ինչի անհրաժեշտությունն ընդունում է նաև սույն գործով պատասխանող կողմը, պետք է երաշխավորվի ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության անունից 14.06.2012թ. ընդունած որոշման կատարումը՝ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հոկտեմբերի 12-ի դատավճիռը քաղաքացիական հայցի մասով բեկանելու եւ իրեղեն ապացույց ճանաչված 25.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ գումարը եւ 4.040.000 ՀՀ դրամ գումարը համամասնորեն տուժողներին բաշխելու վերաբերյալ: Գործի նյութերից ակնհայտ է, որ առկա իրավիճակը վկայում է իրավունքի գերակայության սկզբունքի իրացմանը ձեռնարկած մոտեցում դրսևորելու մասին:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության տեսանկյունից, թերևս, գործուն պետք է լինի նաև ՀՀ դատախազության դերակատարությունը, քանի որ վերջինիս կողմից ներկայացված կատարողական թերթի հիման վրա են դատարանի կողմից դիմողներին հատկացված փոխհատուցման միջոցները նախապես փոխանցվել ՀՀ պետական բյուջե:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Գատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**28 հունիսի 2013 թվականի  
ՍԳՈ-1102**





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԲԱՖՅԻ Կ. ՌԻԶԱՐԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 18-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ  
5-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ 26-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ  
ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Քաղ. Երևան**

**16 հուլիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ս. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Կ. Մեծլումյանի /գրավոր ընթացակարգի շրջանակներում/,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Բաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 26-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Րաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի՝ 07.03.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ ընտրական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1.** ՀՀ ընտրական օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թվականի մայիսի 26-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2011 թվականի հունիսի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2011 թվականի հունիսի 26-ից:

Օրենսգրքի՝ «Նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները» վերտառությամբ 18-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն ընտրություն նշանակվելուց հետո կարող են կազմավորել ընտրական շտաբներ: Ընտրական շտաբները չեն կարող տեղակայվել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում (բացառությամբ այն դեպքերի, երբ շտաբները զբաղեցնում են այդ մարմիններին չպատկանող տարածք), ինչպես նաեւ այն շենքերում, որտեղ գործում են ընտրական հանձնաժողովները: Ընտրական շտաբների վրա տեղադրված ցուցանակները սույն օրենսգրքի իմաստով քարոզչական տպագիր նյութեր չեն համարվում, եթե դրանք չեն ներառում թեկնածուին, կուսակցությանը (կուսակցության դաշինքին) կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կոչեր, դրանց թիվը չի գերազանցում ընտրության համար կազմավորված ընտրական տեղամասերի թիվը, եւ յուրաքանչյուր պատասառի (ցուցանակի) մակերեսը չի գերազանցում 6 քառակուսի մետրը»:

Օրենսգրքի՝ «Նախընտրական հիմնադրամի միջոցների օգտագործումը» վերտառությամբ 26-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման, քարոզչական պատասառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր եւ այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման ֆինանսավորման համար օգտագործում են միայն նախընտրական հիմնադրամի միջոցները: Այդ նպատակով նախընտրական հիմնադրամից կատարվող ծախսերի առավելագույն չափը սահմանվում է սույն օրենսգրքով:

Սույն մասում նկարագրված ապրանքներն ու ծառայությունները, եթե մատուցվել են շուկայական արժեքից պակաս գնով կամ ձեռք են բերվել մինչեւ նախընտրական հիմնադրամի ձեւավորումը, ապա իրենց շուկայական արժեքով ներառվում են նախընտրական հիմնադրամի ծախսերում»:

Վիճարկվող հոդվածներում փոփոխություններ եւ լրացումներ չեն կատարվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. դիմողի ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանը 25.02.2013 թվականին դիմել է ՀՀ ԿԸՀ՝ պահանջելով, որպեսզի «...ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը իր լիազորությունների եւ պարտականությունների սահմաններում ուսումնասիրի վերը նշված փաստերը եւ դիմի դատարան, ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի գրանցումն ուժը կորցրած ճանաչած համարելու համար»։ Նշված դիմումով դիմողի ներկայացուցիչը ԿԸՀ-ին խնդրել է նաեւ ՀՀ Սահմանադրության 2-րդ, 4-րդ հոդվածների, 18-րդ եւ 19-րդ հոդվածների, ինչպես նաեւ օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող հոդվածների համաձայն դիմել դատարան՝ ՀՀ Նախագահի թեկնածու գործող Նախագահի թեկնածությունն ուժը կորցրած ճանաչելու պահանջով։ 25.02.2013 թվականին ԿԸՀ-ն ընդունել է թիվ 60-Ա որոշումը, որով արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ Նախագահի թեկնածուի ընտրական շտաբների վրա նրա անունով, ազգանունով եւ կարգախոսով պաստառները ոչ թե քարոզչական նյութ են, այլ՝ ցուցանակ, հետեւաբար՝ դրանց, ինչպես նաեւ ընտրական շտաբների տարածքների վարձակալության գումարները չպետք է կատարվեն հիմնադրամի միջոցների հաշվին եւ ներառվեն այդ ծախսերի մեջ։ Որպես իրավական հիմնավորում՝ ԿԸՀ-ն հղում է կատարել օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասին։

Դիմողի կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ վիճարկելու համար ԿԸՀ անգործությունը, ինչպես նաեւ ԿԸՀ 25.02.2013թ. թիվ 60-Ա որոշումը։ ՀՀ վարչական դատարանը, օրենսգրքի վիճարկվող նորմերին տալով ըստ էության նույն մեկնաբանությունը, ինչ ԿԸՀ-ն, իր՝ 04.03.2013թ. որոշմամբ հայցը մերժել է։

3. Դիմողի կարծիքով՝ օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը եւ 26-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 4-րդ եւ 6-րդ հոդվածներին՝ հետեւյալ հիմնավորմամբ. քարոզչական պաստառները գերազանցել են 1600-ը, քանի որ «ընտրական շտաբ» անվանված քարոզչական տարածքներում քարոզչական պաստառները փակցված են եղել ոչ միայն դրսի կողմից, այլ նաեւ՝ ներսում։ Արդյունքում՝ Նախագահի թեկնածու գործող Նախագահը հնարավորություն է ստացել իր նախընտրական քարոզարշավի համար թույլատրված առավելագույն 100.000.000 դրամ գումարը կրկնակի եւ եռակի անգամ գերազանցող գումար ծախսել, ինչը նրա գրանցումն անվավեր ճանաչելու հիմք է, ինչպես նաեւ նրան անհամեմատ շահեկան վիճակի մեջ է դրել Նախագահի մյուս թեկնածուների, այդ թվում իր՝ Րաֆֆի Հովհաննիսյանի համեմատ։ Հղում կատարելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 19.02.2013թ. միջանկյալ զեկույցին՝ դիմողն արձանագրում է, որ նշված զեկույցում նույնպես արձանագրվել է, որ նշված տարածքները քարոզչական տարածքներ են, եւ դրանց վարձավճարները պետք է ներառվեն քարոզչական ծախսերի մեջ, եւ որ ԿԸՀ-ն որոշում էր կայացրել, ըստ որի՝ նախընտրական շտաբների վարձակալությունը հանվել էր ծախսերի ցուցակից, որոնք պետք է ընդգրկվեին թեկնածուների ֆինանսական հայտարարագրերում։

Ըստ դիմողի՝ քանի որ «թեկնածուի անուն ազգանունով եւ կարգախոսով պաստառը, թեկուզեւ ընտրական շտաբ նշումով, իրականում քարոզչական պաստառ է, իսկ դրանց համար վարձակալած տարածքներն էլ քարոզչական տարածքներ են, ուստի դրանց համար ծախսերը պետք է կատարվեն ընտրական հիմնադրամի միջոցների հաշվին, բխում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ եւ 4-րդ հոդվածներից, որոնք inter alia իրավական պետությունում երաշխավորում են ազատ եւ հավասար ընտրություններով իշխանությունների ձեւավորումը, որպիսի սկզբունքը խախտվում է ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով», որի կիրառմամբ կատարված չարաշահումներն անհավասար պայմաններ են ստեղծել ընտրություններին մասնակցության համար՝ գործող Նախագահին դնելով շահեկան վիճակի մեջ:

Դիմողը 02.07.2013թ. սահմանադրական դատարան ներկայացրած միջնորդությամբ միջնորդում է «նշանակել կոմպլեքս, հանձնաժողովային կամ այլ փորձաքննություն:

- պարզելու համար. ընտրական շտաբ գրառմամբ, սակայն նախագահի թեկնածուի /տվյալ դեպքում՝ Սերժ Սարգսյանի/ անվան նշմամբ եւ «Դեպի ապահով Հայաստան» կարգախոսով, քարոզչական պաստառների ոճով եւ գունային նույն համադրությամբ պաստառները ինչպիսի ներգործություն են ունենում անձի /գիտակցականի եւ ենթագիտակցականի/ վրա, մասնավորապես այդ պաստառները քարոզչական պաստառի քարոզչական բնույթի ներգործություն ունեն թե ոչ.
- ինչպես նաեւ պարզելու համար. թե նշված պաստառներն ինչպիսի ազդեցություն ունեն բնակավայրերի կենտրոնական, ամենաբանուկ մասերում՝ մշակույթի տների, համայնքային եւ պետական պատկանելության, տեղական ինքնակառավարման եւ պետական մարմինների զբաղեցրած շենքերի, խանութների եւ քարոզչական պաստառներ փակցնելու համար արգելված այլ տարածքների վրա փակցված լինելով»:

**4. Պատասխանողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:**

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողն արձանագրում է, որ թեեւ ընտրական շտաբների ստեղծումը եւ դրանց համար որոշակի միջոցների ծախսումն անուղղակիորեն առնչվում են նախընտրական քարոզչությանը, այնուամենայնիվ, դրանք նախընտրական քարոզչություն չեն, քանի որ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասում օրենսդիրն օգտագործում է «սույն օրենսգրքի իմաստով» բառակապակցությունը, ինչը խտրական չէ եւ հավասարապես տարածվում է բոլոր թեկնածուների վրա, իսկ ՀՀ ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի բովանդակությունը տարատեսակ մեկնաբանություններից գերծ պահելու համար ՀՀ ԿԸՀ-ն 2012թ. փետրվարի 16-ին ընդունել է թիվ 33 որոշումը, որտեղ պարզաբանվել է, որ այն դահլիճների կամ տարածքների վարձակալման համար կատարված ծախսերը, որոնք չեն օգտագործվում քարոզչություն իրականացնելու համար, ՀՀ ընտրական օրենսգրքի 26-րդ հոդ-

վածի 2-րդ մասով նախատեսված ծախսեր չեն հանդիսանում եւ ենթակա չեն հայտարարագրման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանողը գտնում է, որ դիմողն առաջ է քաշում իրավակարգավորման՝ իր համար ընդունելի տարբերակ, որը նպաստավոր կլինի իր պահանջների բավարարման տեսանկյունից, եւ որ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց:

Պատասխանողը կարծիք է հայտնում նաեւ, որ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված են բավարար երաշխիքներ, ի թիվս այլնի, ընտրություններին մասնակցող բոլոր թեկնածուների համար ընտրական գործընթացի ընթացքում հավասար հնարավորություններ ապահովելու տեսանկյունից, եւ գտնում է, որ դիմողի բարձրացրած հարցի իրավական կարգավորումն օրենսդրի հայեցողության շրջանակներում է:

**5.** Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դրանում ներկայացված փաստարկների հիմքում հիմնականում ընկած են հետեւյալ երկու հարցադրումները.

- ինչո՞ւ ԿԸՀ-ն չի պարզել ընտրական շտաբների վրա տեղադրված պաստառների քանակը, որից հետո, եթե այն գերազանցել է ընտրական տեղամասերի թիվը, դրանց պատրաստման համար ծախսերը չի ներառել նախընտրական հիմնադրամի հաշվին կատարվող ծախսերի մեջ,
- ինչո՞ւ ընտրական շտաբների վարձակալության գումարները չեն ներառվել նախընտրական հիմնադրամի հաշվին կատարվող ծախսերի մեջ:

Բացի դրանից, դիմող եւ պատասխանող կողմերի փաստարկների համարված վերլուծությունը վկայում է, որ քննարկման առարկան ոչ թե վիճարկվող դրույթների սահմանադրականությանն է առնչվում, այլ իրավակարգավորման շրջանակների ու իրավակիրառման խնդիր է: Դիմողն ինքն է պնդում, որ ոչ թե վիճարկվող նորմն ինքնին, այլ, իր կարծիքով, չարաշահումներն են անհավասար պայմաններ ստեղծել ընտրություններին մասնակցության համար: Դրա մասին է վկայում նաեւ դիմողի միջնորդությունը սահմանադրական դատարանի կողմից մասնավորապես՝ սոցիոլոգների, հոգեբանների, գովազդի մասնագետների ընդգրկմամբ փորձաքննություն նշանակելու մասին:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի իրավասության շրջանակներում է իրավունքի գերակայության եւ իրավական որոշակիության սկզբունքներից ելնելով օրենսգրքի՝ «Նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները» վերտառությամբ 18-րդ հոդվածի 5-րդ մասի իրավական բովանդակության սահմանման եւ դրա հետագա հնարավոր հստակեցման խնդիրը:

Դիմողը սահմանադրական նորմ-սկզբունքների ընդհանուր վկայակոչմամբ փորձ է անում վեճի առարկա նորմերի ընկալման ու կիրառման հարցը տեղափոխել սահմանադրական վեճի հարթություն, սակայն իր իսկ բերած փաստարկները վկայում են, որ իրական վեճը վերաբերում է ՀՀ Ազգային ժողովի եւ ՀՀ ԿԸՀ-ի իրավասությունների շրջանակներում դիմողի ակնկալիքներին հա-

մարժեք հնարավոր լուծում պահանջող հարցերին: Իսկ օրենսգրքի՝ «Նախընտրական հիմնադրամի միջոցների օգտագործումը» վերտառությամբ 26-րդ հոդվածի 2-րդ մասը դիմողի կողմից բացառապես դիտարկվում է դրա կիրառման իրավաչափության տեսանկյունից:

ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, իր 17.03.2009թ. ՍԳԱ-Ո-21 որոշման 8-րդ կետում արտահայտել է հետեյալ իրավական դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դիմումը չի բավարարում հիմնավորված լինելու պահանջը նաև այն դեպքում, երբ դիմողի հիմնավորումները կապված են ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի հետ, այլ վերաբերում են պարզապես այդ օրինադրույթի կիրառման իրավաչափության հարցին: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեռնկանորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Հաշվի առնելով սույն գործի շրջանակներում կողմերի բերած փաստարկները, դիմողի միջնորդության բնույթը եւ հիմք ընդունելով նաև սահմանադրական դատարանի նախորդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա գործի վարույթը ենթակա է կարճման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 60-րդ հոդվածների 1-ին կետերի հիմքերով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Քաղաքացի Բաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 26-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**16 հուլիսի 2013 թվականի  
ՍԳՈ-1105**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» ՍՊԸ-Ի ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 30.2-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 18-ՐԴ  
ԵՎ 19-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**10 սեպտեմբերի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի,  
Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,  
Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝

դիմողի ի պաշտոնե ներկայացուցիչներ՝ «Նոյյան տապան» ՍՊԸ-ի տնօրեն  
Ս. Դանիելյանի, փաստաբան Հ. Եզանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Մարդարյանի,

հրավիրված՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի  
նախագահի տեղակալ Վ. Միրումյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի  
1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի  
մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց միատում գրավոր ընթացակարգով քննեց «Նոյյան տապան» ՍՊԸ-ի  
դիմումի հիման վրա՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
30.2-րդ հոդվածի 18-րդ եւ 19-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության  
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝  
գործը:

Գործի քննության առիթը «Նոյյան տապան» ՍՊԸ-ի՝ 22.04.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, լսելով ՍԳ նիստին հրավիրված՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Միրումյանի պարզաբանումները, հետազոտելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց**.

**1.** «Հարկերի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997 թվականի ապրիլի 14-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1997 թվականի մայիսի 12-ին եւ ուժի մեջ է մտել 1997 թվականի մայիսի 30-ից:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքը՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթներով, լրացվել է 2011 թվականի մայիսի 11-ին ընդունված ՀՕ-154-Ն օրենքով, որն ստորագրվել է ՀՀ Նախագահի կողմից 2011 թվականի մայիսի 30-ին եւ ուժի մեջ մտել 2011 թվականի հունիսի 13-ին:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի՝ դիմողի կողմից վիճարկվող 18-րդ եւ 19-րդ մասերը սահմանում են՝

«Հարկ վճարողի չկատարած՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների գանձման նպատակով հարկային մարմնին իրավունք ունի պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով ձեռք բերելու հարկ վճարողի պահանջի իրավունքը եւ ստացված գումարներն ուղղելու հարկ վճարողի պարտավորությունների մարմանը:

Ընդ որում, հարկային մարմնին է անցնում իրավունքի անցման պահին առկա ծավալով պարտավորության (ներառյալ՝ ապառքը եւ դրա նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերը) պահանջի իրավունքը, իսկ պահանջի իրացման պահին, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տույժերի հաշվարկման ժամկետները, կատարվում է պարտավորությունների վերահաշվարկ»:

**2.** Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մյասնիկյանի հարկային տեսչությունը (իրավահաջորդ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչություն) 30.11.2011 թվականին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Նոյյան տապան» ՍՊԸ-ի՝ 24.218.500 /քսանչորս միլիոն երկու հարյուր տասնութ հազար հինգ հարյուր/ դրամ բռնագանձելու պահանջի մասին:

Վերջինս առարկել է ներկայացված հայցի դեմ այն պատճառաբանությամբ, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18-րդ եւ 19-րդ մասե-



րի համաձայն՝ հարկային մարմնի եւ ՍՊԸ-ի միջեւ 10.11.2011 թվականին եւ 23.01.2012 թվականին կնքվել են «Պահանջի իրավունքը զիջելու մասին» պայմանագրեր:

Համաձայն 10.11.2011 թվականին կնքված պայմանագրի՝ հարկային մարմնին է փոխանցվել «Գործարար տիեզերք» ՍՊԸ-ի հանդեպ «Նոյյան տապան» ՍՊԸ-ի ունեցած 16.000.000 /տասնվեց միլիոն/ դրամի պահանջի իրավունքը, իսկ համաձայն 23.01.2012 թվականին կնքված պայմանագրի՝ «Հեյդելբերգ» ՍՊԸ-ի հանդեպ ունեցած 4.651.875 /չորս միլիոն վեց հարյուր հիսունմեկ հազար ութ հարյուր յոթանասունհինգ/ դրամի պահանջի իրավունքը:

ՀՀ վարչական դատարանը բավարարել է հարկային մարմնի հայցն այն պատճառաբանությամբ, որ ցեսիայի պայմանագրերով «չի սահմանափակվել պատասխանողի 08.11.2011թ. դրությամբ հարկային պարտավորությունների բռնագանձման պահանջով դատարան դիմելու հայցվորի իրավունքը»:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը մերժել է ներկայացված վերաքննիչ բողոքը՝ թողնելով վարչական դատարանի վճիռն ուժի մեջ: Մեկնաբանելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «օրենսդիրն իրավունք վերապահելով հարկային մարմնին պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով ձեռք բերելու հարկ վճարողի պահանջի իրավունքը, այն չի նույնացնում հարկային պարտավորության կատարման հետ»: Միաժամանակ, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն արտահայտել է նաեւ իրավական դիրքորոշում առ այն, որ «պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով հարկ վճարողի պահանջի իրավունքը ձեռք բերելու հանգամանքը չի սահմանափակում հարկային մարմնի իրավունքը կետանցված հարկային պարտավորությունները բռնագանձելու համար հայցադիմում ներկայացնել դատարան»:

ՀՀ վճարեկ դատարանը վերադարձրել է վճարեկ բողոքը:

**3. Դիմողը գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը, քանի որ «Օրենքը, հարկատու-հարկահավաք հարաբերություններում նախատեսելով պարտավորությունների կատարման արտադատարանական մեխանիզմ, միաժամանակ չի բացառել Ցեսիայի պայմանագրի գործողության ժամկետում Հարկային մարմնի կողմից հայցով դատարան դիմելու հնարավորությունը»:**

Դիմողը նաեւ գտնում է, որ վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը, քանզի գրկում են անձին իր սեփականության իրավունքից: Դիմողը, մասնավորապես, նշում է հետեւյալը. «Օրենքի համաձայն կնքված Ցեսիայի պայմանագրերի գործողության ընթացքում ակնհայտ է, որ Ընկերությունը գրկվել է զիջված պահանջի իրավունքը տնօրինելու հնարավորությունից: Ավելին՝ Ցեսիայի պայմանագրերի 2.8. կետերի համաձայն Ցեդենտն իրավունք ունի միակողմանի հրաժարվել սույն պայմանագրից միայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավո-

րություններ չունենալու դեպքում: Մինչդեռ նույն պայմանագրերի 2.7. կետի համաձայն Հարկային մարմինը իրավունք ունի ցանկացած պահի դադարեցնել պայմանագրի գործողությունը»: Դիմողը նաև նշում է, որ՝ «եթե ... հաշվի առնենք, որ Օրենքը անկախ Ցեսիայի պայմանագրի առկայությունից հնարավորություն է տալիս Հարկային մարմնին նույն պարտավորության համար բռնագանձման հայց ներկայացնել, իսկ միաժամանակ Ցեսիայի պայմանագրի կնքմամբ գրկել է Ընկերությանը փոխանցված պահանջը տնօրինելու հնարավորությունից, ապա ակնհայտ է, որ տվյալ դեպքում բացակայում է «արդարացի հավասարակշռություն» հանրության ընդհանուր շահի /պետական բյուջեի եւ անհատի /Ընկերության/ հիմնարար իրավունքի /փոխանցված պահանջի նկատմամբ սեփականության իրավունքի/ միջեւ, ինչը չի բխում Սահմանադրության 3 հոդվածի պահանջներից»:

Դիմողը վկայակոչում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի կիրառման մի քանի հարցերի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 16.04.2012թ. թիվ 15 պաշտոնական պարզաբանումը, որի 1-ին մասի համաձայն՝ «... Պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով հարկ վճարողի պահանջի իրավունքի անցումը հարկային մարմնին չի դադարեցնում հարկ վճարողի նկատմամբ օրենքով սահմանված կարգով, չափերով եւ ժամկետներում տույժերի եւ տուգանքների հաշվարկումը»: Դիմողը գտնում է, որ նման կանոնակարգումը հակասում է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածին, քանի որ «Ընկերությունը կարող է պատասխանատվություն կրել միայն այդ պահին /Ցեսիայի պայմանագրերի կնքման պահին/ գոյություն ունեցող հարկային պարտավորության ծավալի եւ պայմանների շրջանակում եւ չի կարող լրացուցիչ հարկային բեռ ստանձնել Հարկային մարմնին զիջված պահանջի չկատարման կետանցի համար»:

Դիմողը նաև նշում է, որ «վիճարկվող հոդվածի նորմերն առաջացնում են իրավական անորոշություն եւ պայմաններ ստեղծում վիճարկվող հոդվածի կամայական եւ տարածական մեկնաբանման ու կիրառման համար, չեն բացահայտում «վերահաշվարկ», «պահանջի իրացման պահ» բառակապակցությունների բովանդակությունը, ինչն իր հերթին վտանգում է Ընկերության իրավունքների սահմանափակման սահմանադրական սկզբունքների իրացումը, հակասության մեջ է դնում այդ նորմը ՀՀ Սահմանադրության հետ՝ խախտելով ՀՀ Սահմանադրության 42 եւ 45 հոդվածները»:

**4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18-րդ եւ 19-րդ մասերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 8, 18, 19, 31, 42 եւ 45-րդ հոդվածների պահանջներին:**

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանող կողմը նշում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածով նախատեսված պահանջի իրավունքի զիջման դրույթները կոչված են օժանդակելու այն տնտեսվարող սուբյեկտներին, որոնք ունեն պետական բյուջեի նկատմամբ չկատարված հար-

կային պարտավորություններ եւ միաժամանակ դեբիտորական պարտքեր՝ դրանք հարկային մարմնի օգնությամբ եւ միջամտությամբ հարկային պարտավորությունների կատարմանն ուղղելու առումով, քանի որ հարկային մարմնի եւ հարկ վճարողի միջեւ ցեսիայի պայմանագիրը կնքվում է օրենքի հիման վրա, եւ պայմանագրի կողմը հարկային մարմինն է, որն օժանդակում է հարկ վճարողին կատարելու իր հարկային պարտավորությունները: Այսինքն, ըստ պատասխանողի, ցեսիայի պայմանագրով պահանջի իրավունքի զիջման մեխանիզմի ամրագրումն օրենսդիրը կատարել է հօգուտ հարկ վճարողի՝ նրան հնարավորություն տալով մարելու իր հարկային պարտավորությունները նույնիսկ այն ժամանակ, երբ տվյալ պահին հարկ վճարողը չունի միջոցներ, բայց ունի դեբիտորական պարտքեր: Պահանջի իրավունքն իրացնելուց հետո, երբ պարտապանից ստացված գումարներն ուղղվում են հարկ վճարողի հարկային պարտավորությունների մարմանը, այդ մասով հարկ վճարողի հարկային պարտավորությունները դադարում են:

Պատասխանողը գտնում է, որ թեւեւ հարկային հարաբերություններում բացակայում է կողմերի իրավահավասարությունը եւ այս ոլորտում կարող են գործել գրեթե ֆորմուլյար (տիպապայմանագրային) իրավունքի դրույթները՝ հարաբերությունների մեջ մտնելու հարաբերական ազատությունն առանց հարաբերության պայմանների փոփոխման իրավունքի, այդուհանդերձ, պահանջի իրավունքը զիջելու պայմանագիրը կնքվում է կողմերի փոխադարձ եւ ազատ կամահայտնությամբ, կողմերն են որոշում պայմանագիր կնքել-չկնքելու հարցը, եւ այդ պայմանագրի հիման վրա էլ կարգավորվում են կողմերի փոխհարաբերությունները:

**5. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմերի սահմանադրականությունը պարզելու համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ անդրադառնալ դրանցով նախատեսված ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը եւ վերաբերելի օրենսդրական կարգավորումներին: Այսպես, պահանջի զիջման պայմանագրի /ցեսիայի/ ինստիտուտը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգրք)՝ «Անձանց փոփոխվելը պարտավորության մեջ» վերտառությամբ 25-րդ գլխով, որի 397-րդ հոդվածը, մասնավորապես, սահմանում է. «Պարտատիրոջը պարտավորության հիման վրա պատկանող իրավունքը (պահանջը) կարող է նրա կողմից այլ անձի փոխանցվել գործարքով (պահանջի զիջում) կամ անցնել այլ անձի՝ օրենքի հիման վրա»: **Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմում հիշատակված ցեսիայի պայմանագիրը քաղաքացիաիրավական պայմանագիր է, որի նկատմամբ կիրառելի են ցեսիայի ինստիտուտին վերաբերելի ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթները, իսկ տվյալ օրենսդրական դրույթների հիման վրա առաջացած իրավահարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ, անկախ այն հանգամանքից, որ դրանք առնչվում են նաեւ հարկային իրավահարաբերությունները կանոնակարգող նորմերին:** Ինչպես վկայում է**

օրենսգրքի կանոնակարգումը՝ ցեսիայի բովանդակությունը հանգում է որոշակի պարտավորության հիման վրա առկա իրավունքի կամ պահանջի անցմանն այլ անձի: Տվյալ պարագայում տեղի է ունենում պարտավորության մեջ պարտատիրոջ փոփոխություն. ցեսիայի պայմանագրով փոխանցվում է միայն պահանջի իրավունքը, բայց ոչ պարտքը: Պարտապանի փոփոխություն ցեսիայի միջոցով չի իրականացվում: Ընդ որում, պարտավորության մեջ պարտատիրոջ փոփոխության համար պարտապանի համաձայնությունն անհրաժեշտ չէ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածն էլ նախատեսում է, որ «Առանց պարտապանի համաձայնության պահանջի զիջումն այն պարտավորությամբ, որում պարտատիրոջ անձն էական նշանակություն ունի պարտապանի համար, չի թույլատրվում, բացառությամբ «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ակտիվների արժեթղթավորման եւ ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի»:

Ցեսիայի պայմանագրի օբյեկտ կարող է լինել ցանկացած իրավունք կամ պահանջ, բացառությամբ «Պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված իրավունքների՝ ներառյալ ալիմենտի եւ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջները» (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 398): Փոխանցվող իրավունքի ծավալի առնչությամբ օրենսգիրքը սահմանում է, որ «Սկզբնական պարտատիրոջ իրավունքը նոր պարտատիրոջն է անցնում իրավունքի անցման պահին գոյություն ունեցող ծավալով եւ պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Մասնավորապես, նոր պարտատիրոջն են անցնում պարտավորության կատարումն ապահովող, ինչպես նաեւ պահանջի հետ կապված այլ իրավունքները՝ ներառյալ չվճարված տոկոսների նկատմամբ իրավունքը» (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 399): Այս դրույթի տրամաբանությունից հետեւում է նաեւ, որ հետագայում պարտավորությունը չկատարելու պարագայում կամ այն կետանցով կատարելու դեպքում **օրենքով նախատեսված տոկոսները /ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդված/** պահանջելու իրավունքը եւս ծագում է նոր պարտատիրոջ մոտ. նման պահանջը եւս ուղղվում է ցեսիայի պայմանագրով որպես պարտապան հանդես եկող անձի դեմ, քանզի դառնում է սկզբնական պահանջի տրամաբանական շարունակությունը եւ կազմում դրա մի մասը:

Օրենսգիրքը կանոնակարգում է նաեւ սկզբնական պարտատիրոջ պատասխանատվության առնչությամբ ծագող հարաբերությունները: Մասնավորապես, օրենսգրքի 405-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «Պահանջը զիջած սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջեւ պատասխանատվություն է կրում նրան փոխանցված պահանջի անվավերության համար, սակայն պատասխանատվություն չի կրում պարտապանի կողմից այդ պահանջը չկատարելու համար, բացի այն դեպքից, երբ սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջեւ երաշխավորություն է ստանձնել պարտապանի համար»: Նշված դրույթի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ

օրենսդիրը նախատեսում է սկզբնական պարտատիրոջ պատասխանատվության երկու դեպք միայն, եւ չի նախատեսում այլ դեպքերի համար որեւէ դիսպոզիտիվ կարգավորում, այսինքն՝ բացառում է սկզբնական պարտատիրոջ պատասխանատվության որեւէ այլ դեպքի սահմանման հնարավորություն, **այդ թվում՝ կողմերի համաձայնությամբ**, քանզի օրենսգրքի 405-րդ հոդվածը նախատեսում է իմպերատիվ բնույթի իրավադրույթ: Այս առումով սահմանադրական դատարանը գտնում է, որ ցեսիայի ինստիտուտի առնչությամբ առկա չէ որեւէ հակասություն, մի կողմից, հարկային օրենսդրության, մյուս կողմից՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումների միջեւ: Իր հերթին իրավակիրառ պրակտիկան այս ինստիտուտի կիրառման պարագայում պետք է առաջնորդվի դրա օրենսդրական համակարգային կանոնակարգման ամբողջական տրամաբանությամբ:

6. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է նաեւ հարկային իրավահարաբերությունների սուբյեկտների միջեւ ցեսիայի պայմանագրի կնքման եւ դրա իրավական հետեւանքների առանձնահատկությունների բացահայտումը: Այս առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկային իրավահարաբերությունները կանոնակարգող օրենսդրության շրջանակներում ցեսիայի ինստիտուտի նախատեսումը կարելի է նշանակություն ունի ինչպես հարկատուների եւ պետության միջեւ բնականոն հարկային իրավահարաբերությունները պահպանելու, հարկատուների հարկային պարտավորությունների կատարմանն օժանդակելու, այնպես էլ գործարար շրջանակներում պայմանագրային պարտավորությունների բարեխիղճ կատարումը երաշխավորելու եւ տնտեսվարողների բնականոն գործունեության շարունակականությունն ապահովելու տեսանկյունից: Սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձանագրել, որ նշված ինստիտուտի նախատեսումը կարելի է կանխարգելիչ նշանակություն ունի եւ կոչված է ապահովելու տնտեսվարող սուբյեկտների բնականոն գործունեությունն այն իրավիճակներում, երբ վերջիններս չեն կարողանում ժամանակին կատարել պետության առջեւ իրենց հարկային պարտավորությունները: Ըստ էության նշված ինստիտուտն այլընտրանք կարող է հանդիսանալ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ եւ 10-րդ հոդվածներով նախատեսված հարկատուի նկատմամբ հարկադրական սնանկության գործ նախաձեռնելու ինստիտուտին, որը կարող է հանգեցնել տնտեսվարող սուբյեկտի լուծարմանը:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկային իրավահարաբերություններում ցեսիայի պայմանագրի եւ դրա իրավական հետեւանքների առանձնահատկություններն ի հայտ են գալիս հետեւյալ հարցադրման շրջանակներում. արդյո՞ք ցեսիայի պայմանագրի կնքմամբ դադարում է ցեղենտի/հարկատուի հարկային պարտավորությունը: Խնդիրը կայանում է նրանում, որ հարկատուն հանդես է գալիս մի կողմից՝ որպես հարկատու՝ հարկային իրավահարաբերությունների շրջանակներում, եւ որպես ցեղենտ/սկզբնական պարտատեր՝ քաղաքացիական իրավահարաբերություններում:

րի շրջանակերում: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական իրավահարաբերությունների շրջանակներում հարկատու/ցեղենտը պատասխանատվություն չի կրում պարտապանի կողմից նոր պարտատիրոջ/ցեսիոնարի նկատմամբ ցեսիայի պայմանագրով պարտավորության կատարման համար, սակայն հարկային իրավահարաբերություններում շարունակում է կրել համապատասխան պարտավորությունները: Այս մասին է վկայում, մասնավորապես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, սահմանելով, որ՝ «Հարկային պարտավորությունը դադարում է դրա կատարման, հարկի վերացման, հարկից ազատելու արտոնության սահմանման, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, իսկ ֆիզիկական անձի համար՝ նաև նրա մահվան դեպքում, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ»: Միաժամանակ, վերաբերելի իրավանորմերի վերլուծության հիման վրա սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ցեսիայի պայմանագրի կնքումը, ինքնին, չի կարող հավասարեցվել հարկատուի կողմից պարտավորության կատարմանը հետելյալ պատճառաբանությամբ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի վիճարկվող 18-րդ մասում, ի թիվս այլնի, ներկայացված է նաև պայմանագրի վերջնանպատակը՝ «ստացված գումարներն ուղղելու հարկ վճարողի պարտավորությունների մարմանը»: Իսկ նույն հոդվածի վիճարկվող 19-րդ մասը նաև սահմանում է, որ «... պահանջի իրացման պահին, ... կատարվում է պարտավորությունների վերահաշվարկ»: Նշված իրավանորմերից բխում է, որ անձը շարունակում է տվյալ հարկային պարտավորության կրող հանդիսանալ մինչև ցեսիայի պայմանագրով որպես պարտապան հանդես եկող անձի կողմից իր պարտավորության կատարման պահը, քանզի պարտավորությունների վերահաշվարկը կատարվում է միայն պահանջի իրացման պահին, եւ ոչ թե ցեսիայի պայմանագրի կնքման պահին: Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ցեսիայի պայմանագրի կնքումը չի կարող ինքնանպատակ լինել: Թեև ցեսիայի պայմանագրի կնքման վերաբերյալ վիճարկվող օրենսդրական դրույթները կրում են դիսպոզիտիվ բնույթ, այդուհանդերձ, նման ընթացակարգով հարկատուի հարկային պարտավորությունների կատարման ինստիտուտը կիրառելիս հարկային մարմինները պետք է ձեռնամուխ լինեն ցեսիայի պայմանագրի կատարման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը եւ ստացված գումարը հարկատուի հարկային պարտավորությունների կատարմանն ուղղելուն:

Ամփոփելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային իրավահարաբերությունների շրջանակներում կնքված ցեսիայի պայմանագրով՝

ա/ հետագայում պարտավորությունը չկատարելու կամ այն կետանցով կատարելու դեպքերում հարկային մարմնի մոտ ծագում է ցեսիայի պայմանագրով որպես պարտապան հանդես եկող անձից **օրենքով, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ** պահանջելու իրավունք,

բ/ ցեսիայի պայմանագրի շրջանակներում պահանջի իրացման պահին վերահաշվարկ կատարելիս հարկային մարմնի մոտ ծագում է ցեղենտից/հարկատուից հարկային պարտավորությունը կետանցով կատարելու համար սահմանված տույժերի եւ տուգանքների գումարները պահանջելու իրավունք:

7. Միջազգային պրակտիկայի ուսումնասիրումը վկայում է, որ հարկային պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար տարբեր երկրներում օրենքի ուժով հարկային մարմիններին իրավունք է վերապահվում գործադրել հարկատուի պարտապանների պարտքի հաշվին հարկային պարտավորությունների մարման ինստիտուտը: Ընդ որում, դեբիտորական պարտքի գանձումը կատարվում է հարկատուի կողմից պարտապանների վերաբերյալ ներկայացված հավաստի տեղեկատվության, ինչպես նաեւ հարկային մարմնի տնօրինության տակ առկա տեղեկատվության հիման վրա (օրինակ՝ Մոլդովայի Հանրապետության հարկային օրենսգիրք /հոդվածներ 194, 205/, Չեխիայի Հանրապետության հարկային օրենսգիրք /հոդվածներ 178, 180/, Սերբիայի Հանրապետության Հարկային վարույթի եւ հարկային վարչակազմի մասին օրենք /հոդվածներ 92, 96/, Ղազախստանի Հանրապետության հարկային օրենսգիրք /հոդված 616/, Վրաստանի հարկային օրենսգիրք /հոդված 86/ եւ այլն):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ցեսիայի պայմանագրի հիման վրա դեբիտորական պարտքերի հաշվին հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու ինստիտուտն ավելի մեծ երաշխիքներ է ստեղծում իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանության ու տնտեսավարման բնականոն պայմաններ երաշխավորելու առումով: Խնդիրն այն է, որ այդ ինստիտուտի կիրառումը բխի իրավակարգավորման բովանդակությունից եւ ոչ իրավաչափ վարչարարությամբ չտոնահարվեն տնտեսավարող սուբյեկտների իրավունքները:

Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վեճի առարկա հոդվածի կիրառումը չի կարող իմաստագրվել, երբ ցեսիայի պայմանագիրը հարկային մարմնի կողմից գործնականում անտեսվում է: Նման պայմաններում դիմողի իրավունքների հնարավոր խախտումը պայմանավորվում է ոչ թե «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18 եւ 19-րդ մասերի սահմանադրաիրավական բովանդակությամբ, այլ դրանց կիրառման հանգամանքով:

Միաժամանակ սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձանագրել, որ վիճարկվող իրավանորմների նպատակային կիրառումն զգալիորեն պայմանավորված է դրանց հիման վրա կնքված պայմանագրերի հստակ բովանդակությամբ եւ դրանցում կողմերի իրավունքների ու պարտականությունների հստակ կանոնակարգումով, ինչը թույլ կտա նվազագույնի հասցնել դրանց կիրառման արդյունքում առաջացող խնդիրները: Անթույլատրելի է նման կարգի պայմանագրերի նկատմամբ ձեւական մոտեցումը, քանզի պայմանագրային հստակ, բազմակողմանի եւ մանրամասն կանոնա-

կարգումներով է մեծապես պայմանավորված դրա կատարումը եւ վիճելի իրավիճակների հաղթահարումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 18 եւ 19-րդ մասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**10 սեպտեմբերի 2013 թվականի  
ՍԳՈ-1106**





## **ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ  
ՎԱՆԱՉՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԿ-Ի ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
204.38-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**18 սեպտեմբերի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պոդոյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Չեյնալյանի եւ Ա. Ղազարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Մարդարյանի,

ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչներ Լ. Դրմեյանի եւ Ռ. Մախմուդյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դրնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության՝ 01.03.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարան ներկայացված դիմումում դիմողի ներկայացուցիչները նպատակահարմար էին համարել սույն գործի միավորումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի հետ՝ նկատի ունենալով քննության առարկայի նույնաբնույթ լինելը: ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը քննեց առանձին՝ հաշվի առնելով, որ տվյալ իրավահարաբերությունների նույնաբովանդակ լինելով հանդերձ, ՀՀ վճռաբեկ դատարանի երկու պալատներում այս հարցում ձեւավորվել է տարաբնույթ իրավակիրառական պրակտիկա, ինչպես նաեւ անհրաժեշտություն առաջացավ առավել համակողմանի ուսումնասիրել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատի կողմից սույն հարցի առնչությամբ ձեւավորած իրավական նախադեպերը: Այդ նկատառումներից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը 2013թ. հուլիսի 4-ին հետաձգեց սույն գործի քննությունը, որոշելով, մասնավորապես, գործի դատաքննությունը կազմակերպել բանավոր ընթացակարգով, ինչպես նաեւ՝ «Նկատի ունենալով, որ քննության առարկա հիմնախնդրի վերաբերյալ դատական պրակտիկայում տեղ են գտել տարակերպ մեկնաբանություններ եւ հաշվի առնելով, որ տվյալ հարցի քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջանում լսել նաեւ ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցչի պարզաբանումները, ուստի գործի բանավոր դատաքննությանը հրավիրել նաեւ ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան իրավասությամբ օժտված ներկայացուցչին եւ առաջարկել ՀՀ վճռաբեկ դատարանին ապահովել վերջինիս մասնակցությունը դատաքննությանը»: Նույն որոշմամբ սահմանադրական դատարանը ՀՀ դատական դեպարտամենտից պահանջեց նաեւ՝ «...մեկամսյա ժամկետում ՀՀ սահմանադրական դատարան ներկայացնել նոր հանգամանքների հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատի՝ 2006 թվականից հետո քննության առած, առանց բացառության, բոլոր գործերով ընդունված որոշումների պատճենները»:

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից, սահմանված ժամկետում, սահմանադրական դատարան է ներկայացվել նոր հանգամանքների հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատի կողմից ընդունված թվով 150 որոշում:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչների պարզաբանումները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, այդ թվում՝ նոր հանգամանքների հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վար-

չական գործերով պալատի կողմից ընդունված որոշումները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Նոր երեսան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման կանոնները» վերտառությամբ 204.38-րդ հոդվածը սահմանում է.

«1. Եթե սույն բաժնով նախատեսված չեն հատուկ կանոններ, ապա նոր երեսան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները:

2. Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 204.32 կամ 204.33 հոդվածով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա:

3. Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող է բողոքարկվել վճռաբեկ դատարան»:

Օրենսգրքի 204.38-րդ հոդվածը 26.10.11թ. ՀՕ-269-Ն ՀՀ օրենքի ուժով շարադրվել է նոր խմբագրությամբ:

2. Դիմողը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 25.02.2011թ. ՍԳՈ-943 եւ 15.07.2011թ. ՍԳՈ-984 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, կարծում է, որ եթե չապահովվի հիշյալ որոշումներով սահմանված կարգը, այն է՝ սահմանադրական դատարանի որոշումը, որով օրենքի դրույթը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող կամ՝ Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտվել է դրա սահմանադրաիրավական բովանդակությունը, եւ սահմանադրական դատարանը գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ, ընդհանուր իրավասության դատարաններում գործի վարույթը նորոգելու համար արդյունավետ ազդակ եւ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանման հիմք չհանդիսանա, ապա ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետով երաշխավորված անձի՝ «Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը» կլինի ոչ իրական, իսկ սահմանադրական դատարանում սահմանադրաիրավական վեճ նախաձեռնելը կհնարավորվի:

Վերլուծելով սահմանադրական դատարանի ՍԳՈ-984 որոշման հիման վրա օրենսգրքի 204.38-րդ հոդվածում կատարված օրենսդրական փոփոխությունները՝ դիմողը եզրահանգում է, որ դրանք հակասում են սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմանն առ այն, որ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի

վերանայումը պետք է տեղի ունենա ipso facto (փաստի ուժով), որը ենթադրում է, որ վերանայման համար միակ պայման պետք է հանդիսանա դատական ակտում հակասահմանադրական նորմի կիրառման փաստը, եւ որեւէ այլ հանգամանք, պայման, փաստ կամ փաստարկ որպէս այլընտրանք չի կարող առաջ քաշվել կամ սահմանվել ի հավելումն նշված փաստի:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող իրավական նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, քանի որ չբացառելով այն հնարավորությունը, երբ գործով նոր կամ նոր երեւան եկած հանգամանքը կարող է ազդած չլինել գործի ելքի վրա, օրենսդիրը, որպէս բացառիկ դեպք եւ միաժամանակ որպէս նոր կամ նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնող անձանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության երաշխիք, նախատեսել է, որ դատարանը ծանրակշիռ փաստարկների հիման վրա կարող է չփոփոխել դատական ակտի եզրափակիչ մասը: Սակայն, վերջինիս գնահատմամբ, վիճարկվող դրույթով նախատեսված՝ նոր կամ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով հարուցված վարույթով՝ օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով դատական ակտ կայացնելու եւ վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոփոխելու հնարավորությունը, **ըստ էության, վերաբերում է միայն դատական ակտը բեկանելուց հետո գործի նոր քննության արդյունքում կայացվող նոր դատական ակտին:** Այսինքն՝ երբ վերանայման վարույթի շրջանակներում հաստատվում է նոր կամ նոր երեւան եկած հանգամանքի առկայության փաստը, ապա վերանայման վարույթի արդյունքում պետք է ուժը կորցրած ճանաչվեն վերանայվող դատական ակտերը: Վերանայման վարույթի արդյունքում տվյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան, կամ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանած ակտը, եթե հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի առնելով արձանագրված խախտման բնույթը եւ դրա ազդեցությունը գործի ելքի վրա: Այսպիսով, ըստ պատասխանողի, նոր երեւան եկած հանգամանքների, ՀՀ սահմանադրական դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան ակտերի առկայությունն ինքնին չի կարող կանխորոշել գործի ելքը, չի կարող հանգեցնել անձի արդարացման կամ մեղավորության: Այս հարցում պետք է հաշվի առնել արձանագրված խախտման բնույթը եւ համարժեք իրավական միջոցներով ուղղել այն՝ «մինչեւ խախտումը եղած վիճակի վերականգնման» սկզբունքով:

Վերոգրյալի հիման վրա պատասխանող կողմը գտնում է, որ վերանայման վարույթի արդյունքում գնահատելով խախտման բնույթը եւ դրա ազդեցությունը գործի ելքի վրա՝ պետք է կայացվի նոր դատական ակտ՝ օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով: Ուստի, ըստ պատասխանող կողմի, **օրենսգրքի վիճարկվող դրույթն այնքանով, որքանով բացառում է անձի սահմանադրական կամ կոնվենցիոն իրավունքները խախտող դատական ակտն օրինա-**

**կան ուժի մեջ թողնելու հնարավորությունը**, համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 18-րդ, 19-րդ, 93-րդ հոդվածների եւ 101-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներին:

4. Սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. դիմողը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով ճանաչել տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը, վերացնել ՀՀ պաշտպանության նախարարի՝ գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի մասին հրամանը եւ պարտավորեցնել տրամադրելու 10.02.2010թ. թիվ Ե/2010-051 հարցումով տեղեկատվությունը: ՀՀ վարչական դատարանի՝ 23.11.2010թ. վճռով հայցը մերժվել է: Հիշյալ դատական ակտի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ 16.03.2011թ. որոշմամբ կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ 23.11.2010թ. վճիռը թողնվել է անփոփոխ: ՀՀ վճռաբեկ դատարանի 18.05.2011թ. որոշմամբ դիմողի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» ենթակետի, 12-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա գործով սահմանադրական դատարանը 06.03.2012թ. կայացրել է ՄԳՈ-1010 որոշումը:

Սահմանադրական դատարանի ՄԳՈ-1010 որոշման հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 18.05.2011թ.՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ դիմողի բողոքի հիման վրա գործով ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 27.06.2012թ. որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ, որի արդյունքում իր՝ 25.12.2012թ. որոշմամբ մերժել է դիմողի՝ վերը նշված վճռաբեկ բողոքը:

5. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողն առաջադրում է նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի շրջանակներում հակասահմանադրական ճանաչված իրավական նորմի կիրառմամբ ընդունված դատական ակտի օրինական ուժի մեջ մնալու իրավական հնարավորության խնդիրը: Այսինքն՝ դիմողը վիճարկում է օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասը միայն նոր հանգամանքների, այլ ոչ թե նոր երեւան եկած հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի տեսանկյունից, ուստի սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը քննության առարկա է դարձնում միայն նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի տեսանկյունից:

6. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 31 մայիսի 2013թ. ՄԳՈ-1099 որոշման մեջ կրկին անդրադառնալով նոր հանգամանքների ինստիտուտի սահմա-

նադրաիրավական բովանդակությանը՝ արձանագրել է, որ. «ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում /մասնավորապես՝ ՍԳ-Ո-701, ՍԳ-Ո-751, ՍԳ-Ո-758, ՍԳ-Ո-767, ՍԳ-Ո-833, ՍԳ-Ո-866, ՍԳ-Ո-871, ՍԳ-Ո-935, ՍԳ-Ո-943, ՍԳ-Ո-984/, ինչպես նաև սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում անդրադարձել է նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորումներին առնչվող հիմնախնդիրներին՝ առաջադրելով այն հայեցակարգային դիրքորոշումը, որ սահմանադրական դատարանն դիմելու՝ անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը»:

Սահմանադրական դատարանն իր՝ 15.07.2011թ. ՍԳ-Ո-984 որոշման 7-րդ կետում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «... սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի վերանայումը պետք է փաստի ուժով (ipso facto) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանմանը: Ինչ վերաբերում է բեկանման արդյունքում իրավասու մարմնի լիազորություններին, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ պայմանավորված յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններով՝ **տվյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան, կամ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանված ակտը, եթե հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի առնելով կիրառված իրավանորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված լինելու փաստը»:**

ՀՀ Ազգային ժողովի եւ ՀՀ վճռաբեկ դատարանի ուշադրությունը հրավիրելով սահմանադրական դատարանի՝ 15.07.2011թ. ՍԳ-Ո-984 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների եւ միջազգային իրավական մոտեցումների վրա, ՍԳ-Ո-1099 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանը կրկին արձանագրել է, որ «...նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով **ապահովվում է խախտված սահմանադրական եւ/կամ կոնվենցիոն իրավունքների վերականգնումը:** Վերջինս, իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, պահանջում է խախտման արդյունքում տուժողի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս **վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum)**»:

Սահմանադրական դատարանը նույն որոշման մեջ հստակ իրավական

դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «...սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքի հիմքով «դատական ակտի վերանայում» եզրույթն իր բովանդակությամբ համարժեք է «գործի նորոգում», «գործի վարույթի վերաբացում» եզրույթների բովանդակությանը, **եւ դատական ակտի վերանայման հասկացության նշված ընկալումն էլ պետք է կանխորոշի վերանայման վարույթի բովանդակությունը, դրա խնդիրները եւ դրա շրջանակներում լուծման ենթակա հարցերը:** Ըստ այդմ, դատական ակտի վերանայման վարույթի, նույնն է, թե գործի նորոգման վարույթի շրջանակներում պետք է ձեռնարկվեն արդարադատական այնպիսի միջոցառումներ, որոնք կապահովեն գործի վերաքննություն, նոր քննություն, ինչը հնարավոր է միայն հակասահմանադրական նորմ կիրառած՝ օրինական ուժի մեջ մտած **դատական ակտերի բեկանման պայմաններում:** Վերանայման ինստիտուտը կարող է ծառայել իր նպատակին միայն այն դեպքում, երբ ապահովվի տվյալ գործի նոր քննություն՝ կիրառված նորմի հակասահմանադրականության եւ կոնվենցիոն իրավունքի խախտման փաստի առկայության պայմաններում՝ **հաշվի առնելով նաեւ սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նոր հանգամանք հանդիսացող դատական ակտում արտահայտված իրավական դիրքորոշումները:**

**Նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է ipso facto հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի եւ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը»:**

Ի թիվս տվյալ որոշման մեջ արտահայտած ու սույն գործի համար կարեւոր նշանակություն ունեցող՝ նշված եւ մի շարք այլ իրավական դիրքորոշումների, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. «**Այն դեպքում, երբ դատարանները կխուսափեն օրենքի նորմերի պարզապես ձեռնարկված թվարկումից եւ օրենքի նորմի կիրառումն իրական բովանդակություն կունենա, անխուսափելի կլինի գործն ամբողջությամբ վերանայելու արդյունքում նաեւ եզրափակիչ մասի բովանդակային վերանայումը**»: Սահմանադրական դատարանն արձանագրել է նաեւ, որ. «... իրավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն դատական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմատիվ պարտադրանք՝ նման հնարավոր դեպքերում **ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ:** Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պատշաճ մակարդակ եւ «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հստակեցում, ինչն օրենսդրի եւ դատական համարժեք նախադեպ ստեղծելու խնդիրն է: Նկատի ունենալով, որ այս եզրույթն ամրագրված է նաեւ այլ հոդվածներում /մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մաս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մաս/, ՀՀ Ազգային ժողովը եւ ՀՀ վճռաբեկ դատարանն

իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են իրավական որոշակիության սկզբունքի պահանջներից ելնելով ապահովել տվյալ դրույթի միատեսակ ընկալումն ու կիրառումը: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անփոփոխ թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին եւ իրավական պետության հիմնարար արժեքներին»: Սահմանադրական դատարանը նկատի է առնում այն կարեւոր հանգամանքը, որ **փաստարկը «Ժանրակշիռ» կարող է լինել, եթե այն ելակետային ու վճռորոշ նշանակություն ունի համարժեք եզրահանգման համար:**

7. Նկատի ունենալով, որ ՀՀ սահմանադրական դատարանը, ինչպես նշվեց, բազմիցս անդրադարձել է նոր հանգամանքների հիմքով գործի քննության ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը, կարեւոր է համարում նաև 2005թ. սահմանադրական բարեփոխումներից հետո մեր երկրում անհատական դիմումների ներդրման իրավական պրակտիկային անդրադարձը՝ սույն գործով առաջ քաշված խնդիրներին ամբողջական ու հստակ պատասխան տալու համար: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից ելնելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատի ընդունած վերջին տարիների թվով շուրջ 150 որոշումների համակողմանի ուսումնասիրությունից հետեւում է, որ քննած գործերի 92.3 տոկոսի դեպքում պարզապես մերժվել է նոր հանգամանքների հիմքով գործի քննությունը եւ բողոքները վերադարձվել են: Միայն 7.7 տոկոսի դեպքում է նոր հանգամանքների հիմքով բողոքները բավարարվել՝ դրանց քննության ընդունումը մերժելու վերաբերյալ նախկինում կայացված դատական ակտերը վերանայելու գործընթաց սկսելու առումով: Սակայն բոլոր դեպքերում որեւէ գործով վերջնական դատական ակտը չի վերանայվել: Դա այն դեպքում, երբ սույն գործով վեճի առարկա հոդվածով /2-րդ մաս/ հստակ սահմանված է, որ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի շրջանակներում միայն ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ դատարանը կարող է **վերանայված դատական ակտի** եզրափակիչ մասը չփոփոխել: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ համատեքստում խոսքը վերաբերում է միայն **վերանայված դատական ակտին, ինչին անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում դատական պրակտիկայում:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ուսումնասիրված որոշումների կեսից ավելին Սահմանադրության գերակայության երաշխավորման առումով խնդրահարույց է եւ ձեւավորել է իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքին ոչ համարժեք իրավակիրառական պրակտիկա, ուստի դրանց՝ իրավակիրառական պրակտիկայի գնահատման տեսանկյունից, առանձին անդրադարձ է անհրաժեշտ: Բանն այն է, որ կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության ինստիտուտը համակարգային առումով փոխկապակցված է նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման ինստիտուտի



հետ, որոնց էությունը կայանում է նրանում, որ սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հիման վրա կոնկրետ դատական ակտի վերանայման արդյունքում համապատասխան հիմքերի առկայության պարագայում տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի գործով կայացվում է նոր դատական ակտ, որը տարբերվում է տվյալ գործով նախկինում՝ մինչև սահմանադրական դատարանի որոշումը կայացված դատական ակտից: Այս համատեքստում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկ է տարբերակել «նոր հանգամանքների հիմքով վերանայման վարույթի հարուցում» եւ «նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայում» եզրույթները: Այսպես. նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը տեղի է ունենում նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման բողոքի ընդունելիության հարցը լուծելիս, որի ընթացքում, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33, 204.36 եւ 204.37-րդ հոդվածները, չի կարող գնահատվել դիմողին առնչվող գործով կիրառված հակասահմանադրական նորմի ազդեցությունը դատարանի եզրահանգման վրա: Տվյալ դեպքում սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-984 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների ուժով, եթե առկա չեն բողոքը վերադարձնելու հիմքեր, ապա դատական ակտը վերանայող դատարանը պարտավոր է **ոչ միայն հարուցել վերանայման վարույթ, այլեւ դրա արդյունքում բեկանել վերանայվող դատական ակտը**, այլապես դատական ակտի հիմքում կշարունակվի մնալ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված կամ սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված իրավական նորմը: Ինչ վերաբերում է նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայմանը, **ապա այն վերանայվող դատական ակտի բեկանումից հետո տեղի ունեցող ընթացակարգ է, որի ընթացքում միայն կարող է գնահատվել նոր հանգամանքի ազդեցությունը գործի ելքի վրա**, ինչով էլ պայմանավորված է վերանայվող դատական ակտի եզրափակիչ մասը փոփոխելու կամ չփոփոխելու անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում կխաթարվի կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման ինստիտուտների էությունը: Ընդ որում, ինչպես արձանագրված է ՄԴՈ-984 որոշման մեջ, դատական ակտը վերանայող՝ վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով իրավասու են կա՛ն վերանայվող դատական ակտը բեկանել եւ գործն ուղարկել նոր քննության, կա՛ն վերանայվող դատական ակտը բեկանել եւ փոփոխել:

**8.** ՀՀ սահմանադրական դատարանի վերոթվարկյալ իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով քաղաքացիական եւ վարչական գործերով նոր հանգամանքների իրավական ինստիտուտի առնչությամբ ՀՀ դատական պրակտիկայում ստեղծված վիճակին՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա է ոչ միայն հակասական իրավակիրառական

պրակտիկա, այլեւ ակնհայտ է, որ շատ դեպքերում նոր հանգամանքների հիմքով գործի նորոգումը մերժվում է այդ ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը ոչ համարժեք փաստարկներով: Տիպական օրինակ կարող են լինել 2007թ. քննված գործերը՝ սահմանադրական դատարանի 09.04.2007թ. ՄԳ-Ռ-690 որոշման հիման վրա նոր հանգամանքների ծագման հիմքով: Այդ որոշման 3-րդ կետով ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ).

ա) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու ժամկետ սահմանելու առումով, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը,

բ) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետեւաբար, նաեւ՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին եւ 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»:

Նման պարագայում ՀՀ վճռաբեկ դատարանը նոր հանգամանքների հիմքով որոշման վերանայման վարույթի հարուցումը մերժել է՝ գտնելով, որ սահմանադրական դատարանն իր որոշումը չի տարածել «...այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա»: Ակնհայտ է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի՝ մասնավորապես 10, 12 եւ 13-րդ մասերի պահանջների մեկնաբանության շրջանակներում չեն կարող անտեսվել նույն օրենքի 69-րդ հոդվածի 12 եւ 13-րդ մասերի պահանջները: Սահմանադրական դատարանի որոշման հետադարձության ինստիտուտն առաջին հերթին վերաբերում է վերացական սահմանադրական վերահսկողությանը, իսկ անհատական դիմումների հիման վրա կոնկրետ սահմանադրական վերահսկողության դատավարական ընթացակարգերն ու առանձնահատկությունները սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով: Վերջինիս 11-րդ մասը հղում է կատարում նաեւ օրենքի 68-րդ հոդվածի 6-17-րդ մասերին՝ շեշտելով, որ տվյալ հոդվածով նշված գործերին առնչվող **բոլոր այլ հանգամանքների** քննության եւ այդ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառելի են օրենքի 68-րդ հոդվածի նշված մասերի կանոնները: Սակայն, դրանով հանդերձ, անհատական դիմումներով սահմանադրական դատարանի որոշման վերաբերելիության առումով կանոնները հստակ ու իրավական որոշակիության սկզբունքին համահունչ սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12 եւ 13-րդ մասերով: Իրավական երկու ինստիտուտների /սահմանադրական դատարանի որոշման հետադարձության եւ անհատական զանգատի միջոցով սահմանադրական իրավունքների պաշտպանության/ իրավական էության ոչ ճիշտ մեկնաբանման արդյունքում սահմանափակվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12 եւ 13-րդ մասե-

րով նախատեսված իրավասուբյեկտների իրավունքները դատական կարգով պաշտպանելու հնարավորությունը:

Մտահոգիչն այն է, որ հետագայում նույնպես ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատը տարբեր փաստարկներով դարձյալ մերժել է նոր հանգամանքների հիմքով գործի նորոգումը: Դա վերաբերում է ոչ միայն սահմանադրական դատարանի որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմների ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանելու միջոցով որոշման տարածամկետման դեպքերին, այլև որոշման հրապարակման պահից հակասահմանադրական նորմն անվավեր ճանաչելու ուժով նոր հանգամանքի ի հայտ գալուն:

Ընդհուպ հանդիպում են որոշումներ, որոնք պարզապես դատական հայեցողության սահմանների ակնհայտ ոտնահարում են: Օրինակ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանում է. «Սույն հոդվածում նշված գործերով՝ դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաեւ այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող եւ միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով»: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածով սահմանված է, որ «**Նոր հանգամանքները** հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քաղաքացիական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ»:

Այս դրույթի առաջին պարբերությունը բովանդակային փոփոխության չի ենթարկվել նաեւ 26.10.2011թ. օրենսդրական փոփոխությունների արդյունքում: Ակնհայտ է, որ ՀՀ օրենսդրությունը տվյալ դեպքում **իրավունքի իրացման այլ նախապայման չի պահանջում**: Ավելին, մի շարք երկրներում պետության պարտավորությունն է անձի նկատմամբ հակասահմանադրական նորմ կիրառելու դեպքում նախաձեռնել նրա իրավունքի վերականգնումն ու հետեւանքների հաղթահարումը: ՀՀ դատական պրակտիկայում վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատը հաճախ վերադարձնում է բողոքը՝ պարզապես արձանագրելով, որ «... վճռաբեկ բողոքում չի հիմնավորվել նոր հանգամանքների առկայությունը»: Այնինչ նոր հանգամանքի առկայությունը տվյալ անձի դիմումի հիման վրա կամ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 13-րդ մասով նախատեսված սուբյեկտների

առնչությամբ, սահմանադրական դատարանի որոշման փաստն է, որով նրանց նկատմամբ կիրառված նորմը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող կամ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, ինչը, սահմանադրական դատարանի կարծիքով, չի համապատասխանում տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը: Եթե սահմանադրական դատարանը գործն արդեն իսկ ընդունել է քննության եւ համանման որոշում է կայացրել, ապա այդ որոշումը վճռաբեկ դատարանի պալատն իրավասու չէ կասկածի տակ դնել եւ տարաբնույթ մոտեցումներով խուսափել դրա կատարումից:

Առանձին դեպքերում ձեռնարկված մոտեցումը հանգեցնում է նրան, որ դատական ակտում մեխանիկորեն վերարտադրվում է դիմողի կողմից թույլ տրված սխալը կամ վրիպակը: Օրինակ, 2012թ. հունվարի 11-ի ԵՄԴ/0644/02/10 քաղաքացիական գործի շրջանակներում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում է ՀՀ սահմանադրական դատարանի 15.11.2011թ. ՍԳՈ-897 որոշման հիման վրա նոր հանգամանքների հիմքով նախկին որոշումը վերանայելու հիմքերի բացակայության մասին եւ բողոքի քննության ընդունումը մերժվում է այն պատճառաբանությամբ, որ «... բողոք բերած անձինք վճռաբեկ բողոքում չեն հիմնավորել նոր հանգամանքի առկայությունը»: Այնինչ սահմանադրական դատարանի հիշյալ համարով որոշումն ընդունվել է 2010թ. հունիսի 22-ին եւ վերաբերում է միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների սահմանադրականությանը:

**9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական պրակտիկայում անհրաժեշտ տարբերակում պետք է դրվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 եւ 204.33-րդ հոդվածներով նախատեսված իրավապայմանների միջեւ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածը նոր երեսն եկած հանգամանքների դեպքում դատական ակտի վերանայման հիմքերի մեջ պարտադիր իրավապայման է դիտարկում նաեւ այն, որ բողոք ներկայացրած անձը պարտավոր է ապացուցել, որ «...այդ հանգամանքները հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, եւ այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն»: 204.33-րդ հոդվածը, սակայն, նոր հանգամանքի առկայության հիմնավորման որեւէ իրավապայման չի առաջադրում, բացի ՀՀ սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան ակտերի առկայությունից: Դա անհրաժեշտ ու բավարար պայման է գործի նորոգման համար: Այլ հարց է, որ նորոգումից հետո ըստ էության **նորոգված գործի քննության շրջանակներում իրավասու դատարանը պետք է որոշի, թե որքանով է Սահմանադրությանը հակասող նորմի կիրառումն ազդել քննության առարկա գործի ելքի վրա եւ ինչպես պետք է վերականգնվեն անձի հնարավոր խախտված իրավունքները:** Դրա փոխարեն պարզապես արգելափակվում է անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքը:**

Անընդունելի է նաեւ այն, որ օրենքի պահանջը կատարելու փոխարեն ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատն առանձին դեպքերում փորձում է «մեկնաբանել» սահմանադրական դատարանի որոշումները եւ այդ ճանապարհով շրջանցել դրանց պահանջների կատարումը, որպիսի պրակտիկան չի բխում ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաեւ 93-րդ հոդվածի պահանջներից: Նման պրակտիկայի համար, մասնավորապես, հիմք է ծառայել նաեւ ՀՀ Սահմանադրության եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի դրույթների յուրովի մեկնաբանությունը: Ընդհուպ շրջանցելով սահմանադրական դատարանի դոկտրինալ մոտեցումները, արտահայտված նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-1010 որոշման մեջ, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատը թիվ ՎԳ/1314/05/10 վարչական գործով 25.12.2012թ. որոշման մեջ գտել է, որ «... վեճը լուծող դատարանները (ընդհանուր իրավասության եւ/կամ մասնագիտացված) որոշակի հանգամանքների ի հայտ գալու ուժով լիազորված են կասեցնելու գործի վարույթը: Նման հանգամանքներից է կիրառման ենթակա օրենքի կամ այլ իրավական ակտի՝ դատարանի կարծիքով ՀՀ Սահմանադրությանը հակասելը»: Այս իրավաչափ դատողությանը հաջորդում է այն հետետությունը, համաձայն որի՝ «Կոնկրետ դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հանգամանքը ենթակա է գնահատման դատարանի (գործը քննող դատավոր կամ դատավորների կազմ) կողմից»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածը /մասնավորապես՝ 5-րդ մաս/ նախատեսում է, որ դատարանը սահմանադրական դատարան դիմելու համար երկու հիմնավորում պետք է ներկայացնի: Նախ՝ պետք է հիմնավորի իր դիրքորոշումը նորմատիվ ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հանգամանքի առնչությամբ: Երկրորդ՝ հիմնավորի այն հանգամանքը, որ տվյալ գործի լուծումը կարող է իրականացվել միայն վիճարկվող դրույթի կիրառմամբ: Առաջին դեպքում դիրքորոշումը կարող է ձեւավորվել նորմի սահմանադրականության վերաբերյալ դատավորի ինքնուրույն ու համարժեք իրավական վերլուծության արդյունքում: Սակայն դա չի կարող դառնալ դատաքննության առարկա ու դրա ընթացքում՝ «գնահատման» արդյունք եւ Հայաստանի Հանրապետության անունից ընդունվող դատական ակտում ամրագրվի, որ տվյալ նորմը համապատասխանում է կամ չի հակասում Սահմանադրությանը: Դա պարզապես կհակասի ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի պահանջներին եւ դատական սահմանադրական վերահսկողության նյութական ու դատավարական նորմերի բովանդակությանը: Կիրառվելիք նորմի սահմանադրականության վերաբերյալ հնարավոր մտահոգության առկայության ու սահմանադրական դատարանի միջոցով դրա փարատման հնարավորության հանգամանքը մեկնաբանելով որպես այդ նորմի՝ **Սահմանադրությանը հակասելու հանգամանքի գնահատման իրավասություն**, տեղիք կտրվի ինքնիրավչության՝ անուղղակի ձեով ստանձնելով սահմանադրական արդարադատության գործառույթ ու ստեղծելով նաեւ հետագա իրավական

շփոթ: Բանն այն է, որ Հայաստանի Հանրապետության անունից ընդունված որոշման մեջ վճռաբեկ դատարանը կարող է «**զնահատման արդյունքում**» իրավական դիրքորոշում արտահայտել, որ տվյալ նորմը համապատասխանում է Սահմանադրությանը, երբ սահմանադրական դատարանը՝ դարձյալ Հայաստանի Հանրապետության անունից ու իր սահմանադրական լիազորությունների ու համարժեք դատավարական ընթացակարգերի շրջանակներում, իրավաչափ ձեռով նույն դրույթը ճանաչում է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Բնականաբար, նման դատական պրակտիկա չի կարող ձեւավորվել: Սակայն փաստն այն է, որ վերջին տարիներին շուրջ 60 գործերով քաղաքացիների դիմումների հիման վրա ՀՀ դատարանների կողմից փաստացի կիրառված օրենքների դրույթներ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Դրանցից ոչ մեկի սահմանադրականության վերաբերյալ նորմը կիրառելիս դատարանների մոտ որեւէ մտահոգություն չի առաջացել՝ անգամ երբ առկա են եղել նաեւ սահմանադրական դատարան դիմելու միջնորդություններ: Սա ինքնին մտահոգիչ հանգամանք է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի գերակայության սկզբունքով առաջնորդվելիս սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը դատարանների համար պետք է ընկալել ոչ միայն իրավունք, այլեւ պարտականություն: Առանց դրա, մի կողմից՝ նորմի սահմանադրականության վերաբերյալ մտահոգությունը չի կարող փարատվել հայեցողական մոտեցմամբ, որովհետեւ այն պահանջում է «զնահատման» դատավարական համապատասխան ընթացակարգ եւ դրա իրականացման սահմանադրական լիազորություն, մյուս կողմից՝ մարդկանց իրավունքները պաշտպանելու փոխարեն հնարավոր հակասահմանադրական նորմի կիրառմամբ կխախտվեն այդ իրավունքները: Դատական պրակտիկան նաեւ ցույց է տալիս, որ դրանց հետագա վերականգնումը դառնում է ավելի դժվար ու հաճախ անհնարին՝ հանգեցնելով արդարադատության նկատմամբ վստահության կորստի: Ուստի խնդիրը ոչ միայն նոր հանգամանքների ինստիտուտի գործունակության ու արդյունավետության հետագա բարձրացումն է, այլեւ, առաջնորդվելով իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքի անշեղ իրացման պահանջով, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետով ՀՀ դատարաններին վերապահված հնարավորության խելամիտ իրացումը: Իսկ դա կարող է երաշխավորվել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության ճիշտ մեկնաբանման ու կիրառման պարագայում: Վերջինում «գտնում են» արտահայտությունը պետք է ընկալել որպես հայեցողական դիրքորոշում, հիմնավոր կասկածով պայմանավորված՝ դատավորի իրավական վերլուծության արդյունք: Այնինչ «զնահատումը» ենթադրում է համապատասխան դատավարական ընթացակարգ ու դրա իրականացման համարժեք լիազորություն:

**10.** Սահմանադրական դատարանն էական է համարում նաեւ այն հանգամանքը, որ գործի քննության ընդունման փուլում վճռաբեկ դատարանը հաճախ

իրականացնում է գործն ըստ էության լուծելու գործառույթ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրությամբ առավել հստակ պետք է սահմանագատվեն վճռաբեկ դատարանի կողմից գործը քննության ընդունելու եւ գործով ըստ էության որոշում կայացնելու դատավարական ընթացակարգերն ու ընդունվող որոշումներին ներկայացվող պահանջները: Անհրաժեշտ հստակեցման կարիք ունի նաեւ «վերջնական դատական ակտ» հասկացությունը: Այն հաճախ շփոթում են վերադաս դատարանի կողմից կայացված ակտի հետ: Եթե քաղաքացին դիմել է վճռաբեկ դատարան եւ վերջինս մերժել է նրա դիմումը քննության ընդունել, դա չի նշանակում, որ այդ որոշումն է վերջնական դատական ակտ, ինչպիսի մեկնաբանության հանդիպում ենք ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական գործերով պալատի առանձին որոշումներում, ինչը փաստվեց նաեւ ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցչի պարզաբանումներում:

Բողոքարկման ինստիտուտի ամբողջական իրացումն անհրաժեշտ է դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու համար: Եթե այդ միջոցներն սպառվում են, ապա ի հայտ է գալիս սահմանադրական դատարան կամ ՄԻԵԳ-ի դիմելու հնարավորությունը: ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը մախատեսում է յուրաքանչյուր անձի համար սահմանադրական դատարան դիմելու երեք իրավապայման.

- երբ առկա է դատարանի վերջնական ակտը,
- սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները,
- վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Սահմանադրական նորմը վերաբերում է վերջնական դատական ակտին, այլ ոչ թե բողոքարկման ընթացքում վերջին ատյանի դատարանի կողմից ընդունված ցանկացած ակտի: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածը սահմանում է, որ «**Դատարանի վերջնական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից**»: Սահմանադրաիրավական բովանդակությամբ դատարանի վերջնական ակտն այն ակտն է, որը գործն ըստ էության լուծել է, օրինական ձեռով ուժի մեջ է մտել եւ անձի համար առաջացրել է համարժեք իրավական հետեւանք: Նման մոտեցումից է բխում նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.11-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական բովանդակությունը, համաձայն որի. «Սույն օրենսգրքի իմաստով՝ **վերջնական** դատական ակտ է համարվում սույն օրենսգրքով սահմանված կարգով առաջին ատյանի դատարանի կայացրած եւ ուժի մեջ մտած, բողոքարկման ոչ ենթակա, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած եւ ուժի մեջ մտած, գործի քննությունը սկսելը եւ շարունակելը բացառող, ինչպես նաեւ գործն ըստ էության լուծող դատական ակտը»:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ դատական պրակտիկայում առկա շփոթը հաղթահարելու համար համանման ակտերին ներկայացվող պահանջներն առավել հստակ պետք է շարադրվեն օրենսդրության մեջ՝ լիովին համապատասխանեցնելով իրավական որոշակիության սկզբունքին:

**11.** Քննության առարկա հողվածի իրավակարգավորման առարկայի վերաբերյալ, ինչպես նշվեց, ՀՀ սահմանադրական դատարանն իր ամբողջական դիրքորոշումն արտահայտել է 2013թ. մայիսի 31-ի ՍԳՈ-1099 որոշման շրջանակներում: Ելնելով իրավակիրառական պրակտիկայի առկա վիճակից, սահմանադրական դատարանը չի գտնում, որ սույն գործով դիմողի հարցադրումները պայմանավորված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությամբ: Հակառակն, այդ հոդվածն իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք է նախատեսում՝ **վերանայված դատական ակտի** եզրափակիչ մասն անփոփոխ թողնել միայն այն պարագայում, եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորվում է դա: Սա ինքնին ենթադրում է, որ դա պետք է բացառություն լինի՝ պայմանավորված անհերքելի եւ ծանրակշիռ փաստարկներով: Այս հանգամանքն ընդունվեց նաեւ պատասխանողի կողմից: Այսուհանդերձ, թերեւս դատական պրակտիկայի համար նորմատիվ պարզաբանման կարիք ունի «ծանրակշիռ փաստարկ» հասկացությունը: Վերջինս ամրագրված է նաեւ այլ իրավական ակտերում /օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8 եւ 426.9-րդ հոդվածներում, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածում եւ այլն/: Եթե դատական պրակտիկան համարժեք մոտեցում չի ցուցաբերել այս եզրույթի իրավական բովանդակության առնչությամբ, ապա օրենսդիր մարմինը նույնպես պետք է համապատասխան հետետություն անի եւ օրենսդրորեն առավել հստակեցնի «ծանրակշիռ փաստարկ» հասկացության իրավական բովանդակությունը, քանի որ վերջինս տվյալ իրավահարաբերություններում վճռորոշ նշանակություն է ձեռք բերում անձանց իրավունքների պաշտպանության եւ դրանց անմիջական գործողության սահմանադրական պահանջի իրականացման հարցում: Այստեղ, ինչպես նշվեց, էականն այն է, որ **տվյալ փաստարկն օբյեկտիվորեն պետք է կանխորոշիչ նշանակություն ունենա համարժեք եզրահանգման համար:**

Փաստ է նաեւ, որ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան **հիմնականում շրջանցում է վեճի առարկա հողվածի պահանջը:** Արդյունքում՝ նոր հանգամանքների իրավական ինստիտուտի կիրառման դատական պրակտիկան մեծ թվով գործերի առնչությամբ ներդաշնակ չէ մարդկանց իրավունքների ապահովման ու պաշտպանության սահմանադրական պահանջներին: Նման իրավիճակում ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի գերակայության երաշխավորման, իրավական պետության սահմանադրական սկզբունքին հավատարիմ լինելու եւ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներն անշեղ կատարելու համար առանցքային նշանակություն ունի ՀՀ դատական պրակտիկայում իրավունքի գերակայության սկզբունքի հետետողական իրացմամբ թելադրված՝ իրավամտածողության լուրջ բարեփոխումը եւ ՀՀ սահմանադրական դատարանի արձանագրած վերոնշյալ իրավիճակի հաղթահարումը: Միայն այդ ճանապարհով է հնարավոր նաեւ երաշխավորել ՀՀ Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը:



Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասը՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի մասով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այն սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի.

**ա/ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է ipso facto (փաստի ուժով) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի եւ/կամ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը՝ բացառելով դրա օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը,**

բ/ վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոփոխելու հնարավորությունը **վերաբերում է միայն դատական ակտը բեկանելուց հետո գործի նոր քննության արդյունքում կայացվող նոր դատական ակտին: Իսկ վերջինիս եզրափակիչ մասի չփոփոխվելու հանգամանքը ծանրակշիռ փաստարկներով հիմնավորելու պարտադիր նորմատիվ պահանջը** հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**18 սեպտեմբերի 2013 թվականի  
ՍԳՈ-1114**



## **ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԳԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ  
24-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**24 սեպտեմբերի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Մ. Խաչատրյանի, Լ. Օհանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի՝ 02.05.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Դատա-

կան ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Գատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունիսի 3-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

«Գատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ «Կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետի վերականգնումը» վերտառությամբ 24-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Քաղաքացի-պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում դատարանը կարող է այն վերականգնել»:

Ընդունվելուց հետո «Գատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում փոփոխություններ եւ լրացումներ չեն կատարվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով ԼԴ-4/0031/02/09 քաղաքացիական գործն ըստ հայցի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ընդդեմ Վահե Օհանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, 21.05.2009թ. վճռով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի հայցն ամբողջությամբ բավարարել է եւ 22.06.2009թ. վճիռը մտել է օրինական ուժի մեջ: «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցչի դիմումի հիման վրա Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը 30.07.2009թ. կատարողական թերթ է տվել:

04.03.2010թ. վճռի վրիպակը, գրասխալը կամ թվաբանական սխալն ուղղելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան, վերջինս էլ 09.03.2010թ. կայացրել է «Վրիպակն ուղղելու մասին» որոշում: «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու եւ վրիպակն ուղղված մասով կատարողական թերթ տրամադրելու մասին 22.06.2011թ. ներկայացրած դիմումի հիման վրա Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 07.07.2011թ. որոշմամբ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումը բավարարել է, կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնել է եւ նույն օրը՝ 07.07.2011թ. տրամադրել է կատարողական թերթ:

Վահե Օհանյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 17.11.2011թ. որոշել է վերաքննիչ բողոքը բավարարել՝ բեկանելով կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու մասին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.07.2011թ. որոշումը եւ գործն ուղարկել նոր քննության:

նության: Բեկանելով որոշումը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը նշել է, որ. «Դատարանը չի պահպանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածով սահմանված դատական նիստի պատշաճ ծանուցումը, այսինքն՝ խախտվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի դրույթները»:

Նշված որոշման հիման վրա Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումը՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու պահանջի մասին, իր՝ 05.04.2012թ. որոշմամբ այն մերժել է՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի վկայակոչմամբ՝ նշելով, որ «օրենսդիրը հարգելի ճանաչված պատճառներով կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողած ժամկետը վերականգնելու հնարավորություն նախատեսել է միայն պահանջատեր քաղաքացու դիմումի հիման վրա, իսկ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն հանդիսանում է իրավաբանական անձ»:

Վերոնշյալ որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, ինչը 29.06.2012թ. վարույթ է ընդունվել եւ 05.09.2012թ. որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքը մերժել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 05.04.2012թ. թիվ ԼԴ4/0031/02/09 որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ գտնելով, որ «բողոք բերած անձի այն պատճառաբանությունը, որ դատական ակտի սխալի պատճառով է Բանկը այժմ հայտնվել նման իրավիճակում, Վերաքննիչ դատարանը գտնում է անհիմն, վերաքննիչ բողոքը բավարարելու ոչ բավարար հիմք, նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Վրիպակն ուղղելու մասին» դատարանի որոշումը կայացվել է 09.03.2010 թվականին, մինչդեռ Բանկը վրիպակն ուղղված մասով կատարողական թերթ տրամադրելու, միաժամանակ կատարողական թերթը ՀՀ ԴԱՀԿ ծառայություն ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու մասին դիմումը դատարան է ներկայացրել 22.06.2011 թվականին, որը Դատարանը իրավացիորեն մերժել է, միաժամանակ նկատի ունենալով, որ օրենսդիրը հարգելի ճանաչված պատճառներով կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողած ժամկետը վերականգնելու հնարավորություն նախատեսել է միայն պահանջատեր-քաղաքացու դիմումի հիման վրա, իսկ Բանկը հանդիսանում է իրավաբանական անձ»:

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից 25.10.2012թ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2012թ. թիվ ԼԴ4/0031/02/09 քաղաքացիական գործով կայացված որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացվել, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը 31.10.2012թ. ընդունել է «վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում՝ վերահաստատելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2012թ. որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

**3. Դիմողը, նշելով, որ այն իրավունքներն ու ազատությունները, որոնք շնորհված են (վերաբերում են) քաղաքացուն, նույն կերպ կիրառելի են նաեւ**

իրավաբանական անձանց համար, եւ որ պահանջատեր կարող է լինել ինչպես քաղաքացին, այնպես էլ իրավաբանական անձը, գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝ «քաղաքացի-պահանջատեր» բառակապակցությունը հակասում է ՀՀ Սահմանադրության 42.1 եւ 14.1-րդ հոդվածների դրույթներին:

Իր պահանջը հիմնավորելու համար դիմողը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի վկայակոչմամբ նշում է, որ օրենսդիրը «քաղաքացի» եզրույթի ներքո նկատի է ունեցել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց:

Վերլուծելով օրենքի վիճարկվող նորմը՝ դիմողը եզրահանգում է, որ այն պարունակում է օրենսդրական բաց եւ բացով պայմանավորված իրավակարգավորման իրավական անորոշություն, քանի որ պարզ չէ, թե ինչու է կատարողական թերթի ներկայացման ժամկետի բացթողումը հարգելի համարելու հնարավորությունն ընձեռվել միայն քաղաքացուն: Այս փաստարկով դիմողը կարծում է, որ օրենքի վիճարկվող դրույթը հակասության մեջ է գտնվում նաեւ ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածների հետ: Որպես հիմնավորում՝ դիմողը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթով խախտվում են իրավաբանական անձանց (ինչպես նաեւ անհատ ձեռնարկատերերի, օտարերկրյա պետությունների քաղաքացիների եւ իրավաբանական անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կամ օտարերկրյա պետության) իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ արդար դատաքննության իրավունքները, իսկ վերջիններիս իրացման երաշխավորվածությունը պայմանավորված է ոչ միայն անհրաժեշտ ինստիտուցիոնալ մեխանիզմներով, այլեւ անհրաժեշտ իրավական նախադրյալների առկայությամբ, որոնցից մեկն էլ իրավական որոշակիության պահանջներին համապատասխանող իրավական նորմերի առկայությունն է:

4. Պատասխանող կողմը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 09.09.2003թ. «Հարկադիր կատարման մասին» Rec 2003(17) հանձնարարականը, գտնում է, որ դատական ակտերի հարկադիր կատարումն արդարադատության շարունակությունն է, այն չի կարող առանձնացվել արդարադատությունից: Առանց դատական ակտերի պատշաճ կատարման դատավարությունն արդյունավետ չի լինի եւ չի հասնի իր նպատակներին, քանի որ իրավունքի խախտումները կարելի է վերացնել միայն սուբյեկտիվ իրավունքներն իրապես վերականգնելու միջոցով, որը տեղի է ունենում կատարողական վարույթի արդյունքում:

Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու դեպքում այն պետք է վերականգնվի բացառապես հարգելի պատճառների առկայության դեպքում, որոնք, որպես կանոն, պայմանավորված են լինում պահանջատիրոջ կամքից անկախ հանգամանքներով՝ հիվանդություն, գործուղում, փաստաթղթերի ուշացումով

ստանալը եւ այլն, հանգամանքներ, որոնք բնորոշ են ֆիզիկական անձանց, իսկ իրավաբանական անձի հնարավորություններն այդ խոչընդոտները հաղթահարելու առումով ավելին են՝ պայմանավորված մարդկային ռեսուրսներով: Ըստ պատասխանողի՝ նշված հանգամանքները հաշվի առնելու արդյունքում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու խնդրանքով դիմելու հնարավորություն ընձեռել միայն ֆիզիկական անձանց:

Միաժամանակ, պատասխանողն արձանագրում է, որ հաշվի առնելով անձանց խախտված իրավունքների լիարժեք պաշտպանության տեսանկյունից դատական ակտերի հարկադիր կատարման կարեւորությունը եւ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետն օբյեկտիվ պատճառներով բաց թողնելու հնարավորությունն առանձին դեպքերում մասն իրավաբանական անձանց պարագայում՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ 2013թ. հուլիսի 3-ին շրջանառության մեջ է դրվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով առաջարկվել է օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ. «Պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում դատարանը վերականգնում է այն»:

Ամփոփելով վերոնշյալը՝ պատասխանողը կարծիք է հայտնում, որ թեւեւ կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար օրենքով սահմանված է բավարար ժամանակ, այնուամենայնիվ, վիճարկվող նորմի իրավակարգավորման պայմաններում կարող է ամբողջությամբ չսպասիովվել անձանց խախտված իրավունքների արդյունավետ վերականգնման հնարավորությունը:

**5.** Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկ է բացահայտել դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի տեղը եւ դերը դատական պաշտպանության եւ արդար դատաքննության ինստիտուտների համակարգում, ինչպես մասն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետի վերականգնման հետ կապված հարաբերությունների կարգավորման տրամաբանությունը: Այսպես. դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման սպասիովում է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ածանցվում է դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով

տակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառույթներ իրականացնող մարմնի ակտ, հակառակ պարագայում կիմաստագրկվեն ոչ միայն պետական, այդ թվում՝ դատական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, այլև ընդհանրապես արդարադատության եւ դատական գործառույթներ իրականացնող այլ մարմինների համակարգի գոյությունը: **Հետևաբար՝ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր եւ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «իր գործի հրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ:** Այդ է պատճառը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին պարբերությամբ օրենսդիրն ամրագրել է, որ տվյալ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի, ինչպես նաեւ արբիտրաժային տրիբունալների վճիռների եւ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների հարկադիր կատարումն ապահովելու պայմանները եւ կարգը, իսկ նույն հոդվածի 2-րդ պարբերությամբ օրենսդիրը տվյալ օրենքի գործողությունը տարածել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների քաղաքացիների եւ իրավաբանական անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաեւ դիտարկվող օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ սուբյեկտների վրա, որոնք Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերին համապատասխան **հանդես են գալիս որպես կատարողական վարույթի կողմեր:** Այսինքն՝ **օրենքը համապատասխան սուբյեկտների շրջանակում հստակ ներառել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց:**

Օրենսդիրը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում ամրագրելով «Ընդհանուր դրույթներ կատարողական թերթի մասին» վերտառությամբ գլուխը, իրավական կարգավորման է ենթարկել կատարողական թերթ տալու, կատարողական թերթ տալու հիմքերի, կատարողական թերթի բովանդակության, դատական ակտի կատարման հետաձգման, տարածանկետման, կատարման եղանակի եւ կարգի փոփոխման, կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետի, վերջինիս վերականգնման, կատարողական թերթի կրկնօրինակ տալու, վճռի կատարման շրջադարձի հետ կապված հարաբերությունները: Այսպես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ կատարողական վարույթի կողմերն են՝ **պահանջատերը** եւ պարտապանը, 2-րդ պարբերության համաձայն՝ պահանջատերն այն **քաղաքացին կամ իրավաբանական անձն է**, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը, որի օգտին կամ ի շահ որի տրվել է կատարողական թերթը:

ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածը սահմանում է, որ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները տարածվում են նա-

եւ իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր եւ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «իր գործի հրապարակային քննության»՝ որպէս դատավարական գործընթացի փուլ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման շրջանակներում պահանջատիրոջը վերապահված իրավունքներն իրենց էությամբ կիրառելի են նաեւ իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության, համայնքի, օտարերկրյա պետության նկատմամբ:

Փաստորեն, ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածին համահունչ՝ օրենսդիրը դիտարկվող օրենքով սահմանել է պահանջատեր հանդիսացող սուբյեկտների շրջանակը՝ դրանում ներառելով **ոչ միայն քաղաքացուն, այլեւ իրավաբանական անձին**: Հետետողական մոտեցում ցուցաբերելով դիտարկվող օրենքի տրամաբանությանը՝ օրենսդիրն օրենքի, մասնավորապէս, 22-րդ եւ 25-րդ հոդվածներում նույնպէս կիրառել է «պահանջատեր» եզրույթը՝ տարբերակում չդնելով պահանջատեր հանդիսացող սուբյեկտների միջեւ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի տրամաբանությունից բխում է, որ հիշյալ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «պահանջատեր» եզրույթի ներքո անհրաժեշտ է նկատի ունենալ **Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց**, այն է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին, իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպէս նաեւ քննության առնվող օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ սուբյեկտների, այն է՝ Հայաստանի Հանրապետությանը, համայնքներին, օտարերկրյա պետությանը:

Անդրադառնալով իրավակիրառական պրակտիկային՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող դրույթի ձեւակերպման ընկալումը եւ մեկնաբանությունն իրավակիրառ պրակտիկայում հանգեցրել է նրան, որ էապէս նեղացվել է ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի սահմանադրաիրավական կարգավորման շրջանակը:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում արձանագրել է, որ իրավունքների ցանկացած սահմանափակում չի կարող հանգեցնել դրանց արգելափակմանը: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի պահանջներով սահմանադրական դատարանը նաեւ իրավաբանական անձանց դիմումների հիման վրա բազմաթիվ գործեր է ընդունել քննության՝ ճանաչելով նրանց՝ դատարանի մատչելիության իրավունքը: Այդ իրավունքն ուղղակիորեն ամրագրված է նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի վերնագրում եւ այդ հոդվածի բոլոր դրույթներում, որոնցով սահմանվել է, որ սահմանադրական դատարանն դիմող սուբյեկտ է ֆիզիկական անձանց հետ մեկտեղ ճանաչվում



նաեւ իրավաբանական անձը: Հետեւաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով չի կարող արգելափակվել իրավաբանական անձանց համար դատարանի մատչելիությունը կամ արդար դատաքննության իրավունքը:

6. Միեւնույն ժամանակ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է այն հարցի պարզաբանումը, թե արդյո՞ք դատարանի իրավունքն է ոչ միայն կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետի պատճառները հարգելի ճանաչելու հանգամանքի հաստատումը, այլեւ բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու պարագայում նաեւ բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը: Այսպէս. օրենքը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու իրավունքը տվել է դատարանին, ինչն իրավաչափ է: Դատարանը, քննելով դիմումը, անդրադառնում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչելու նպատակով պահանջատիրոջ ներկայացրած պատճառների հիմնավորվածությանը: Այսինքն՝ դատական միստ հրավիրելու մասին օրենքի պահանջի տրամաբանությունը պահանջատիրոջ կողմից դատարան ներկայացված պատճառները հարգելի լինելու հանգամանքի մասին դատարանի կողմից պատճառաբանված գնահատական տալն է: Հետեւաբար, այն պարագայում, երբ դատարանը հարգելի է համարում ներկայացված պատճառները, ապա վերականգնում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը: Մինչդեռ վիճարկվող նորմում օրենսդիրն օգտագործել է «դատարանը կարող է» հասկացությունը, այսինքն՝ դատարանի հայեցողությանն է թողել դատարանի կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու հիմքում ընկած պատճառները հարգելի ճանաչելուց հետո բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը: Վերը նշվածից բխում է, որ վիճարկվող հոդվածով օրենսդիրը դատարաններին օժտել է հայեցողական լիազորությամբ՝ ժամկետների բացթողումը հարգելի ճանաչելուց բացի, **վերականգնել կամ չվերականգնել** ժամկետների բացթողումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավունքի լիարժեք իրացումը կախվածության մեջ է դրվում դատական հայեցողությունից՝ ներկայացված պատճառները հարգելի ճանաչելու հանգամանքից զատ նաեւ բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծման առումով, սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված դատական հայեցողությունը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ խաթարվի այլոց իրավունքների եւ ազատությունների, ներառյալ դրանց պաշտպանության իրավունքի էությունը կամ անհարկի սահմանափակվի դրանց իրացումը:

Դատական հայեցողության վերաբերյալ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ (ՄԴՈ-996, ՄԴՈ-997): Մասնավորապէս, 18.10.2011թ. ՄԴՈ-996 որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ՝ «... Ինչ վերաբերում է դատական հայեցողությանը, ապա այն ունի իր սահմանները եւ չի կարող փոխել իրավանորմի բնույթը կամ քննարկման առարկա դարձնել դրա նպատակահարմարության

խնդիրը: Գատական հայեցողությունն ընտրություն կատարելու իրավասություն է՝ այնպիսի հնարավոր տարբերակների միջեւ, որոնք բոլորն էլ օրինական են»: Սույն գործով սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավանորմի դեպքում պետք է ապահովվի հայեցողական լիազորության իրավաչափ եւ ոչ կամայական իրականացումը, այն պետք է լինի հստակ, միակերպ ընկալելի իրավահարաբերության կողմերի համար:

Միաժամանակ սահմանադրական դատարանն ընդունում է ի գիտություն, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ 2013թ. հուլիսի 3-ին շրջանառության մեջ է դրվել «Գատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով առաջարկվել է օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ. «**Պահանջատիրոջ** կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում **դատարանը վերականգնում է այն**»:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Գատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սահմանադրական դատարանի կողմից դրա սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման հիման վրա ներկայացված հետեւյալ մեկնաբանությամբ. «Գատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «քաղաքացի-պահանջատիրոջ» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանել եւ կիրառել ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը համահունչ՝ հաշվի առնելով, որ այն վերաբերում է նաեւ իրավաբանական անձանց, քանի որ այն իր էությամբ կիրառելի է վերջիններիս նկատմամբ:

2. Գիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**24 սեպտեմբերի 2013 թվականի  
ՍԳՈ-1115**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 73-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ  
1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԳ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**8 հոկտեմբերի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ Ա. Վարդեանյանի, նույն վարչության մասնագետ Ս. Յուզբաշյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության պետ Ս. Յուզբաշյանի, իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, հետազոտությունների եւ վերլուծությունների կենտրոնի փորձագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 31.05.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

Օրենսգրքի՝ «Պաշտպանի իրավունքները եւ պարտականությունները» վերտառությամբ 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է.

«1. Պաշտպանը, նպատակ ունենալով պարզելու մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը եւ դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, նրա օրինական շահերը պաշտպանելու, կասկածյալին եւ մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի ...

3) քրեական հետապնդման մարմնի առաջարկով մասնակցել իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին, քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ մասնակցել քրեական հետապնդման մարմնի կողմից իր միջնորդությամբ իրականացվող բոլոր քննչական եւ այլ դատավարական գործողություններին, մասնակցել իր պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող ցանկացած քննչական կամ այլ դատավարական գործողությանը, եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը»:

Ընդունվելուց ի վեր օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը փոփոխությունների չի ենթարկվել:

**2.** Դիմողի կարծիքով՝ օրենսգրքի վիճարկվող նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթին:

Ըստ դիմողի՝ պաշտպանի իրավունքներին վերաբերող կարգավորումը, որի համաձայն՝ պաշտպանն իրավունք ունի քրեական հետապնդման մարմնի **թույլտվությամբ** մասնակցել քրեական հետապնդման մարմնի կողմից իր միջնորդությամբ իրականացվող բոլոր քննչական եւ այլ դատավարական գործողություններին, հանգեցնում է այդ իրավունքի իրականացման մեխանիզմների սահմանափակման այն դեպքում, երբ կասկածյալը կամ մեղադրյալը, ունենալով պաշտպան, քննչական գործողության շրջանակներում չեն պահանջում նրա մասնակցությունը, այլ դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը: Դիմողը գտնում է, որ քրեական հետապնդման մարմնին նման լիազորություն տրամադրելով՝ գործնականում հնարավոր են անհարկի եւ ոչ իրավաչափ սահմանափակումներ՝ կապված քննչական եւ այլ դատավարական

գործողությունների ընթացքում պաշտպանի մասնակցության հետ: Ըստ դիմողի՝ պարզ չէ նաև, թե ինչ նպատակ է հետապնդել օրենսդիրը, նախատեսելով քրեական վարույթի առանցքային մասնակիցներից մեկի՝ պաշտպանի պարտավորությունները կատարելու համար խոչընդոտելու/կամ սահմանափակում, այն է՝ «...քննչական գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը»:

Իր տեսակետը հիմնավորելու համար դիմողը հարկ է համարում նշել, որ օրենսգրքում բացակայում են հստակ պայմաններ ել/կամ հիմքեր, որոնց առկայության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է «թույլ չտալ» պաշտպանին մասնակցել պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին:

Օրենսգրքի վիճարկվող դրույթներում «սկսելիս» եզրույթի սեփական մեկնաբանության հիման վրա դիմողը գտնում է, որ նշված եզրույթն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան իր տառացի մեկնաբանության արդյունքում նշանակում է, որ բոլոր այն դեպքերում, երբ պաշտպանն արդեն սկսած քննչական գործողությանը մասնակցելու միջնորդություն է ներկայացնում, ապա այդպիսի միջնորդությունը՝ համաձայն օրենսգրքի վիճարկվող դրույթների, ենթակա է մերժման, քանի որ չի պահպանել օրենսգրքով նախատեսված ժամանակային «**սկսելիս**» պահանջը:

Հղում կատարելով իրավական որոշակիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Սանդի Թայման» ընդդեմ Միացյալ Թագավորության եւ Մարկիսն ընդդեմ Բելգիայի գործերով կայացված վճիռներին եւ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-753 որոշմանը՝ դիմողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթներում «թույլտվությամբ» եւ «սկսելիս» եզրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին եւ տարրնթերցումների իրական ռիսկ են պարունակում, որի արդյունքում կարող է խախտվել անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը եւ լրջորեն վտանգվել պաշտպանի կողմից քննչական գործողության ժամանակ իր պաշտպանյալին իրավաբանական օգնության տրամադրումը:

**3. Պատասխանող կողմը հիմնականում չի առարկում դիմողի փաստարկները:**

Անդրադառնալով դիմողի այն փաստարկին, համաձայն որի՝ օրենսգրքում բացակայում են հստակ պայմաններ ել/կամ հիմքեր, որոնց առկայության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է «թույլ չտալ» պաշտպանին մասնակցել պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին, պատասխանող կողմը նույնպես արձանագրում է, որ օրենքով նշված չեն այն հիմքերը, որոնց առկայության դեպքում միայն կարող է սահմանափակվել քննչական եւ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցության իրավունքը: Այդ կապակցությամբ պատասխանող կողմն արտահայտում է իր ենթադրությունն այն մա-

սին, որ եթե օրենքով չկան պաշտպանի մասնակցությունը բացառող հանգամանքներ, ապա պետք է ապահովվի վերջինիս անարգել մասնակցությունը, եւ կարծիք է հայտնում, որ սահմանափակումները կարող են վերաբերել այնպիսի քննչական գործողություններին, ինչպիսիք են քննումը (հոդված 220), անձնական խուզարկությունը (հոդված 229) եւ փորձաքննությունը (հոդված 248):

Անդրադառնալով դիմողի մյուս փաստարկին՝ կապված իրավական անորոշության հետ, պատասխանող կողմը, չբացառելով պաշտպանի մասնակցության անհրաժեշտությունը ոչ միայն քննչական գործողության հենց սկզբից, այլեւ քննչական գործողության ընթացքում, նույնպես գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմը կարող է տարրնթերցումների տեղիք տալ եւ քննչական ու այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցության սահմանափակման հիմք հանդիսանալ:

ԱՊՀ երկրների քրեական դատավարության օրենսգրքերի ուսումնասիրության արդյունքներով պատասխանող կողմը գտնում է, որ դրանք եւս վկայում են, որ պաշտպանն անարգել մասնակցում է այն քննչական եւ այլ դատավարական գործողություններին, որոնք իրականացվում են իր պաշտպանյալի մասնակցությամբ, կամ երբ քննչական եւ այլ դատավարական գործողություններ կատարելու նախաձեռնությամբ հանդես է եկել ինքը՝ պաշտպանը կամ իր պաշտպանյալը: Սիւստանանակ, վկայակոչելով ԱՊՀ մի շարք երկրների քրեական դատավարության օրենսգրքերի կոնկրետ հոդվածներ՝ պատասխանողն արձանագրում է, որ նշված երկրներում այլ քննչական եւ դատավարական գործողություններին պաշտպանը մասնակցում է քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ:

Ամփոփելով՝ պատասխանող կողմը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմով նախատեսված իրավակարգավորման պայմաններում, երբ պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին վերջինիս մասնակցությունը սահմանափակվում է քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ, կարող է հիմք հանդիսանալ պաշտպանյալի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի սահմանափակման համար՝ չերաշխավորելով իրավունքների եւ օրինական շահերի լիարժեք պաշտպանություն:

Սիւստանանակ, պատասխանող կողմն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի լրամշակված տարբերակը (փաստաթղթային կողմ՝ Կ-084-14.09.2012, 10.06.2013-ՊԻ-010/0), որով առաջարկվող իրավակարգավորմամբ կվերացվեն պաշտպանի համար օրենսգրքում առկա սահմանափակումները եւ կերաշխավորվի վերջինիս անարգել մասնակցությունը եւ՝ պաշտպանյալի մասնակցությամբ, եւ՝ պաշտպանի կամ իր պաշտպանյալի միջնորդությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին: Ըստ պատասխանող կողմի, նախագծի՝ «Պաշտպանի իրավունքները եւ պարտականությունները» վերտառությամբ 49-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, համաձայն որի.

«1. Պաշտպանը, նպատակ ունենալով պարզելու մեղադրանքը հերքող, մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը եւ դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, ինչպես նաեւ պաշտպանելու նրա իրավունքները եւ իրավաչափ շահերը, սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի»...

3) մասնակցել իր պաշտպանյալի մասնակցությամբ կատարվող ցանկացած ապացուցողական կամ այլ վարութային գործողության, մասնակցել իր կամ իր պաշտպանյալի միջնորդությամբ կատարվող ապացուցողական կամ այլ վարութային գործողությանը, այլ դեպքերում քննիչի առաջարկով մասնակցել ապացուցողական կամ այլ վարութային գործողությանը»:

4. Օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը սահմանում է քրեական գործերով պաշտպանի մասնակցության ռազմավարական եւ մարտավարական նպատակները, այն է՝ պարզել մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը եւ դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները եւ պաշտպանել կասկածյալի եւ մեղադրյալի օրինական շահերը, իրավաբանական օգնություն ցույց տալ նրանց:

Հաշվի առնելով քրեական գործով մինչդատական վարույթում պաշտպանի մասնակցության նպատակը եւ այդ նպատակով պայմանավորված՝ պաշտպանի դերը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմը հարկ է դիտարկել Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի եւ 18-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի համատեքստում:

5. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասը դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը չի դիտում որպես սահմանափակման ենթակա իրավունք, իսկ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, ի քիվս այլնի, 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ենթակա է սահմանափակման միայն օրենքով, «... եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների

կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար»:

Սահմանադրության 18-րդ հոդվածը յուրաքանչյուրին տալիս է, մասնավորապես, պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, որին ուղղակիորեն համապատասխանում է պետության պարտականությունն ինչպես օրենսդրական մակարդակում ամբարձել, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայում ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների առկայությունը: Այսինքն՝ օրենսդրական մակարդակում չպետք է սահմանվեն այնպիսի իրավական կառուցակարգեր, որոնք առաջին հայացքից հանդես են գալիս որպես երաշխիքներ տվյալ իրավական կառուցակարգի իրացման համար, սակայն կարգավորումների մանրամասներում փաստացիորեն իմաստագրկում են կամ սահմանափակում այդ իրավական կառուցակարգերը:

Անդրադառնալով Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված, ի թիվս այլնի, պաշտպանի միջոցով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքին եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված իրավունքը վերջին հաշվով ուղղված է դատարանների եւ պետական այլ մարմինների առջեւ իրավունքի սուբյեկտի օրինական շահերի իրավական պաշտպանությանը, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիտարկվող իրավունքը ենթադրում է իրավաբանական օգնության լիարժեքություն, ինչը պայմանավորված է պաշտպանի կողմից իրավաբանական օգնություն տրամադրելու պարտականության իրականացման **արդյունավետությամբ՝ հաշվի առնելով տվյալ իրավունքի՝ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմքերով սահմանափակման հնարավորությունը**: Ըստ այդմ էլ, Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված՝ դիտարկվող իրավունքին համապատասխանում է պետության պարտականությունը՝ թե՛ օրենսդրական մակարդակում, թե՛ իրավակիրառ պրակտիկայում երաշխավորել պաշտպանի կողմից իրավաբանական օգնություն տրամադրելու պարտականության արդյունավետ իրականացումը, իսկ որեւէ խոչընդոտ առաջանալու դեպքում քայլեր ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ:

Միաժամանակ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը գտնում է, որ պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության եւ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների իրացմանն օրենսդրորեն կարող են առաջադրվել որոշակի պահանջներ կամ նշված իրավունքների իրացման կարգերը կարող են պարունակել որոշակի ձեւական պայմաններ, որոնք, սակայն, չպետք է լինեն այն ծավալով, որ անարդյունավետ դարձնեն այդ իրավունքների իրացումը, խեղաթյուրեն դրանց էությունը կամ վերածվեն իրավունքի այնպիսի սահմանափակման, որը չի հետապնդում որեւէ իրավաչափ նպատակ:



6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի վիճարկվող 3-րդ կետը նախատեսում է քննչական կամ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցության երեք իրավիճակ՝

ա/ **քրեական հետապնդման մարմնի առաջարկով** է պաշտպանը մասնակցում իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին: Հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում պաշտպանի մասնակցության այլ դեպքեր ամրագրված լինելու հանգամանքը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիտարկվող դեպքը վերաբերում է այն իրավիճակներին, երբ քննչական կամ այլ դատավարական գործողությունը չի իրականացվում պաշտպանի միջնորդությամբ կամ դրա իրականացմանը չի մասնակցում պաշտպանյալը,

բ/ **քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ** է պաշտպանը մասնակցում **իր միջնորդությամբ** քրեական հետապնդման մարմնի կողմից իրականացվող բոլոր քննչական եւ այլ դատավարական գործողություններին,

գ/ մասնակցում է իր պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող ցանկացած քննչական կամ այլ դատավարական գործողությանը, **եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունն սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը:**

Վերոնշյալ «ա» ենթակետում նշված իրավակարգավորման առնչությամբ սահմանադրական դատարանն իրավաչափ է համարում օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանի միջնորդությամբ կամ պաշտպանյալի մասնակցությամբ չիրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունը քրեական հետապնդման մարմնի առաջարկով պայմանավորելը:

Վերը նշված «բ» ենթակետում ներկայացված դեպքի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության եւ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների իրացմանն առաջադրել է որոշակի պահանջ՝ **քրեական հետապնդման մարմնի թույլտվությունը:**

Սահմանադրական դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում բացակայում են այն հիմքերը**, որոնց առկայության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չթույլատրել պաշտպանին մասնակցելու պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին, ինչն արձանագրում է նաեւ սույն գործով պատասխանող կողմը, եւ ինչն իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքի սահմանափակման առումով կարող էր իրավաչափ համարվել Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմքերի համատեքստում: Էական է նաեւ այն, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե քրեական վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ, այլ հենց իր՝ պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունը քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ պայմանավորելու վերաբերյալ դրույթը, ի խախտումն Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների, հանդես է գալիս որպես պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության եւ իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքները սահմանափակող եւ դրա արդյունքում՝ պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը սահմանափակող դրույթ: Ավելին, այդպիսի սահմանափակումը չի հետապնդում որեւէ իրավաչափ նպատակ:

Վերը նշված «գ» ենթակետում ներկայացված դեպքի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության իրավունքի իրացմանն առաջադրել է որոշակի պահանջ՝ պաշտպանի մասնակցության վերաբերյալ **կասկածյալի կամ մեղադրյալի պահանջի առկայությունը կամ պաշտպանի միջնորդությունը:**

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով սույն կետում արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունն այդպիսի մասնակցության վերաբերյալ կասկածյալի կամ մեղադրյալի պահանջի առկայությամբ պայմանավորելու վերաբերյալ դրույթը եւս, ի խախտումն Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների, հանդես է գալիս որպես պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության եւ իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքները սահմանափակող եւ դրա արդյունքում՝ պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը սահմանափակող դրույթ: Ավելին, այդպիսի սահմանափակումը եւս չի հետապնդում որեւէ իրավաչափ նպատակ:

Ինչ վերաբերում է օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողությանը պաշտպանի մասնակցությունը **գործողությունն սկսելիս միջնորդության ներկայացմամբ** պայմանավորելու վերաբերյալ դրույթին, որը դիմողը բողոքարկել է իրավական որոշակիության տեսանկյունից, սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով սույն կետում արտահայտված իրավական դիրքորոշումները, անհրաժեշտ է համարում օրենսգրքի վիճարկվող դրույթներում «գործողությունն սկսելիս» բառակապակցությունը գնահատել ոչ թե դրա՝ իրավական որոշակիության պահանջներին համապատասխանելու տեսանկյունից, այլ քննչական կամ այլ դատավարական գործողությանը պաշտպանի մասնակցության ժամանակային սահմանափակման եւ մասնակցության համար պաշտպանի միջնորդության պարտադիր լինելու տեսանկյունից: Այս կապակցու-

թյամբ, հիմք ընդունելով սույն կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ **պաշտպանյալի մասնակցությամբ** իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողությանը պաշտպանի մասնակցության ժամանակաշիջն սահմանափակման եւ մասնակցության համար պաշտպանի միջնորդության պարտադիրության վերաբերյալ դրույթները եւս, ի խախտումն Սահմանադրության 43-րդ հոդվածի, հանդես են գալիս որպես պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության եւ իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքները սահմանափակող եւ դրա արդյունքում՝ պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը սահմանափակող դրույթներ եւ չեն հետապնդում որեւէ իրավաչափ նպատակ:

Բացի դրանից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսգրքի վիճարկվող նորմի մյուս դրույթների համաձայն՝ կասկածյալը կամ մեղադրյալն օժտված են իրենց մասնակցությամբ իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողությանը ցանկացած ժամանակ պաշտպանի մասնակցությունը պահանջելու իրավունքով, այսինքն՝ պաշտպանի միջնորդությունը մերժվելու դեպքում, անկախ նրանից, թե այդ միջնորդությունը ներկայացվել է քննչական կամ այլ դատավարական գործողությունն սկսելուց առաջ, թե՛ հետո, պաշտպանը դարձյալ կարող է մասնակցել քննչական կամ այլ դատավարական գործողությանը, եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, սահմանադրական դատարանն օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցության ժամանակաշիջն սահմանափակումը եւս համարում է ոչ հիմնավոր, հետեւաբար՝ որեւէ իրավաչափ նպատակ չհետապնդող:

Օրենսգրքի վիճարկվող նորմի առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ **բոլոր դեպքերում պաշտպանը պետք է իրավունք ունենա մասնակցելու պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական եւ այլ դատավարական գործողություններին՝ առանց որեւէ միջնորդության ներկայացման, եւ անկախ նրանից, թե այդպիսի մասնակցության վերաբերյալ առկա է կասկածյալի կամ մեղադրյալի պահանջ, թե՛ ոչ:**

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի լրամշակված տարբերակը (փաստաթղթային կոդ՝ Կ-084-14.09.2012, 10.06.2013-ՊԻ-010/0) եւ ուշագրավ է համարում նշված նախագծի՝ «Պաշտպանի իրավունքները եւ պարտականությունները» վերտառությամբ 49-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված իրավակարգավորումը:

7. Խնդրո առարկայի առնչությամբ առանձին երկրների համապատասխան օրենսդրությունների վերլուծության արդյունքներով սահմանադրական դատա-

րանն արձանագրում է, որ օրենքը քննչական կամ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունը չի պայմանավորում քրեական հետապնդման մարմնի կամքի դրսևտրմամբ եւ չի նախատեսում քրեական վարույթին պաշտպանի մասնակցության որեւէ ժամանակային սահմանափակում՝ պաշտպանին հնարավորություն տալով օգտվել այն իրավունքներից, ինչ իրավունքներով օժտված է պաշտպանյալը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի առնչությամբ որոշակի իրավական դիրքորոշումներ արտահայտել է նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապէս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր՝ *John Murray v. The United Kingdom* գործով 1996թ. փետրվարի 8-ին կայացված վճռում արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումները.

*«62. ... Նախաքննության ընթացքում 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետի կիրառման առանձնահատկությունները կախված են դատավարության առանձնահատկություններից եւ գործի հանգամանքներից:*

*63. ... 6-րդ հոդվածը նորմալ պայմաններում պահանջում է, որպէսզի մեղադրյալին հնարավորություն տրվի օգտվելու իրավաբանի օգնությունից ու փրկանական հետաքննության հենց սկզբնական փուլից: Այնուամենայնիվ, այս իրավունքը, որ հստակ նախատեսված չէ Կոնվենցիայով, կարող է սահմանափակվել իրավաչափ նպատակով: Յանկացած գործում հարցն այն է, թե արդյոք ողջ դատավարության լույսի ներքո սահմանափակումը մեղադրյալին չի գրկել արդար դատաքննությունից»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով վիճարկվող նորմը՝ համադրելով այն այլ պետություններում համանման իրավահարաբերությունները կարգավորող նորմերի հետ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանցով սահմանված իրավակարգավորումներն իրավունքների ոչ համաչափ սահմանափակման իրական վտանգ են բովանդակում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ դրանում ամրագրված՝ «քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ» եւ « եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սխտիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը» ձեւակեր-

պումների մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթին եւ 43-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**8 հոկտեմբերի 2013 թվականի  
ՍԳՈ-1119**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՅՄԱՆ  
ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 6-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**11 հոկտեմբերի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

գրավոր ընթացակարգով գործի դատաքննության շրջանակներում՝ դիմող Թ. Սարգսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության պետ Ս. Յուզբաշյանի, իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, հետազոտությունների և վերլուծությունների կենտրոնի փորձագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Թամարա Սարգսյանի դիմումի հիման վրա՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Թ. Սարգսյանի՝ 13.05.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1999 թվականի ապրիլի 14-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1999 թվականի ապրիլի 30-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի մայիսի 6-ից:

Դիմողի կողմից վիճարկվող դրույթը՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում որպես լրացում ներմուծվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-247-Ն օրենքով: Նշված օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2011 թվականի հունիսի 23-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2011 թվականի հուլիսի 19-ին եւ ուժի մեջ է մտել 2011 թվականի օգոստոսի 6-ից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. *«Գույքի նկատմամբ գրանցված իրավունքները եւ սահմանափակումներն ունեն իրավաբանական ուժ, իսկ բոլոր սուբյեկտները համարվում են տեղեկացված դրանց գրանցման մասին անկախ այն հանգամանքից, թե իրականում տեղյակ են այդ մասին, թե ոչ»:*

Մինչեւ օրենքի վիճարկվող դրույթն օրենքում ներմուծվելը նմանատիպ իրավական կարգավորումներ նախատեսող նորմ ամրագրված է եղել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի նախորդ խմբագրությամբ տեքստի 14-րդ հոդվածում՝ հետեւյալ շարադրանքով. *«Բոլոր ֆիզիկական եւ իրավաբանական անձինք գույքի գրանցման իրավունքների վերաբերյալ համարվում են տեղեկացված՝ անկախ նրանից՝ իրականում տեղյակ էին նրանք այդ իրավունքների մասին, թե ոչ»:*

*Գույքի նկատմամբ չգրանցված իրավունքները, որոնք նշվում են այլ փաստաթղթերում, բացի անշարժ գույքի պետական գրանցման միասնական մատրյանի գրանցման թերթիկներից, չեն համարվում նանաչված եւ գրանցված»:*

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. Օրջոնիկիձեի շրջափոխի դի գործկոմի 02.11.1984 թվականի թիվ 26/13 որոշմամբ Երեւան քաղաքի Նոր Արեշ 34-րդ փողոցի թիվ 41 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով գրանցվել է Ալեքսան Սարգսյանի անունով, ով մահացել է 09.08.1998 թվականին, իսկ նրա կինը՝ Հայկուշ Սարգսյանը՝ 13.07.2010 թվականին:

Ծնողների մահից հետո սույն գործով դիմողը փաստացի տիրապետման փաստի ուժով ընդունել է ժառանգությունը՝ Երեւան քաղաքի Նոր Արեշ 34-րդ փողոցի թիվ 41 հասցեում գտնվող անշարժ գույքը, սակայն այն չի ձեռակերպել:

Նրա կողմից են կատարվել ծնողների հուղարկավորության հետ կապված ծախսերը, ինչպես նաև վերոնշյալ անշարժ գույքի առնչությամբ հարկային եւ կոմունալ վճարումները:

1999 թվականին դիմելով դատարան՝ քաղաքացիներ Գարեգին Մելիքսեթյանը եւ Վահագն Մինասյանը, հայտնելով, որ իրենց պապը՝ Ալեքսան Սարգսյանը, հանդիսանալով Երեւան քաղաքի Նոր Արեշ 34-րդ փողոցի թիվ 41 հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատերը, 25.11.1986 թվականի կտակով նշված գույքը հավասար բաժիններով կտակել է իրենց, դատարանից խնդրել են հարգելի ճանաչել ժառանգության ընդունման ժամկետի բաց թողնելը:

Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը թիվ 2-290 քաղաքացիական գործով 10.05.1999 թվականին կայացրած վճռով վճռել է «Հարգելի համարել ըստ կտակի ժառանգության ընդունման ժամկետի բաց թողնելը եւ Գարեգին Մելիքսեթյանին եւ Վահագն Մինասյանին ճանաչել ժառանգությունը ընդունած Երեւանի Նոր Արեշի 34 փող. 41 տան նկատմամբ»:

Սույն գործով դիմողը մասնակից չի դարձվել Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանում քննված թիվ 2-290 քաղաքացիական գործին, եւ նրան տվյալ գործով դատարանի 10.05.1999 թվականին կայացված վճռի եւ Ալեքսան Սարգսյանի կողմից 26.11.1986 թվականին կազմված կտակի մասին հայտնի է դարձել միայն Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող՝ ըստ հայցի Թամարա Սարգսյանի ընդդեմ Վահագն Մինասյանի, Հարություն Առաքելյանի եւ Պայծառ Կնյազյանի՝ գործարքն անվավեր ճանաչելու, սեփականության իրավունքը դադարեցնելու եւ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին թիվ ԵԷԳ/0453/02/12 քաղաքացիական գործի նյութերից, երբ այդ գործով նախնական դատական նիստի ժամանակ Թամարա Սարգսյանին տրամադրվել է Վահագն Մինասյանի ներկայացրած հայցադիմումի պատասխանը, որին կից ներկայացված են եղել վերոնշյալ վճիռը եւ կտակը:

Թամարա Սարգսյանը Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 10.05.1999 թվականի թիվ 2-290 վճռի դեմ 18.09.2012 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք այն հիմքով, որ առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական եւ հիմնավորված չէ, այն կայացվել է իր՝ գործի քննությանը մասնակից չդարձված անձ Թամարա Սարգսյանի իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ, իսկ բողոքարկվող վճռի մասին իրեն հայտնի է դարձել թիվ ԵԷԳ/0453/02/12 քաղաքացիական գործով 03.08.2012 թվականին տեղի ունեցած նախնական դատական նիստի ավարտից հետո, երբ իրեն տրամադրվել է Վահագն Մինասյանի հայցադիմումի պատասխանը եւ դրան կից՝ վերը նշված վճիռը:

Վերաքննիչ դատարանն իր՝ 04.10.2012 թվականի որոշմամբ վերադարձրել է վերաքննիչ բողոքն այն պատճառաբանությամբ, որ «... վերաքննիչ բողոքին կից ներկայացված թիվ ԵԷԳ/0453/02/12 քաղաքացիական գործով Բողոքաբե-



րի ներկայացրած հայցադիմումի բովանդակությունից հետեւում է, որ վիճելի տան նկատմամբ կատարված է նաեւ սեփականության իրավունքի պետական գրանցում: Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի նկատմամբ գրանցված իրավունքները եւ սահմանափակումներն ունեն իրավաբանական ուժ, իսկ բոլոր սուբյեկտները համարվում են տեղեկացված դրանց գրանցման մասին անկախ այն հանգամանքից, թե իրականում տեղյակ են այդ մասին, թե ոչ: Ավելին՝ վերաքննիչ բողոքում եւ դրան կից ներկայացված վերը վկայակոչված հայցադիմումում նշված փաստարկների համաձայն՝ Բողոքաբերը ծնողների մահից հետո մշտապես բնակվել է վիճելի տանը, հետեւաբար նա կարող էր իմանալ իր ենթադրյալ իրավունքների խախտման՝ մասնավորապես բողոքարկվող դատական ակտի գոյության մասին:

Նշվածի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքը ներկայացվել է օրենքով սահմանված եռամսյա ժամկետը լրանալուց հետո, չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն»:

Վճռաբեկ դատարանն իր՝ 28.11.2012 թվականի որոշմամբ վերադարձրել է դիմողի վճռաբեկ բողոքը՝ վերահաստատելով վերաքննիչ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները:

**3.** Դիմողը գտնում է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 8, 18 եւ 31-րդ հոդվածներին:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող օրենքը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին: Իր այդ դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը վկայակոչում է իրավական օրենքի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի ՍԳՈ-753 որոշման մեջ եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հասանը եւ Չաուշն ընդդեմ Բուլղարիայի, «Սանդի Թայման» ընդդեմ Սիացյալ Թագավորության գործերով վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումները, հիշատակում է նաեւ Վենետիկի հանձնաժողովի 86-րդ լիազումար նստաշրջանում հաստատված «Իրավունքի գերակայության մասին գեկույցը»:

Իր սեփականության իրավունքի ենթադրյալ խախտման տեսանկյունից դիմողը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի մարտի 18-ի ՍԳՈ-741 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթը հակասում է օրենքի ուժով սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի սկզբունքին:

Դիմողը գտնում է նաեւ, որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին իրականում տեղեկացված չլինելու պարագայում տեղեկացված համարվելու դեպքում ինքը գրկվել է իր իրավունքները եւ պարտականությունները շոշափող դատական ակտի բողոքարկման վարույթին մասնակից դառնալու հնարավորությունից, իրավահավասարության եւ կողմերի նրցակցու-

թյան պայմաններում իր սեփականության իրավունքի խախտումը վերացնելու եւ խախտված իրավունքը վերականգնելու, ինչպես նաեւ արդար դատաքննության բոլոր պահանջների պահպանմամբ՝ իր իրավունքների արդյունավետ իրավական պաշտպանության հնարավորություններից:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկները, գտնում է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 8, 18 եւ 31-րդ հոդվածներին:

Իր դիրքորոշումը պատասխանողը հիմնավորում է նրանով, որ պետական գրանցման իմացության եւ գրանցված իրավունքների հավաստիության կանխավարկածներն ուղղված են քաղաքացիական շրջանառության կայունության ապահովմանը, քաղաքացիական շրջանառության մասնակիցների սեփականության եւ այլ գույքային իրավունքների պաշտպանությանը:

Անդրադառնալով օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդրին՝ դատական ակտերի բողոքարկման ժամկետների տեսանկյունից, պատասխանողը գտնում է, որ թեեւ անձը դատական ակտի մասին կարող է իմանալ նաեւ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միջոցով, **սակայն դատարանը այդ փաստը գնահատելիս պետք է հիմք ընդունի դատական ակտի չիմացության կամ այդ մասին տեղեկանալու իրական հնարավորության բացակայության վերաբերյալ ներկայացված փաստարկները:** Միաժամանակ, պատասխանողը շեշտում է դատական քննությանը մասնակից չդարձված անձի կողմից իր իրավունքների պաշտպանության նկատառումներով ընդհանուր հիմունքներով առաջին ատյանի դատարան հայց հարուցելու հնարավորությունը՝ հաշվի առնելով նաեւ հայցային վաղեմության ժամկետները:

Անդրադառնալով օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդրին՝ հայցային վաղեմության ինստիտուտի համատեքստում, պատասխանողը գտնում է, որ հայցային վաղեմությունը կարող է հաշվարկվել պետական գրանցման պահից, եթե անձը գիտեր կամ պարզապես պարտավոր էր իմանալ համապատասխան պետական գրանցման մասին: Միաժամանակ, այս կապակցությամբ պատասխանողը վկայակոչում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածը, որը սահմանում է այն պահանջները, որոնց վրա հայցային վաղեմություն չի տարածվում, եւ շեշտադրում է այդ պահանջներից մեկը՝ սեփականատիրոջ կողմից իր գույքի տիրապետման, օգտագործման եւ տնօրինման իրավունքները խախտող՝ պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձանց ակտն անվավեր ճանաչելու մասին պահանջը:

5. Անդրադառնալով օրենքի վիճարկվող դրույթների՝ իրավական որոշակիության սկզբունքին չհամապատասխանելու եւ սեփականության իրավունքը խախտելու հիմքերով ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ դիմողի

փաստարկներին՝ ՀՀ սահմանադրական դատարանը դրանք հիմնավոր չի համարում հետևյալ պատճառաբանությամբ. իրավական անորոշության վերաբերյալ իրավական դիրքորոշումներ սահմանադրական դատարանն արտահայտել է իր՝ 18.04.2006 թվականի ՍԳՈ-630 որոշման մեջ, որում ամրագրել է, որ «որեւէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձեւակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»:

Իր մեկ այլ՝ 13.05.2008 թվականի ՍԳՈ-753 որոշմամբ սահմանադրական դատարանը սահմանել է նաեւ, որ՝ «Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարեւոր գործոն է նաեւ տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջեւ հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը»:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների՝ սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշումների համատեքստում, ուսումնասիրությունից բխում է, որ օրենքի վիճարկվող դրույթը ձեւակերպված է բավարար հստակությամբ. օրենսդրի կամքը հստակորեն է արտահայտված եւ չի գրկում քաղաքացուն իր վարքագիծը վիճարկվող նորմի հետ համատեղելու հնարավորությունից, չի խոչընդոտում նաեւ տվյալ նորմով նախատեսված իրավակարգավորման շրջանակներում գործողության հետեւանքները կանխատեսելը, իսկ օրենքի վիճարկվող դրույթների եւ վերաբերելի օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ դիտարկվող հարցի առնչությամբ առկա չեն հակասություններ:

Ինչ վերաբերում է օրենքի վիճարկվող դրույթների՝ սեփականության իրավունքը խախտելու հիմքով ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ դիմողի փաստարկներին, ապա սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի վերաբերյալ դիմողի հիշատակված ՍԳՈ-741 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներն օրենքի վիճարկվող դրույթի սահմանադրականության հետ առնչություն չունեն, քանի որ գործող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ բոլոր այն անձինք, ում իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ ընդունվել է դատական ակտ նրանց բացակայության պայմաններում, իրավունք ունեն դիմելու դատարան, իսկ դատարան դիմելու համար սահմանված ժամկետները բաց թողնելու պարագայում նրանք կարող են ներկայացնել համապատասխան միջնորդություն՝ խնդրելով հարգելի ճանաչել բաց թողնված ժամկետը:

**6.** Սույն գործով դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված է իրավակիրառական պրակտիկայում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին տրված մեկնաբանությամբ: Մասնավորապես, դիմողը, որպես գործին մասնակից չդարձված անձ, որի իրավունքների եւ պարտականու-

թյունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, փորձել է օգտվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված իրավունքից, սակայն ՀՀ վերաքննիչ դատարանը վերադարձրել է բողոքն այն պատճառաբանությամբ, որ դիմողը բաց է թողել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ մասով բողոք բերելու համար նախատեսված եռամսյա ժամկետը եւ չի ներկայացրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված միջնորդությունը: Դատարանը դիմողի կողմից բողոքը ներկայացնելու ժամկետի բացթողումը հիմնավորել է երկու հանգամանքով՝

**Ուսխ** նրանով, որ դիմողը ծնողների մահից հետո մշտապես բնակվել է վիճելի տանը, հետեւաբար՝ **կարող էր իմանալ** իր ենթադրյալ իրավունքների խախտման, մասնավորապես, բողոքարկվող դատական ակտի գոյության մասին: Նշվածի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ իրավական դիրքորոշմամբ վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները եւ, մասնավորապես, նշված դրույթներում ամրագրված՝ «կարող էր իմանալ» արտահայտությունը, ինչպես նաեւ օգտվելով իր հայեցողական ազատությունից, գնահատել է գործի փաստական հանգամանքները եւ գտել, որ ծնողների մահից հետո վիճելի տանը մշտապես բնակվելու հետեւանքով դիմողը **կարող էր իմանալ** իր ենթադրյալ իրավունքների խախտման, մասնավորապես, բողոքարկվող դատական ակտի գոյության մասին,

**Երկրորդ**, հիմնավորումը պայմանավորվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով: Վերաքննիչ դատարանը, չհերքելով դիմողի ներկայացրած այն փաստը, որ իրականում դիմողը բողոքարկվող դատական ակտի մասին տեղեկացվել է 03.08.2012 թվականին, այդուհանդերձ, ամրագրելով «Մինչդեռ վերաքննիչ բողոքին կից ներկայացված ... հայցադիմումի բովանդակությունից հետեւում է, որ» բառակապակցությունը, արձանագրել է այն փաստը, որ վիճելի տան նկատմամբ կատարված է նաեւ սեփականության իրավունքի պետական գրանցում՝ կիրառելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը:

Վերաքննիչ դատարանի վերը նշված իրավական դիրքորոշման կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանը, փաստորեն, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին տվել է այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների եւ սահմանափակումների մասին տեղեկացված լինելու կանխավարկածը ներառում է նաեւ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար իրավական հիմք հանդիսացած **դատական ակտերի գոյության մասին տեղեկացված լինելու կանխավարկածը**, եւ որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները կարող են դրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ

մասով նախատեսված՝ դիմում ներկայացնելու համար սահմանված եռամսյա ժամկետի հաշվարկման հիմքում:

Մինչդեռ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների ուսումնասիրությունից բխում է, որ դրանք վերաբերում են գույքի նկատմամբ «գրանցված իրավունքների եւ սահմանափակումների» մասին իրավունքի սուբյեկտների՝ տեղեկացված լինելու կանխավարկածին, այլ ոչ թե գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար իրավական հիմք հանդիսացած դատական ակտերի գոյության մասին տեղեկացված լինելու կանխավարկածին: «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում կամ ընդհանրապես ՀՀ օրենսդրության մեջ առկա չէ որեւէ դրույթ, որ թույլ կտար պնդելու հակառակը կամ այն, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները կարող են դրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ դիմում ներկայացնելու համար սահմանված եռամսյա ժամկետի հաշվարկման հիմքում: Ավելին, օրենքի վիճարկվող դրույթների առնչությամբ ՀՀ կառավարությունը, որպես օրենսդրական նախաձեռնության հեղինակ, իր հիմնավորումներում նշել է, որ «սահմանվել է նաեւ նոր՝ **գրանցված իրավունքների հավաստիության կանխավարկածը**, որը եւս բավականին կարեւոր նշանակություն ունի գրանցված իրավունքների ճանաչման եւ պաշտպանության սկզբունքի ապահովման առումով»:

ՀՀ օրենսդրության եւ, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունից բխում է, որ օրենսդիրը դատական պաշտպանության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացումն ապահովելու նպատակով սահմանել է դատական ակտերի բողոքարկման ժամկետների հաշվարկման կարգ. դատական ակտերը բողոքարկվում են կա՛մ դրանց կայացման պահից, կա՛մ դրանք ստանալու պահից: Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-1052 եւ ՍԳՈ-1062 որոշումներում, անդրադառնալով դատական ակտերի բողոքարկման ժամկետներին, ամրագրել է իրավական դիրքորոշումներ, որոնցից բխում է, որ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ առկա են դատական ակտին ծանոթանալու եւ դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար ժամանակ ապահովող երաշխիքներ, այն է՝ երբ բողոքարկվող դատական ակտը տրամադրվի /հասանելի դարձվի/ անձին:

7. Ամփոփելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով սահմանված իրավակարգավորումն ինքնին չի առաջացնում հակասահմանադրական իրավիճակներ. այն կոչված է իր ամբողջության մեջ պաշտպանելու սեփականատիրոջ իրավունքները՝ առանց

շոշափելու երրորդ անձանց իրավունքները եւ օրինական շահերը: Այլ խնդիր է իրավակիրառական պրակտիկայում օրենքի վիճարկվող դրույթներին տրված մեկնաբանությունը: Այս կապակցությամբ դիմողի գործով դատական ակտերի ուսումնասիրության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանի կողմից օրենքի վիճարկվող դրույթներին տրված մեկնաբանությունը, **այն է գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վերաբերյալ իրազեկվածության կանխավարկածից դրա հիմքում ընկած դատական ակտի գոյության մասին իրազեկվածության կանխավարկած քիեցնելը** ոչ միայն չի արտացոլում օրենսդրի կամքը, այլեւ չի բխում դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումների սահմանադրաիրավական տրամաբանությունից՝ խաթարելով անձի՝ դատական պաշտպանության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքները: Իր հերթին, ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձնելով դիմողի վճռաբեկ բողոքը եւ **վերահաստատելով** տվյալ գործով ՀՀ վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշումները՝ անուղակիորեն արտահայտվել է նման իրավական մեկնաբանության իրավաչափության օգտին՝ կանխորոշելով վիճարկվող նորմի նման մեկնաբանությամբ կիրառման հնարավոր իրավակիրառ պրակտիկայի ձեւավորումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ **գույքի նկատմամբ գրանցված իրավունքների եւ սահմանափակումների մասին տեղեկացված լինելու կանխավարկածը չի ներառում գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար իրավական հիմք հանդիսացած եւ երրորդ անձի իրավունքներին անմիջականորեն առնչվող դատական ակտերի գոյության մասին տեղեկացված լինելու կանխավարկածը եւ չի հանդիսանում գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար իրավական հիմք հանդիսացած դատական ակտի բողոքարկման համար դատավարական օրենսգրքերով սահմանված ժամկետների հաշվարկման հիմք:**

2. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները սույն գործով դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված, մասնավորապես՝ որոշման եզրափակիչ մասի առաջին կետում բերված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող այլ մեկնաբանությամբ:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**11 հոկտեմբերի 2013 թվականի  
ՍԳՈ-1120**



## **ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՍՏՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**5 նոյեմբերի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Ջեյնալյանի, Ա. Ղազարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Մարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արթուր Խաչատրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Արթուր Խաչատրյանի՝ 03.04.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղա-



քացիական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին եւ ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.06.1998թ. ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասը սահմանում է. «Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաեւ չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ)»:

Ընդունվելուց ի վեր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում փոփոխություններ եւ լրացումներ չեն կատարվել:

2. Գործի համառոտ դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. 28.06.2010թ. Վարդան Խաչատրյանը «Վնասը փոխհատուցելու պահանջի մասին» հայց է ներկայացրել ՀՀ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, որով պահանջել է հատուցել իր կրած նյութական վնասը, այն է՝ իր ներկայացուցիչներին վճարած գումարը՝ իրեն դատական ատյաններում եւ ՀՀ սահմանադրական դատարանում ներկայացնելու համար, այդ գումարի վրա հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը, ինչպես նաեւ իր կրած ոչ նյութական (բարոյական) վնասը՝ այն հիմնավորմամբ, որ «Վարդան Խաչատրյանը բացի իրական վնասից, որ կրել է, այլ ապրումներ է ունեցել՝ սպասելով դատական կարգով իր գործի լուծմանը: Այդ անորոշությունը, որ տեսել է ընդհանուր իրավասության դատարան դիմելուց մինչեւ Սահմանադրական դատարանի դատական ակտի կայացումը, իր նկատմամբ դատարանների կողմից ՀՀ Սահմանադրությանը հակասող օրենքի դրույթների կիրառումը, իր արդար դատաքննության իրավունքի խախտումը, հոգեւոր տագնապ եւ անհանգստություն է պատճառել նրան: Վարդան Խաչատրյանը այդ հոգեւոր տագնապը եւ անհանգստությունը չէր կրի (հետեւանք), եթե նրա իրավունքը չխախտվեր (պատճառ)»: Առկա է պատճառահետեւանքային կապ»:

Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն իր՝ 15.07.2012թ. «Հայցադիմումը վարույթ ընդունելու եւ գործը դատաքննության նախապատրաստելու մասին» որոշմամբ հայցն ընդունել է վարույթ:

Վարդան Խաչատրյանի մահից հետո ընդհանուր իրավասության դատա-

րանն իր՝ 28.09.2011թ. «Քաղաքացիական գործի վարույթը վերսկսելու եւ դատական նիստ հրավիրելու մասին» որոշմամբ Արթուր Խաչատրյանին ճանաչել է ԵԿԳ/1320/02/10 գործով հայցվոր Վարդան Խաչատրյանի իրավահաջորդ եւ իր՝ 02.05.2012թ. վճռով հայցը բավարարել է մասնակի՝ վճռելով Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, հոգուտ Վարդան Խաչատրյանի իրավահաջորդ Արթուր Խաչատրյանի բռնագանձել է 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ՝ որպես Վարդան Խաչատրյանին պատճառված նյութական վնասի հատուցման գումար: Հայցը 564.225 ՀՀ դրամ նյութական վնասի եւ նյութական վնասի նկատմամբ հաշվարկվող հարկերի բռնագանձման պահանջի մասով մերժել է: Ոչ գույքային (բարոյական) վնասի հատուցման պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճել է այն պատճառաբանությամբ, որ «ի տարբերություն նյութական վնասի՝ բարոյական վնասը ՀՀ օրենսդրությունում չունի իր կարգավորումը», «դատարանը չի կարող կիրառել բարոյական վնասի ինստիտուտը, քանի դեռ առկա չէ դրա սահմանումը, կարգավորումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը բարոյական վնասի հատուցումը որպես պատասխանատվության տեսակ չի նախատեսում, որպիսի հիմքով վեճը ենթակա չէ դատարանում քննության»:

Վերոնշյալ վճռի դեմ երկայացվել է վերաքննիչ բողոք՝ հետեւյալ պահանջով. պարտավորեցնել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, Վարդան Խաչատրյանի իրավահաջորդ Արթուր Խաչատրյանին տրամադրել Վարդան Խաչատրյանի կրած նյութական եւ ոչ նյութական վնասների փոխհատուցում՝ 1.564.225 (մեկ միլիոն հինգ հարյուր վաթսուցորս հազար երկու հարյուր քսանհինգ) ՀՀ դրամի չափով՝ նյութական վնասի դիմաց եւ նշված գումարի վրա հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը, 2.000.00 (երկու հազար) եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով՝ ոչ նյութական, բարոյական վնասի դիմաց: Վերաքննիչ դատարանն իր՝ 26.07.2012թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակի՝ 1.564.225 ՀՀ դրամ վնասի բռնագանձման չբավարարված 564.225 ՀՀ դրամի մասով բեկանել է ՀՀ Երեսան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 02.05.2012 թվականի վճիռը, փոփոխել եւ հայցը 564.225 ՀՀ դրամի բռնագանձման մասով բավարարել է: Վճիռը մնացած մասերով համարել է հիմնավոր ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված նույն պատճառաբանությամբ. «ՀՀ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը բարոյական վնասի հատուցումը որպես պատասխանատվության տեսակ չի նախատեսում, որպիսի հիմքով վեճը ենթակա չէ դատարանում քննության»:

Վճռաբեկ դատարանը 19.09.2012թ. որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

3. Գիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունն այնքանով, որքանով այն չի ներառում բարոյական վնասի հատուցման ինստիտուտը՝ գտնելով, որ օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, այնքանով, որքանով անձի կրած ոչ նյութական վնասը չի դիտում որպես վնաս, հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 18, 19, 83.5-րդ հոդվածներին: Միաժամանակ, դիմողը նշում է, որ «սույն դիմումով վիճարկվում է իրավական բացի սահմանադրականություն»: Ընդ որում, հիմնավորելու համար իր կողմից բարձրացված՝ օրենքի բացի՝ սահմանադրական արդարադատության օբյեկտ լինելու թույլատրելիությունը՝ դիմողը վկայակոչում է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴ-Ո-914 որոշումը:

Ի հիմնավորումն իր դիրքորոշման՝ դիմողը նշում է, որ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության եւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները ենթադրում են, *inter alia*, «իրավասու պետական մարմնի կողմից» ինչպես գանգատի ըստ էության քննություն, այնպես էլ արդարացի փոխհատուցման տրամադրում»:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը վկայակոչում է նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի», «Խաչատրյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի» եւ «Կոմիսիոներսոյլ Ս.Ա.-ն ընդդեմ Պորտուգալիայի» գործերով վճիռները՝ նշելով, որ հիշատակված երրորդ գործով կայացված վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ «վճռով փոխհատուցման հարցը լուծելիս հաշվի է առնում գույքային վնասը, այսինքն՝ իրական վնասը, որը հանդիսանում է հայտարարված խախտման ուղղակի հետեւանքը, եւ բարոյական վնասը, այսինքն՝ տագնապի, անհանգստության եւ անվստահության վիճակը, որը վրա է հասել այդ խախտման արդյունքում, ինչպես նաեւ այլ ոչ գույքային վնասներ»:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը ներկա իրավակարգավորումների համատեքստում համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 3, 18, 19 եւ 83.5-րդ հոդվածներին պահանջներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածով սահմանված՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները, ներառյալ՝ վնասի հատուցումը, որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակ, ինչպես նաեւ նույն օրենսգրքի՝ ոչ նյութական բարիքների հասկացությանը վերաբերող 162-րդ հոդվածի այն դրույթը, համաձայն որի՝ ոչ նյութական բարիքները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին եւ այլ օրենքներին համապատասխան, պաշտպանվում են դրանցով նախատեսված դեպքերում ու կարգով, ինչպես նաեւ այն դեպքերում ու այն սահմաններում, որոնցում քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակների օգտագործումը բխում է խախտված

ոչ նյութական իրավունքի էությունից եւ այդ խախտումների հետեւանքների բնույթից, արձանագրում է, որ թեւէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում բարոյական վնասի մասին ուղղակի նշում չկա, սակայն այն կիրառվում է պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավն այլ անձանց արատավորող գործողություններից պաշտպանելու դեպքերում: Պատասխանողն արձանագրում է նաեւ, որ, այդուհանդերձ, նշված հանգամանքը չի վկայում բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտի ամբողջական ներդրման մասին, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը բարոյական վնասը չի դիտում որպէս վնասի տարատեսակ:

Կարեւորելով անձի իրավունքների լիարժեք պաշտպանության եւ խախտված իրավունքների արդյունավետ վերականգնման տեսանկյունից բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը՝ դիմողը կարծիք է հայտնում, որ խնդիրը հնարավոր չէ լուծել սույլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածում «բարոյական վնաս» հասկացության ներառմամբ, քանի որ այն պահանջում է բարոյական վնասի նյութական փոխհատուցման առանձին ինստիտուտի ներդրում, որը մանրամասն կարգավորմաներ կներառի «բարոյական վնաս» հասկացության, այդ ինստիտուտի կիրառման շրջանակների եւ հիմքերի, բարոյական վնասը հաշվելու հստակ մեխանիզմների եւ, ընդհանուր առմամբ, այս ինստիտուտի անխաթար կիրառությունն ապահովող այլ հարցերի վերաբերյալ:

**5. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 05.02.2010 թվականի ՍԳ-Ո-864 եւ 14.09.2010 թվականի ՍԳ-Ո-914 որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ սահմանադրական դատարանի կողմից օրենքի բացի սահմանադրականության հարցի քննության իրավական հնարավորության առնչությամբ: Սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-864 որոշմամբ սահմանվել է, որ «Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որ խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:**

Սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-914 որոշմամբ սահմանվել է, որ «Օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

Հաշվի առնելով դիմողի դիրքորոշումը եւ հիմք ընդունելով սահմանադրական դատարանի ՍԳՈ-864 եւ ՍԳՈ-914 որոշումներում արտահայտված՝ վերը նշված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթի սահմանադրականության գնահատման հարցին հարկ է անդրադառնալ հետեւյալ տեսանկյուններից՝

ա/ արդյոք ՀՀ իրավական համակարգում առկա են բարոյական վնասի ինստիտուտը եւ նման վնասի նյութական հատուցման հնարավորության իրավական հիմքերը,

բ/ արդյոք Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների ուժով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է ազգային իրավական համակարգում նախատեսել ոչ նյութական (բարոյական) վնասի նյութական փոխհատուցման հնարավորությունը:

6. Վերը նշված հարցադրումների առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ Սահմանադրության մի շարք դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը վկայում է այն մասին, որ բարոյական վնասը եւ բարոյական վնասի նյութական հատուցման հնարավորությունը բխում են մարդու իրավունքների պաշտպանության հարցում որդեգրված սահմանադրաիրավական մոտեցումներից: Այսպես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են»: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու արժանապատվության առանցքային բաղադրատարրերից մեկը, ի թիվս այլնի, հանդիսանում է անհատական հատկանիշներով պայմանավորված բարոյական տառապանքներից զերծ մնալը: Սահմանադրության 16-րդ հոդվածը, իր հերթին, երաշխավորում է անձի անձնական ազատությունն ու անձեռնմխելիությունը: Նշված հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի գրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով եւ կարգով պատճառված վնասի հատուցման»: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ ազատությունից ապօրինի գրկելու կամ ապօրինի խուզարկության դեպքում անձին պատճառված վնասը չի կարող մեխանիկորեն հանգեցվել սոսկ կրած ֆիզիկական կամ նյութական վնասի փոխհատուցմանը, քանզի տվյալ դեպքում տուժած անձին տրամադրված փոխհատուցումը համարժեք չի լինի վերջինիս կրած հոգեկան տառապանքներին: Տվյալ համատեքստում անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի կանոնակարգումներին, որով սահմանվում է, որ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաեւ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի», սահմանադրական դատարանը գտնում է, որ խոշտանգումները, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը չեն կարող չուղեկցվել հոգեկան եւ բարոյական տառապանքների պատճառմամբ, որոնք կարող են նույնիսկ ավելին լինել, քան դրանց հետեւանքով պատճառ-

ված հնարավոր ֆիզիկական (մարմնական) կամ նյութական վնասը, եւ առանց որոնց ողջամիտ եւ արդարացի փոխհատուցման հնարավոր չէ ամբողջությամբ հատուցել անձին եւ նրա արժանապատվությանը պատճառված վնասը: Հակառակ դեպքում հնարավոր չի լինի երաշխավորել Սահմանադրությամբ որպէս բարձրագույն արժեքներ հռչակված մարդու, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը:

7. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում նաեւ արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության մի շարք նորմատիվ իրավական ակտերով նախատեսված են համապատասխան դրույթներ՝ պատճառված բարոյական վնասի նյութական փոխհատուցման վերաբերյալ: Այսպէս, ՀՀ տարբեր նորմատիվ իրավական ակտերում առկա է «բարոյական վնաս» եզրույթը: Մասնավորապէս, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 268-րդ հոդվածով սահմանված է, որ «Տուժող համարվում է այն անձը, որին վարչական իրավախախտման հետեւանքով բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս է պատճառվել»: «Բարոյական վնաս» եզրույթն ամրագրված է նաեւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներում, մասնավորապէս՝ 6-րդ հոդվածի 45-րդ կետում, որում «վնաս» եզրույթը դիտարկվում է որպէս «դրամական չափման ենթակա բարոյական, ֆիզիկական, գույքային վնաս»: Նույն օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանելով «տուժող» եզրույթի հասկացությունը, ամրագրում է, որ «Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաեւ այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը»: «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Ոչ գույքային վնասի հատուցման հիմքերը եւ կարգը» վերտառությամբ 104-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Ոչ իրավաչափ վարչարարությամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելու միջոցով ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետեւանքների վերացում՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով»:

Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեւէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող 17-րդ հոդվածի 2-րդ մասը վնասների շարքին չի դասում բարոյական վնասը, այդուհանդերձ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին եւ 8-րդ կետերում նախատեսվում է անձի արժանապատվությանը, պատվին կամ գործարար համբավին պատճառված վնասի դրամական հատուցման հնարավորությունը. համապատասխան

նաբար՝ վիրավորանքի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի, իսկ գրպարտության դեպքում՝ 2000-ապատիկի չափով: Ընդ որում, նույն հոդվածի 11-րդ կետով նախատեսված է, որ վիրավորանքի եւ գրպարտության դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը չպետք է հաշվի առնի վիրավորանքի կամ գրպարտության հետեւանքով պատճառված գույքային վնասը: Այն հանգամանքը, որ դատարանն անձի արժանապատվության, պատվին կամ գործարար համբավին պատճառված վնասի փոխհատուցման չափը որոշելիս հաշվի չի առնում պատճառված գույքային վնասը, ուղղակիորեն վկայում է այն մասին, որ դատարկվող կանոնակարգման նպատակը գույքային վնասը հատուցելը չէ: Ընդհակառակը, այն կոչված է կանոնակարգելու անձին պատճառված բարոյական վնասի նյութական փոխհատուցման հնարավորությունները:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը եւս վկայում է, որ անձի արժանապատվությանը, պատվին կամ գործարար համբավին պատճառված վնասի դրամական հատուցման կանոնակարգումները վերաբերում են հենց բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտին (նման ինստիտուտ նախատեսված է, մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության, Խորվաթիայի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Սլովենիայի, Իսպանիայի եւ այլ երկրների օրենսդրությամբ):

Ելնելով վերը նշվածից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված են բարոյական վնասի նյութական փոխհատուցման բազմաթիվ դեպքեր, սակայն նշված ինստիտուտն ամբողջական կանոնակարգման ենթարկված չէ, ինչը թույլ չի տալիս օրենսդրական ներդաշնակություն ապահովել նման վնասի նյութական փոխհատուցման դեպքերի, հիմքերի եւ կարգի կանոնակարգման հարցում, ինչը, իր հերթին, խոչընդոտում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների եւ ազատությունների արդյունավետ պաշտպանությանը: Ավելին, նշված իրավիճակը չի կարող համահունչ համարվել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթին, ըստ որի՝ «Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

**8. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է Հայաստանի Հանրապետության պարտավորությունը՝ ապահովել մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Իսկ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված է, որ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:**

Խնդրո առարկա հարցին անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի եւ 43-րդ հոդվածի 2-րդ մասերի տեսանկյունից՝ սահմանադրական

դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում անձին պատճառված բարոյական վնասի նյութական փոխհատուցման ոչ ներդաշնակ կանոնակարգումները խոչընդոտում են Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ իրականացմանը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ բարոյական վնասի նյութական փոխհատուցման իրավունքը բխում է թե՛ ՀՀ Սահմանադրության եւ ՀՀ մի շարք օրենսդրական ակտերի դրույթների բովանդակությունից եւ թե՛ ՀՀ կողմից ստանձնված միջազգային պարտավորություններից, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (կից արձանագրություններով) դրույթներից եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայից:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հայաստանի Հանրապետության դեմ կայացրած մի շարք վճիռներում անձին պատճառված բարոյական վնասի դիմաց նյութական փոխհատուցում չտրամադրելը դիտել է որպես Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (կից արձանագրություններով) համապատասխան դրույթների խախտում: Մասնավորապես, Խաչատրյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի Հանրապետության (զանգատ թիվ 23978/06, 27.11.2012թ.) եւ Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության (զանգատ թիվ 22999/06, 12.06.2012թ.) գործերով կայացված վճիռներով ներպետական օրենսդրության վկայակոչմամբ բարոյական վնասի նյութական փոխհատուցում չտրամադրելը ճանաչվել է որպես Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի խախտում: Իսկ Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է. «Դատարանը նախկինում վճռել է, որ Կոնվենցիայի ամենահիմնարար դրույթների՝ 2-րդ եւ 3-րդ հոդվածների խախտման հետեւանքով առաջ եկող ոչ նյութական վնասի փոխհատուցումը սկզբունքորեն պետք է հասանելի լինի հնարավոր պաշտպանության միջոցների շարքում»: Նույն վճռում արձանագրվել է նաեւ, որ տվյալ գործով դիմումատուն պետք է հնարավորություն ունենար դիմելու վատ վերաբերմունքի հետեւանքով կրած ոչ նյութական վնասի փոխհատուցման համար: Անդրադարձ է կատարվել նաեւ Կոնվենցիայի 7-րդ Արձանագրության 3-րդ հոդվածին, ինչի առնչությամբ ընդգծվել է, որ «Դատարանը կրկնում է, որ թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի նպատակն է փոխհատուցման իրավունք ընձեռել անձանց, ովքեր դատապարտվել են դատական սխալի հետեւանքով եւ երբ հետագայում այդ դատավճիռը չեղյալ է հայտարարվել ազգային դատարանների կողմից՝ նոր կամ նոր բացահայտված որեւէ փաստի հիմքով»: Նույն վճռով Դատարանը նաեւ արձանագրել է հետեւյալը. «Ինչ վերաբերում է թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների համապատասխանության հարցին, ապա Դատարանը գտնում է, որ թեւեւ այս դրույթը երաշխավորում է փոխհատուցման վճարումը



տվյալ պետության օրենքին կամ պրակտիկային համապատասխան, այն չի ենթադրում, որ փոխհատուցում չի վճարվում, եթե ազգային օրենքը կամ պրակտիկան չեն նախատեսում մնան փոխհատուցում»։ Բացի դրանից, Գատարանը գտնելով, որ թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի նպատակը սոսկ սխալ դատապարտման դեպքում նյութական վնասի վերականգնումը չէ, այլ նաեւ դատական սխալի հետեւանքով դատապարտված անձին ոչ նյութական փոխհատուցման տրամադրումը, օրինակ՝ հյուծման, անհանգստության, անհարմարության եւ կյանքի նկատմամբ հավատի կորստի դեպքերում, միաժամանակ արձանագրել է, որ մնան փոխհատուցում դիմումատուին տվյալ գործով հասանելի չի եղել։ Միաժամանակ, Խաչատրյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով կայացված վճռով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն, արձանագրելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում, սահմանել է, որ 5-րդ հոդվածի 5-րդ կետը չպետք է մեկնաբանվի այնպես, որ ընձեռվի միայն նյութական վնասի հատուցում. մնան իրավունք պետք է ընձեռվի նաեւ ցանկացած հյուծման, անհանգստության եւ զայրույթի/հուսախաբության համար, ինչն անձը կարող էր կրել 5-րդ հոդվածի այլ կետերի խախտման արդյունքում:

Հինք ընդունելով վերոշարադրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ օրենսդրությամբ բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտի թերի կանոնակարգումը համահունչ չէ նաեւ ՀՀ կողմից ստանձնված միջազգային պարտավորություններին:

9. Միաժամանակ, ելնելով մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության եւ դրանցով պայմանավորված՝ բարոյական վնասի ինստիտուտին առնչվող կանոնակարգումների լիարժեքությունն ապահովելու անհրաժեշտությունից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ բարոյական վնասի նյութական փոխհատուցման ընդհանուր չափանիշներն ու կարգը պետք է օրենսդրորեն հստակ ամրագրվեն, որպեսզի երաշխավորվի համապատասխան դեպքերում եւ կարգով անձին պատճառված բարոյական վնասի ողջամիտ եւ արդարացի փոխհատուցումը, ապահովվի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մարդու իրավունքների եւ ազատությունների արդյունավետ իրականացումը եւ չխոչընդոտվի Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

Սահմանադրական դատարանն ընդունում է ի գիտություն, որ նշված հանգամանքները հաշվի առնելով՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից նախապատրաստվում է ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու եւ, մասնավորապես, Հայաստանի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերոնշյալ վճիռների կատարումը երաշխավորելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, այնքանով, որքանով բարոյական վնասը չի դիտում որպես վնասի տարատեսակ եւ չի ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն՝ արգելափակելով անձի՝ դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, միաժամանակ խոչընդոտելով Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարմանը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 16-րդ հոդվածի 4-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող եւ անվավեր:

2. Հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կհանգեցնի այնպիսի հետեւանքների, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ պահանջվում է բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտի համակարգված օրենսդրական կանոնակարգում, որը, մասնավորապես, կներառի «բարոյական վնաս» հասկացության, այդ ինստիտուտի կիրառման շրջանակների եւ հիմքերի, բարոյական վնասը հաշվելու հստակ կարգի եւ այլ հարցերի վերաբերյալ դրույթներ, ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2014թ. հոկտեմբերի 1-ը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**5 նոյեմբերի 2013 թվականի  
ՍԳՈ-1121**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ,  
ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ  
311-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**19 նոյեմբերի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի հետազոտությունների եւ վերլուծությունների կենտրոնի փորձագետ Հ. Սարգսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 71-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի, Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի եւ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 26.06.2013թ., Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 22.08.2013թ. եւ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 17.09.2013թ. սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

ՀՀ սահմանադրական դատարանի 16.07.2013թ. ՄԳԱՌ-69 աշխատակարգային որոշմամբ «Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունվել է քննության, որոշվել է գործի դատաքննությունն սկսել 2013թ. նոյեմբերի 19-ին, գրավոր ընթացակարգով, եւ գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Վ. Հովհաննիսյանին:

ՀՀ սահմանադրական դատարանի 10.09.2013թ. ՄԳԱՌ-75 աշխատակարգային որոշմամբ «Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունվել է քննության, որոշվել է այն միավորել «Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի հետ, գործի դատաքննությունն սկսել 2013թ. նոյեմբերի 19-ին, գրավոր ընթացակարգով, եւ գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Վ. Հովհաննիսյանին:

ՀՀ սահմանադրական դատարանի 01.10.2013թ. ՄԳԱՌ-81 աշխատակարգային որոշմամբ «Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունվել է քննության, որոշվել է այն միավորել «Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի եւ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործի հետ:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003թ.

ապրիլի 18-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. ապրիլի 29-ին եւ ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ից:

ՀՀ քրեական օրենսգրքում դիմողների կողմից վիճարկվող դրույթը լրացվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-18-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2012 թվականի փետրվարի 9-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2012 թվականի մարտի 2-ին եւ ուժի մեջ մտել 2012 թվականի մարտի 24-ին: Հիշյալ լրացումից հետո ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածը փոփոխությունների չի ենթարկվել:

ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի շրջանակներում գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. ՀՀ ՀԲԾ ՀԿԳ ավագ քննիչ Լ. Մելքոնյանի 2012թ. նոյեմբերի 12-ի որոշմամբ Ս. Մելքոնյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով՝ նրա համար, որ նա, ծառայելով ՀՀ ոստիկանությունում, աշխատելով ոստիկանության Բննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերի քննության վարչությունում որպես ավագ քննիչ, հանդիսանալով պաշտոնատար անձ, կաշառք տվողի եւ նրա ներկայացրած անձի օգտին իր պաշտոնական լիազորությունների շրջանակում որոշակի գործողություններ չկատարելու համար ընդունել է վերջինիս՝ խոշոր չափերի կաշառք տալու առաջարկը:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի փետրվարի 22-ի դատավճռով ամբաստանյալ Ս. Մելքոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով եւ դատապարտվել ազատազրկման չորս տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Համաձայն առաջին ատյանի դատարանի դատավճռի՝ «...դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Սամվել Նորիկի Մելքոնյանի կողմից, նրա մեղավորությամբ, որ-

պես պաշտոնատար անձ կաշառք ստանալը, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից դրամ ստանալու առաջարկն ընդունելը՝ կաշառք տվողի եւ նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որեւէ գործողություն չկատարելու համար, որը կատարվել է խոշոր չափերով, ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված եւ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին»:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 2013 թվականի մարտի 29-ի որոշմամբ Ս. Մելքոնյանի պաշտպանի վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ, իսկ 2013 թվականի հունիսի 21-ի որոշմամբ, բավարարելով պաշտպանի միջնորդությունը, որոշել է կասեցնել վերաքննիչ վարույթը եւ դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ «կամ պահանջել կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը» բառակապակցության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով:

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դիմումի շրջանակներում գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. 2013թ. հունվարի 11-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթ է ընդունվել քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Էդուարդ Աշոտի Չաքարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, Գետրգ Ավետիքի Գետրգյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, Վաղինակ Վահագնի Վարդանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, ինչպես նաեւ Գետրգ Էդիկի Մարտիրոսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ 2013 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ, բավարարելով պաշտպանի միջնորդությունը, Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը որոշել է կասեցնել գործի վարույթը եւ դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ «կամ պահանջել կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը» բառակապակցության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի շրջանակներում գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին (մեջբերում դատարանի 2013թ. սեպտեմբերի 12-ի որոշումից). «... ամբաստանյալ Հովսեփի Հակոբյանը հանդիսանալով պաշտոնատար անձ, 2012 թվականի օգոստոսի 04-ին, ճանապարհային երթեւեկության կանոնների խախտում թույլ տված ... վարորդ Պարույր Թալանչյանից, վերջինիս օգտին իր լիազորությունների շրջանակում գործողություն չկատարելու, այն է՝ ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման համար նախատեսված 300.000 ՀՀ դրամի տուգանքը չարձանագրելու համար անձամբ, որպես կաշառք պահանջել է 15.000 ՀՀ դրամ գումար, որից հետո ամբաստանյալ Ար-

սեն Գրիգորյանի միջնորդությամբ համաձայնության է եկել պահանջված գումարի փոխարեն ստանալ 10.000 ՀՀ դրամ գումար, որը սակայն չի ստացել»։ Նույն որոշմամբ, բավարարելով պաշտպանի միջնորդությունը, Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը որոշել է կասեցնել Հովսեփ Լեւիկի Հակոբյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը եւ դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ «կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը» բառակապակցության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով։

3. Գիմողները, արձանագրելով, որ մինչեւ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-18-Ն օրենքի ընդունումը գործող նախորդ իրավակարգավորման պայմաններում իրենց վարույթներում գտնվող գործերով մեղադրվող անձանց կողմից կատարված արարքը կմեկնաբանվեր որպես կաշառք ստանալու նախապատրաստություն կամ հանցափորձ, մինչդեռ նոր իրավակարգավորման պայմաններում այն դիտարկվում է որպես ավարտված հանցագործություն, գտնում են, որ հանցագործությունն ավարտին հասցնելուց կամովին հրաժարվելու հնարավորության նման սահմանափակումը եւ կաշառք ստանալու նյութական հանցակազմի կիրառման անհնարիությունը հակասում են Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջներին, ինչպես նաեւ Սահմանադրության 19-րդ հոդվածով սահմանված՝ արդար դատաքննության եւ 14.1-րդ հոդվածով սահմանված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքներին եւ անհավասար վիճակի մեջ դնում այն անձանց, ովքեր հանցանքը կատարել են մինչեւ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-18-Ն օրենքի ընդունումը, եւ այն անձանց, ովքեր հանցանքը կատարել են նշված օրենքն ընդունելուց հետո։

Իրենց դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողները փաստարկում են, որ ներկայիս իրավակարգավորման պայմաններում հանցագործությունը, փաստորեն, չի անցնում նախապատրաստության եւ հանցափորձի փուլեր եւ ավարտված է համարվում այն պահից, երբ անձը որեւէ ձեռով կպահանջի կաշառքի առարկան, այն ստանալու խոստում կտա կամ ստանալու առաջարկը կընդունի, իսկ նախապատրաստության կամ հանցափորձի փուլերի բացակայությունը նշանակում է, որ անձը զրկվում է հանցագործությունից կամովին հրաժարվելու հնարավորությունից։ Գիմողները փաստարկում են նաեւ, որ ներկայիս իրավակարգավորման պայմաններում նյութական հանցակազմ հանդիսացող կաշառք ստանալու փորձը կամ նախապատրաստությունը պատժվում է ավելի մեղմ, քան կաշառք ստանալու ձեռական հանցակազմը՝ կաշառք պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը։

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը հիշատակում է նաեւ 1999թ. հունվարի 27-ի՝ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան, որով սկստիվ կաշառակերություն է դիտարկվում

նաեւ կաշառքի առարկան ստանալու խոստումը կամ կաշառքի առաջարկն ընդունելը, եւ 2003թ. հոկտեմբերի 31-ի՝ ՄԱԿ-ի՝ Կոռուպցիայի դեմ կոնվենցիան, որով մասնակից պետություններին պարտավորեցվում է քրեականացնել միայն կաշառք ստանալը:

Բացի դրանից, ի տարբերություն մյուս դիմողների, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը գտնում է նաեւ, որ.

ա/ ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող նորմը հակասում է իրավական ակտերի կազմման, դրանց բովանդակության, իրավական ուժի, մեկնաբանության կանոններին, ինչպես նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածին, քանի որ վերջինս որպէս քրեական պատասխանատվության հիմք է դիտարկում միայն քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները պարունակող հանցանքի կատարումը, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կաշառքի առարկան պահանջելը, այն ստանալու խոստում տալը, կաշառքի առաջարկն ընդունելը համարժեք չեն կաշառք ստանալու ավարտված հանցակազմին,

բ/ ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող դրույթներով պաշտոնատար անձին պրովոկացիայի գոհ դառնալու հնարավորությունը բացառող երաշխիքային բնույթի իրավադրույթներ չնախատեսելը հակասում է Սահմանադրության 14.1-րդ հոդվածով սահմանված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքին,

գ/ իրավակիրառ պրակտիկայում մեկնաբանության կարիք ունի ՀՀ քրեական օրենսգրքի բազմաթիվ, նաեւ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311, 311.1. եւ 311.2-րդ հոդվածներում արարքը որակյալ դարձնող «նույն արարքը» եզրույթի պարզաբանումը, քանի որ իրավակիրառական պրակտիկայում մի դեպքում այն մեկնաբանվում է որպէս ՀՀ քրեական օրենսգրքի տվյալ հոդվածի տվյալ մասից առաջ գտնվող բոլոր մասերին վերաբերող, մյուս դեպքում՝ միայն այդ մասին նախորդող մասին վերաբերող:

**4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողների փաստարկներին, գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին:**

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանող կողմն արձանագրում է, որ ի սկզբանէ ՀՀ քրեական օրենսգրքում կաշառք ստանալու հանցակազմի օբյեկտիվ կողմն ընդգրկում էր հանրորեն վտանգավոր գործողությունների նեղ շրջանակ, ինչը չէր համապատասխանում միջազգային պահանջներին: Հետագայում՝ 05.12.2006թ. ՀՕ-256-Ն եւ 09.02.2012թ. ՀՕ-18-Ն ՀՀ օրենքներով ՀՀ քրեական օրենսգրքում կաշառք ստանալու հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների ցանկն ընդլայնվեց: Ընդ որում, համապատասխան փոփոխություններ կատարվեցին նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի՝ կաշառքին վերաբերող մյուս հոդվածներում, մասնավորապէս, 200-րդ (Առեւտրային կաշառքը), 201-րդ (Արհեստավարժ մարզամրցումների եւ հանդիսադիր առեւտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը), 311.1-րդ (Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայո-



ղի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը), 311.2-րդ (Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելը), 312-րդ (Կաշառք տալը), 312.2-րդ (Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը) հոդվածներում:

Հղում կատարելով 1999թ. հունվարի 27-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի՝ համապատասխանաբար ակտիվ եւ պասիվ կաշառակերության վերաբերյալ 2-րդ եւ 3-րդ հոդվածներին, որոնցով, ըստ պատասխանողի, կաշառքի ակտիվ ձեւի բովանդակային ծավալում ներառված են որեւէ օգուտ խոստանալը, առաջարկելը, տալը, իսկ կաշառքի պասիվ ձեւի բովանդակային ծավալում ներառված են որեւէ օգուտ պահանջելը, ստանալը, ստանալու առաջարկության ընդունումը, ստանալու խոստման ընդունումը, ինչպես նաեւ անդրադառնալով նշված կոնվենցիային կից թիվ 173 Բացատրական գեկույցին, որտեղ, ըստ պատասխանողի, առավել պարզեցվում են ակտիվ եւ պասիվ կաշառակերության հասկացությունները, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2003թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում ընդունված՝ «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 15-րդ հոդվածին, 1999թ. նոյեմբերի 4-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիային /որով, ըստ պատասխանողի, կոռուպցիան բնորոշվում է որպես կաշառք կամ որեւէ անհիմն օգուտ կամ աշխարհիկ օգուտի խոստում պահանջելը, առաջարկելը, տալը կամ ընդունելը/, պատասխանող կողմն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքում կատարված՝ վերը նշված փոփոխություններն ունեն հակակոռուպցիոն բնույթ, անմիջականորեն բխում են Եվրոպայի խորհրդի եւ ՄԱԿ-ի կողմից կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով ընդունված միջազգային կոնվենցիաների վավերացմամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից, ինչպես նաեւ GRECO-ի (Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբ) առջեւ մեր պետության ստանձնած պարտավորություններից, որի պահանջներից մեկը կոռուպցիայի դեմ պայքարի մեթոդների կատարելագործումն է: Այդ նպատակով ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1272-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը եւ դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը, որով նախատեսվում էր ՀՀ քրեական օրենսգրքը կոռուպցիոն բնույթի հանցագործությունների մասով համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ կոռուպցիայի քրեականացման չափանիշները սահմանող միջազգային կոնվենցիաներին եւ համաձայնագրերին:

Անդրադառնալով դիմողների այն փաստարկին, որ կաշառք ստանալու հանցակազմը նախկինում նախատեսված էր նյութական հանցակազմով, պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի ընդունումից ի վեր կաշառքի հետ կապված հանցակազմերը նախատեսված են եղել ձեւական հանցակազմով. տարբերությունը եղել է միայն հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների շրջանակի մեջ, իսկ կաշառք համարվող հանցագործությունների կատարմամբ առաջ եկող հետեւանքները հանցակազ-

մի բաղկացուցիչ մաս չեն կազմել: Միաժամանակ, պատասխանող կողմը կարծիք է հայտնում, որ գործող իրավակարգավորումից առաջ եկող հնարավոր բարդություններն ընդհանուր են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների համար, հիմնականում պայմանավորված են դրանց բացահայտման դժվարությամբ եւ դրանից առաջ եկող ապացուցման խնդիրներով, ինչը նորմի սահմանադրականության խնդրին չի վերաբերում:

Անդրադառնալով ավարտված հանցագործության եւ հանցագործությունից կանոփին հրաժարվելու վերաբերյալ դիմողների փաստարկներին՝ պատասխանող կողմը դրանք հիմնավոր չի համարում, գտնելով, որ հանցագործությունից կանոփին հրաժարվելը հնարավոր է միայն այն հանցագործությունների դեպքում, որտեղ նախապատրաստություն կամ հանցավորձ օբյեկտիվորեն հնարավոր է, եւ իրականության մեջ բազմաթիվ են այն դեպքերը, երբ հանցագործությունը նախապատրաստության փուլ չի անցնում: Ըստ պատասխանողի՝ հանցագործությունը տվյալ փուլում ավարտված համարելը պայմանավորված է ոչ թե սուբյեկտիվ մոտեցմամբ, այլ օբյեկտիվորեն գոյություն ունեցող հանրային վտանգավորությամբ, եւ օրենսդիրը չի կարող հանցակազմն արհեստականորեն այնպես կառուցել, որ կատարողի համար հատուկ առանձնացվի առանձին ժամանակահատված դրա կատարումից կանոփին հրաժարվելու համար:

Հղում կատարելով ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության եւ հետադարձ ուժի վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 22-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 12 եւ 13-րդ հոդվածներով սահմանված իրավակարգավորումներին՝ պատասխանող կողմը հիմնավոր չի համարում նաեւ խնդրո առարկա նորմի եւ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի միջեւ հարաբերակցության վերաբերյալ դիմողների փաստարկները, գտնելով, որ դիմողների նշած եղանակով առաջնորդվելու պարագայում կստացվի, որ օրենսդիրը երբեւէ չի կարող պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենք ընդունել, քանի որ այն նախկին իրավակարգավորման համեմատ անհավասար պայմաններ կստեղծի նույնաբնույթ արարքը տարբեր ժամանակահատվածներում կատարած հասարակության տարբեր անդամների միջեւ:

**5.** Չանդրադառնալով կողմերի այն հարցադրումներին, որոնք վեճի առարկա դրույթի սահմանադրականությանը չեն վերաբերում, սույն գործի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

**առաջին**՝ Հայաստանի Հանրապետությունը 2004թ. դեկտեմբերի 8-ին վավերացրել է 1999թ. նոյեմբերի 4-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիան, 2005թ. դեկտեմբերի 8-ին՝ 2003թ. մայիսի 15-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան, 2006թ. հոկտեմբերի 23-ին՝ 2003թ. հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում ընդունված՝ Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան:

Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի

բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

**Երկրորդ`** «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն` վավերացման ենթակա միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետությունում նախնական պարտադիր սահմանադրական վերահսկողության օբյեկտ են: Օրենքով սահմանված ընթացակարգի շրջանակներում Հանրապետության Նախագահը նախապես դիմել է ՀՀ սահմանադրական դատարան` հիշյալ կոնվենցիաներով ստանձնված պարտավորությունների` ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը քննության առնելու համար:

**Երրորդ`** ՀՀ սահմանադրական դատարանը համապատասխանաբար ընդունել է ՍԳՈ-530 /09.11.2004թ./, ՍԳՈ-483 /30.03.2004թ./ եւ ՍԳՈ-641 /30.06.2006թ./ որոշումները, որոնցով հիշյալ կոնվենցիաներով ստանձնված պարտավորությունները ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Մասնավորապես, 1999թ. հունվարի 27-ին Ստրասբուրգում ստորագրված` «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանվում է, որ ազգային պետական պաշտոնյաների պարագայում քրեական պատասխանատվության ենթակա ակտիվ կաշառակերությունը ներառում է «...դիտավորությամբ որեւէ պետական պաշտոնյայի ուղղակիորեն կամ անուղղակիորեն անհիմն օգուտ խոստանալը, առաջարկելը կամ տալը` նրա կամ ուրիշ որեւէ մեկի համար, որպեսզի այդ պաշտոնյան իր իրավասության շրջանակներում որեւէ գործողություն կատարի կամ դրա կատարումից ձեռընպահ մնա»: Նույն կոնվենցիայի 3-րդ հոդվածով ազգային պետական պաշտոնյաների քրեորեն պատժելի պասիվ կաշառակերության բովանդակային ծավալում ներառվում է «... որեւէ պետական պաշտոնյայի` դիտավորությամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն` նրա կամ ուրիշ որեւէ մեկի համար անհիմն որեւէ օգուտ պահանջելը կամ ստանալը կամ մման օգուտի առաջարկ կամ խոստում ընդունելը, որպեսզի այդ պաշտոնյան իր իրավասության շրջանակներում որեւէ գործողություն կատարի կամ դրա կատարումից ձեռնպահ մնա»:

1999թ. նոյեմբերի 4-ին Ստրասբուրգում ստորագրված` «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիայի 2-րդ հոդվածում ամրագրված է, որ` «Սույն կոնվենցիայի նպատակների համար «կոռուպցիա» նշանակում է` ուղղակիորեն կամ անուղղակիորեն կաշառք կամ որեւէ անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջելը, առաջարկը, տալը կամ ընդունելը, որը խախտում է կաշառք, անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջողի կողմից ցանկացած պարտականության պատշաճ կատարումը կամ պահանջվող վարքագիծ»:

Անրաժեշտ է շեշտել նաեւ, որ Եվրոպայի խորհրդի կազմում գործում է կաշառակերության դեմ պայքարի մասնագիտացված կառույցը` Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը` GRECO-ն (Group of States against corrup-

tion), որի վերահսկողության շրջանակներում է հիշյալ կոնվենցիաներով անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

Հայաստանի Հանրապետությունը, լինելով Եվրոպայի խորհրդի անդամ, միջազգային պարտավորություններ է ստանձնել ընդունել համարժեք օրենսդրական ակտեր թե՛ ակտիվ եւ թե՛ պասիվ կաշառակերության դեմ անհրաժեշտ պայքար ծավալելու ուղղությամբ՝ դրանց համար սահմանելով համապատասխան քրեական պատիժ: Դրա նպատակն է **թույլ չտալ, որպեսզի պաշտոնյայի անհամաչափ գործողության կամ անգործության արդյունքում խտրական իրավիճակ ստեղծվի մարդկանց իրավունքների պաշտպանության հարցում: Սա ավելին է, քան պարզապես պաշտոնական դիրքի շարաշահումը, որովհետեւ հետեւանքը հանգեցնում է իրավական պետության հիմնարար սկզբունքների ձեւախեղմանը՝ ոչ միայն պաշտոնյան չի առաջնորդվում իրավունքի գերակայության սկզբունքով, ինչը, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջն է, այլեւ մասնավոր շահագրգռությամբ մարդկանց իրավունքների պաշտպանության հարցում խտրական իրավիճակ է ստեղծում:**

Ելնելով հարցի կարեւորությունից, իրավական պետության կայացման հրամայականներից՝ ՀՀ սահմանադրական դատարանը ոչ միայն առաջարկվող իրավակարգավորումը համարել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, այլեւ 2004թ. մարտի 30-ի ՍԳՈ-483 որոշման մեջ շեշտել է, որ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան կնպաստի ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածում հռչակված ժողովրդավարական եւ իրավական պետության ամրապնդմանը, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությանը:

Ակնհայտ է, որ սույն գործով քննության առարկա հարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանը միարժեք դիրքորոշում արդեն իսկ արտահայտել է՝ ճանաչելով թե՛ ակտիվ եւ թե՛ պասիվ կաշառակերության դեմ քրեական միջոցներով պայքարը որպես սահմանադրաիրավական անհրաժեշտություն, փաստել է, որ որեւէ օգուտ խոստանալու, ընդունելու, առաջարկելու, պահանջելու եւ կոնվենցիայում նշված այլ ձեւերով այդ գործառույթը խտրական վիճակ ստեղծելուն ծառայեցնելը ոչ այլ ինչ է, քան կաշառք:

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների երկու երրորդից ավելին արդեն իսկ հենվելով միասնական քրեական քաղաքականություն իրականացնելու իրենց միջազգային իրավական պարտավորությունների վրա եւ նախաձեռնելով համարժեք պայքար ակտիվ եւ պասիվ կաշառակերության դեմ, քրեական օրենսգրքերով նախատեսել են, որ եթե պաշտոնատար անձն իր իրավասության շրջանակներում որեւէ մեկի համար այնպիսի գործողություն կատարի կամ դրա կատարումից ձեռնպահ մնա, երբ նա ուղղակիորեն կամ անուղղակիորեն անհիմն օգուտ է պահանջել կամ ստացել, ինչպես նաեւ մնան առաջարկ կամ խոստում է ընդունել, ապա դա համարվում է կաշառք եւ ենթակա է համարժեք պատասխանատվության:

Նույնպիսի իրավակարգավորման նախատեսման անհրաժեշտությամբ է

առաջնորդվել նաեւ Հայաստանի Հանրապետությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասում որպէս կաշառքը բնորոշող հատկանիշ նախատեսելով ոչ միայն «ստանալը», այլեւ «**պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը**»: Նման փոփոխությունը Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների պատշաճ կատարման, ինչպէս նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման անմիջական իրացման արդյունք է: Սահմանադրական դատարանը կայացրել է որոշում մման պարտավորության վերաբերյալ, որ այն համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով սահմանված է, որ սահմանադրական դատարանը գործի վարույթը կարճում է գործի քննության ցանկացած փուլում, եթէ բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր: Իսկ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված է, որ դատարանը գործի քննությունը մերժում է, եթէ սույն օրենքի 68-75-րդ եւ 77-րդ հոդվածներում նշված գործերով ներկայացված որեւէ **դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը**: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ խոսքը վերաբերում է ոչ թէ այս կամ այն կոնկրետ նորմին, այլ «**դիմումում առաջադրված հարցին**»: Իսկ ինչպէս նշվեց, սույն գործով քննության առարկա դիմումներում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, որն իր որոշման բաղկացուցիչ մասն է:

Բերված նկատառումներից ելնելով՝ տվյալ գործի վարույթը ենթակա է կարճման:

6. Անդրադառնալով դիմողների այն փաստարկին, համաձայն որի՝ ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող նորմը հակասում է ՀՀ Սահմանադրությանը երաշխավորված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքին, սահմանադրական դատարանն այն հիմնավոր չի համարում: Օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել իր ՄԳ-Ո-881 որոշման մեջ, մասնավորապէս, սահմանելով, որ « ... օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը ենթադրում է օրենքի առջեւ հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության եւ իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, եւ չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որեւէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ ... սահմանելուն»: Օրենսդրական փոփոխության նպատակը միանշանակ իրավաչափ է, այն է՝ պետաիշխանական գործառույթն անձնական նկատառումներից ելնելով չծառայեցնել մարդկանց համար օրենքի առջեւ հավասար պատասխանատվության հարցում խտրական վիճակ ստեղծելուն: Իրավական, ժողովրդավարական պետության կայացման ճանապարհին վերոհիշյալ հանցակազմն ամենավտանգավորներից է, հետեւաբար՝ հիշյալ կոնվենցիաներով ստանձնված պարտավորությունների բարեխիղճ

կատարումն իրավիճակի դրական փոփոխության կարելու երաշխիք կարող է հանդիսանալ:

7. Ինչ վերաբերում է դիմողների այն փաստարկներին, որոնք վերաբերում են ներօրենսդրական կանոնակարգումների ներդաշնակության ու համասեռության ապահովմանը, պետական պաշտոնյաներին վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում հնարավոր հակաիրավական գործողություններից պաշտպանելու երաշխիքներին եւ մի շարք այլ հարցադրումների, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք.

**Ոսիս**՝ մասնակի ամրագրված են հենց կոնվենցիոն նորմերում, որոնք Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են,

**Երկրորդ**՝ Հայաստանը կոնվենցիաները վավերացրել է առանձին վերապահումով, որը վերաբերում է հենց այդ մտահոգություններին,

**Երրորդ**՝ ՀՀ Ազգային ժողովը նույնպես պարտավոր է տվյալ կոնվենցիաներով ստանձնված պարտավորությունների իրացմանը համալիր մոտեցում ցուցաբերել եւ առաջին հերթին հաշվի առնել պատժի համաչափության սկզբունքը, ինչպես նաեւ հենց կոնվենցիոն նորմերից ելնելով բարեխիղճ աշխատող պետական պաշտոնյաների պաշտպանության օրենսդրական համարժեք երաշխիքներ ստեղծել, հաղթահարել օրենսդրության մեջ հնարավոր ներքին անհամապատասխանությունները: Մասնավորապես՝ սահմանադրական դատարանը նաեւ գտնում է, որ կաշառք ստացողի համար գործուն գոջալու ակտիվ գործողությունների պարտադիր ժամկետ ամրագրելով, կամավոր հայտարարության հասկացության վերաբերյալ տարաբնույթ մոտեցումներից առավելագույնս խուսափելու, դատաքննչական մարմինների կողմից բացթողումները եւ սխալները հնարավորինս բացառելու նպատակով, թերեւս, ՀՀ քրեական օրենսգրքում կարող էր կատարվել լրացում եւ օրենսգրքի 312-րդ հոդվածում, որպես ծանոթագրություն, տալ կամավոր հասկացության բնորոշումը,

**չորրորդ**՝ հիշյալ կոնվենցիաները մեծապես կարելու են դատարանների դերը, յուրաքանչյուր կոնկրետ գործով պատճառահետեւանքային կապերի օբյեկտիվ ու անաչառ քննության եւ գնահատման կարելուությունը, արարքի վտանգավորության աստիճանի ճիշտ որակումը, առանձնապես այն բանի կարելուումը, թե պաշտոնյայի կողմից իր գործառույթի ոչ պատշաճ կատարումը կամ պատշաճ կատարումից խուսափելը որչափով է ավարտուն հանցագործություն եւ հանգեցրել մարդու իրավունքների պաշտպանության հարցում խտրական իրավիճակի ստեղծմանը, ինչն իշխանության հանդեպ հանրային անվտանգության լուրջ պատճառներից մեկն է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32, 60, 63, 64, 68 եւ 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**19 նոյեմբերի 2013 թվականի  
ՍԳՈ-1124**



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ԷԳՈՒԱՐԳ ԽԱԶԻԿՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍՊՐՔԻ 73-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 6-ՐԳ ԵՎ 7-ՐԳ ԿԵՏԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**10 դեկտեմբերի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով՝ Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող՝ քաղաքացի Է. Խաչիկյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի հետազոտությունների և վերլուծությունների կենտրոնի փորձագետ Հ. Սարդարյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Էդուարդ Խաչիկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Է. Խաչիկյանի՝ 2013 թվականի հունիսի 14-ի (լրացված՝ հունիսի 25-ին) ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը և գործում առկա մյուս



փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Հայցադիմումին կցվող փաստաթղթերը» վերտառությամբ 73-րդ հոդվածի 1-ին մասի՝ սույն գործով վիճարկվող 6-րդ եւ 7-րդ կետերը սահմանում են.

«1. Հայցադիմումին կցվում են՝

...

6) հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին եւ գործին մասնակցող այլ անձանց, սույն օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան, ստանալը հավաստող փաստաթղթերը.

7) սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում հայցադիմումը պետական ֆինանսների կառավարման մարմնին սույն օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկելը հավաստող փաստաթղթերը»:

2. Գործի համառոտ դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Էդուարդ Խաչիկյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ-ի պետ Ա. Ստեփանյանի՝ «ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ-ի պետ Ա. Ստեփանյանի 03.10.2012թ. Դատապարտյալին առավել ցածր մեկուսացվածության ուղղիչ հիմնարկ տեղափոխելու միջնորդություն ներկայացնելու մասին դիմումը մերժելու որոշումն առաջին և ճանաչելու եւ առաջնության հետեւանքները կիրառելու, նույն որոշումով պատասխանողի անգործությունը վերացնելու, պատասխանողին 19.09.2012թ. դիմումին պարզաբանում տալուն պարտավորեցնելու» պահանջների մասին: ՀՀ վարչական դատարանը 09.11.2012թ. կայացրել է «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշում, որում, ի թիվս այլ հանգամանքների, նշել է, որ. «...Տվյալ դեպքում հայցվորի ներկայացրած հայցադիմումին չի կցվել հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին եւ ֆինանսների կառավարման մարմնին ուղարկելու եւ վերջիններիս կողմից դրանց ստանալը հավաստող փաստեր: Նման հանգամանքը դատարանի կողմից դիտվում է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի խախտում»: 12.12.2012թ. հայցվորը կրկին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որի վերաբերյալ վերջինս 19.12.2012թ. կայացրել է «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում՝ պատճառաբանելով, որ «...12.12.2012թ. կրկին ներկայացված հայցադիմումին կից չի ներկայացվել հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները պատասխանողի եւ ֆի-

նանսների կառավարման մարմնի կողմից ստանալը հավաստող ապացույցները, այսինքն, հայցվորի կողմից չի վերացվել հայցադիմումի այնպիսի թերությունները, որոնց չվերացնելն արգելք է գործի քննության համար»:

Վերոհիշյալ որոշման դեմ հայցվորի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 22.02.2013թ. որոշմամբ մերժվել է՝ ՀՀ վարչական դատարանի 19.12.2012թ. թիվ ՎԳ- 7000/05/12 վարչական գործով կայացված որոշումը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, թողնելով օրինական ուժի մեջ: Հիշյալ որոշման դեմ Էդուարդ Խաչիկյանի բերած վճռաբեկ բողոքի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը 20.03.2013թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում:

**3.** Վիճարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերի դրույթների սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ հիշյալ դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին, սահմանափակում են անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Դիմողի կարծիքով, քանի որ վարչական դատավարության օրենսգրքով ամրագրված է նախնական դատական նիստի ինստիտուտը, հետեւաբար, դատաքննության այդ փուլում կարելի է լուծել հայցադիմումը պատասխանողին կամ երրորդ անձին ծանուցելու հետ կապված հարցերը, ուստի եւ անընդունելի են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերի պահանջները, որոնք անձին զրկում են դատական պաշտպանության եւ հրապարակային քննության իրավունքից:

**4.** Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Ըստ պատասխանողի՝ սույն գործով վիճարկվող դրույթների իրավակարգավորումների նպատակն է ապահովել դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացումը, դատական նիստում գործի ճիշտ եւ արագ քննությունը եւ լուծումը: Հայցադիմումի եւ կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին ուղարկելու պարտականությունը դրվել է հայցվորի վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կողմերը, գտնվելով որոշակի իրավահարաբերությունների, որոշակի վեճի մեջ, իրազեկված են միմյանց մասին: Հայցադիմումը պատասխանողին ուղարկելը վարչական դատավարությունում կողմերի իրավահավասարության, հատկապես՝ պատասխանողի իրավունքների պաշտպանության երաշխիք է, քանզի պատասխանողն իր պաշտպանությունը կառուցում է հայցվորի ներկայացրած փաստարկների հիման վրա, իսկ հայցադիմումի վերաբերյալ պատասխան չներկայացնելը վերջինիս համար առաջացնում է իրավական հետեւանքներ:

5. ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»: Սահմանադրական հիշյալ նորմն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին եւ դրա հիմքում ընկած սահմանադրական կոնկրետ վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները:

Համաձայն սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...» բառակապակցությունում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ (ՄԳ-Ո-747): Բացի դրանից, համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԳ-ԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ քննության առարկա գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը, մատնանշելով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը հայցվորի համար պարտականություն է նախատեսել կցել ոչ թե ստանալը, այլ ուղարկելը հավաստող փաստաթուղթ, անհիմն է համարել ՀՀ վարչական դատարանի եզրահանգումները՝ «...ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հայցադիմումի **ստանալը** հավաստող փաստաթուղթ կցած չլինելու հիմքով, նախ հայցադիմումը վերադարձնելու, ապա՝ դրա ընդունումը մերժելու մասին...»: ՀՀ վճռաբեկ դատարանը եւս՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ, ըստ էության, վերահաստատել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի արտահայտած հիշյալ եզրահանգումը: Հետեւաբար, դիմողի նկատմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթը չի կիրառվել, այն դիմողի համար իրավական հետեւանք չի առաջացրել:

Ելնելով վերոգրյալից եւ հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթի վիճարկումը չի բխում սահմանադրական կոնկրետ վերահսկողության էությունից, սույն գործով դիմողը սահ-

մանադրական դատարան դիմելու իրավասու սուբյեկտ չէ, ուստի եւ քննության առարկա գործի վարույթը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի մասով, ենթակա է կարճման:

**6.** Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ամրագրված «ստանալը հավաստող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջի նշանակությունը՝ ՀՀ Սահմանադրության, մասնավորապես, 18-րդ հոդվածով սահմանված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումն ապահովելու համատեքստում:

Սահմանադրական դատարանը, սույն գործով վիճարկվող դրույթը վերլուծելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաեւ՝ օրենսգրքը) այլ դրույթների հետ համակարգային ամբողջականության շրջանակներում, արձանագրում է, որ օրենսդիրն առանձին հոդվածներով սահմանել է հայցադիմումին ներկայացվող պահանջները (72-րդ հոդված) եւ հայցադիմումին կցվող փաստաթղթերի կոնկրետ շրջանակը (73-րդ հոդված), վերջինիս թվում սահմանելով նաեւ հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին եւ գործին մասնակցող այլ անձանց, օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան, ստանալը հավաստող փաստաթղթերը:

Օրենսդիրը հայցադիմումին ներկայացվող վերոհիշյալ պահանջների պահպանման հանգամանքով է պայմանավորում հայցադիմումը վարույթ ընդունելը: Դատարանը պարտավոր է հայցադիմումն ստանալու օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, վարույթ ընդունել օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր (77-րդ հոդված):

Հայցադիմումը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու կոնկրետ հիմքերը եւ կարգը սահմանված են օրենսգրքի համապատասխանաբար 78-րդ եւ 79-րդ հոդվածներով:

Անդրադառնալով հայցադիմումը վերադարձնելու իրավական հիմքերին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասում որպես հիմք ամրագրված է օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված հայցադիմումին առաջադրվող պահանջները չպահպանելը, իսկ օրենսգրքի 73-րդ հոդվածի մասով ամրագրված է միայն հիշյալ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պահանջը չպահպանելը: Սահմանադրական դատարանը վերահաստատում է 2010 թվականի նոյեմբերի 30-ի ՍԴՌ-927 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ օրենսգրքի 73-րդ հոդվածի պահանջները չպահպանելու իրավական հետեւանքը վարչական դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելն է, եւ գտնում է, որ հե-

տագա իրավական կանոնակարգումների շրջանակներում հիշյալ դիրքորոշումն անհրաժեշտ է ամրագրել օրենսգրքում, մասնավորապես՝ հայցադիմումը վերադարձնելու իրավական հիմք նախատեսելով օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պարտադիր կատարման ենթակա պահանջները չպահպանելու բոլոր դեպքերը: Հիշյալ կանոնակարգման անհրաժեշտությունը բխում է նաեւ իրավական որոշակիության եւ իրավական կանխատեսելիության սկզբունքների պահանջներից, նպատակաուղղված է սահմանելու դատարանի լիազորությունների կոնկրետ շրջանակը:

7. ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է արդարադատության մատչելիության եւ արդյունավետության խնդիրներին՝ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19-րդ եւ այլ հոդվածներով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով՝ վկայակոչելով նաեւ ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան:

Սույն գործի շրջանակներում եւս սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում եւ եթե կիրառված միջոցների եւ հետապնդվող նպատակի միջեւ չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000):

Քննության առարկա գործի շրջանակներում եւս, կարելի էրելով անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորող նորմատիվ իրավական անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն ու զարգացումը, գնահատելով վիճարկվող իրավակարգավորման ազդեցությունը դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքների, ինչպես նաեւ դրանց արդյունավետ իրականացման երաշխիքների վրա, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական որեւէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: Հիշյալ համատեքստում, սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցադիմումի ձեւի եւ բովանդակության պահանջներ սահմանելու իրավակարգա-

վորման նպատակը ոչ թե հայցվորին ավելորդ պարտականություններով ծանրաբեռնելն է, այլ հայցադիմումի ձեւի եւ բովանդակութեան հստակությունն ապահովելը, դատավարութեան արդյունավետ եւ օբյեկտիվ կազմակերպման անհրաժեշտ երաշխիքներ սահմանելը, նաեւ հայցադիմումը վարույթ ընդունելու ժամանակ վերացման ենթակա հետագա հնարավոր խոչընդոտները կանխարգելելը: Հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին եւ գործին մասնակցող այլ անձանց, օրենսգրքով սահմանված կարգով, **ուղարկելն** իրավաչափ է, քանի որ նպատակատուղված է վարչական դատավարութեան մյուս կողմի դատավարական իրավունքների եւ պարտականությունների պատշաճ կատարման երաշխավորմանը: Այն իրականացվում է օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան, որի 1-ին մասի համաձայն՝ «Ծանուցագրի հանձնումն իրականացվում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» Հայաստանի Հանրապետութեան օրենքով սահմանված կարգով: Դատավարութեան մասնակիցները կարող են համաձայնվել ծանուցման այլ եղանակի մասին, մասնավորապէս ֆաքսով, էլեկտրոնային փոստով, հեռախոսով, հեռագրով»: Իսկ «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի համաձայն՝ հատուկ առաքում է համարվում փոստով կամ առձեռն հանձնմամբ հատուկ առաքումը: Հատուկ առաքումը փոստով տեղի է ունենում միայն փոստային կապի ազգային օպերատորի միջոցով: Հիշյալ օրենքներով կանոնակարգումները վկայում են, որ սահմանված են անհրաժեշտ ընթացակարգեր, որոնք ապահովում են պատշաճ ծանուցման իրականացումը: Բացի դրանից, ՀՀ վարչական դատավարութեան օրենսգիրքը, գործի դատաքննութեան նախապատրաստման շրջանակներում, ամրագրում է դատավարական փաստաթղթերին ծանոթանալու բավարար այլ երաշխիքներ, որոնց նպատակն է ապահովել ՀՀ Սահմանադրութեան 18-րդ հոդվածով երաշխավորված անձի սահմանադրական իրավունքը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ, ի տարբերություն վերոգրյալի, վիճարկվող դրույթով «**ստանալը** հավաստող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջ սահմանելն ավելորդ ծանրաբեռնում է հայցվորի դատավարական պարտականությունների շրջանակը, քանի որ հայցվորից, ըստ էության, պահանջվում է ապացույց առ այն, որ, մասնավորապէս, փոստային կապի ազգային օպերատորը պատշաճ կատարել է օրենքով իր վրա դրված պարտականությունը: Ուստի, վիճարկվող դրույթը՝ «ստանալը հավաստող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջի մասով իրավաչափ նպատակ չի հետապնդում, արդյունքում՝ դժվար հասանելի է դարձնում դատարանի մատչելիութեան իրավունքը, ստեղծում է անձի դատական պաշտպանութեան արդյունավետ միջոցների սահմանադրական իրավունքի լիարժեք իրացման վտանգ:

Վերոնշյալի մասին է վկայում նաեւ սույն գործով վիճարկվող դրույթի հետ կապված իրավակիրառական պրակտիկան, համաձայն որի՝ ՀՀ վարչական դատարանի կողմից 2012 թվականից մինչեւ 2013 թվականի նոյեմբեր ամիսը ՀՀ վարչական դատավարութեան օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի

պահանջը հայցվորների կողմից սահմանված կարգով չպահպանելու հիմքով հայցադիմումները վերադարձնելու 208 դեպքից միայն 103 դեպքում է այն կրկին ներկայացվել վարչական դատարան, որոնցից 94-ն ընդունվել է վարույթ, 9-ի ընդունումը մերժվել է: Այսինքն, կեսից ավելի՝ 105-ի դեպքում վիճարկվող դրույթի հիմքով անձինք չեն կարողացել իրացնել դատական պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանադրական իրենց իրավունքը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ դատավարական փաստաթղթերի ստանալը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու ընթացակարգի շրջանակներում կողմերի դատավարական իրավունքները եւ պարտականությունները համաչափ բաշխված չեն: Մասնավորապես, ի տարբերություն վիճարկվող դրույթի, օրենսգրքի 83-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պատասխանողը ներկայացնում է նաեւ՝ հայցադիմումի պատասխանը եւ կից փաստաթղթերը հայցվորին եւ գործին մասնակցող այլ անձանց՝ փաստաթղթերի հատուկ առաքման կարգին համապատասխան **ուղարկելը** հավաստող ապացույցները: Այսինքն՝ օրենսդիրը պատասխանողի համար չի սահմանել հայցադիմումի պատասխանը եւ կից փաստաթղթերը **ստանալը** հավաստող փաստաթուղթ ներկայացնելու պարտականություն:

**8.** Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում դատարանի մատչելիության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանադրական իրավունքների եւ վարչական դատավարությունում կողմերի հավասար հնարավորությունների իրացումը կարող է երաշխավորված լինել հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին եւ գործին մասնակցող այլ անձանց, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված **պատշաճ կարգով ուղարկելու** պահանջի կատարմամբ, ինչպես նաեւ գործի քննության ամբողջ ընթացքում կողմերի համար հավասար հնարավորություններ ապահովելու օրենսդրական համարժեք երաշխիքների իրացմամբ: Այդ պահանջի եւ երաշխիքների հստակ եւ համակարգված կանոնակարգումը, ելնելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացումն ապահովելու անհրաժեշտությունից, օրենսդիր մարմնի պարտականությունն է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32, 60, 63, 64, 68 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ «ստանալը հավաստող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջի

մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր:

2. «Քաղաքացի Էդուարդ Խաչիկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի մասով կարճել:

3. Հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կհանգեցնի այնպիսի հետեւանքների, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ անհրաժեշտ է հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին եւ գործին մասնակցող այլ անձանց՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված **պատշաճ կարգով ուղարկելու** պահանջի եւ գործի քննության ամբողջ ընթացքում կողմերի համար հավասար հնարավորություններ ապահովելու իրավական համարժեք երաշխիքների հստակ եւ համակարգված օրենսդրական կանոնակարգում, ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2014 թվականի հուլիսի 1-ը:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**10 դեկտեմբերի 2013 թվականի  
ՍԳՈ-1127**





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԳՈՌ ԱՆԴՐԻԱՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆՍՏԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
123.3-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՐ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**17 դեկտեմբերի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (գեկուցող), Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ /գրավոր ընթացակարգի շրջանակներում/՝

դիմողի ներկայացուցիչներ, փաստաբաններ Ռ. Ահարոնյանի, Ս. Ջաղիմյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի հետազոտությունների եւ վերլուծությունների կենտրոնի փորձագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գոռ Անդրիասյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Գ. Անդրիասյանի՝ 01.08.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը եւ գործում առկա մյուս

փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց** .

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը ՀՍՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին եւ ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

Գիմողի կողմից վիճարկվող նորմը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացվել է Ազգային ժողովի կողմից 2012 թվականի փետրվարի 7-ին ընդունված, ՀՀ Նախագահի կողմից 2012 թվականի մարտի 1-ին ստորագրված եւ 2012 թվականի մարտի 17-ին ուժի մեջ մտած՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-2-Ն ՀՀ օրենքով:

Օրենսգրքի վիճարկվող նորմը սահմանում է. «Օրենքով նախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցներ վարելը, ինչպես նաեւ անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղեոր փոխադրելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության տեսուչի կողմից 27.06.2012 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն՝ Գ-ոռ Անդրիասյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածով նախատեսված խախտում կատարելու մասին:

ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 27.06.2012թ. թիվ ԱԷ000917 որոշմամբ Գ-ոռ Անդրիասյանը, համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի, ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ տուգանքի 5000 ՀՀ դրամի չափով:

ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության 14.07.2012թ. գրությամբ Գ-ոռ Անդրիասյանին հայտնվել է, որ թիվ ԱԷ 000917 վարչական իրավախախտման արձանագրության հիման վրա կայացված որոշումը թողնվել է անփոփոխ, քանի որ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի՝ անվտանգության ամրագոտիները չամրակապած ուղեոր փոխադրելն առաջացնում է տուգանքի նշանակում 5000 ՀՀ դրամի չափով:

ՀՀ վարչական դատարանը, քննելով թիվ ՎԳ/5368/05/12 վարչական գործն ըստ հայցի Գ-ոռ Անդրիասյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու մասին, իր 03.12.2012թ. վճռով մերժել է հայցը:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 09.04.2013թ. որոշմամբ ՀՀ վար-

չական դատարանի թիվ ՎԳ/5368/05/12 վարչական գործով 03.12.2012թ. կայացրած վճիռը թողել է ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանն իր՝ 29.05.2013թ. որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

3. Վիճարկելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 43-րդ հոդվածներին այնքանով, որքանով չի համապատասխանում պատժի համաչափության սկզբունքին: Իր դիրքորոշումը հիմնավորելով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳ-Ո-920 եւ ՍԳ-Ո-924 որոշումներում պատժի համաչափության վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ դիմողը, մասնավորապես, գտնում է, որ այն հանգամանքը, որ օրենսգրքի վիճարկվող նորմի սանկցիան չի նախատեսում տարբերակված մոտեցում հողվածում նախատեսված արարքների համար եւ իրավակիրառողի համար չի նախատեսում հնարավորություն՝ սահմանելու տարբեր պատժաչափեր, խախտում է սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշումներում ամրագրված՝ համաչափության սկզբունքի տարր հանդիսացող տարբերակման չափանիշը: Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է նաեւ վկայակոչելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 43-րդ հոդվածների պահանջներին: Որպես իր դիրքորոշման հիմնավորում, պատասխանող կողմը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 12.10.2010թ. ՍԳ-Ո-920 եւ 16.11.2010թ. ՍԳ-Ո-924 որոշումներում իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սկզբունքի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները, հաշվի առնելով օրենսգրքի վիճարկվող նորմով սահմանված իրավակարգավորման նպատակը, կարծիք է հայտնում, որ օրենսգրքի վիճարկվող նորմով նախատեսված տուգանքի չափն արդարացված է եւ համապատասխանում է վարչական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սկզբունքի պահանջներին:

Անդրադառնալով համաչափության սկզբունքի հիմքում ընկած՝ իրավաբանական պատասխանատվության չափի տարբերակման սկզբունքին եւ արձանագրելով այն փաստը, որ օրենսգրքով տուգանքների չափն սկսվում է հիմնականում հենց նվազագույն աշխատավարձի հնգապատիկ չափից՝ բացառությամբ մի քանի դեպքերի, երբ օրենսգրքով տուգանքի չափը նախատեսված է նվազագույն աշխատավարձի քառապատիկի չափով, որ օրենսգրքի վիճարկվող նորմով նախատեսված տուգանքի չափն ինքնին ցածր է, պատասխանող կողմը գտնում է, որ իրավաբանական պատասխանատվության չափի տարբերակման սկզբունքի տեսանկյունից օրենսգրքի վիճարկվող նորմով սահմանված

իրավակարգավորման պայմաններում ապահովվում է կատարված արարքի դիմաց համարժեք պատասխանատվությունը:

**5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի փաստարկները վերաբերում են ոչ թե ինքնին իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած՝ պատասխանատվության համաչափության սկզբունքին, այլ նշված սկզբունքի հիմքում ընկած՝ պատժաչափի տարբերակման սկզբունքին, սահմանադրական դատարանը հարկ է համարում հենց այդ սկզբունքի տեսանկյունից գնահատել օրենսգրքի վիճարկվող նորմի սահմանադրականությունը՝ հաշվի առնելով նաև իր ՍԳ-Ռ-924 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները:**

Սահմանադրական դատարանն իր՝ 16.11.2010թ. ՍԳ-Ռ-924 որոշման 7-րդ կետում, անդրադառնալով իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած՝ պատժաչափի տարբերակման սկզբունքին՝ ընդգծել է **զանցանքի բնույթը եւ լրջությունը**: Վերահաստատելով իր՝ 16.11.2010թ. ՍԳ-Ռ-924 որոշման 7-րդ կետում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը գտնում է, որ կախված զանցանքի բնույթից եւ լրջությունից, այսինքն՝ զանցանքի առանձնահատկություններից՝ **ոչ բոլոր դեպքերում է, որ անհրաժեշտություն է առաջանում սահմանելու տվյալ զանցանքի համար նախատեսված պատժաչափի ստորին եւ վերին սահմանները՝ չբացառելով նշված դեպքերում այդպիսիք սահմանելու՝ օրենսդիր մարմնի բացառիկ հայեցողական իրավասությունը: **Խոսքն այն դեպքերի մասին է, երբ զանցանքի բնույթը միանշանակ է ու պայմանավորված է կոնկրետ փաստով եւ ոչ որեւէ այլ հանգամանքներով**: Օրենքով նախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցներ վարելը, ինչպես նաև անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղեւոր փոխադրելը որեւէ այլ հանգամանքով արդարացնելի չէ, փաստ է օրենքի խախտումը, հետեւանքը միարժեք պետք է լինի:**

Տվյալ դեպքում առանձնակի կարեւորություն է ստանում այդպիսի զանցանքների համար պատժաչափի համաչափության սկզբունքի պահպանումը: Այս կապակցությամբ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը, հաշվի առնելով օրենսգրքի վիճարկվող նորմով նախատեսված արարքի բնույթը եւ լրջությունը, դրանով հետապնդվող նպատակը, նախատեսված տուգանքի չափը, գտնում է, որ տվյալ դեպքում օրենսգրքի վիճարկվող նորմով սահմանված վարչական պատասխանատվությունն իրավաչափ նպատակ է հետապնդում՝ ապահովել այդ նորմով կարգավորվող հասարակական հարաբերությունները՝ երաշխավորելով մարդկանց անվտանգությունը, եւ համապատասխանում է համաչափության սկզբունքին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում տարբերակված մոտեցման սկզբունքի եւ Վարչական իրավախախ-

տումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածով նախատեսված՝ մեղմացուցիչ եւ ծանրացուցիչ հանգամանքների կիրառման վերաբերյալ դիմողի փաստարկները, եւ գտնում է, որ տվյալ դեպքում սահմանադրական դատարանի որոշումներին կատարվող հղումները դիմողի կողմից սահմանադրական դատարանի 16.11.2010թ. ՍԳՈ-924 որոշման 7-րդ կետում արտահայտած իրավական դիրքորոշումների ոչ ճիշտ ընկալման եւ մեկնաբանման արդյունք է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**17 դեկտեմբերի 2013 թվականի  
ՍԳՈ-1130**



## **ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 499.9-ՐԳ ՀՈԴՎԱԾԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**24 դեկտեմբերի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ /գրավոր ընթացակարգի շրջանակներում/

դիմողի ներկայացուցիչ, փաստաբան Մ. Զիլֆուղարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեւանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գարեգին Հովսեփյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Գ. Հովսեփյանի՝ 15.08.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստա-

թղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը  
**Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի վիճարկվող դրույթները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թվականի դեկտեմբերի 14-ին ընդունված, ՀՀ Նախագահի կողմից 2005 թվականի հունվարի 18-ին ստորագրված եւ 2005 թվականի փետրվարի 10-ին ուժի մեջ է մտած՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-57-Ն ՀՀ օրենքով:

Օրենսգրքի՝ «Օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչման պայմանները եւ մերժման հիմքերը» վերառությամբ 499.9-րդ հոդվածը սահմանում է.

«1. Օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչման վերաբերյալ որոշում կայացնելիս սույն օրենսգրքի 499.8-րդ հոդվածի երրորդ մասով իրավասու Հայաստանի Հանրապետության դատարանները պարզում են, թե որքանով են պահպանված համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված այն պայմանները, որոնք ճանաչման վերաբերյալ որոշում կայացնելու հիմք են:

Այդ պայմանների պահպանված լինելը, ինչպես նաեւ տվյալ միջազգային պայմանագրով դատավճռի ճանաչումը եւ կատարումը մերժելու հիմքերի բացակայությունը հիմք են օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու որոշում կայացնելու եւ ի կատար ածման ներկայացնելու համար:

2. Օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված հիմքերով՝ նկատի ունենալով նաեւ կիրառվող միջազգային պայմանագրի վերաբերյալ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության արած հայտարարությունները կամ վերապահումները, ինչպես նաեւ, եթե՝

1) արարքը, որի համար անձը դատապարտվել է, Հայաստանի Հանրապետության օրենքով քրեորեն պատժելի չէ.

2) դատավճռով որպես պատիժ նախատեսված է մահապատիժ»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի քաղաքային դատարանի 23.11.2004թ. դատավճռով ՀՀ քաղաքացի Գ.Հովսեփյանը մեղավոր է ճանաչվել ՌԴ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 222-րդ հոդվածի 2-րդ մասով: Գ.Հովսեփյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել 12 տարի ժամկետով ազատազրկում եւ տուգանք՝ 10.000 ռուբլու չափով:

Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Գաշնության արդարադատության նախարարությունների երկկողմ համաձայնության հիման վրա դատապարտյալ Գ. Հովսեփյանը հետագա պատիժը կրելու համար փոխանցվել է Հայաստանի Հանրապետությանը: ՀՀ Գլխավոր դատախազության պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությունը 21.08.2009թ. միջնորդություն է ներկայացրել Երեւանի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ Գ. Հովսեփյանի վերաբերյալ ՌԳՄ Մոսկվայի քաղաքային դատարանի 23.11.2004թ. կայացված դատավճիռը ճանաչելու, ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու եւ ի կատար ածելու մասին:

Երեւանի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.09.2009թ. որոշմամբ բավարարվել է վերոնշյալ միջնորդությունը: Գ. Հովսեփյանի նկատմամբ ՌԳՄ Մոսկվայի քաղաքային դատարանի 23.11.2004թ. դատավճռով հաստատված եւ ՌԳՄ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը համապատասխանեցվել է 18.04.2003թ. ընդունված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 4-րդ կետերին, իսկ ՌԳՄ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը համապատասխանեցվել է 18.04.2003թ. ընդունված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասին, եւ պատիժը թողնվել է անփոփոխ:

Գատապարտյալ Գ. Հովսեփյանը եւ նրա պաշտպանը Երեւանի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վերոնշյալ որոշման դեմ 06.08.2012թ. ներկայացրել են վերաքննիչ բողոք, որով խնդրել են վերոնշյալ որոշումը վերացնել եւ պատժաչափի մասով համապատասխանեցնել մինչեւ ՀՀ ԱԺ կողմից 09.06.2004թ. ընդունված՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի օրինական ուժի մեջ մտնելը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի պատժաչափին եւ Գ. Հովսեփյանի նկատմամբ նշանակված պատիժը կրճատել 2 տարի ժամկետով:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 12.10.2012թ. որոշմամբ վերոնշյալ վերաքննիչ բողոքը բավարարվել է, Երեւանի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.09.2009թ. որոշումը բեկանվել է եւ կայացվել նոր որոշում՝ օտարերկրյա դատարանի դատավճիռը ճանաչելու, ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու եւ ի կատար ածելու վերաբերյալ ՀՀ Գլխավոր դատախազության միջնորդությունը բավարարելու մասին: Ըստ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման՝ Գ. Հովսեփյանի նկատմամբ ՌԳՄ Մոսկվայի քաղաքային դատարանի 23.11.2004թ. դատավճիռը համապատասխանեցվել է ՌԳՄ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված արարքների կատարման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխանաբար՝ 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 4-րդ կետերին եւ նույն օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-ին մասին /ՌԳՄ Մոսկվայի քաղաքային դատարանի դատավճռով դիմողին վերագրվող արարքները կա-



տարվել են համապատասխանաբար՝ 2004թ. մարտի 1-ին եւ 2004թ. մարտի 16-ին/։ Գ.Հովսեփյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում 10 տարի ժամկետով։

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 12.10.2012թ. որոշման դեմ բերվել է վճռաբեկ բողոք։ ՀՀ վճռաբեկ դատարանի 18.04.2013թ. որոշմամբ վերոնշյալ վճռաբեկ բողոքը բավարարվել է, բեկանվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 12.10.2012թ. որոշումը եւ օրինական ուժ է տրվել Երեսանի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.09.2009թ. որոշմանը։

3. Դիմողը, արձանագրելով, որ օրենսգրքի վիճարկվող դրույթներն իր նկատմամբ կիրառվել են ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից այդ դրույթներին տրված եւ դրանց սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածի դրույթներն այնքանով, որքանով վերաբերում են օտարերկրյա պետությունների դատավճիռների ճանաչմանը՝ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքներին հետադարձ ուժ տալու առումով, հակասում են ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածին եւ 42-րդ հոդվածի 3-րդ մասին։

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը փաստարկում է, որ. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածով սահմանված՝ օտարերկրյա պետության դատարանի դատավճիռ՝ ՀՀ-ում ճանաչելու մասին որոշում կայացնելիս /այդ թվում նաեւ պատժի մասով/ այն դատապարտյալի փոխանցման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներին համապատասխանեցնելու վերաբերյալ վերոնշյալ մեկնաբանությունը չի բխում ինչպես ՀՀ Սահմանադրության 22-րդ եւ 42-րդ հոդվածների, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ եւ 13-րդ հոդվածների պահանջներից։

...Օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը ՀՀ-ում ճանաչելու մասին որոշում կայացնելիս /այդ թվում նաեւ պատժի մասով/ այն դատապարտյալի փոխանցման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու վերաբերյալ մեկնաբանությունը կիրառելիս կարող են խախտվել ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ միջազգային կոնվենցիաների հիմնարար սկզբունքները»։

Դիմողը, որպես փաստարկ, ներկայացնում է նաեւ հետեւյալը. «Օտարերկրյա պետության դատարանի դատավճիռի ճանաչման եւ համապատասխանեցման ժամանակ դատապարտյալի փոխանցման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների կիրառումը կարող է արսուրդի հասնել, օրինակ այն դեպքում, երբ արարքը, որի համար օտարերկրյա պետությունում դատապարտվել է փոխանցման ենթակա անձը, այն կատարելու պահին ՀՀ-ում հանցավոր չի համարվել եւ դրա հանցավորությունը սահմանվել է միայն փոխանցման պահին գործող քրեական օրենսգրքով /ասենք հանցանքը կատարելու պահից 3-4 տարի անց ընդունված օրենքով/։

Ստացվում է այնպես, որ եթե դատապարտյալ Գ.Հովսեփյանը հետագա պատիժը կրելու համար ՀՀ-ին հանձնվեր մինչև ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված առավելագույն պատժաչափի խստացումը, երբ որ այն 8/ութ/ տարի էր կազմում, ապա համապատասխանեցման ժամանակ նրա նկատմամբ ազատազրկման ձեռով նշանակված պատժաչափը /10 տարի/ Կոնվենցիաների համապատասխան դրույթների կիրառմամբ պետք է նվազեցվեր, իսկ եթե նա հանձնվել է ՀՀ-ում պատիժը խստացնող օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, ապա այդ խստացնող օրենքին պետք է հետադարձ ուժ տրվի եւ նրա պատիժը թողնվի անփոփոխ:

Անվիճելի է նաեւ այն փաստը, որ եթե ՀՀ քաղաքացի Գ. Հովսեփյանը ՌԴ-ում կատարած այդ նույն արարքների համար հայտնաբերվել եւ դատապարտվել Հայաստանի Հանրապետությունում, ապա նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասով պատիժ նշանակելիս չէր կարող կիրառվել պատիժը խստացնող օրենքը եւ ութ տարուց ավելի պատիժ նշանակվել»:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 22-րդ եւ 42-րդ հոդվածներին: Որպես իր դիրքորոշման հիմնավորում՝ պատասխանող կողմը, արձանագրելով, որ օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչումը եւ կատարումը նպատակ է հետապնդում ապահովելու համապատասխան պետության իրավասու մարմինների կողմից կոնկրետ հանցագործություն կատարելու մասին ապացուցված մեղադրանքի հիման վրա արդեն իսկ նշանակված պատժի կրման՝ **Հայաստանի Հանրապետության տարածքում շարունակումը**, գտնում է, որ տվյալ իրավահարաբերության շրջանակներում չի կարող խոսք լինել արարքի որակման կամ պատժի նշանակման մասին:

Վկայակոչելով եւ վերլուծելով 1983 թվականի մարտի 21-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Դատապարտյալների փոխանցման մասին» եւ 1998 թվականի մարտի 6-ին Մոսկվայում ստորագրված՝ «1գատազրկման դատապարտվածներին հետագա պատիժը կրելու համար հանձնման մասին» կոնվենցիաների համապատասխան հոդվածները՝ պատասխանող կողմը գտնում է նաեւ, որ օտարերկրյա պետության դատարանի դատավճռով նշանակված պատժի կրումը **Հայաստանի Հանրապետության տարածքում շարունակելու** համատեքստում տվյալ կոնվենցիոն հոդվածները վերաբերում են **տվյալ պահին Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը**, որ սույն գործով դիմողի մտահոգությունների առարկա հանդիսացող եւ համանման այլ հարցերի պատասխանները տրված են վերը նշված կոնվենցիաներով, որոնք բացառում են տվյալ ոլորտում օրենսդրական անհամապատասխանություններից բխող խտրականության դրսևորումները, ապահովում են քրեական պատասխանատվության հիմնական նպատակների իրականացումը, այն է՝ պատժիչ-կանխարգելիչ գործառույթի եւ պատժի անխուսափելիության ապահովումը, որ հավասարակշռում են դատապարտող եւ կատարող պետությունների շահերը՝ մի կող-

մից ապահովելով նշանակված պատժի ամբողջական կիրառումը՝ առանց պատժի կրումից կամ ողջ ծավալով պատժի կրումից խուսափելու հնարավորության, մյուս կողմից՝ բացառելով օրենսդրական անհամապատասխանությունների արդյունքում նշանակվածից ավելի խիստ պատիժ կրելու հնարավորությունը:

Միաժամանակ, պատասխանող կողմը, գտնելով, որ ՀՀ Սահմանադրության 22-րդ եւ 42-րդ հոդվածները նյութաիրավական բովանդակություն ունեն, մինչդեռ օրենսգրքի վիճարկվող նորմը դատավարական նորմ է եւ դուրս է ՀՀ Սահմանադրության նշված հոդվածների կարգավորման շրջանակներից, հարկ է համարում նշել, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում քրեական գործերով իրավական օգնության միջպետական հարաբերությունների հետ կապված հարցերի կարգավորումը ներառված չէ այն հիմնավորմամբ, որ դրանք իրենց բնույթով քրեադատավարական հարաբերություններ չեն եւ ենթակա են առանձին իրավական կարգավորման:

**5.** Գործին առնչվող դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ թեւեւ դատարանները վկայակոչել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածն ամբողջությամբ, այդուհանդերձ, սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով իր՝ 04.04.2008թ. ՍԴ-Ո-747 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, գտնում է, որ տվյալ դեպքում դատարանները դիմողի նկատմամբ **կիրառել են միայն օրենսգրքի 499.9-րդ հոդվածի 1-ին մասի նորմը**, քանի որ միայն այդ նորմն է դիմողի նկատմամբ առաջացրել իրավական հետեւանքներ:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների մասով, ենթակա է կարճման:

**6.** Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրականությանը՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է 1998 թվականի մարտի 6-ին Մոսկվայում ստորագրված՝ «1 զատագրկման դատապարտվածներին հետագա պատիժը կրելու համար հանձնման մասին» /ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 23.02.2000թ. Ն-056-2 որոշմամբ/ եւ 1983 թվականի մարտի 21-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Դատապարտյալների փոխանցման մասին» /ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 21.03.2001թ. Ն-161-2 որոշմամբ/ կոնվենցիաներին: Նշված կոնվենցիաներում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործերով ՀՀ սահմանադրական դատարանը համապատասխանաբար՝ 1999թ. դեկտեմբերի 21-ին եւ 2000թ. նոյեմբերի 24-ին կայացրել է

ՄԳՈ-198 եւ ՄԳՈ-264 որոշումները, որոնցով վերը նշված կոնվենցիաներում ամրագրված պարտավորությունները ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Հաշվի առնելով պատասխանող կողմի մատնանշած այն փաստարկը, որ օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչումը եւ կատարումը նպատակ է հետապնդում ապահովելու համապատասխան պետության իրավասու մարմինների կողմից կոնկրետ հանցագործություն կատարելու մասին ապացուցված մեղադրանքի հիման վրա արդեն իսկ նշանակված **պատժի կրման` Հայաստանի Հանրապետության տարածքում շարունակումը**, ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա կարելու էր դիմողի նկատմամբ կայացված դատական ակտերով օրենսգրքի վիճարկվող դրույթների կիրառման գնահատման հարցը, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ դատապարտյալների փոխանցման ընթացակարգի մի քանի հարցերի: Այսպես, ինչպես 1998 թվականի մարտի 6-ին Մոսկվայում ստորագրված` Լգատագրկման դատապարտվածներին հետագա պատիժը կրելու համար հանձնման մասին կոնվենցիան, այնպես էլ 1983 թվականի մարտի 21-ին Ստրասբուրգում ստորագրված` Դատապարտյալների փոխանցման մասին կոնվենցիան, նախատեսելով պայմանագրի կողմ հանդիսացող պետության տարածքում դատապարտված անձին պատժի կատարման /հետագա կրման/ նպատակով պայմանագրի կողմ հանդիսացող մեկ այլ պետությանը փոխանցելու հնարավորություն, սահմանում են նաեւ դատավճռի կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ դատավարական գործողությունների իրականացման ընթացքում իրավասու մարմինների իրավագործության սահմանները, այդ թվում` **նաեւ դատավճռով նշանակված պատիժը փոխելու առումով:** Դիտարկվող երկու միջազգային պայմանագրերն էլ դատավճռի կատարման պետությանը պարտավորեցնում են պատժի կատարումն ապահովելիս ղեկավարվել համապատասխան օտարերկրյա պետության կողմից կայացված դատավճռով կիրառված պատժամիջոցի իրավական բնույթով եւ տեղողությամբ, ինչպես նաեւ իրավասություն են վերապահում փոփոխության ենթարկել դատավճռով նշանակված պատժի ժամկետն այն դեպքում, երբ դատավճռի կատարման պետության ներպետական օրենսդրությամբ նույն արարքի համար նախատեսված առավելագույն պատժաչափն ավելի մեղմ է, քան դատավճռի կայացման պետության դատարանի կողմից նշանակված պատժաչափը:

Ակնհայտ է, որ դատավճռի կատարման պետությունը չի կարող ապահովել փոխանցված դատապարտյալի նկատմամբ դատավճռի կայացման պետության կողմից սահմանված պատժի կատարումը կամ հետագա կրումն առանց ճանաչելու օտարերկրյա դատարանի դատավճիռը եւ առանց այն ներպետական օրենսդրությանը համապատասխանեցնելու: Այսպիսով, դատավճռի կատարման պետության կողմից իրականացվող պատժի կատարման /հետագա կրման/ ապահովման գործընթացը ներառում է երեք բաղադրիչ` օտարերկրյա

պետության դատարանի դատավճռի ճանաչում, օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ներպետական օրենսդրությանը համապատասխանեցում եւ դատավճռի ի կատար ածում:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործի շրջանակներում առաջին ատյանի դատարանը 10.09.2009թ. որոշում է կայացրել Գ. Հովսեփյանի վերաբերյալ Ռ-Դ Մոսկվայի քաղաքային դատարանի 23.11.2004թ. դատավճիռը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին: Փաստորեն, առաջին ատյանի դատարանը չի անդրադարձել Գ. Հովսեփյանի վերաբերյալ Ռ-Դ Մոսկվայի քաղաքային դատարանի դատավճիռը ՀՀ-ում ճանաչելու եւ ի կատար ածելու հետ կապված հարցերին, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը, իր հերթին, պատշաճ ուշադրություն չի դարձրել այդ հանգամանքին: Ավելին, ՀՀ վճռաբեկ դատարանը չի պարզել նաեւ այն հանգամանքը, թե Գ. Հովսեփյանին ՀՀ փոխանցելուց հետո 1983 թվականի մարտի 21-ին Ստրասբուրգում ստորագրված՝ Դատապարտյալների փոխանցման մասին կոնվենցիայի որ հողվածն է կիրառվել, ՀՀ առաջին ատյանի դատարանն ապահովել է Ռ-Դ դատարանի դատավճռի կատարման շարունակությունը, թե կատարել է Ռ-Դ դատարանի **դատավճռի փոխարկում**: Դրանց պարզաբանումը տվյալ պարագայում իրենից առանձնակի կարեւորություն է ներկայացնում հետեւյալ պատճառաբանությամբ. դատավճռի կատարման պետության իրավասու մարմնի իրավագործության սահմանափակումները կախված են օտարերկրյա պետության դատավճռի ճանաչման «եղանակի» կամ «ձեւի» ընտրությունից: 1983 թվականի մարտի 21-ին Ստրասբուրգում ստորագրված՝ Դատապարտյալների փոխանցման մասին կոնվենցիան նախատեսում է օտարերկրյա պետության դատավճռի ճանաչման երկու եղանակ, որոնք նախատեսված են կոնվենցիայի համապատասխանաբար՝ 10-րդ եւ 11-րդ հոդվածներում. դատավճռի կատարման շարունակության ապահովման միջոցով դատավճռի ճանաչում եւ **փոխարկման կամ կոնվերսիայի միջոցով** դատավճռի ճանաչում: Համապատասխան կոնվենցիոն դրույթների մեկնաբանությունից պարզ է դառնում, որ դատավճռի փոխարկումն ավելի լայն իրավագործության շրջանակներ է նախատեսում դատավճռի կատարման պետության դատարանի համար, քան դատավճռի կատարման շարունակության ապահովումը: Դատավճռի կատարումը շարունակելու դեպքում դատավճռի կատարման պետությունը պարտավոր է ղեկավարվել դատավճռի կայացման պետության կայացրած դատավճռի իրավական բնույթով եւ տեւողությամբ: Դատավճռի կատարման պետությունը կարող է պատժամիջոցը դատական կամ վարչական որոշմամբ հարմարեցնել /համապատասխանեցնել/ իր օրենսդրությամբ նման բնույթի հանցագործությունների համար նախատեսված պատժին կամ այլ պատժամիջոցներին միայն երկու դեպքում՝ եթե պատժամիջոցի բնույթը եւ տեւողությունը չեն համապատասխանում վճռի կատարման պետության օրենսդրությանը կամ եթե այդ է պահանջում վերջինիս օրենսդրությունը: **Իսկ դատավճռի փոխարկման պարագայում կիրառվում են դատավճռի կատարման պետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերը:** Դատավճռի

կատարման պետության դատարանի իրավագործությունը միայն սահմանափակված է այն մասով, որ վերջինս չի կարող խստացնել դատապարտյալի քրեաիրավական վիճակը, չի կարող հաշվի առնել ներպետական օրենսդրությամբ տվյալ հանցագործության համար նախատեսված նվազագույն պատիժը, ինչպես նաև չի կարող ազատագրկման հետ կապված պատժամիջոցը փոխարինել դրամական տուգանքով: Նույն կոնվենցիայի 9-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետը սահմանում է, որ դատավճիռը փոխարկվում է դատական կամ վարչական ընթացակարգերի միջոցով՝ դատապարտող պետության կողմից նշանակված պատժամիջոցը փոխարինելով կատարող պետության օրենքով միեւնույն արարքի համար նախատեսված պատժամիջոցով:

Վերը նշված կոնվենցիոն դրույթներից բխում է, որ, ի տարբերություն դատավճռի համապատասխանեցման, դատավճռի փոխարկման ընթացակարգի շրջանակներում դատավճռի կատարման պետության դատարանն ըստ էության կայացնում է նոր դատավճիռ, հետևաբար՝ **որոշում է փոխանցված անձի կատարած արարքի /արարքների/ հանցավորությունը եւ պատժելիությունը ներպետական օրենսդրության համաձայն:**

Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումի, դիմումին կից ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության՝ ի պատասխան 27.11.2013թ. ՍԴԱ-29 գրության տրամադրած՝ դատապարտյալ Գ. Հովսեփյանի՝ ՌԴ-ից հետագա պատիժը կրելու համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու վերաբերյալ պահանջված փաստաթղթերի պատճենների ուսումնասիրությունից պարզ չի դառնում, թե Գ. Հովսեփյանին Հայաստանի Հանրապետություն փոխանցելուց հետո վերը նշված կոնվենցիայի որ հոդվածն է կիրառվել՝ **ՀՀ առաջին առյանի դատարանն ապահովել է ՌԴ դատարանի դատավճռի կատարման շարունակությունը, թե կատարել է ՌԴ դատարանի դատավճռի փոխարկում:**

Դիտարկվող կոնվենցիայի մասնակից պետությունների՝ օտարերկրյա պետության դատավճռի ճանաչման եղանակի ընտրության փորձի ուսումնասիրությունից բխում է, որ օտարերկրյա պետության դատավճռի ճանաչման եղանակի ընտրությունը կարող է ի սկզբանե արվել կոնվենցիայի վավերացման փուլում՝ պետության կողմից արված համապատասխան հայտարարության կամ վերապահման ձեով /օրինակ՝ Գերմանիա, Ավստրիա/: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը փաստում է, որ դիտարկվող կոնվենցիան **ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է առանց որեւէ հայտարարության կամ վերապահման:**

Վերոնշյալ կոնվենցիայի մի շարք մասնակից պետություններ օտարերկրյա պետության դատավճռի ճանաչման եղանակի ընտրության հարցը կարգավորում են ներպետական օրենսդրությամբ /օրինակ՝ Նիդեռլանդներ/: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը փաստում է նաև, որ օտարերկրյա պետության դատավճռի ճանաչման իրավահարաբերությունները ՀՀ ներպետական օրենսդրության շրջանակներում կարգավորվում են ՀՀ քրեա-

կան դատավարության օրենսգրքի միայն 499.8-րդ եւ 499.9-րդ հոդվածներով, որոնք օտարերկրյա պետության դատավճռի ճանաչման եղանակի ընտրության հարցի իրավակարգավորում չեն նախատեսում:

Գիտարկվող կոնվենցիայի 9-րդ հոդվածի երկրորդ մասը նախատեսում է, որ կատարող պետությունը, խնդրանքի դեպքում, նախքան դատապարտյալի փոխանցումը, դատապարտող պետությանը տեղեկացնում է, թե նշված ընթացակարգերից որն է կիրառելու:

Վերը նշվածի կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության՝ ի պատասխան 27.11.2013թ. ՍԴԱ-29 գրության, տրամադրած՝ դատապարտյալ Գ. Հովսեփյանի՝ ՌԴ-ից հետագա պատիժը կրելու համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու վերաբերյալ պահանջվող փաստաթղթերի պատճեններում **բացակայում է օտարերկրյա պետության դատավճռի ճանաչման եղանակի ընտրության մատնանշումը:**

Ընդ որում, սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ուղղված՝ «Դատապարտյալների փոխանցման մասին կոնվենցիայի գործնական կիրառման վերաբերյալ» թիվ R (92) 18 հանձնարարական առաջարկում է անդամ պետություններին ընդունել դատապարտյալի փոխանցման հարցմանը համաձայնություն տալու չափորոշիչների վերաբերյալ ուղեցույց, որը պետք է ներառի նշում այն մասին, թե պետությունը կիրառելու է դիտարկվող կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված՝ դատավճռի կատարման շարունակության ապահովումը, թե 11-րդ հոդվածով նախատեսված՝ դատավճռի փոխարկումը: Այս կապակցությամբ կարելի է դատապարտյալին պատժի կատարման /հետագա կրման/ համար իր քաղաքացիության երկիր փոխանցելու նպատակով դատավճռի կայացման եւ դատավճռի կատարման պետությունների միջեւ փոխանցման եւ պատժի կատարման /հետագա կրման/ բոլոր պայմանների, մասնավորապես՝ դատավճռի կատարման շարունակության ապահովման կամ դատավճռի փոխարկման ձեռով պատժի կատարման /հետագա կրման/ ապահովման վերաբերյալ պայմանների մասին պայմանավորվածություն ձեռք բերելը, որի շնորհիվ հետագայում տվյալ պետությունը կխուսափի դատավճռի կատարման պետության իրավասու մարմնի /դատարանի/ կողմից դատավճռի կայացման պետության դատարանի կողմից կայացրած դատավճիռը փոփոխության ենթարկելու իրավագործության շրջանակների՝ շահագրգիռ անձանց տեսանկյունից անորոշության, ինչպես նաեւ ներպետական օրենսդրության կիրառման հետ կապված հետեւանքներից:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաեւ նշել, որ դատապարտյալին պատժի կատարման /հետագա կրման/ համար իր քաղաքացիության երկիր փոխանցելու նպատակով դատավճռի կայացման եւ դատավճռի կատարման պետությունների միջեւ փոխանցման եւ պատժի կատարման /հետագա կրման/ բոլոր պայմանների վերաբերյալ փոխհամաձայնության ձեռքբերումը հնարավորություն կընձեռի նաեւ խուսափել օրենքի առջեւ բոլորի հավա-

սարության սահմանադրական սկզբունքի ապահովման հետ կապված խնդիրներից: Մասնավորապես, սահմանադրական դատարանը չի բացառում այնպիսի իրավիճակի առաջացման հնարավորությունը, երբ փոխանցման ենթակա են մեկից ավելի դատապարտյալներ, որոնք դատավճռի կայացման պետության կողմից դատապարտվել են նույն քրեական գործի շրջանակներում, օրինակ՝ խմբակային հանցագործության համար, եւ նրանց բոլորին դատավճռի կատարման պետություն փոխանցելու վերաբերյալ պայմանավորվածություն է ձեռք բերվել պետությունների միջեւ, սակայն դատապարտյալների փաստացի փոխանցումը միաժամանակ չի կատարվել. դատապարտյալներից մեկը փոխանցվել է դատավճռի կատարման պետություն այն ժամանակ, երբ գործում էր ավելի խիստ պատիժ նախատեսող քրեական օրենսդրություն, իսկ մյուս դատապարտյալը /դատապարտյալները/ փոխանցվել է /են/ ավելի մեղմ պատիժ նախատեսող քրեական օրենսդրության գործողության ժամանակ. հանգամանքներ, որոնց վրա սահմանադրական դատարանը հարկ է համարում հրավիրել իրավակիրառողի ուշադրությունը:

7. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ օտարերկրյա պետությունում դատապարտված անձի փոխանցման ժամանակ կատարող պետության իրավասու մարմինների գործառույթները, այդ թվում՝ դատավճռի համապատասխանեցումը ներպետական օրենսդրությանը, կանոնակարգված են միջազգային պայմանագրերով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի փաստարկները, ըստ էության, առնչվում են ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից **միջազգային պայմանագրերի կիրառման իրավաչափության հարցին:**

**Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումը:** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ պահանջների կատարումը խնդրո առարկա իրավիճակում կբացառի օրենսգրքի 499.9-րդ հոդվածի կիրառման ոլորտում շահագրգիռ անձանց կարծիքով առաջացող անորոշությունը՝ կապված արարքի կատարման պահին գործող օրենքը կիրառելու եւ իրավական ակտի հետադարձության վերաբերյալ սկզբունքների կիրառման հետ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32, 60, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց:**



1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Քաղաքացի Գարեգին Հովսեփյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների մասով, կարճել:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՎ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**24 դեկտեմբերի 2013 թվականի  
ՍԳՈ-1134**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ .....	3
ՀԱՎԵԼՎԱԾ՝ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐՈՎ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013թ. ԸՆԴՈՒՄՆԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ .....	40
ՍԳՈ-1065. «Հ.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ի ԵՎ ԶԱՐԿԱԶՄՅՈՒՄ ԿԱՐԱՊԵՏ ԹԱՈՒՂՈՒՄՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 16-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ «Ա» ԿԵՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ .....	40
ՍԳՈ-1072. 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԼՐԱՅՈՒՑԻՉ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 1 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 12-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	50
ՍԳՈ-1073. ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 30.2-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ, 2-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	63
ՍԳՈ-1074. «ԹՐԱՆՍՓՈՐՏԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԸ ՀԱԿՈՒՈՒՊՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի ԵՎ ԶԱՐԿԱԶՄՅՈՒՄ ՈՒՇԻԳ ՄԵԼԻԶՄԵԹՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 113-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	75
ՍԳՈ-1075. ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 554-Ն ՈՐՈՇՄԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	87
ՍԳՈ-1076. ԶԱՐԿԱԶՄՅՈՒՄ ՆԱՐԻՆԵ ՍԿՐՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 23-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ, 24-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ, 38-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ, 79-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 80-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	102
ՍԳՈ-1077. ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ՐԱՖՖԻ Կ. ՈՒՉԱՐԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԵՎ ԱՆԴՐԻԱՍ ԳՈՒԿԱՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 62-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	115
ՍԳՈ-1081. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՍՍՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 44-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	144

ՍԳՈ-1082. ՀՀ ՄԱՐԳՈՒՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 51-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 54-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	156
ՍԳՈ-1092. «ԾԻԾԵՆԱԿ-8» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 118.7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 91-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, «ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 4-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ, ՀՀ ՀՈԴՎԱԾԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 75-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	169
ՍԳՈ-1099. ԶԱՂԱԶԱՅԻՆԵՐ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ԱՐԱՄ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	177
ՍԳՈ-1102. «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՄԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ», «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ», «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ԵՎ «ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ-ՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԳԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 26-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	188
ՍԳՈ-1105. ԶԱՂԱԶԱՅԻ ՐԱՖԻԿ Կ. ՈՒՉԱՐԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 26-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ .....	201
ՍԳՈ-1106. «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 30.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 18-ՐԴ ԵՎ 19-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	207
ՍԳՈ-1114. «ՀԵԼՄԻՆԿՅԱՆ ԶԱՂԱԶԱՅԻԱԿԱՆ ԱՍՄԱԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՋՈՐԻ ԳՐԱՄԵՆՅԱԿ» ՀԿ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶԱՂԱԶԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 204.38-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	217
ՍԳՈ-1115. «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԳԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 24-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	235
ՍԳՈ-1119. ՀՀ ՄԱՐԳՈՒՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 73-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	243
ՍԳՈ-1120. ԶԱՂԱԶԱՅԻ ԹԱՍԱՐԱ ՄԱՐԳՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՅՈՒՄՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ .....	254

<p>ՍԳՈ-1121. ԲԱՂԱԲԱՅԻ ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  ՀՀ ԲԱՂԱԲԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 17-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ՝  ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 264</p>	264
<p>ՍԳՈ-1124. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲՆՆԻՉ ԶՐԵԱԿԱՆ  ԳՎԱՍՏԱՆԻ, ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐԶ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ  ՇՐՋԱՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԳՎԱՍՏԱՆԻ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ  ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԳՎԱՍՏԱՆԻ  ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 311-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ  1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 275</p>	275
<p>ՍԳՈ-1127. ԲԱՂԱԲԱՅԻ ԷԳՈՒՄՐԳ ԽԱՉԻԿՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՎԱՍՎԱՐՈՒԹՅԱՆ  ՕՐԵՆՍԳՐՔԻ 73-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 6-ՐԳ ԵՎ 7-ՐԳ ԿԵՏԵՐԻ՝  ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 288</p>	288
<p>ՍԳՈ-1130. ԲԱՂԱԲԱՅԻ ԳՈՈ ԱՆԳՐԻԱՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 123.3-ՐԳ  ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 297</p>	297
<p>ՍԳՈ-1134. ԲԱՂԱԲԱՅԻ ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ԳՎԱՍՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 499.9-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ՝  ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 302</p>	302